փայութեան, և ծերութեան միջոցին ընկաւ աղքատութեան և չքա-
ւորութեան մէջ: Ըմենքի մնապաշտ ամբոխը մեղադրից նորան իբր
իւր անաստուած և անպարզող աստուածների, ըստ որում նա քարոզում
էր թէ՝ արեգակն և լուսինը կազմուած են հողից և քարից. և թէ՝
այն ժամանակի աստուածային հրաշք սասածներն ոչ այլ ինչ էլին,
բայց թէ սովորական երևոյթներ: Ահ այս բանից՝ և թէ նորա փի-
լիսոփայութեան մոգականութեան համար, որովհետև քարոզում էր
հոգւոյ և նիւթի հակապրութիւն,— ատելի Պարթից վարդապետու-
թիւնը,— բանդ գրուեց նա և մահուան դատաւճիռ ընդունեց. որից
ազատուեց դժուարութիւնով շնորհիւ Պերիկղէսի, և փախաւ Լամ-
պսակ, ուր և կնքեց հալածանքի մէջ իւր կեանքը: Հայց նորա սր-
նապարծ հայրենակիցները մեծարեցին նորա յիշատակն իրանց սովո-
րական չափազանցութիւններով, պարծենալով թէ՝ Ընաքսագորաս ա-
ռաջինն եղաւ, որ բացատրեց լուսնի փոփոխութեան շրջանները, ա-
րեգակի և լուսնի խաւարմանց էութիւնները. և թէ՝ նա կարողացաւ
նախապատմել ապագայ դէպքեր, և նախաձանուցանել մինչև ան-
գամ օդերևութական մի քարի վայր ընկնիլը: Ընաքսագորասի և նո-
րա ժամանակակից ու նախորդ շատերի կենսագրութիւնից տեսնում
ենք, որ փիլիսոփայութիւնն իւր դէմ զրգռած էր ժողովրդի ատե-
լութիւնն, որ չէր բաւականանում ընդհանուր բողոքով, այլ փոխա-
դում էր մինչև անգամ քաղաքական անպարզութեան: Օրեց օր ա-
ճելի էր այսպէս կոչուած թշնամական յարաբերութիւնը գիտութեան և
բազմաստուածութեան մէջ: Փիլիսոփաներից ոմանք հալածական
էին փախչելով ազատուել իսկ ոմանք ենթարկուում էին մահուան:
Այսպիսի դրութիւնը բնականաբար հարկադրեց նորանց ա-

Ան ատելու-
թիւնը թէ՝
կարգերօք մը
ճշմարտու-
թեան որ և իցէ
յատկանիշ.

Ընաքսագորաս
գտաւորեց.

Պիւթագորասի նորա կեանքը։

ներով խորհրդապահութիւն և կեղծաւորութիւն, որ նոյնը փայլում է Պիւթագորասեանների պատմութեան մէջ։

Այդ աղանդի հիմնադիրը Պիւթագորասի վերայ ձշմարիտ տեղեկութիւն փոքր է յայտնի. նոյն իսկ նորա ծննդեան ժամանակը վէձ ներքոյ է։ Յիմնահաւանականն այն է, որ նա ծնած է Սամոսի մէջ Ք. ծ. 540 ո. յառաջ։ Եթէ այս հաստատագիտ չհամնայինք էլ այն ժամանակ նոյն իսկ վարդապետութիւնն արդէն կապացուցանէր մեզ, թէ նա եղած է Եգիպտոսում և Քաղդեաստանում։ Մի քանի անուանի գիտնականներ կամենալով առնել մէկ յարմարաւոր դէպքով առաւել նշանաւոր կացուցանել հին Եւրոպիոյ լուսաւորութիւնը, աքնարմարն որքան կարող են ցրել հնութեան ընդհանուր վկայութիւնը, թէ Պիւթագորաս իւր գիտութիւնը ստացել է յատկապէս այդ աղբիւրից։ Այս նպատակով այդ գիտնականները պնդում էին թէ՝ քրմական դասակարգի կազմուածն Եգիպտոսի մէջ տարաշխարհիկին անկարելի կանէր թափանցել իւր գաղտնիքին. բայց նոքա մոռանում են, որ այդ երկրի հին կազմակերպութիւնը միանգամայն խոչընդոտել էր մեծ յեղափոխութիւններին, որ յառաջ եկաւ այդ ժամանակից հարիւր տարուց աւելի յառաջ. Եթէ հին հեղինակները ուղղակի չասէին, թէ Պիւթագորաս քսան երկու տարի կացել է Եգիպտոսում, այն ժամանակ նորա բուն պատմութիւնը ներկայացնում է այդ բանին բաւական համոզիչ ներքին վկայութիւն, թէ նա կացել է այն տեղ շատ տարիներ։ Ինչպէս հասկացող մէկը նկարչութեան որպիսութիւնից կարող է հասկանալ արհեստաւորի ձեռքը, նոյնպէս մտածման հին դրութիւնների խուզարկութեան անձնաւորը եղրն առաջին անդարկովը տեսնում է Պիւթագորասի փիլիսոփայութեան մէջ եգիպտական տարրը։ Տարվընիոս Ռոտոպէ թագաւորութեան ժամանակ Պիւթագորաս եկաւ Իտալիա, և բնակեցաւ Տարենտեան Ծոլածոցի մօտ Կրոտոնում, յունական գաղթականութեան մէջ։ Սկզբում գպրոց հիմնեց. բայց տեղական շփոթութիւններից օգուտ քաղելով, իւր մօտ տարբերու եկող նորահաս անձնաւորներից կազմեց գաղտնի քաղաքական ընկերութիւն։ Ասում Յունաց մէջ արդէն կայնուն էր գործել այն խոտորանութիւնը, թէ անչարժար է խիստ բացօթեայ հարցերով զբաղիլ ժողովրդեանն իրանց դիտութիւններն. այսպիսի կանոնի բոլոր իսկութիւնն երևի թէ հալածանքներն դառը փորձն էր ապացուցանում։ Պիւթագորասեան ծածուկ ընկերութիւնից դէպի քաղաքական դատարկութեան անցքը մեծ չէ։ Պիւթագորաս տեսնում, ինչպէս երևում է, այդ բանը։ Նորա աշակերտներն, որոնք պատրաստեցին փոխանակելուց յետոյ ծանօթացել էին նորա գիտնական գաղտնիքներին, խոտորչութեան պատրաստի պէնք էին տերութեան դէմ, որի արդասիքը երևեցաւ յետոյ հին Աճնաթի բարձումն

և կառավարութեան՝ Պիւթագորասի և նորա փոքրիկ խմբի ձեռք անցնելու։ Մարդկանց գործողութիւնները միշտ սահմանուած են մի և նոյն սկզբունքներով. ինչ որ այժմ կարող էր պատահել այսպիսի դատաձնութեան հետ, նոյնը պատահեց և այն ժամանակում. թէև Պիւթագորասի ազդեցութիւնը Կրոտոնից տարածուած էր միւս Իտալական քաղաքների վերայ, բայց հնազանդութեան ջատագով խորհրդակից դիմադրութիւնն(1) երևեցաւ արդէն շուտով. նորա թեանց մոծանողները հալածուեցան, նոցա հիմնարկութիւնները կործանուեցան, և նոցա հիմնադիրը զոհ գնաց իւր թշնամիներին։ Պիւթագորեան ընկերութեան կազմակերպութիւնը բացառութիւն է կազմում յունական ընդհանուր քաղաքականութիւնից։ Փիլիսոփայական դպրոցները միակերպ համոզմունք ունեցող մարդկանց միաւորութեան մէջ ցոյներ էին միայն. իսկ տէրութեան մէջ հազիւ թէ որ և իցէ քաղաքական նշանակութիւն ունէին։ Դժուար է որոշել անցքերի խակութիւնն այն մարդկանց ցուցմունքներովն, որոց քաղաքական կամ կրօնական զգացմունքները խառն են այդ անցքերի մէջ. յաբէութիւնն և մինչև անդամ ատելութիւնն այստեղ ներելի են երեւում։ Պիւթագորեան յեղափոխական մտքերից Իտալիայում յառաջ եկած շփոթութիւնների մէջ անկարելի է որոշել ստոյգ փաստեր։ Մի կողմը Պիւթագորասին ներկայացնում է գերբնական էակ, նկարագրելով վսեմ և անվրդով մարդ, որ զգեցած է սպիտակ պատմուձան, ձակատը պսակազարդած ոսկեկուռ թագով. որ ուշադիր միտը դարձրել է տիեզերքի ներդաշնակութեանը կամ ոգի է առնում Հոմերոսի, Հեսիոդի և Թաղէսի համեստ երգերովն. որ խորացոյզ է բնութեան դիտողութեան մէջ, կամ Աստուծոյ խորքը խորհրդածելու յափշտակութեան մէջ. որ հրաժարակում է իւր ծագումն Ապոլոնից կամ Հերմէսից իւր հրաշքներովն, ապագայի գուշակութիւնովն, մանաւանդ արի առանձնութեան մէջ ոգիների հետ ղեկավարելովն. որ գերազանցում է միևնոյն անդամ լեզուների յանկարծակիր հրաշքից, ըստ որում անկասկածելի վկաներն ասում էին, թէ նա միևնոյն ժամանակը զանազան տեղեր էր գտնուում և խօսում ժողովրդի։ Հետ Երևի թէ նորա աշակերտների խիլքը չէր մտնում, որ այսպիսի անհեթեթ բարեզութիւնները չեն կարող ոչ մի փաստով հաստատուիլ. և թէ՝ անաչառ և պարզ ապացոյցը փոխանակ այդպիսի բաները հաստատելու, տեղը կտար միայն կործանելու մեր հաւատը դէպի մարդու ձշմարտախօսութիւնը. կամ թէ կհասցնէր մեզ այն եզրակացութեան, թէ դիւրութիւնով կարելի է մարդուն ստութեանը հաւատալ տալ. թէ՝ նա դիւրաթեք է դէպի խաբեութիւնն։

Թշնամիքը ներկայացնում են նորան մի խաբեբայ, կամ գոնէ մի ցնորամիտ միտիկոս, որ գայթակղեցնում էր երիտասարդներին փը-

(1) Реакція,

Նորա աքանչելիքները։

Նորա անհաւատութիւնը։

բանկմասնութեան գիմակաւոր արարքներով, որ Թուլլիա մարդիկնե-
րին զարնում էր անպտուղ ոգևորուղներ կամ մղձաճ անձնատուց-
ներ. որ նրբութեամբ էր զատանութիւն այն տէրութեան դէմ, որ իրան
տուած էր պատուաւոր պատասպարան. և հանեց նորա գլխին խոց-
վութիւններ և արիւնահեղութիւն: Ընչքան զանազանակերպ յուզ-
մունքների մէջ դժուար է որոշել, թէ որը կարելի է մի փիլիսոփայի
տալ և որը խաբերայի: Այս անորոշ հանգամանքներում Պիւթա-
գորեանք վայելում են իրանց սիրելի սկզբունքի պտուղը. ,,Ամեն,,
ամեն բան գիտել չէ կարելի,,: Դուցէ թէ այս քաղաքական շար-
ժումը հիմնուում էր այն յուսոյ վերայ, որ կամենում էր Իտալիայի
միջի բազմաթիւ յոյն հասարակութիւնները միացնելու կեդրոնական կէտ
կազմել այն հատուածների, որոնք չմոռաց տուած իրանց հարստու-
թեանն և բարձր քաղաքակրթութեանը, միանգամայն տկար էին ի-
րանց բաժանման և թշնամութեան պատճառով: Եթէ որ և իցէ
քաղաքական կամ կրօնական կապեր կարողանային միացնել նորանց մի
դաշնակցութեան, այն ժամանակ կարող էին ունենալ հիմնական ազ-
դեցութիւն Հռոմի ղօրացող կայսրութեան, և նորա միջոցով մարդ-
կութեան վերայ: Պիւթագորականութիւնն արդարև ունեցաւ ազ-
դեցութիւն Հռոմի վերայ, բայց ուրիշ ճանապարհով, Նումայի,
երկրորդ թագաւորի միջոցով, որ այդ ազգին հաստատիմ պաշտ-
պան էր. որ և հռոմէական դրութեան մէջ մտցրեց պիւթագո-
րեան շատ սովորութիւններ:

Պիւթագորեան ասացանում է թէ՝ առաջին տարբերութիւն է.

Պիւթագորեան դպրոցի հիմնական վարդապետութիւնն այն էր թէ՝ ,,թիւն է իրերի էութիւնը կամ սկզբնատարրը,,: Այս վար-
դապետութիւնը տեղիք տուեց ուսումնասիրելու ձևերի (1) զաղտ-
նիքներն և թուաբանական յարաբերութիւններն, և ընդ նմին գլո-
րեց ամենաբիրտ ցնորքների մէջ, դառնալով անհեղգ ձեռակերպու-
թիւն (2), թէ թուերն են իրական իրեր: Եթէ Պիւթագորասի
վարդապետութիւնն ընդհանրական հասարակութիւն դանել կարդա-
ցաւ, ի հարկէ մեծ մասամբ պարտական էր այն հանգամանքին, որ
նա լորեց մտաւոր զատարկութիւնը: Փիլիսոփայութեան առաջաւոր
կարգերի մէջ կանդնած մարդիկն հակած էին այն եզրակացութեան,
թէ մեք չունենք ճշմարտութեան կրիտերիում ոչ արտաքին իրերի
և ոչ նոյն իսկ մեր անձամբ վերաբերութեամբ. այլ միայն այսպիսի
կրիտերիում կայ թուերի յատկութիւնների և նոցա յարաբերու-
թիւնների մէջ:

Պիւթագորասի փիլիսոփայութիւնը.

Ընթերցողն ուշադրութիւնը հրաւիրում է վերադարձնել այդ դրութեան իւր բոլոր մանրամասնութիւններով բացատրութեամբը. մեր նպատակի համար նորա վերայ մի հարևանցի ակնարկ ձգելն էլ բաւական է: Նա ընդունում է երկու տեսակ թիւ — զոյգ և անզոյգ.

(1) Фигура. figure.
(2) Формула. formule.

և ըստ որում միաւորը պիտի լինի միանգամայն և զոյգ և անզոյգ, ուստի նա պիտի կազմի թուի բան էութիւնն, և լինի բոլոր միւս թուերի հիմն: Այս էր Պիւթագորեան ասացուածի իմաստը՝ ,,Ո-
լորը յառաջ է գալի միկից,,. որ առաւ նաև միստիքական ազդա-
յարութեան ձև.,,Աստուած պարունակում է և յառաջ բերում բո-
լորը, բայց ինքը մի է,,: Տասը թուին արուում էր առանձին կա-
րևորութիւն, որովհետև նա պարունակում է իւր մէջ կամ յառաջ է
գալի 1, 2, 3, 4, այսինքն թէ զոյգ և թէ անզոյգ թուերի բա-
զադրութիւնից. նորա համար այդ թիւն առաւ մեծ քառաթիւ (1)
անուն, ըստ որում պարունակում է առաջին չորս թուերը: Սակայն
ամենք պնդում են, թէ այս անունով նշանակուում էր երեսուն վեց
թիւ: Պիւթագորեանները տալիս էին մեծ նշանակութիւն նաև ե-
ռաթուին (2), որովհետև ունի սկիզբն, մէջ և վախճան: Տնեաւորը
կամ մէկն անուանում էին զոյգ-անզոյգ. պնդելով, որ նա պարունա-
կում է իւր մէջ զուգական և անզուգական յատկութիւններն, որ յայտ-
նի երևում է այն փաստից, որ եթէ միաւորը դնենք զոյգ թուի
մօտ, կլինի անզոյգ, իսկ եթէ անզոյգի մօտ, կլինի զոյգ: Ընդա բըր-
նութեան սկզբնական տարրերը բաժանում էին տասն հակադրու-
թիւնների ալիւսակի վերայ. որոնցից զոյգն և անզոյգը կազմում են
մէկը լրյան և խաւարը միւսը, Ընդա ասում են թէ՝ ,,Թուի յատկու-
թիւնն և ներգործութիւնը կարելի է տեսնել ոչ միայն աստուածա-
յին և պիտական իրերում, այլ և բոլոր մարդկային յօրինուածների
և խօսքերի, արհեստի բոլոր արտադրութիւնների և երաժշտութեան
մէջ,,: Սրբա իրանց թուաբանական տեսութիւնները կապում էին և
բարոյականութեան հետ. պնդելով, թէ թուերն երբէք չեն սուում
թէ՝ նորա թշնամի են խաբէութեան. և թէ, այս պատճառով ճըշ-
մարտութիւնը նորա մէջն է: Պիւթագորեանների ցնորական հա-
կացողութիւններն եղբակացնել տուին նորա թէ՝ անսահմանի կամ
անվախճանի մէջ պիտի թագաւորի ստութիւն և նախանձ: Դատ-
ման այսօրինակ ճանապարհով հետևացնում էին, թէ ,,մէկ,, թի-
ւը պարունակում է իւր մէջ ոչ միայն կատարեալն, այլ և անկա-
տարն. որից հետևում է, որ բուն բարին, բուն դեղեցիկն և բուն
ճշմարիտը գտնուում է ոչ սկզբումն, այլ ամում է ժամանակի հետ:
Ընդա պնդում էին թէ՝ բոլորն, ինչ որ մեք գիտենք, պիտի գտնե-
նայ սկիզբն, մէջ և կատարած, թէ՝ սկիզբն և կատարածը նորա ե-
ղիները կամ սահմաններն են, իսկ մէջն անսահման է. ուստի և կա-
րող է դարձեալ բաժանուած լինել մինչև յանվախճանութիւն: Այս
պատճառով Փիզիքական դոյութիւնը բաժանում էին կէտերի վերայ,
ինչպես տեսնում է նորա սկզբունքից թէ՝ ,,Ամորը բաղկանում է
կէտերից, կամ առանձին միաւորներից, որոնք մէկ տեղ առնուած՝

(1) Тетрактъ.
(2) Тріадъ.

կապում են թիւ,,։ Այս կերպով հասկանալով սահմանաւորութիւնն, որ կազմում է վերջին ծայրերին, ,,անսահման,, անունով նոքա հասկանում էլն անջատական տարածութիւնը կամ անջրպետներ։ Այդ անջրպետներն օգնութեամբ առացան նոքա տարածութեան վերայ ներկայացումն, որով հետև միատրները, կամ ինչպէս նոքա անուանում էլն, վիճաթուները (1) պարզ երկրաչափական կէտեր են, ուսային նոցա ոչ մի քանակութիւնը կարող չէ գոյ յօրինել, այլ միաւորներն և անջրպետների միաւորութիւնից կազմուում է գիծը, հետևաբար մակերևոյթը, հետևաբար և մարմինը։ Իսկ վիճաթուների մէջ գտնուած անջրպետը համարում էլն օժիտչն երեք. բայց գրաւոյի երեսն հետևաբար,— դատապարտելի է։ Այսպիսով կարող ենք հասկանալ նոցա այլանդակ ներքաշնակութեան նշանակութիւնը թէ՝ բոլորը յառաջ է գալի դատապարտելի։ Որովհետև պէտք է նկատի ունենալ, որ վիճաթուները մաթեմատիքական պարզ կէտեր են, և չունին ոչ ձևաւորութիւն և ոչ չափ, ուստի և մարմինները չին պատրաստուում իրանց մէջ ներկայացում են ոչ այլ ինչ, բայց թէ ձևեր։ Պիւթագորեանները այս սկզբունքները յարմարացրին աշխարհի ծագման բացատրութեանն, ասելով. որով հետև նոցա դրութիւնն անդամ պատրանք է (2), ուրեմն նա չէր կարող սկիզբն առնել ժամանակի մէջ, այլ ծագում է միայն կնդիքբօրէն մարդու մտքում։ Իսկ նոյն իսկ ժամանակի նկատմամբ կարծում էլն թէ՝ ,,ժամանակն է միայն իրրև տարբերութիւն զանազան վայրկեանների շարքերի, որոնք կրկին միանում են սահմանաւորող վայրկեանների միջնորդութեամբ,,։ Ասել աշխարհում նոմարած յարաբերութիւնների զանազանութիւնը բացատրում էլն ներքաշնակութեան կապերով.,,Ըստ որում իրերի սկզբնապատճառները ոչ նման են և ոչ միատեռ, ուրեմն կարող են կարգի բերուած լինել միայն ներքաշնակութեան միջամտութիւնով, ինչ կերպով էլ որ այդ միջամտութիւնը յառաջ գալու լինէր։ Ընդհանուն և միատեռ իրերն ի հարկէ ներքաշնակութեան չին կարօտի. իսկ անհամաձայնութիւնը հարկաւ պէտք կապի ներքաշնակութիւնն, եթէ նոքա պիտի գտնուին կարգի աշխարհում,,։ Այս եղանակով հասնոքա թուի և ներքաշնակութեան գործարքները չհոթում էլն, համարելով աշխարհն ոչ միայն հակադրութիւնների միաւորութիւն, այլ և նոցա կանոնաւոր, ներքաշնակաւոր զուգութիւնը։ Սորա համար նոքա տալիս էլն առանձին նշանակութիւն մի քանի թուերի. պնդելով թէ՝ ,,կայ եօթ լար կամ ներքաշնակութիւն, եօթ բազմաստեղութիւն, եօթ ձայնաւոր տառ, և կենդանեայ մարմինների մի քանի մասերը փոխոխուում են եօթ տարուայ ընթացքում,,։ Թուերի մասին ունեցած վարդապետութիւնը նոքա հասցնում էին մինչև ծայրայեղութեան. համարելով թէ՝ յայտնի թուերը նկարագրում են իրութիւնն, ձի, մարդ։ Այդ վարդապետութիւնը կարելի է բացատրել քիմիկոսներին ծանօթ փաստերով, որոնք նոյնպէս թուական նշանակութիւններ են տալի իրերի անուններին։ Ութէ չրածինը միատոր ընդունած, ուրեմն 6-ը պիտի նշանակի ածխածին, 8-ը թթուածին, 16-ը ծծումբ։ Այս սկզբունքների համաձայն չկայ պարզ կամ բաղադրեալ, գոյծարանաւոր կամ անգործարանաւոր մարմին, որ չնշանակուէր որ և իցէ որոշեալ թուով։ Սինչև անգամ մարդու կամ ուրիշ նոյնպիսի բաղադրեալ յօրինուածի ակզբնատիպ ձևերը կարող են այս օրինակով անուանել միստիքական թիւ, նոցա բաղադրածոյ մասերի թուերի գումարը.— միևնոյն է, ինչ նշանակութիւն էլ որ չասենք այդ թուերին, թէ համարենք նորանոյ հիւլէական ծանրութիւններ, թէ միաժեղով հիւլէի դադափարը, նշմարենք նոցա մէջ ջրութեան ներկայացուցիչներ։ Ինչպէս հին փիլիսոփայական վարդապետութեան, նոյնպէս և արդի դիտութեան մէջ թիւն անվոխոխաբար միանում է առարկայի անուան հետ, ինչ սեռական էլ որ լինի առարկան։ Պիւթագորեանների համար ներքաշնակաւոր յարաբերութեան նշանաւոր օրինակ էր հրաժշտական օկտաւը։ Նոսկան յատկութիւններին, ինչպէս գոյն և եղանակ, նոցա կարծիքով մարմնի մակերևոյթին են պատկանում։ Տարրեր նոքա հինգն էլն հաշուում — հող, օդ, հուր, ջուր և եթեր. փաստ բերելով այս մասին թէ՝ մարդն ունի հինգ զգայարանքներ։ Պօրակներն նոքա հինգ էլն հաշուում, միատն առնելով արեգակը, լուսինն և երկիրն. այդ մոլորակները կարծուած են յայտնի հեռաւորութիւնների մէջ, երաժշտական օրինաւոր հնչմանց։ Եւ իրանց անջրպետութեան մէջ ունեցած շարժումներն յառաջ են բերում հնչման, սիներպական ներքաշնակութիւն, որ մեզ նկատակելի չէ, քանի որում միշտ նոքա լսում։

Երեգակը կարծում են նոքա դրութեան կեդրոնի մէջ, և նորա չորս կողմերը դասնում է երկիրը միս մոլորակների հետ միասին։ Այս կէտի վերայ նոքա թողնում են երկրակեդրոն վարդապետութիւնն և փոխարինում են նորան արեգակնակեդրոնը։ Այս սրում բոլորակը ներկայացնում է ամենակատարեալ ձև, ուստի մոլորակների շարժմունքները բոլորակաւոր են։ Նոքա պնդում էլն թէ՝ լուսինն ունի բնակիչներ և նման է երկրիս, միայն այն տեղ ծառերն ուղիղ բարձր են, այն չափով, ինչպէս լուսնի չորհանաւոր բոլորակ դարձնում երկրի բոլորակաւոր դարձումից առնելի է։ Նոքա բացատրում էլն թէ՝ ծիր կաթին յառաջ եկած է աստղի ընկնելուց. կամ թէ՝ եղած է յառաջ արեգակի ճանապարհն. նոքա ասում էլն թէ՝ սիներները յաբեռնական է, իսկ երկիրն անշարժ և ներքաշուած փոխոխութիւններին, և թէ՝ սիներներն ունի գնդի ձև։ Պարծում

Եոգի պիւթագորական — թիւնը բնութեան մէջ.

Պիւթագորեան բնագիտութիւն և հոգեբանութիւն.

(1) Монадъ.
(2) Иллюзія. Illusion, զգայարանքների կամ մտքի պատրանք.

էին նոքա թէ՝ մանաւանդ հոգին բղխում է սիրելականն հոգուց, և աթոռաբուստ է մնում մարմնի մէջ: Նրանցից և հիւանդութիւններից զատ հեռանում էին թէ՝ գնում են բարի և չար հոգիները: Նոքա կարծում էին թէ՝ հոգիները կարող են ապրել առանց մարմինների, վարելով մի տեսակ քնային կեանք, նմանեցնելով նորանց արևի ճնուտպայթիների մէջ գնուող հիւղէներին: Նոցա պիւցագուներն և գևերը չմարմնացած կամ ազատին մարմնից հեռացած հոգիները էին: Նոցա վարդապետութիւնը հոգեփոխութեան մասին համաձայն էր այսպիսի հայեացքներին. և կեղծ այդ վարդապետութիւնն ուզգակի չէր ընդունում հոգւոյ բացարձակ անմահութիւնը, գոնէ հնազատում էր հոգւոյ գոյութիւն մարմնի մահից յետոյ. ըստ որում անմարմին հոգին կրկին մարմնաւորւում է, եթէ միայն գտնում է իւր համար արժանաւոր տեղ: Ընդր-վերնդմանական կեանքին յարակցում էին Պիւթագորեաններն և վարձատրութեան ու պատժի վէճերնդութիւնն. և ինչոր ասել ենք յատկապոյն ընշաւոր աշխարհի մասին, որ Նդկաստանի և Նգիպտոսի աստուածաբանութեան մէջ ներկայացնում էր մաքրողական վիճակ, նոյնը յայտնում է այս տեղ նաև Պիւթագորեաններին: Նոցա քաղաքական դրութեան մասին հաւաստի միայն այս կարելի է ասել, թէ նորա գլխաւոր տարրն աղնուապետութիւնն էր. իսկ նոցա առանձնական կեանքի կանոնների մասին այն միայն, որ նոքա պատուիրում էին չափաւորութիւն ամեն բանի մէջ, և բարեկամութիւն, կրօնական արարողութիւնների պահպանութիւն և անձնուրացութիւն, որին ընթացակից էին մարմնատանջիկ վարժութիւններ: Նոցա կանոններից մէկն էր թէ՝ բարուք կրթութիւնը կարևոր է ոչ միայն մարդու համար, այլ և տէրութեան շահերի համար: Պիւթագորաս ինքն, ինչպէս յայտնի է, զբաղում էր տարածութեան և ծանրութեան որոշմունքներով, երաժշտական հնչմունքների յարաբերութիւններով, աստղաբաշխութիւնով և բժշկականութիւնով: Նա պատուիրում էր իւր աշակերտներին իրանց խրախճանութիւնների կամ գաղտնի հանդէսների միջոցին պարապել մարմնամարզութիւնով, պտոյտով և երաժշտութիւնով: Իւր սկզբունքին համաձայն, որ էլ՝ պետ լաւ չպատրաստուածներին հաղորդել միտն այն, ինչ որ նոքա կարող են ըմբռնել, նա սակաւ պատրաստուածներին հաղորդում էր միայն արտաքին ուսումը, ներքինը թողնելով սակաւաւոր ընտրեալների համար, որոնք անցուցել էին հինդ տարի լռութիւնով, յանձն էին առել անարգանք, և սրբուել էին անձնուրացութիւնով և պնհերով:

Էլեական փիլիսոփայութիւն.

Նյժմ գառնում ենք հետազօտելու Նլէական փիլիսոփայութիւնն, որ տարբերում է նախընթացից նիւթական առարկաներն արհամարհելովն և դէպի գերզգայականը ձգտելովը: Նորա անունը ծագում է Նուալիոյ մէջ եղած յոյն գաղթականութեան Նլէա քաղաքից. և նո-

րա դլխաւոր հետևակներն էին Քսենոփանէս, Պարմենիդես և Զենոն:

Քսենոփանէս ծնունդով Յոնիացի էր. և, ինչպէս երևում է, հալածուած այն տեղից, շատ տարիներ թափառական բարքով կեանք վարելուց յետոյ, վերջապէս երևեցաւ Նլէայում: Իւր վարդապետութիւնն աւելի հեշտ տարածելու համար տուեց նորան բանաստեղծական ձև: Նյա ձգեց դէպ ինքը ժողովրդի ուշադրութիւնը Ոմերոսի, Հեսիոդի և ուրիշ ազգային բանաստեղծների դէմ ցոյց տուած ներհակութիւնովն, որոնց պախարակում էր իբրև այն ժամանակի բերած բազմաստուածութեան քարոզիչներ, և իրանց՝ աստուածոց տուած անբարոյականութիւնովն աստուածութեան գաղափարը նսեմացնողներ: Ինքը քարոզում էր Աստուծուն ամենակարող, յաւիտենական էակ, չունող ոչ մի մարդկային նմանութիւն: Իրև խոստ միաստուածեան՝ նա խոյստառակում էր բազմաստուածութիւնն որպէս անհասկանալի մոլորութիւն. և հաստատում թէ՝ իրերի նոյն իսկ բնութիւն, նը ցոյց է տալի, որ պիտի լինի մէկ ամենակարող և կատարեալ էակ. ըստ որում եթէ գոնէ երկուք էլ լինէին, և այն ժամանակն էս այդ յատկանիշները չէին պատշաճի նոցանից և ոչ մէկին. և աւելի անպատշաճ՝ եթէ էս առաւել լինէին: Նյս միակ սկզբնապատճառը կամ պօրութիւնը նորա կարծիքովն այն էր, ինչ որ տիեզերքն, որի էութիւնը լինելով անսկիզբն և անվախճան, հարկաւ պիտի մի լինի Աստուծոյ հետևական ղի ինչպէս անհնարին է երկու Աստուածների գոյութիւնն, այսպէս անհնարին է երկու Յաւիտենականներինը: Ըստ այսմ չէ կարելի նորա գաղափարների մէջ չնշմարել արևելեան հասկացողութեան հետքերն. ըստորում հազիւ թէ Նդկաստանի հասատաուածութեանը սորանից աւելի հաստատուն և պարզ արտայայտութիւն կարելի է ներկայացնել:

Քսենոփանէսի ցոյց կ տալի փիլիսոփայական ամենամեծ յաջադիմութիւն.

Յունական փիլիսոփայութեան թեթևամտութիւնով ձանձրացած և Պիւթագորասի միաբանականութեան մէջ շփոթուած ընթերցողը չէ կարող չնկատել, որ այստեղ մեր հանդիպ դուրս եկածը միանգամայն տարբեր բան է: Նասկացողութեան արևելեան արժանաւորութեան հետ միանում է գաղտնութեան անհամեմատ պարզութիւն և ճշդութիւն:

Նա մտնում է հնդկական գաղափարների.

Նամձայն Քսենոփանէսի, աներևոյթը կարող է իմանալի լինել միայն մարդկային մտքին: Տարածուած հաւատն՝ որ ընծայում է աստուածութեան մարդկային զգայարանքներ, կրքեր և յանցանքներ, գարշելի է և արժանի նզովելու: ,,Այ միայն մի Աստուած, որ չունի մարդկային մարմնական ձևերի նմանութիւն. և որի մտածմունքները և նմանութիւն չունեն մեր մտածմունքների հետ,,: Նյա ուսուցանում էր թէ՝ Աստուած անբաժանելի է և անորոշելի. որովհետև՝ եթէ ունենար մասեր, ուրեմն այդ մասերից մէկ քանին պիտի կա-

Քսենոփանէսի աստուածաբանութիւնը.

ռավարչին և մեկ քանին կառավարուչին, և այդ անկարելի է. որովհետև աստուածաբանության հասկացողությունը պարունակում է իւր մեջ կառավարել և անթերի գերիշխանություն վերայ եղած հասկացողությունը: Աստուած պիտի լինի կատարեալ բանականություն, իմաստություն և ամենակարողություն, որ ,,կառավարում է տիեզերքը բանականության և գիտության միջնորդությամբ,,: Վահենոփանէս խոստովանում էր թէ՝ Վերագոյն էակն իմանում է զդայարանական ընդունողականությունների միջնորդությամբ. և ոչ միայն մտածում է, այլ և բոլորը տեսնում է և լսում: Իորհրդականի մտքով նա ներկայացնում էր Աստուծուն երկնանման մի սֆերա. որ մարդուն ու բոլոր երկրաւորները պարունակում է:

Նորա բնագիտական հայեցքը.

Վահենոփանէս իւր բնության փիլիսոփայության մեջ խոստովանում էր չորս տարերք.—հող, օդ, հուր, ջուր. սակայն ոմանք հաստատում են թէ՝ մոխիկ տալով լեռների գլուխներին քարացած ձկներին, եկաւ այն մտքի, թէ հողն ինքն էլ ձևացած է ջրից. և թէ՝ ընդհանրապես բնության երևոյթները յառաջ են գալի սկզբնական տարրերի միաւորությունից: Այսպիսի տեսություններից եղրակացնում էր թէ՝ բոլոր երերը հարկաւ անցաւոր են. և թէ՝ մարդն և մինչ անգամ երկիրը պիտի ունենան վախճան: Երկիրը համարում էր նա տափարակ տարածություն, որի ներքին սահմանն անվախճանաբար խորն է գնում, ներկայացնելով այս կերպով հաստատուն հիմունք: Սակայն նա իւր բնագիտական հայեացքներն արտայայտում է սկեպտիքականությանը շատ մերձաւոր տարակուսություններով. ,, Ոչ մի մահկանացու մարդ չճանաչեց և կարող չէ ճանաչել Աստուծուն և տիեզերքն. ըստ որում մոլորությունը տարածում է բոլոր բանների վերայ. և մեք չենք կարող նոյն իսկ այն ժամանակն էլ ստուգություն ունենալ, երբ որ խօսում ենք կատարեալ ճշմարտություն,,: Այս կարծում է թէ՝ ոչ ոք չգիտէ, որ մարդ երբ և իցէ ստուգապես խելամուտ լինի ճշմարտության. ըստ որում այդ բանի համար նա ուրիշ միջոց չունի, բայց թէ արտաքին անստոյգ երևոյթներ:

Նա չէր կարող թողնել այս անկատար պատմածը Վահենոփանէսի վերայ,— որ անշուշտ յոյն ամենանշանաւոր փիլիսոփաներից մեկն էր.— առանց յիշելու նորա՝ Քսենոփանէսն և նորա աշխարհի միաբանասեղծների դէմ ուղղած կշտամբանքն նորա համար, որ նոքա պատճառ են եղել աստուածաբանության գաղափարը նսեմացնելու. և առանց յիշելու, թէ ինչպէս էր հաւատում նա մարդու բնությանն, և ինչպէս մերժում էր ճշմարտությունը մեծագոյն մասից թագցնելու սկզբունքն, և ինչպէս անձնուիրությունով ինքն ամեն տեղ տարածում էր այս ճշմարտությունը, վտանգի մեջ գնելով իւր աղատությունն և կեանքը: Նա երկրե երկիր էր անցնում, և՛ դէմ առ դէմ

մտքառում բազմաստուածության հետ, քարոզելով իմաստությունը բամբռային նուագների և երգերի ձևով, որ այն ժամանակն ամենից յարմարն էր գիտություն տարածելու:

Նորա մտածմունքներից մեկ քանին վերստին երևան է հանում Նիւտոնի «Principia» երրորդ դրքի վերջում գտնուած «Scholium generale,, ից հետևեալ վկայությունը. ,,Վերագոյն Աստուածը կայ անհրաժեշտության համար. և այդ իսկ անհրաժեշտության համար նա կայ յաւիտեան և ամենուրեք: Սորա համար էլ նա բոլորովին միակերպ է. նա ամենայն լինչ է,— աչք, ականջ, ուղեղ, ձեռք, ընդունողականության հասկացողության, բանականության և ներգործության համ բայց միանգամայն գերմարդկային եղանակով. ոչ մարմնեղէն, այլ բոլորովին մեզ անհասկանալի եղանակով: Այրը չունի դրնի հասկացողություն, և մեք չունենք հասկացողություն այն բանի համար, թէ ինչպէս ամենևիմաստն Աստուած հասկանում է բոլոր բաները: Աստուած չունի բնաւ մարմին կամ մարմնական ձև. որա համար չէ կարելի իրան տեսնել կամ լսել կամ շօշափել. և նորան չէ կարելի երկրպագել որևէ իցէ նիւթական իրի նմանությամբ երևակայելով: Մենք ունենք գաղափար նորա յատկանիշների վերայ, իսկ որ և իցէ բանի իսկական էությունը մեզ անյայտ է,,:

Նորա մտածմունքներից մեկ քանին վերստին երևան է հանում Նիւտոնի

Վահենոփանէսից սկիզբն առած Էլեական դրությունը պէտք տալ տրամաբանական ձևաւորություն(1), որն այն ժամանակից սկսած վճռաբար ներկայացնում է յունական փիլիսոփայությունը: Նա թողուց ըստ մեծի մասին այն առարկաների հետազոտությունն, որոնք զբաղեցնում էին Յոնիացիներին.—տեսանելի բնության, նիւթական իրերի երևոյթների և նոցա կառավարող օրէնքի. և համարելով այս հետազոտությունները միանգամայն խաբեպատիր, դարձաւ դէպի այն, որ նորան երևում էր միակ ստոյգ գիտությունը.—դէպի Գոյությունն և Աստուծոյ հետազոտությունը: Որովհետև ամենայն փոփոխություն Էլեականներին անկարելիություն էր երևում, ուստի տիեզերքի ներկայացրած յաջորդականության բոլոր երևոյթները համարում էին սոսկ պատիր տեսիլ. և պնդում թէ՝ ժամանակ, շարժում, տարածություն ոչ այլ ինչ են, բայց թէ մտացածին երևակայություններ, կամ զդայարանքների անուղի մոլորություններ: Սորա համար բաժանում էին բանականությունը կարծիքից, տալով առաջինին անթերի ճշմարտությունը հասկանալու կարողությունն, և երկրորդին՝ զդայարանքների խաբեությունից յառաջ եկող անկատարություններն:

(1) Діалектическій фазисъ.

Պարմենիդէս՝ բանականութեան և կարծիքի մասին.

Ելս սկզբունքի հիման վրայ Պարմենիդէս բաժանեց իր աշխատասիրութիւնը ,,Ճնութեան,, մասին, երկու դրքի. առաջինը՝ բանականութեան մասին, երկրորդը՝ կարծիքի: Ընտանեզծ և անփոփոխ Գոյութեան բնութիւնը խոստովանելով, նա միանգամայն ուրանում էր ժամանակի մէջ եղած յաջորդականութեան գաղափարն և նոյնպէս տարածութեան յարաբերութիւնները. և համարում էր ամեն մի փոփոխութիւն, ամեն մի շարժումն,— որ և իցէ տեսակի էլ որ լինի, սոսկ կարծիքի պատրանք:

Փիլիսոփայութիւնը փոխառում է համատուածականութիւնից.

Նորա համատուածականութիւնը արտայայտւում է այն ենթադրութեան մէջ, թէ տիեզերքն է միաք և բանականութիւն. և այս ենթադրութիւնը կազմում է նորա վարդապետութեան յատկանիշը. ըստ որում այս կերպով կարդելով մտածողութիւնն և գոյութիւնն մէկ միւսին զուգահեռական, և կապելով նորանց այն հասկացողութեամբ թէ՝ միտքը գոյացած է ընդհանուր էութեան գոյութեան, պնդում էր որ՝ հարկաւ երկուքն էլ իրրև մի պիտի հասկացուին: Ելսպիսի խորհրդաւոր վարդապետութիւններ կային Պարմենիդէսի բանաստեղծութեան առաջին դրքում. իսկ երկրորդովը նա դառնում էր կարծիքի մասին, որ ինչպէս ասացինք, միանգամայն կախումն ունի զգայարանքից, ուստի և անհաւատի, թէ և ոչ միշտ տարապայմանորէն պատիր: Սակ հաղիւ թէ կարելի է նորա դրութեան մանրամասնութիւնները կրկին երևան հանել նորա աշխատասիրութեան մնացորդներից, կամ ցոյց տալ թէ՝ նա ինչպէս էր մօտենում Յունական վարդապետութիւններին, խոստովանելով բնութեան մէջ երկու հակադիր կողմեր— եթերական հուր, և թանձր խաւար, որոց հաւասարակշռութիւնից գոյանում են բոլոր բաները.— մինչդեռ հուրը ներկայացնում է իրական էութիւն, իսկ խաւարն՝ երևութական կողմն: Ելսպիսի անիրական և անհաստատ հիմունքների վերայ— եթէ մինչ անգամ միջոցներ էլ ունենայինք— չէր արժի աքսել բացատրելու նորա բնագիտական դրութիւնն, որ շատ մասերով դառնում է բիրտ երևակայութիւն. օրինակի համար՝ երբ որ կառավարիչ ոգին (դևը) կարդում է երևութական աշխարհի կեդրոնում: Սակ հարկ չկայ նըմանպէս ժամանակ կորցնել նորա՝ այն հին վարդապետութեան օտարոտի կրկնութեան վերայ թէ՝ բոլոր կենդանիքը ծագեցան տղմուտ հողից. կամ հետազօտել նորա բացատրութիւնը մարդու բնութեան, որ բաղկացած լինելով լոյսից և խաւարից երկուքն էլ պարունակում է իւր մէջ. ուստի և երբէք չէ կարող կատարեալ ճշմարտութեան հասնել: Երկի փիլիսոփայութիւնն էս, թէև ուրիշ ձևնապարհներով և ուրիշ ոչ այնքան երևակայական սկզբունքի վերայ, եկաւ այսօրինակ տխուր եղրակացութեան:

Զարմենիդէսի ուսումը շարունակւում է Զենոն.

Զենոն, որ ինչպէս ասում են, Պարմենիդէսի արդեղիրն էր, պաշտպանում էր նորա վարդապետութիւնը: Նա գործածական ապացոյցների հերքումն reductio ad absurdum'ի (հասցնել մինչև անմտութեան) միջոցով: Նորա աշխատասիրութիւնները գլուաձ էին արձակ, և ոչ բանաստեղծական ձևով, ինչպէս իր նախորդների գրուածները: Ինչպէս Պարմենիդէսի նպատակն էր ապացուցանել ,,Միայնոյ,, գոյութիւնը, նոյնպէս և Զենոնի նպատակն էր ցոյց տալ թէ չկայ ,,Բազմաւոր,,: Ելս սկզբունքի համեմատ նա ենթադրում է որ՝ իրականապէս կայ միայն մէկ իր. և թէ՝ բոլոր միւսերը միայն նորա կերպարանափոխութիւններն են կամ արտայայտութիւնները. Զենոն ուրանում էր շարժումը, բայց ընդունում էր նորա տեսանելիութիւնը նկատելով նորան իրրև մի անուն, տուած այն դրութիւնների շարքին, որոց իւրաքանչիւրը հարկաւ հանգստութեան մէջ է գտնուում: Շարժման կարելիութիւնը ցրող իւր այս վարդապետութիւնը պաշտպանում էր հետևեալ ապացոյցներով. որոց երկրորդն էր Ելքիլէսեան նշանաւոր դժուարութիւնը. ,,Դիցուք թէ Ելքիլէս կրիայից տասն անգամ աւելի արագ է վազում: բայց այսու ամենայնիւ՝ եթէ կրիան Ելքիլէսից յառաջ գտնուի, նա չէ կարող երբէք հասնել նորան. ըստ որում՝ եթէ սկզբում հաղար ոտնաչափ հեռաւորութիւն բաժանի նորանից, մինչև Ելքիլէս այդ հաղարը անցնի, կրիան հարիւրը կվազի. և երբ որ Ելքիլէս հարիւրը գընայ, կրիան տասը կերթայ, և այլն· այնպէս որ Ելքիլէս կարող է միշտ վազել, բայց երբէք կրիային չհասնել,,: Ելսպիսիները էին նորա յառաջ բերած վտաները շարժման դէմ: Զենոնի բերած ապացուցութիւնն անբաժան և անվանձան ,,Միայնոյ,, գոյութեան մասին կարելի է այսպէս արտայայտել:,,Ենթադրել թէ միայնը բաժանելի է, կնշանակէ ենթադրել թէ նա վանձանական է. իսկ եթէ բաժանելի է, ուրեմն պիտի բաժանելի լինի անվերջնաբար: Բայց ենթադրելով երկու իրերի գոյութիւն, հարկաւ պիտի ենթադրել նոցա մէջ որ և իցէ հեռաւորութիւն— մէկ միւսից բաժանող և սահմանաւորող մէկ: Բայց մէջ է այդ մէջը.— մի տեսակ ուրիշ իր: Բայց այն ժամանակ,— եթէ այդ իրը միևնոյնը չէ, և նա նոյնպէս պիտի լինի բաժանուած և սահմանաւորուած, և նմանապէս անվերջնաբար: Ելս եղանակով միայն մէկ իր կարող է լինել իրրև հիմն բոլոր երևցած զանազանակերպութիւնների,,:

Զենոն իր՝ Պրոտագորասի դէմ ուղղած ապացուցութիւնների մէջ ներկայացնում է մեզ զգացման ցուցմունքների անստուգութեան բացատրութիւնն, որ և այստեղ յառաջ ենք բերում իրրև նորա օձիք օրինակը: ,, Նա հարցրեց. ձայն դուրս կգայ արդեօք գետնի վերայ

ընկած ցօրինի մի հատից, կամ նորա տասը հազարաւոր մասից, և ամբողջ չափի ընկնելուց: Ստանալով առաջինի համար բացասական և երկրորդին ի հարկէ հաստատական պատասխան, հարցրեց.—չափը չունի՞ արդեօք յայտնի որոշակի յարաբերութիւն դէպի հատն. և երբոր կարելի չէր այլ ուրանալ, իրաւունք գնեցաւ եզրակացնելու թէ կամ ցօրենի ամբողջ չափն ընկնելու միջոցը ձայն չէ հանգամ, կամ ձայն կհանի ուրեմն և նորա ամենափոքրիկ հատը:

Եւ Սեխա Աստուածին.

Յունական դպրոցի փիլիսոփաների յիշուած անունների հետ պէտք է շարակարգել և Աստուծոյ Սեխի անունն, որ նոյնպէս ապացուցանում էր Գոյութեան միութիւնն, անփոփոխականութիւնն և անբաժանելիութիւնն: Իւր դպրոցի միւս փիլիսոփաների նման և նա սրանում էր որևիցէ փոփոխութիւն և շարժումն, համարելով նորանց միայն զգայարանքների պատրանք: Գոյութեան անբաժանելիութիւնից նա հետևցնում էր նորա անմարմնականութիւնն, և այս կերպով մերժում որ և է մարմնական էութիւն:

Էմպեդոկղէսի կենսագրութիւնը.

Յունական փիլիսոփաների շարքը շատ երկարացրին կնքում է Ակրիկենդացի Էմպեդոկղէսի անունով, որ—գոնէ ըստ աւանդութեան—Պիւթագորասի հետ մրցում է: Էմպեդոկղէս արևելքում ուսաւ բժշկութիւն և մագութիւն,—հրաշքներ գործելու, անձրև և հողմ բերելու արհեստը. նա կրում էր քրմերի հագուստ, ոսկի կամար և թագ. և իւր անձն աստուած էր համարում: Ամենք ասում էին, թէ նա մեռած չէ, այլ համբարձաւ երկինքը գերբնական փառքով. այլք պատմում էին, որ ձգից իրան Ետնայի բացաշունչ բերանն, որ այդպիսով ծածկելով իւր մահուան կերպը, շարունակի փառաւորուել իբր աստուած.—մի յոյս, որ կործանուեց նորա պղնձի հողաթափներից մեկը դուրս ձգող հրաբուխի արտահոսութիւնով: Համաձայն այն դպրոցին, որին ինքը հետևում էր, նա իւր ուշադրութիւնը դարձնում է բանականութեան վերայ, և չի հաւատում զգայարանքներին: Այց և այնպէս՝ միացած հաւատացողներից երևում է, որ նա միակերպ կասկածով էր վերաբերում թէ դէպի առաջինի թևլադրութիւնները և թէ դէպի երկրորդինը. հիմնելով իւր կասկածը հոգւոյ անկատարութիւնների վերայ, որի պատճառով վճռած է նորան (հոգւոյն) լինել այս աշխարհում, և մինչև անգամ տեղափոխուել մեկ մարմնից միւսին: Ընդունելով Էլէական ենթադրութիւնը, թէ նմանը նմանով կարող է իմացուիլ հողը հողով, ջուրը ջրով, եթերը եթերով,—նա եզրակացնում էր, թէ մարդս՝ աստուածայինը ճանաչելը բաւականին փաստ է այն մասին, որ կայ այդ աստուածայինը: Սկզբնական տարրերը նա չորս էր ընդունում.—հող, օդ, հուր և ջուր. նոցա մօտ աւելացնում է և երկու սկզբնապատճառ,—սէր և ատելութիւն: Չորս տարերքի վերայ նա

մտիկ է տալի իբրև չորս աստուածների, կամ չորս աստուածայինի յատկութենական զօրութիւնների վերայ, ըստ օրում ամենայն ինչ նորանցով զգեցաւ. սերը համարում է սարաչական զօրութիւն, իսկ ատելութիւնը՝ քանդող կամ փոփոխող:

Էմպեդոկղէս փիլիսոփայութիւնը խառնում է աքսիոմատիկ հայեացքով դպրութեան մէջ:

Սորանից յայտնի երևում է, որ Էմպեդոկղէսի խիստ փիլիսոփայական դրութիւնը սորա մէջ դարձել է խառնուածոյ և միատեսակ հայեացքներ, որոց մէջ խառնուած են բնագիտականն և բարոյականն. և որ՝— իբրև անհրաժեշտ հետևանք այսպիսի հասկացողութիւնների— երևում է գիտութեան սկզբունքների անորոշութիւն. և ծագում է կասկած, թէ բոլոր փիլիսոփայական դրութիւնները անստոյգ են. և նորա տեղը գրաւում է համայնական սկեպտիքականութիւնը:

Դէպի այս հետևանքը հակում են բաւական նշանաւոր կերպով և Աբդերացի Դեմոկրիտէսի աշխատութիւնները: Հարստութիւնը Դեմոկրիտէսին ամեն կարելիութիւն առած էր գիտութիւններ ձեռք բերելու համար: Ասում են, որ նորա հայրն այնքան հարուստ էր, որ կարողացաւ ընդունել իւր մօտ Պարսից Քսերքսէս թագաւորին, որ շատ զոհ մնալով, տուեց նորան մի քանի մզներ և քաւդէացիներ, որդին դաստիարակելու համար: Որ մահից յետոյ Դեմոկրիտէս բաժանեց եղբարց հետ կարողութիւնն. և նոցա թողնելով կալուածներն, իւր բաժինը դրամ առաւ, որ աւելի յաջողակ ճանապարհորդի. և գնաց Եգիպտոս, Եթովպիա, Պարսկաստան և Հնդկաստան, այդ բոլոր աղբիւրներից գիտութիւններ ծծելով:

Դեմոկրիտէսի կարծիքով ,,Ճշմարիտ ինչ կամ թէ ճշմարիտ էլ կայ, մեզ իսկապէս յայտնի չէ,,: Ամէն տուած սորան— որով հետև նորա դրութեան մէջ զգացումն յառաջ է բերում մտածողութիւն, և միևնոյն ժամանակ է նա միայն փոփոխութիւն զգացող էակի մէջ.— ուրեմն ,,զգացումները անհրաժեշտաբար ճշմարիտ են,,: Այս՝ մի փոքր մթին տեղից կարող ենք եզրակացնել, թէ Դեմոկրիտէսի հայեացքով զգացումը թէպէտ և իրական է տեսականաբար (1) միտք է անիրական ինքնակայաբար (2). քաղցրութիւն, դառնութիւն, տաք, ցուրտ— միայն զգայարանքների ստեղծածներն են. իսկ արտաքին առարկաների մէջ՝ որոց տալիս ենք նորանց, կան միայն հիւլէներ և տարածութիւն. և մեր՝ այդ առարկաների որպիսութիւնների վերայ եղած կարծիքը հիմնուած է նոցա՝ մեր զգացման վերայ յառաջ բերած ներգործութեան կերպերի վերայ: Այս օրինակով խառնելով մէկ մէկի զգացումն և միտքն, և երկուքը միանման առնելով, նա բացի դրանից ճշմարիտ գիտութեան համար անհրաժեշտ է համարում խորհրդածութիւն— ըստ որում ,,Զգացումն ինքն ըստ ին-

Դեմոկրիտէս պնդում է, թէ գիտութիւնը անստոյգ է.

(1) Субъективно,
(2) Объективно,

քնան անսասյգ է. օրինակի համար՝ թէ և [illegible]գացումն ցոյց կը տայ մարդն մեզ, որ քաղաքութիւն, դառնութիւն, չնորհութիւն, ցուրտ գտնուում են մարմնի մէջ, բայց [illegible]որհրդածութիւնն ուսուցանում է մեզ, թէ գոքա ոմիայն մարդի ցնորք են. և թէ՝ իրականապէս կան միայն հիւլէները և տարածութիւն: Գալով յետոյ ընդունելութեան հարցը լուծելոյ, [illegible]թէ որպիսի՛ եղանակով հոգին տանում է հակացողութիւն արտաքին իրերի գոյութեան վերայ, նա դիմում է ենթադրութեան, թէ իրերը մշտապար արձակում են իրանց նմանութիւններն. այս նմանութիւնները ձևակերպուում են (1) օդակի միջով անցնում են, և ապա հասնում հոգւոյն նորա զգայարանքների ծակոտիքներով: Որովհետև այդ պատկերները լինելով բոլորովին վեր ի վերոյ, անհրաժեշտաբար անկատար են և անսասյգ, ուրեմն այնքան և անսասյգ պիտի լինի և նոցանով ստացած գիտութիւնը: Դեմոկրիտէս ուրանում է [illegible]էականների եղակի օկզբնատարրը, պնդելով՝ որ նոքա պիտի շատ լինին, բայց չեր խոստովանում ոչ [illegible]մպեդոկղէսի չորս տարրերն, ոչ նորա սիրոյ ևատելութեան սկզբունքներն, ոչ [illegible]նաքսագորասի միասեռութիւնը: Կա մերժում էր նոյնպէս նախասկիզբն տարրերի որ և իցէ զգայողական յատկութիւններ ունենային: Կա ընդունում էր, որ ամենայն բան բաղկացած է անտեսանելի, անշօշափելի և անբաժանելի մանրիկներից կամ հիւլէներից, որոնք իրրև իրանց գծագրի, լծորդութեան և դրութեան զանազանութեան հետևանքը, արտադրում են մարմինների տարբերութիւնը: [illegible]իւլէինա տալիս էր ինքնիշխան և յատկանական գոյութիւն: Նորա վարդապետութիւնը բացատրում է այս կերպով, թէ ինչպէս շատերը կարող են գոյանալ միկից. և սորանով հաշտեցնում է Յունացիների և Լէյացիների նշմարելի ընդդիմաբանութիւնները, Ռիմիական տեսութիւնն (2) այնպէս, ինչպէս որ կայ այժմ, էականապէս պարունակում է նորա հայեացքները:

Ընութեան ընդհանրական կազմիչ տարրը նա համարում էր նախասհմանութիւնը կամ ձևակատագիրը, բայց կան վկայութիւններ, որ այդ բառերովը նա ոչ այլ ինչ էր հասկանում, բայց թէ անայլայլելի օրէնքը: Այս կերպով խիստ մաթեմատիքական կշռադատութիւնների վերայ հիմնուած դրսութիւնն, որ սկզբնաւորի տարրերը խոստովանում է թափուր տարածութիւն և հիւլէները, (առաջինն անդործանելայ և անդրայ) դրութիւն՝ որ նոր իրերի արտադրութիւնը համարում է միայն նոր զուգաւորութիւններ. և հնարն եղծումն՝ միայն բաժանումն, որ բաղադրեալ մարմինների մէջ տեսնում է հիւլէների մէկ միւսի յարաբերութեամբ առանձին տրամադրութիւնն, և որ ընդունակ է բարձրանալու մինչև այն հակացողութեան, թէ մինչև անդամ հնչէն հիւլէն կարող է աշխարհ կազմել— այսպիսի դրու-

(1) Ассимилированіе, Assimilation.

(2) Теорія, Théorie. Քարկ ենք համարում յայտնելոր տեօրիա բառը մեր միշտ տեսութիւն ենք թարգմանում. բայց է հարկէ պատահելու է տեղ տեղ տեսութիւնն իրրև թարգմանութիւն մի երկու այլ բառերի ևս. ընթերցողն, կարծում ենք, դիւրին է տեօրիա արտայայտող տեսութիւնը մեզից հասկանալ:

Դեմոկրիտէս յառաջ է բերում հիւլէաբանական տեսութիւնը.

Նախասահմանութիւն, ճակատագիր և անփոխանելի օրէնք.

թիւն ունի ի հարկէ իրաւունք դրաւելու մեր ուշադրութիւնը դէպի իւր արդասիքները, բայց ի հարկէ չէ կարող պահանջել, որ մեք ընդունենք այդ դրութիւնն, երբ որ տեսնում ենք, որ նա մեզ տանում է այնպիսի եղրակացութիւնների թէ՝ մինչև անգամ մաթեմատիքական դիտութիւնները կարծիքական են· թէ՝ հոգին միայն ներբաց մարմին է, տեղաւորուած աւելի բիրտ մարմնական կեղևի մէջ· թէ՝ նոյն իսկ բանականութիւնն անգամ բացարձակապէս կարող չէ ունենալ որևէ իցէ ստուգութիւն. թէ՝ սկեպտիքականութիւնը պիտի մինչև այն աստիճան ընդունելի լինի, որ մեք կասկածենք մինչև անգամ երկուսի կտրած կոնոսի մակերևոյթի երկու մասերի նմանատարութեան վերայ. թէ՝ մարդկային հետաքննութեան վախճանական արգասիքը կայանում է բացարձակապար ապացուցանելում, թէ մարդն անընդունակ է դիտութեան. թէ՝ մինչև անգամ եթէ մարդը ճշմարտութիւնը ձեռք բերած էլ լինի, դարձեալ կարելի չէ երբէք համոստ ընձայել նորան. թէ՝ աշխարհը միայն երևակայութեան պտուղը ստեղծուածն է· և թէ՝ Աստուած չկայ:

Դեմոկրիտէս հաստուում է անստուածութեան.

Ասելիս թէ պէտք ունենք յիշելու Դեմոկրիտէսի մասին պատմած այնպիսի առասպել պատմութիւններն, ինչպէս օրինակի համար թէ՝ նա այրեց իւր աչքերը տաքացրած ապակիով, որ այլ ևս չըհաբաւի նոցա պատիր ցուցմունքներովին, և աւելի անդորրութիւնով մարդկի իւր բանականութիւնը.— շինծու խօսք, որ հնարել են նորա հակառակորդները, ծաղրելու համար, բայց յետագայ դարերի յիմարութիւնն ընդունել է իսկական փաստ, փոխանակ հեգնականի: Իսկ նորա բնաւորութեան մասին, թէ միշտ ծիծաղում էր մարդկանց դիտութեան և անմտութիւնների վերայ, բնաւորութեան՝ որ տուեց նորան ընդհանրական մականուն— ծիծաղող փիլիսոփայ,— կարող ենք յառաջ բերել [illegible]իպոկրատէս անուանի բժշկի կարծիքը: [illegible]իպոկրատէս հրաւիրուած լինելով Աբդերայի բնակիչներից բժշկելու նորան իւր խելագարութիւնից, Դեմոկրիտէսի հետ երկար խօսակցելոց յետոյ հիացաւ և խորին յարգանք զգալով դէպի փիլիսոփան, անարգից իրան կոչողներին, ասելով, որ նոքա իրանք են աւելի նըման հիւանդների:

Փիլիսոփայութեան համար ծագումն է առնում Եւրոպական գիտութեան—

Մինչև այս ժամանակ Եւրոպական Յունաստանը փիլիսոփայութեան համար նշանաւոր գործ դեռ քիչ է արած: Գլխաւոր դէպքորոշները փոքր Ասիայում կամ Իտալիոյ Յոյն հատուածների մէջ էին. իսկ այժմ նոյն իսկ գլխաւոր երկիրը դուրս է գալի այդ ասպարէզի վերայ, թէև— պէտք խոստովանել— սկիզբը շատ անյաջողակ էր: Մ՛ակ դէպքը չէր այս, որ յոյն հատուածների մտաւոր գործունէութիւնը ցոյց էր տալի իւր ներգործութիւնն Եւրոպայի

ձակատագրի վերայ։ Հասարակական շահասիրական հոգին միշտ հա-
մարուել է մեծաւոր գործունէութիւնն և բնական ընդունակութիւնը
գրգռող զարթեցնող. նա փոքր է գնահատում նախագրուած մտքերին,
և իրերին արժէք է տալի միայն նոցա ներկայ նշանակութեան հա-
մեմատ։ Եթէ այժմ յունական գաղթականութիւնները տեսական փի-
լիսոփայութիւնը յառաջ բերելու և տարածելու մեծ վաստակ ցոյց
տուին, իսկ հինգ հարիւր տարուց յետոյ տեսնում ենք նորանց կրկին
զբաղած միևնոյն գործով այն ընդհանի սկզբում, երբ որ փիլիսո-
փայական հայեացքները պատրաստ էին փոխարինուելու կրօնական
հաւատի. որովհետև՝ մարդկօրէն խօսելով, ամենևին կարծիք չկայ,
թէ քրիստոնէութեան իւր առաջին դարերում արագ տարածուելու
պատճառն այն անօրինակ յարմարութիւններն էին, որոնք ցոյց էին
տալի առևտուրի համար բոլոր Միջերկրական ծովի չորս կողմը,—
Լեվանդի ափերից մինչև Գադղէյ և Սպանիոյ ափունքը— տա-
րածուող քաղաքները։ Ք. ծ. յառաջ հինգ դար շարունակ նոցա
մէջ կային անընդհատ յարաբերութիւններ. հռոմէական ազդեցու-
թեան ներքոյ նոքա աւելի գործունեայ են լինում և ձեռք բերում
քաղաքական մեծ նշանակութիւն։ Իրերի այս դրութիւնը չափազանց
ձեռնտու է մտածման գոյանալուն և տարածմանը, տալով շարունակ
գրգիռ մտաւոր գործունէութեան։ Առևտրական հասարակութիւն-
ներն այս մասին շատ տարբերութիւն ունին երկրագործներից։ Ա-
ռաջինների օգնութեամբ ամեն տեղ տարածուեցան տեսական փիլի-
սոփայութեան սերմերն, ինչպէս և յետոյ քրիստոնէութեանն. իսկ
երկրագործները զարմանալի թանձրամտութիւնով պահպանում էին
միշտ իրանց պապական աւանդութիւններն և քաղաքական անտեղեակ-
թիւններն. և կռապաշտութեան անունն, որ առնուած է նոյն իսկ
նորանցից, դարձած է ծաղրական մականուն նոցա հակացողութեան։

Ցոյն հռետոր-
ների փիլիսո-
փայական ազդե-
ցութիւնը։

Իտալիայի և Սիկիլիայի միջև յոյն գաղթականութիւնների մտա-
ւոր վիճակը մինչև այսօր գրաւում էր քննադատների պատշաճաւոր
ուշադրութիւնը։ Որովհետև՝ թէև նոցա քաղաքական գործունէու-
թեան արգասիքները միայն նիւթական առաւելութեան վերայ ու-
շադրութիւն դարձնողին կարող են երևել հռոմէական հասարակապե-
տութեան յետագայ զօրութիւնից միանգամայն ընկղմած, բայց ա-
ւելի ընդարձակօրէն մտիկ տուող մարդու համար հետազօտութեան
արժանի հարց է լինում, թէ այդ քաղաքների մէջ մշակուած փի-
լիսոփայութիւնն իւր ժամանակին միևնոյն պարզ և բազմադարեան
արդիւնքը չունեցաւ արդեօք, ինչ որ Յաւիտենական Քաղաքի զի-
նուորական յառաջադիմութիւնները։ Իտալական թերակղզու յարա-
բերութիւնները դէպի եւրոպական քաղաքակրթութեան շարժուն

երեք դարադլխի կարելի է բաժանել։ Առաջինը համապատասխան է
փիլիսոփայութեան ծագմանը հարաւային յունական քաղաքներում.—
այս փիլիսոփայութիւնն ևս կհասներ նոյնպիսի նշանաւորութեան, որ
շատ յառաջ երևացել էր Հնդկաստանի առաջաւոր դրութիւնների
մէջ, եթէ դորան խափանարիթ չլինէր հռոմէական զօրութեան ա-
րագ տարածումն։ Երկրորդ դարադլուխը ներկայացնում է հասարա-
կապետական և միապետական Հռոմի ղէնուազական ազդեցութիւնը։
Երրորդին վերաբերում է եկեղեցական Հռոմի գործունէութիւնը։
Յետոյ պիտի տեսնենք, որ առաջին երկուքը միասին պատրաստեցին
երրորդը։ Ու ահա այսպէս՝ իտալական ազդեցութիւնը քաղաքակր-
թութեան ամբողջ շարժման վերայ եղել է փիլիսոփայական, նիւ-
թական և խառն։ Մեք դեռ շատ փոքր գիտենք առաջին դարա-
գլխի պատմութիւնն, որի մէջ անկարծիք շատ փաստեր են դեռ սպա-
սում ջանասէր և հասունամիտ խուզարկութեան։

Սկիզբն յունա-
կան հասուա—
ծական դրու—
թեան.

Ընձուկ երկիրն և բնակիչների բազմութիւնը սոսկացին Յոյներին
գաղթելու։ Այդ հարկիչ պատճառների հետ միասին նաև ներքին
երկպառակութիւններ, և յատկապէս անհաւասար ամուսնութիւնները։
Հասուածներն այնքան բազմաթիւ էին և այնքան տարածուեցան,
որ յունական ազդեցութիւնը նշանաւոր կերպով թափանցեց բոլոր
տեղերը Միջերկրական ծովի ափերի և կղզիների վերայ. վերջին-
ներս գրաւում էին առանձին ուշադրութիւն իրանց ենթադրեալ ազգ-
մագիտութեան նշանակութեան պատճառով. օրինակ՝ Սիցիլն Ղէնք-
սանդրի կարծիքով Միջերկրական ծովին տիրելը Աֆրրոս կղզին ձեռք
բերելուը պիտի լինէր։ Յոյն հասուածները ծովային աւազակներ է-
ին. բնակուած տեղերից բռնի յափշտակում էին կանանց. իսկ նոցա
երախայքն ընդհանում էին հայրերի լեզուն— մի անգ՝ որ պատաս-
հական վերջին ժամանակս Պատիճացոց տերունդին Ամերիկայում։ Այդ
յունական գաղթականական քաղաքների ամենց հարստութիւնն, ա-
սում են, անհաւասարն էր։ Կրոտոնա ունէր աւան երկու մղոն շա-
փուի շրջապատ։ Իտալական մեծ քաղաքի— Ալիքարիի հոխորթիւ-
նըն և շռայլութիւնն առած ասլան։ Այդ քաղաքների բարեկեցիկ
դրութիւնն երկու պատճառներից էր յառաջանում։ Նոքա ոչ միայն
մեծամեծ երկրագործ սահմանների կեդրոններն էին, այլ և մշակուած
վաճառականութիւն էին անում բոլոր կողմերի հետ։ Ներս բնակու-
ած մայրաքաղաքը նոցա յառաջն և փարթամ տուրհաւի տեղն էր։
Նոքա գործունեայ առևտուրի հաղորդակցութիւններ ունէին նաև
Միջերկրական ծովի բոլոր քաղաքների հետ, և հասցնում էին Ա-
թէնքին՝ հաց, Արթագինէին՝ իւղ։ Այդ հատուածական դրու-
թիւնների հետ կապ ունեցող Յունաստանի քաղաքներում նաւակազ-

մութիւնն և ծովագնացութիւնը մինչև այն աստիճան ընդարձակուած էին, որ հասարակական կեանքին տալիս էին առանձին բնաւորութիւն: Միանգամայն ուրիշ կերպ էր Յունաստանի միւս մասերում. օրինակ՝ Սպարտայում: Լիկուրգոսի օրէնքները խափանել էին այստեղ առանձին սեպհականութիւնը. բոլորին տիրում էր ընդհանրութիւնն. այս մի վայրենի կեանք էր. դրութեան վերածած.և սորա համար այնտեղ չկային վաճառականութեան առարկաներ: Ընդհակառակն Աթենացիք առատութիւն ամէթ համարելու կարծիքից այնքան հեռու էին, որ շատ անուանի մարդիկ, որոնց ճանաչում ենք իբրև փիլիսոփաներ, պարապում էին այնտեղ առևտրական ձեռնարկութիւններով: Արիստոտել Աթէնքի մէջ պահում էր դեղօրէից կրպակ, և Պղատոն իւղի առուտուր էր անում Եգիպտոսի հետ:

Պարթագինէն էշխատէ Մէջերկրական ծովին.

Աթենացիք՝ եթէ յաջողէր նոցա տիրել Սիկիլիային, մտադիր էին յարձակուիլ Կարթագինէի վերայ. ի նկատի ունենալով, որ նորան պիտի ընկնի Միջերկրական ծովին իշխելը.—մի մտադրութիւն, որը յառաջ տարաւ յետոյ Հռոմը: Կարթագինէի կործանումը նշանաւոր հասարակաքաղաքական պատմական զբոսութեան սկիզբն եղաւ: Նա ընկնում էր մի թերակղզու վերայ, որ բռնում էր քառասուն հինգ մղոն շրջապատ. և ունէր պարանոց միայն երեք մղոն լայնութիւնով. նորա տէրութեան ծովեզերեայ գիծը համարուում էր ոչ պակաս քանդ 1400 մղոն և պարունակում էր իւր մէջ երեք հարիւր քաղաքներ. ունէր ստացուածներ նաև Սպանիայի, Սիկիլիայի և Միջերկրական ծովի ուրիշ կղզիների մէջ.ստացուածներ՝ որոնք ձեռք բերուած էին ոչ թէ զէնքի յաղթութիւնով, այլ հաստուածները լցնելով: Նորա՝ Սպանիայում ունեցած արծաթի բովերի մէջ աշխատում էին ոչ պակաս քանդ քառասուն հազար մարդիկ: Այս մասում Կարթագինէն հետևում էր փիւնիկեցի նախնիներին. ըստ որում Տիւրացոց համար գաղթականների քաղաքներն ապրանք դնելու տեղեր էին. և նոքա Միջերկրական ծովի վերայ ունէին այսպիսի քառասուն ժողովատեղիներ: Ինքը Կարթագինէն այս կերպով յառաջ եկաւ, իւր ծագումն առնելով արևմտեան և արևելեան ծովամասերի յարմարաւոր դրութեան շնորհիւ. Կարթագինացի վաճառականներն օտարների ապրանքներ չէին փոխադրում, այլ տալիս էին անում իրանց օգտի համար, որ և պահանջում էր ժողովատեղերի և հաշտանոցների ընդարձակ դրութիւն: Նոքա դիտէին արդէն ներկայ ժամանակիս առուտուրի շատ սովորութիւնները, ունէին ապահովիչ միջոցներ, առևտրական փոխարինութիւններ, և նոցա կաշխատ դրամները դուցէ համապատասխան էլն մեր դրամատների տոմսակներին:

Պարսկաստանը կամենում է իրան ձգել Միջեր-

Նախընթաց դ՛ում խօսեցինք ասիական ազգերի՝ Եգիպտոսի և Միջերկրական ծովի հարաւային ափի վերայ յարձակուելու

մասին: Այժմ մեք պիտի ուշ դարձնենք նոցա նոյնօրինակ ձեռնարկութիւնների մասին հիւսիսային ափին իշխելու, որոց հետևանքները անհամեմատօրէն նշանաւոր եղան փիլիսոփայութեան պատմութեան համար: Փոքր Ասիայի քաղաքները Լիւդացի թագաւորների հետ տուած պատերազմներից յետոյ դարձան ըստ երևութին Պարսից պետութեան դիւրին որսը: Այդ պետութեանը կարժէր միայն անցնել եւրոպական ցամաքը: Պատճառ գտնելը դժուար չէ, երբոր քաղաքականութիւնն այսքան պարզ է: Իսկ Յունաստանի ներքին դրութեան նկատմամբ պէտք ասել որ ոչ մի բնչ կարող չէր աւելի հրապուրիչ լինել տիրապետողի համար: Ըստ երևութին այն տեղ չկար ոչ մի կապ զանազան քաղաքների մէջ.և նոցա ամենահզակատարները դտնուում էին կարծես թէ շարունակ խռովութեան մէջ: Աթէնքի մէջ ՀՌ. Ծ. մօտ 622 տ. յառ. Դրակոնի օրէնքները փոխանակեցին Սողնի օրէնքներն, և զանազան պատուականքիր անձինք կառավարութիւնը ձգում էին իրանց ձեռքն է որ ուժով, է որ խորամանկութիւնով:

Պարսից և Յունաց կռիւը.

Այսպիսի հանգամանքների միջոցում Պարսից թագաւորը զօրք ուղարկեց Յունաստան: Պարսից դիւնագործական յարձակմունքների անցքերը չափազանց զարդարուած են Յունաց վառ երևակայութիւնով: Սակայն անօգուտ էր հնարել այսպիսի կեղծիքներ. օրինակ՝ Եւրոպա մտնողների թիւը պնել մի միլիոն, կամ Պլատէի մօտ կոտորուողներինն՝ երկու հարիւր հազար: Եթէ միևնոյն անգամ չլինէին այնպիսի փաստեր, ինչպես Աթէնքի առումն և կրակի մատնելը, արդէն միմիայն պատերազմի յիշատակ շարունակութիւնը բաւականին կապացուցանէր, որ ոչ բոլոր յաջողութիւնները մէկ կողմինն էին: Այսպիսի երկարաձիգ պատերազմները միշտ պատճառում են երկու կողմի համար էլ և թշուառութիւն և փառաւորութիւն. և եթէ այդ կռիւները յիրաւի այնքան հարուածներ և արիւնահեղութիւններ յառաջ բերին, ուրեմն զարմանալի է, որ Պարսիկ ժամանակագիրները նոցա մասին այնքան նուազ յիշատակութիւններ պահեցին: Յոյները չէին հասկանում, որ եթէ ապագայ սերունդը հաւատայ իրանց պատմածներին, ուրեմն նախապատուութեան արմանէնին պիտի Պարսից տայ, որ անդադար հաստատամտութիւնով շարունակում էր յարձակմունքները, չնայելով այնպիսի անդուր հարուածների վերայ: Նոքա չէին հասկանում, որ երկրի տարեգիրները աւելի փառք կարող են վաստակել, երբ որ պատկերացնում են այն քաջութիւնն, որ կիսատարեան ժամանակում յաղթում է շարունակ աւերմունքներին, և վերջապէս հարուածի միջից կորզում է յաղթութիւն: Պարսիկները հետևելով իրանց քաղաքականութեանը

Ցիմոնաժայ պատերազմը ևն— Թէնք է առաջատորութիւնը.

տարածեցին իրանց իշխանութիւնը Հարաւակողմը՝ մինչև Կիրենէ և Լարկա. և հիւսիսակողմը՝ մինչև Թրակիա և Մակեդոնիա: Պարսկական պատերազմները պատճառ եղան Յունաց արհեստագիտութեան այն հիանալի զարգացմանն, որ իրաւունքով էր շարժում վերջին դարերի զարմանքը: Հոլորովին սոյդ է այն պատմածը թէ՝ այդ կռիւներից յետոյ Յոյներն սկսան կենդանի մարդիկ նկարել իրանց քանդակների մէջ: Պարսիկների կողմից այս պատերազմական սկսուածներն այնքան անկատար նպատակ չունէին, ինչպէս որ շատ անգամ հին ժամանակի յարձակմունքներն էին լինում. այլ շատ հեռատես մտածող քաղաքականութեան պատուղ էին. նոցա նպատակն էր երկիրներ գրաւել հարկ առնելու և ոչ քանդելու համար: Ալիքսանդրոս հռչակաւոր քննադատն, որի կարծիքներն են իմ առաջնորդն այս անցքերի վերայ ունեցած դիտողութեանս, ասում է, որ Յունաց պատմածները քննադատօրէն առած, սակաւ ստուգութիւն են պարունակում: Պարսից տէրութիւնը թուի թէ ամենևին չէ նեղուել. և Պղատոն, որի կարծիքը պիտի շատ զօրեղ վկայութիւն համարուի, ասում է, թէ Պարսից պատերազմներն ընդհանրապէս շատ սակաւ պատիւ են բերում Յունաց: Հաւատացնում են թէ՝ միայն երեսուն և մի քաղաքներ և այն ըստ մեծի մասին աննշաններն էին հաւատարիմ մնացել Յունաստանին: Դաւաճանութիւնն, երևում է, տարից տարի ապականում էր նորա ամենից ընդունակ մարդկանցը. միայն Պաւսանիոս չէր, որ ցանկանում էր թագաւորել Պարսից հովանաւորութեան ներքոյ: Սակայն պիտի իրաւունք տանք այդ ընդունակ մարդկանց: Յունաստանին արդարև հարկաւոր էր թագաւոր: Եթէ այդ միջոցին այնպիսի մի մարդ գտնուած լինէր, որ կարողանար բոլոր ուժն պահպանել նորա գիմամրցող շահերը, նա կարող էր աշխարհի հրամայողը լինել: Նորա իշխաններն այդ հասկանում էին:

Սոքան հետևանք մուսոր ազնաբակյաաաջադիմու— թիւն,

Պարսից պատերազմների բարձրացնող ներդործութիւնն ամենից աւելի Աթէնքում փայլեց. այս սեղ ընդարձակ զարգացումն առան արհեստը, գրականութիւնն և գիտութիւնն: Իսկ Սպարտան մնաց իր նախկին վայրենի դրութեան մէջ: Սպարտացիք ըստ առաջնոյն աւազակներ էին և խաբեբաներ. և նոցա ազգային կեանքի մէջ չէ կարելի մատնացոյց անել մի գովելի յատկութիւն:

Ճաւաջադիմութիւնները արհեստի մէջ.

Մեքենական ճարտարութիւնը Կորնթոսում հասաւ կատարելութեան. իրական արհեստագիտութիւնը ծագեց Աթէնքում: Մինչև Պերիկղէս ճարտարապետութեան միակ ոճը դորիականն էր. այն ժամանակից սկսում է նորա կատարեալ գեղեցկութեան դարը: Այս ժամանակին է սկսում և ազատ մտածելու և ժողովրդական կրօնը թաղնելու դարն: Այս մասին շատ նշանաւոր է Պերիկղէսի և Անա-

գէայի պատմութիւնը: Միևնոյն դարը նաև նշանաւոր դար էր ճարտարախօսութեան, բայց կեղծ ճարտարախօսութեան. ըստ որում Աթէնքի ռամկապետական կարգերը շատ խաբէական էին, և իշխանութիւնը միշտ կեդրոնացած էր մի քանի աւազանու ձեռքին, որոնք ամեն բան անում էին իրանք: Ազատ ժողովրդական զրացութեան, ինչպէս որ գրեթէ միշտ լինում էր հին հասարակապետական հաստատութիւնների մէջ, կարելութիւն չէր գտնում արտայայտուելու: Մեծամեծ մարդիկ շատ հակամէտ էին համարելու իրանց հանգաստացնողներին խաժամուժ, հետևակ (1), այն խաղի անունով, որով իրանք խաղում էին. իսկ կեանքի նպատակ ճանաչելու իշխանութիւնն և զուարճութիւնը. սէր, անձնազոհութիւն և հաւատարմութիւն նոցա համար երևակայութեան ցնորք էին. երդումն լաւ էր միայն խաբեութեան համար:

Թէև պետական իմաստութեան հորիզոնը պարսկական պատերազմների ընթացքում շատ անձուկ էր, բայց կարծիք չկայ, թէ յոյն իշխանների մէջ կային մարդիկ, որոնք հասկացել էին ասիական յարձակման պատճառները. ուստի ինքնապաշտպանութեան բնական ձգտումով միշտ պահպանում էին պաշտպանական դաշինք Եգիպտոսի հետ: Երբ որ Յոյներն իրանց քաջութիւնով և հաստատամտութիւնով պատերազմից փառաւոր ելք ունեցան, վերջնական պայմանագրութեան յօդուածները պարզ ցոյց տուին իւրաքանչիւր կողմի ձգտումներն և հասկացողութիւնները: Պարսից նաւերը չպիտի երևէին Պիանէի ժայռերի և Կլեդոնեան կղզիների մէջ տեղը. պարսիկ զօրքն երեք օրուայ ճանապարհ հեռու պիտի մնար Միջերկրական ծովից. (Ր. ծ. 449 տ. յ.) Պատերազմն Աթէնքին տուեց քաղաքական գերազանցութիւն. որին հասու լինելու համար բաւական է հայեացք պարզել Աթէնքի հասարակապետութեան վիճակի վերայ յետոյ տարի անցած Պղատէի մօտ եղած պատերազմից: Նորա տիրում էին փոքր Ասիայի սահմաններին հազար մղոնից աւելի. նոցա ստորագրուած էին քառասունից աւելի կղզիներ: Նորա իշխում էին Եւրոպայի և Ասիայի մէջ գտնուած ջերմին. նոցա նաւերն աղատակամ լողում էին Միջերկրական և Սեւ ծովերի վերայ. նոցա ձեռքում էր կեդրոնացել բոլոր սահմանակից տեղերի վաճառականութիւնը. նոցա մեթերանոյները լցուած էին ամենաթանգագին ապրանքներով: Պարսից կրակի փոշուց Աթէնքը դուրս եկաւ կանգնեց այնպիսի մի նշանաւոր փառաւորութեան մէջ, որ նոցա տաճարներն, արձաններն և արհեստի գիւտերը դեռ իրանց գերազանց կատարելութեան հանդուստիպը չեն ունեցել աշխարհում:

Դաչնագրութիւն Պարսկաստանի հետ.

(1) Шъшка, pion, ճնապարհի (սովընոյի) մի տեսակ:

Ընթնքը դառնում է կեղծան քաղաքականութեան և փիլիսոփայութեան.

Ընթնքի մտաւոր տիրապետութիւնը համապատասխան էր քաղաքականին: Ինչպէս հայելու վառարանի մէջ ժողովուում են արևի ճառագայթները, այսպէս և փոքր Ասիայի և Իտալիայի փիլիսոփաները ժողովուում էին այնտեղ իբրև մտաւոր գործունէութեան ճանապհած կեդրոնում: Իսկ Եգիպտոսը պարսից պէնքերի բերանը մատնուած՝ պղորում է մինչև վերջին ատամնանը: Սակայն ասելով, թէ պարսիկները իբրև յաղթականներ կործանեցին երկրագնդի վերայ գոնուած ամենահին քաղաքակրթութիւնը, չպիտի եզրակացնել, որ պարսիկները իբրև հրամանատարներ ատում էին գիտութիւնը, կամ իբրև կառավարիչներ անգութ էին. չպիտի մոռանանք, որ փոքր Ասիայի Յոյները դոհ էին նոցա կառավարութիւնից. և որ՝ նոքա միշտ առաւել ցանկանում էին պարսից հպատակ մնալու, քան որևիցէ քաղաքական հաստատուն դաշինք կնքելու Եւրոպայի փառասէր Յոյների հետ:

Ասպիսի քաղաքական բարդաւաճման միջոցին Ընթնքը գարձաւ աշ միայ հայրենիք արհեստի նորանոր և չքնաղ գիւտերի, որոնք հիմնուում էին ճշմարտի՝ աւելի իսկական գնահատութեան վերայ, քան որ երբ և իցէ յայտ եկած է աշխարհի նախնի դարերում, և որոնք — կարելի է աւելացնել — երէկ և ունեցան էլ իրանց հաւատարուող, բայց մինչև այսօր գերազանցող ոչ, այլ նա եղաւ նաև ապաստանարան բոլոր փիլիսոփայական կարծիքների,—հների և նորերի: Յոնիացիները, Իտալացիները, Եգիպտացիները և Պարսիկները բոլորն այստեղ էին ժողովում, ընդդիմադրում ու համեմատում իրանց վարդապետութիւնները: Եւ յիրաւի՝ Յունաստանն իւր փիլիսոփայական վսեմ փառքով միանգամայն Ընթնքին է պարտական. իսկ երկրի միւս մասը շատ փոքր էր մասնակցում գիտութեան ճշակութեան մէջ: Ընդհանրապէս կարծիքը, թէ ամբողջ Յունաստանն առհասարակ լուսաւորութեան աշխարհ էր— բոլորովին սխալ է:

Ինչ դրութեան մէջ էր փիլիսոփայութիւնն այս ժամանակում.

Պէտք է տեսանք, թէ ինչպէս առանձին իմաստասիրողների հետազօտութիւնները սակաւ առ սակաւ նոցա շատերին կասկածել տուին մարդկային գիտութեան ստուգութեան վերայ. և նկատի առնելով փիլիսոփայական յաջորդական դպրոցների ստացած հետևանքները, չենք կարող չնշմարել ընդհանուր միտում դէպի սկեպտիքականութիւն: Պէտք տեսաք, թէ ինչպէս Յոնիացիների նիւթական և շօշափելի սկզբունքներից Ելէականները անցան ոչ միայն յայտնի աներևոյթութեան, այլ և մինչև աշխարհի գոյութեան ուրացութեանն: Եւ թէև այդ բանները միայն որոշ որոշ արդասիքներն էին առանձին դպրոցների ի հարկէ, բայց պէտք չէ մոռանալ, որ այդ

դպրոցները բուն առաջատարներն էին: Այժմ հասել էր ժամանակն, երբ ուսուցչի անձնին այլ ևս իմաստութեան տերը չէր բռնում ինչպէս էր մինչև այժմ: Երբ որ փիլիսոփայութեան զանազան եղանակները այդ վերջին արդիւնքները ժողովեցան միասին, հիմնուեց բարձրագոյն քննադատութիւնն, և յառաջ բերուեցան վերին կարգի երկակացութիւններ:

Բարձրագոյն քննադատութիւն ակ էջն.

Այսպէս են լինելու միշտ մարդկային հետազօտութիւնները: Փիլիսոփայական սկզբնական տարրերն, որոնք մեզ ընդունում ենք իբրև հիմն, ենթարկուում են սկզբում մեկի, յետոյ միւսի քննութեանն, որ այս միջոցին երևան է բերում իւր սեպհական, առանձին կարծիքներն և եզրակացութիւնները և իւրաքանչիւրը հաստատած է իւր մակածութեանց ճշմարտութեանն: Իւրաքանչիւր հետազօտող մոխկ է տալու ամբողջի վերայ առանձին տեսակէտից և չէ պալծրել ուշադրութիւն այն անհամեմատութիւնների և հակասութիւնների վերայ, որոնք բաւականին պարզ փայլում են, երբ որ նորա մակարերութիւնները համեմատուում են այն հետազօտողների եզրակացութիւնների հետ, որոնք այնքան յաջողակ են, որքան իրաբ: Ժամանակի ընթացքի հետ անհրաժեշտօրէն երևում է նոր դէպք հետազօտողների, որոնք ընդունելով իրանց նախորդների առաջին տարրերի հետազօտութիւնից ստացած արդիւնքները, ձեռնարկում են համեմատելու նոր ի նորոյ արդիւնք արդեանց հետ.— համեմատութիւն բարձրագոյն կարգի, և շուտով դէպի ճշմարտութիւնն առաջնորդող:

Օրինակ հետևական յետագայ պատմ. թիւն.

Պէտք չէ մի ինչ կարող լինի այնպէս լաւ բացատրել թէ ևս այսպէս փիլիսոփայական խնդիրների վերստին և բարձր քննադատութիւն ասելով ինչ եմ հասկանում, քան այն, ինչ որ պատահեց Հռոմի մէջ, հետևանք նորա ընդհանրական կրթական ներքոյ թեան քաղաքականութեան: Հռոմէն և բոլոր ատտուածների և բոլոր կրօնների հետևողները կարող էին առանց որևիցէ կատարել իրանց ատտուածպաշտութեան որոշ կարգերը: Կարելի է կարծել, թէ գրեթէ նոքա բոլորն էլ միանգամայն ջերմեռանդ էին իրանց դէպի այս կամ այն ատտուածութիւնն ունեցած հետաքրքրի մէջ, և հարկ եղած միջոցը ոչոչ էին տալն անհերքելի ապացուցութիւններ իրանց կրօնի դերազանցութեան հաստատութեան և իրանց վարդապետութիւնների ճշմարտութեան: Պարզ է, որ երբ այս բոլոր զանազան առաջնական գրութիւնները հանդիպեցան մէկ մէկի, հարկաւ պիտի սկսուէր երկրորդական և վերին կարգի համեմատութիւն, որ տանել կարող էր առաջնորդել դէպի անկասկած ճշմարտութիւնը: Այս յայտնի է, որ այդ երկրորդանուագ հետազօտութեան ընթացքի

արդասիքն եղաւ բանականաւանձնաւթեան փիլիսոփայական ուրացումն։

Սոփեստները.

Փիլիսոփայական դրութիւնների և եղրակացութիւնների այդպիսի երկրորդանաւոր քննադատութեան պատուոյ Աթէնքում եղաւ նոյնպէս սկեպտիքականութիւն նոցա բոլորի վերաբերութեամբ, և յառաջ գալը նոր դասակարգի մարդկանց—Սոփեստների,—որոնք ոչ միայն ուրացան առաջին փիլիսոփայական եղանակների գոհացուցչութիւնն, այլ և իրանց անհաւատութիւնը հասցրին այն աստիճանի, որ չարդարացաւ նոցա փաստերումն. այսինքն՝ ոչ միայն ուրանում էին թէ մարդկային բանականութիւնը մինչև այսօր ստուգապէս գիտեցած է մի բան, այլ և պնդում էին թէ՝ բանականութիւնն, իւր բուն բնաւթեան համեմատ կանոնի ունենալով մարդկային կազմուածից կամ այն հանգամանքներից, որոց միջոցով ներգործում է, բոլորովին անընդունակ է ճշմարտութեան հասու լինելուն. թէ՝ եթէ մինչև անգամ իսկապէս էլ հասու լինի ճշմարտութեանը, այսօր ամենայնիւ նա չունի կրիտերիում, ըստ որոյ կարողանար գիտենալ այդ. այնպէս որ՝ նա չէ կարող հաւատացած լինել և այն մասին, թէ արդարև ինքը հասու է եղել ճշմարտութեանը։ Սրանից հետևում է որ՝ ըստ օրում չունենք ճշմարտութեան կաղապարն, ուրեմն չենք կարող ասենալ և բարւոյն. և թէ՝ մեր բոլոր հասկացողութիւնները բարոյ և չարի վերայ միանգամայն պայմանաւոր են կամ թևլադրւում են դասակարգութիւնից.կամ — ինչպէս ասում են սոփեստները,—,, զօրութիւնն է արտայրում օրէնք,,։ Այս կերպով՝ իրաւացին և անիրաւացին միջև դանազանութիւնը նոքա համարում էին հասարակութեան ելևէջական կեղծիք, որ չունի բացարձակ կամ մշանչենաւոր դոյութիւն բնութեան մէջ։ Անքնակալն կամ հասարակութեան բազմութեան կամքը ստեղծում է օրէնք, օրէնքը սահմանում է իրաւն և անիրաւն. այնպէս որ, նոցա մէջ իսկապէս չկայ զանազանութիւն, այլ կայ միայն զօրութեան ծնունդ՝ խաբէութիւն։

Զօրութիւնն է սահմանում օրէնք։ Այս տեղից հետևում է, որ

Ըստ մի բժում են վնասակար—թիւնն և ինչն անգամ բարոյականութեան.

մարդ ոչ մի բանում չպիտի վըստահի խղճի ազդարարութիւններին. և պէտք, որ ուրիշներն էլ նոքան չվստահին, որովհետև խիղճն իրականապէս դոյութիւն ունեցող բան չէ, այլ միայն երևակայութեան պատրանք. կամ ամենամեծը,— դաստիարակութեան շրջանում ծագումն առած, և մեր ընկերական դրութեան ստեղծուածն է։ Սորա համար խմաստունը զանազանութիւն չէ անում բարի գործերի և յանցանքի միջև, որովհետև տեսնում է թէ իսկապէս ոչ մի արարք միւսից աւելի լաւ կամ աւելի վատ չէ. բայց նա զարձնում է մեծ ուշադրութիւն իւր արտաքին պայմանների վերայ—իւր հասարակական վիճակի, յարմարեցնելով իւր գործողութիւնները այն պահանջ-

մանն, որ հասարակութիւնը խնդացիութիւնով թէ չիմաթութիւնով, այսու ամենայնիւ կատարեալ դրութիւնով յայտնել է իրաւացի. կամ թէ՝ եթէ նորա շահերը հարկաւորում են նորան հեռանալ հասարակութեան կարգադրութիւններից, նա անում է այդ ծածուկ. կամ— որ աւելի լաւագոյնն է. գործ է դնում հարկաւոր դէպքում հեռուրութիւն, աղնիւ արուեստ, որի օժանդակութիւնով վատը կարող է լաւ հանդիսացած լինել. որի շնորհիւ ամբաստրծը կարող է այնպէս կոխադրել հասարակութիւնն, որ վերջինս համարի նորան պատուոյ արժանի. և որի շնորհիւ նա կարող է ապացուցանել, թէ իւր թշնամին— իսկապէս պանծալի գործ էլ կատարած,— պիտի մեղադրութ իրրև յանցաւոր։ Այս մտածմունքներով ոգևորուած սոփեստները փոխադրուում էին մէկ տեղից միւսը, փոխարինելով դրամական նշանաւոր դումարի հռետորական արուեստի դիտութիւնն, և առաջարկելով իրանց յօժարամտութիւնը ճոխ և անուանի գերդաստանների պետահաս որդիներին ուսուցանելու։

Ի՞նչ պէտք է ասել արդեօք այսպիսի դրութեան և իրերի այսպիսի վիճակի մասին։ Միայն այն, որ այդպիսի մի դրութիւն քարոզում էր միանգամայն մեաւոր և հասարական անբարոյականութիւն. մեաւոր՝ ըստ օրում կործանում էր գիտութեան սկզբունքներն և ապացուցանում, թէ բանականութիւնը չէ կարող առաջնորդել հասարական՝ որովհետև ուսուցանում էր, թէ արդարութիւն և անարդարութիւն, բարեգործութիւն և մեղք, խիղճ, օրէնք և Աստուած— միայն երևակայութեան ստեղծուածներ են. թէ՝ բնաւ վատ չէ յանցանք գործել, թէև կարող է շատ վատ լինել և անշուշտ շատ անմաութիւն, եթէ յայտնուի. թէ՝ մարդու համար ընտիր բան է վաճառել իւր հայրենիքը Պարսից, միայն թէ առանայ դրա համար արժանաւոր դրամագումար, և բռնած գործը ձնայ այնպիսի դպրոնիք, որ հասարակութիւնն և մանաւանդ իւր մասնաւոր թշնամիքը բնաւ չիմանան. թող չմոռանայ այնպիսին, որ հայրենասիրութիւնն առաջին միջոցն է պարզամիտ գռեհկին խաբելու, և վերջին ապաստանարանն է խարեբայի համար։ Այսպէս եղան՝ մանաւանդ փիլիսոփայութիւնները առաւել ընդհանուր չափի տակ մտցնելով գողերու առաջին փորձի արդասիքները. այս եղաւ այն միջոցն, որ —փոխանակ նոցա բացառութիւնն և անկատարութիւնները միայն բառնալու մէկ միւսի հետ համեմատելով,— յափշտակեց նորանց իրական առաքելից և հարկադրեց ծառայելու խարէութեան։ Ընդ բաւնը միմիայն դիտութեան համար չէր. արդէն այն ժամանակը կարելի էր նշմարել սկզբնաւորութիւնն այն համոզմունքների, որոնք շատ դարեր անցնելուց յետոյ պատճառեցին վերջնական անկումն Հռոմի բազմատառածութեանն։

Գործ ունենալ ինքնաբուխ ուժերի հետ, որոնք ոչ միայն ենթակա չեն մեր կամքին, այլև ամենևին չեն էլ ենթարկվում մեր ըմբռնումներին։ Մենք ոչ միայն չենք կարող ստեղծել նոր ուժեր, այլև չենք կարող ոչնչացնել գոյություն ունեցողները։ Մենք կարող ենք միայն ուսումնասիրել դրանք, ճանաչել դրանց գործելակերպը, հետևել դրանց զարգացման ընթացքին, որպեսզի կարողանանք ճիշտ ուղղություն տալ մեր գործունեությանը։ Մենք կարող ենք ուղղել մեր ուշադրությունը դեպի այն ուժերը, որոնք մեզ հետաքրքրում են, և ստիպել, որ նրանք ծառայեն մեզ։ Մենք կարող ենք ստեղծել մեզ համար ավելի հարմար պայմաններ, որոնց մեջ մեր ուժերը կգործեն

թանում են սովորաբար պատուաճ, և հետևաբար անձնաս ձանձրալու հով. բայց եթէ որպիսի և իցէ դէպքով վրդուածքի կատնեն և խախտուած մասունքները բախտում են մէկ մէկի, եթէ փորձեր են լինում վերստին միաւորել և կենդանացնել նորանց, կամ երկրորդական վերլուծութեան միջոցով դուրս բերել նոցանից ձշմարտութեան այն մասն, որ պարունակուում է նոցանում, այն ժամանակ իսկոյն վրայ է հասնում տապնասն. և—այսպէս է անց.քերի բնութիւնը—նորան հետևող յեղափոխութեան մէջ նորա թոլորն էլ միանդամայն կորճանուում են:

Օրինակներ փիլիս դարերից.

Ընդհակառակ՝ Լուսաւորչի միջնադարեան քաղաքագէտներն այսպիսի հետևանքներ էին նախատեսում, որ այնքան անդրդուելի հաստատուն թիւնով ջնջում էին նոյն իսկ սերմի միջում որ և իցէ յարձակում կղերական իրաւասութեան վերայ, և կրօնական վարդապետութիւնների անձնական մեկնութեան որ և իցէ փորձ: Ընկարելի է, որ լուսաւոր մտքի աչեր մարդիկ չհամանային հեղինակութեան նուիրական արած շատ պահանջմունքների անկայունի անմատչելիութիւնը: Բայց եթէ թոյլատրուած լինէին ազատ քննադատութիւնն և բացատրութիւնն, այն ժամանակ կարող էր այդ սերմը հետևանք ունենալ բայց թէ այն, որ կակաչին յարուցանել սուսումն ուսման հետևից և տանդ աղանդի. որ՝ աստուածաբանական սկզբունքները միչև այնքան ամուր պիտի ներթարկուէին սպառնացող կորճանման, որ հազիւ թէ երկար մարդ գտնուէին համամիտ խորհողներ. բացի դրանից, միևնոյն մարդը պիտի սկսէր փոփոխել իւր կարծիքները հանգամանքների փոփոխութեան հետ, կեանքի զանազան շրջանների մէջ: Միևնոյն է, արշաւ և բարեձև լինի նա սկզբում, արշաւ և ակնյայտնի խելացի լինին նորա անհրաժեշտութեան ապացոյցները, թող միայն մի անգամ սկսուի այդ քննադատութիւնն, և ահա արդէն աչ մի մարդկային ոյժ կարող չէ նորա առաջը փակել, մինչև որ հետևանքներ բոլորուին: Նկատի առնելով հեղինակութիւնն, ազգեցութիւնն և բազմակոյս փաստերն, որոնք այսօր խոնուելու են, կպահանջուին գուցէ շատ դարեր մի այսպիսի գործողութիւն ղլուխ տանելու համար. բայց թէ վերջապէս կունենայ արդիւնք, այդ մասին տարակուսելու չէ աչ մի լուսաւորեալ մարդ: Ձին եւրոպական աշխարհի, փորձը ցոյց տուեց որ այսպիսի վերլուծութեան գործողութիւնն աչ մի մեծ վտանգ չէ ներկայացնում. քանի որում նորա ժամանակում իւրաքանչիւր աղանդ, իւրաքանչիւր առանձին մարդ դնում իւր կեանքի առաջնորդող կանոնը. բայց հենց որ հասնի երկրորդական վերլուծութեան շրջանն, անխուսափելի պիտի հետևի տապնասը, որ սովորական հասարակութեամբ կամ խումբի իրանում ոչ միայն

Վտանգաւորութիւնն, երբ որ բանական սկզբունքները դուրս են գալի հասարակ ձևակերպութիւնից.

կրօնն, այլ և հասարակական սկզբունքները: Այս թէև առանձինը կարող է ժամանակաւորապէս յետ տուած լինել սպառնալիք անմտող շահերի կողմից դիմադրուող զօրութեան ներգործութիւնով, և այն ժողովրդական զգացման օդնութիւնով, որ գիտէ գարշել ինքնագլխութիւնից, բայց Եւրոպան պիտի հասնի այն արտասովոր դրութեանն, որ պատահում է այն ժամանակ, երբ ժողովրդի բանականութիւնն ամ՝ում և դուրս է գալիս նորա հաստատի ձևակերպութիւնից.—սպասուելի վիճակ, ըստ որում վերլուծութիւնը պիտի հպի և քաղաքական յարաբերութիւններին և անհրաժեշտօրէն բերի իւր հետ ապատամբութիւն գոյնուող օրինքի դէմ: Պատասխանն ձգտումն կարող է ժամանակաւորապէս խափանուած լինել յաղթող զօրութիւնով, բայց այդ կլինի միայն ընդհատութիւն և ոչ բժշկութիւն: Ընդհանրական քայքայումը շարունակուում է առնել և առնել՝ մուտ գտնելով առաջին դասակարգերի մէջ, մինչև կգրաւի վերջապէս և այն հաստատութիւններն, որոնք հիմնուել են իրան խափան դնելու մտքով: Նեթէ ձնշելու գործին—օրէնքն արդէն վարակուած է, ասել է վախճանը մօտ է. բայց մարդկային նախատեսութիւնը չէ կարող գուշակել թէ ինչ կարող է յառաջ գալ յատկապէս այն ժամանակ, երբ որ այդ անց.քերին ժամանակակից իշխանութիւնը յիմարութիւնով կամ նախանձոտ դիտմամբ չէ հոգում պատրաստել հասարակութիւնը դէպի այդ անխուսափելի փորձութիւնն, որին պիտի նա ենթարկուի: Պետութիւնների ամենագլխաւոր պարտականութիւնն այն է, որ երբ նկատում են իրերի այսպիսի դրութիւնը, պատրաստեն ազգերը դէպի նորա ահաւոր հետևանքներն: Այս նպատակի համար գուցէ նորա ունէին իրաւունք ժամանակաւորապէս իրերի դրութիւնը զսպելու, ինչպէս բժշկին երբեմն ներելի է ծածկել իւր հիւանդից նորա դրութիւնը. գուցէ իրաւունք ունի աերութիւնը գիմելու մինչև անգամ բուռն զօրութեան գործադրութեան. բայց կասկածաւոր արդարութեան այս միջոցներն երբէք չպիտի գործ ածուին առանց ուրիշ այն միջոցների, որոնք նշանակուած են ընդհանրութեան ամբողջ պատրաստելու փորձութեան համար, որի միջով պիտի անցնի նա: Ընդհակառակ այսպէս էին միջնադարեան Լուսաւորչի պետական նշանաւոր անձանց խորին համոզմունքն. այսպէս էին, անկարծիք, փաստերն, որոնք նորա արդարացնում էին սկսող չարեաց ընդդիմադրութիւնը—գործ՝ որի համար Եւրոպան այնքան յաձախ անարդում էր նորանց:

Նախընթաց անհրաժեշտութեան—նորի համաձայն դիտողութիւնն.

Մեզ մնում է այժմ ակնարկ ուղղել մեր վերևում բացատրած հանդամանքների վերայ, որպէս զի որոշենք զարգացման յաջորդական շրջաններն, որոց միջով անցաւ յաւնական միաքը: Մեզ դրաւում է այժմ ոչ թէ այդ մանրամասնութիւնների ստուգութիւնն և

կամ ալեւտ ալեծուԹիւնն, այլ նոցա կարդաւորուԹիւնը։ Դոքա հաստատեցնել են, որպէս կարող ենք դատողուԹեամբ նկատդրել յունական մասաւոր զարդացման ճանապարհի դիծը։

Յունական փիլիսոփայուԹեան վաղնջական կէտը բնագիտական և երկրաչափական էր. երկիրը ընդունուում է տիեզերքի կեդրոն, և ապան հետևանք՝ անհրաժեշտաբար ծագում են սխալ կարծիքներ ծովի և ցամքի յարաբերուԹիւնների և տարածուԹեան վերաբ։ Այս փիլիսոփայուԹիւնը հաղիւ հաշուում էր հարիւր տարի, երբ սկսաւ կազմել տիեզերաբանական անուանուԹիւններ իրան հատատի կարծուած հիմունքների վերաբ։ Վեռ տրուածի հասկացողուԹիւններից—ինչպես տարածուԹեան միջի ծայրի և սահմանի, մասին եղած հասկացողուԹիւններից—սկսուելուց շատ յառաջ նա ձեռք տուեց արդէն բացատրելու աշխարհի ծագումն։ Նոյն ոչնչի ղարդացումն յառաջ հանելու պաց, այնքան խստասիրելի եղաւ, թէ սրարչուԹիւնն իր սրտանքին մասերում երևան է հանում յայտնի նպատակ և կարդ, սրտայայտում է նրանաւոր միջոցների զործադրուԹիւն յայտնի նպատակների հասնելու համար. և այս բանը հարկադրից նրան աշխարհի կառավարուԹեան մէջ բանական և ազատ զործունէուԹիւն, մարդկային նման. և սովորական հաճախատուԹիւնով մարդկային սովորուԹիւնների և զործողուԹիւնների հետ յոյն փիլիսոփայուԹիւնն անցաւ իր մարքօրինակ հասկացողուԹեանց ատոիճանը։ Փոքր մի ևս յառաջ, և ծագեցաւ կասած, որ մարդու միտքը կարող չէ հասնել հետատի դիտուԹիւնների. և այս կարծիքը, թէ մեք չունենք ոչ մի ստոյգ գիտուԹիւն, վերջումը զարձաւ սոփեստական։ Այս սկեպտիքականուԹեան մէջ իւրաքանչիւր յաջորդող վարկեանի հետ ատելի և ատելի նշմարելի է զառնում արևելեան զաղափարներին մերձենալը։

Ասածի այս շրջանն եղաւ անմիջական նախընթացն ատելի կատարեալ հասկացողուԹեանց աշխարհի վերաբ։ Ընդունուեց մերթապես կային դրուԹեան արեզակնակեդրոն կարծուածն, և երկրին տրուեց կախուած ունեցող դրուԹիւն։ Երկրակեդրոն հասկացողուԹիւնների վերաբ հիմնուած և բնագիտական և մասաւորական վարդապետուԹիւնները բնականաբար ենԹարկուում էին այժմ վոնդպատրուԹեան. բայց ներքը բնականաբար ենԹարկուում էին այժմ վոնդպատրուԹեան. բայց որովհետև կապուած էին էշխող կրօնական համոզմունքների հետ և ներկայացնում էին նիւԹական կարևոր շահեր, ուստի հասարակուԹեան մէջ սկսուում են հալածանքներ. իսկ փիլիսոփաների մէջ՝ կեղծաւորուԹիւն։ Էշխարհի յատկուԹիւնների համապատասխանական հատկացուԹիւնը զնալով ատելի նշմարելի եր լինում. և սորանից իրրև անհրաժեշտ հետևանք ծագեցան հոդւոյ բղխման, տեղափոխուԹեան և Թաղման մասին եղած վարդապետուԹիւններն. Այս տեղից միայն

Արևելեան դաղափարների մուտնալը.

մէկ քայլ կար մինչև այն կասկածը, Թէ նիւԹ, շարժումն և ժամանակ կան միայն երևակայուԹեան մէջ.—այս կարծիքներն արատասխանուԹեան հիւլէսաբանական վարդապետուԹեան մէջ, որ հաստատում է Թէ՝ կան միայն հիւլէներ և անջրպետուԹիւն. և որ աւելի նրբացած ձևով խոստովանում էր Թէ՝ հիւլէները միայն մաԹեմաթիքական կէտեր են. վերջապես Թէ՝ նոքա են միայն դօրուԹեան կեդրոնները. այսուՀետև այս վարդապետուԹիւնը մասնաց ԷուդրոսանուԹեան չափազանցուԹիւններին։ Ինչպէս անհրաժեշտօրէն լինում է այն դէպքերում, երբ որ հոդևական զարդացման պահանջ աստիճանի մարդիկ,— է որ աւելի, է որ նուազ՝ մասաւոր յատկացուԹիւններ զործողներն, ապրում են միևնոյն ժամանակում, այսպէս մեր նկարագրած զարդացման կարգաւոր աստիճանները զտնում էին միևնոյն ժամանակում։ Այս տեղից սկսում է Սոփեստների զործունէուԹիւն, որոնք մեկ զարդի վարդապետուԹիւնը հանդիպ կարդելով միւս զարդի վարդապետուԹեան և բոլորի արժէքը մեկ համարելով, կործանեցնում բոլորն. և վախճան առաս բնագիտական դիտողուԹիւնների վերաբ հիմնուած փիլիսոփայուԹիւնը։

Մատաւոր յաՀաջադիմուԹեան եղանակի ՀակիրառուԹիւն.

Յունական մասաւոր կեանքի այս երեսյԹի սկիզբը վախճանի հետ համեմատելով, չէ կարելի չդիտել, Թէ որչափ մեծ եղաւ կատարելագործուԹիւնը։ Վիճակների շրջանի հասկացողուԹիւններն իրանց ներքին նշանակուԹեան կողմանէ շատ բարձր են սկզբնականից։ ՏղայուԹիւնից և ԹերուԹիւններից, որով՛ղ զրաղուած էինք մինչև այստեղ, տեսնում ենք, որ մարդկային մտքի Համար կայ յառաջադիմուԹեան սահմանուած եղանակ. յետին ժամանակների պատմուԹիւնից տեսնելու ենք, որ նա միշտ ներգործում է միևնոյն ուղղուԹեան մէջ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

ՀԱՒԱՏԻ ԴԵՐԸ ՅՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ։

Բարոյական փիլիսոփայուԹեան ծագումն և անկումն։

Յունական փիլիսոփայուԹեան բարձրակա-նը բարոյական-ուԹեան սկզբունքների վերաբ։

Սոփեստները պատճառեցին մասաւոր խառնաշփոԹուԹիւն. բայց մարդկային բնուԹիւնը չէ բաւականանում այսպիսի դրուԹիւնով։ ԻնդիւսուԹեան վերաբ կասած յոյսերը Թողնելով, յունական միտքը դարձրեց իւր ուշադրուԹիւնը բարոյականուԹեան վերաբ։ Վեռնքի զարդացման մէջ միայն մեկ քայլ է հետազօտուԹեան զարից դէպի հատատի զարը։

Սոկրատ. Նորա վարդապետուԹեան եղանակը

Այս շարժմանը ձեռնապարհ բացող Սոկրատը, ծնաւ Ք.Ա. 469 տ. յառաջ։ Նորա ազդեցուԹիւնը մի քանի մասերում զդալի է և մինչև

մեր ժամանակը: Նոպիտական նկատողութեանց պատճառների թերութեան փորձը առնելով, ուզա հանդէպ կարգից նա հաստատուն արդիւնք, որոնք կարող են ձեռք բերուիլ բարեզործութեան և բարոյականութեան զարգացումից: Նորա կեանքը շարունակ կռիւ էր Սոփեստների հետ: Նորա ուսուցանելու եղանակը խօսակցական էր, որի մէջ յատկապէս դերազանցում էր նա, ինչպէս բոլոր ունկնդիրները միաձայն վկայում են: Սոկրատ դիմում էր սահմանների և հանրանցից ձեռնարկութիւնները, զարգարելով իր փաստերը զբուցատրութեան ձևով: Ձգեալելով իր նախորդների օրինակներին, որոնք ձշմարտութիւնը պարում էին արտաքին իրերի հետազօտութեան մէջ, նա ուշադրութիւնը գարձրեց ներքինների վերայ, ապացուցանելով բարեզործութեան դերազանցութիւնը, նորա միանման լինելը գիտութեան հետ, և արդարութեան ճիշդ կատարման անհրաժեշտութիւնը: Տեսնելով սոփեստների՝ հասարակութեան մէջ մացրած բարուց յոռութիւնը, նա պնդում էր, որ անհրաժեշտ է փոփոխութիւն անել երիտասարդութեան դաստիարակութեան մէջ և համաձայնեցնել նորան այն կանոնի հետ, թէ ,,երջանկութիւնը կարելի է գտնել միայն բարեզործութեան և սերտազործութեան մէջ,,: Այսպէս պատճառով Սոկրատ միանգամայն փոխարկեց բնագիտականը բարոյականի. և սորա մէջն է կայանում նորա յառաջ բերած փիլիսոփայական յեղափոխութեան էութիւնը: Իսկապէս խօսելով, Սոկրատ ոչ դպրոց յօրինեց, և ոչ առանձին բարոյական ուղի իջեց դրութիւն մշակեց. քանի որում երբ որ հարցնում էին, թէ ինչպէս որոշելու է բարին չարից, նա ցոյց էր տալի հարցնողի հայրենիքի օրինքների որոշումները:

Սոկրատ ուժի մէջ

Սոկրատ, թեպէտ թէ, երբէք անձնատուր չեղաւ նոյնպէս իմաստասիրելու ատելածութեան բնութիւնն, ընդունելով միմիայն իրերի փաստ նորա գոյութիւնն, որ ունէր բազմազիմի և անհերքելի ապացուցութիւններ: Թէպետև՝ նա ինքը մերժում էր իր ազգի կրօնական տհաս գաղափարներն և միանգամայն ներհակ էր աստուածոյթեանը տուած մարդայատկութիւններին, (1) բայց ամեն ջանքով դգուշանում էր ամբոխը վշտացնելուց որ և իցէ անարգական ազգարարութիւնով դէպի սիրագործող մնապաշտութիւնները. ընդ հակառակը պեռ իրրև բարի քաղաքացի անձամբ օրինակ էր տալի նոցա պահպանմունքների կատարմանը: Նորա կարծիքով՝ սոփեստների սխալն այն էր, որ նորա խանգարելին մտաւոր անպտուղ տեսութիւններին, իսկ նոցա տեղը չկարգեցին ոչ մի ուսումնական համզուածք: Նրա մարդը չէ կարող գիտենալ գոնէ հաւատալ կարող է, և ապացոյցի տեղն օգտակարապէս կարող է փոխանակել հաւատը: Ըստ այմ նա յատկապէս ամուր կանգնած էր հոգւոյ անմահութեան և տիեզերքի

(1) Антропоморфизмъ:

նախախնամութիւնով կառավարելու մեծ վարդապետութեան վերայ. թէ և չէ կարելի ուրանալ, որ նորա մի քանի կարծիքների մէջ դտնուում են ուղղակի ցուցմունք, թէ գերագոյն էակը տիեզերքի հոգին է:

Մարմնամարթկայի և բնագիտութեան հատակ կարծիքը:

Սակրատ ասում էր, որ իւր իսկական ամենագլխաւոր իմաստութիւնն, իւր սեպհական ուղիութիւնը ճանաչելն է. և խորհուրդ էր տալի իւր բարեկամներին անձնատուր չլինել մարթեմարթիկայի և բնագիտութեան ուսմանն. քանզի որում առաջինը՝ նորա ասելով, տանում է դէպի ունայն եղրակացութիւններ. իսկ երկրորդը՝ դէպի անաստուածութիւն: Նորա գրութեան մէջ ամենայն ինչ ուղղուած է անունների բացատրութեան. բայց նորա դատողութիւնները շատ անգամ անկատար են, ուստի և եղրակացութիւններն անկանոն. Օրինակի համար՝ նա պնդում էր թէ՝ ոչ ոք վատը դիտութեամբ չէ գործում. քանզի որում՝ ով որ գիտէ, որ այս ինչ բանը լաւ է, այն էլ գործում է. թէ՝ չարերը ակամայից են լինում չար. թէ՝ նա, որ դիտութեամբ ստում է, աւելի լաւ է քան նա, որ առում է անգիտութեամբ. և թէ՝ արդարութիւն է վըճիռները լինել թշնամուն:

Նորա հայեցուածքը վարչ են.

Սոկրատեան փիլիսոփայութեան այս որոշումից չէ կարելի չնշմարել, թէ որքան վայր ի վերոյ պլատ եղած լիներ նա: Այս փիլիսոփայութիւնը միշտ վըճռում է, բաւերի տարբերութիւնն իրերի տարբերութիւն ընդունելով: Նորանում սակաւ էր նոյնպէս նորութիւն: Բարոյականութեան որտեռանդ քարոզութիւնը չէ կարելի համարել որ և իցէ նորութիւն, քանզի որում չէ կարելի նոյնպէս գտնել այնպիսի ժամանակ, երբ եղած չլինին բարեզործ մարդիկ, կանքին միևնոյն կանոնները կարգողներ, ինչ որ Սոկրատն էր քարոզում. սորա համար էլ մեք պլատի հետազօտենք, թէ ի՞նչն էր, որ այդ մեծ մարդու անուանը տուեց այդպիսի անսպառ փայլ և ինչու տալիս են նորան այդպիսի արտաքոյ կարգի նշանաւոր տեղ իւր ազգի բարեզործների կարգում:

Սոկրատի նշանաւորութեան պատճառները.

Սոկրատ երկու մասով բաղդատուր եղաւ. մէկն՝ իւր կեանքը նախապատրաստի, և միւսն՝ իւր մահուան հանգամանքների կողմանէ: Ըստ ամեն մեծ մարդու պատահում է ունենալ այնպիսի կենսագիրներ, ինչպէս Քսենոփոնտեսն և Պլատոն. ոչ ամեն մարդու յաջողում է կեանքի սահմաններին հասնելուց և իրերի բնական ընթացքով գրեթէ ամեն ինչ, որ կարողացել է, առնելուց յետոյ, ընդունել մարթիրտական առաքինութեան և բարոյականութեան համար պակ: Կեանքի փառքին անվայելուչ ժամում Սոկրատի հայրենակիցները դատապարտեցին նորան մահուան: Երդէն ուշ էր, երբ նորա ուշի եկան և դգացին, որ իրանք կարող չպիտի լինին բնաւ պատասխանել ի-

տագանդի հարցմանը, թէ ինչու համար այդպիսի մի յանցանք դատ-
ծեցին: Սոկրատ իրաւամբ իրան դատող դատաւորներին ուղղած իւր
ընական ձառի վերջումն ասաց. ,,Ասել է մեր բաժանուելու ժամա-
նակը.—ես մեռնում եմ, դուք միւսա՛ր էք կենդանի, բայց թէ որ մէ-
կիս բաղդն աւելի լաւ է, ոչ ոքին յայտնի չէ, բացի Աստուծուց,,:
Ազգային լուծից կասկածն. աւելի ընական վիճակն ընկաւ Սոկրատին:

Նորա դէմ հնչ. թած մեղադ-րանքները.

Այդ դատի իսկական էութիւնը դեռ շատ մթութիւն է ցոյց տա-
լիս. մեղադրանքներն երեք էին.—Սոկրատ ուրանում էր երկրի աս-
տուածները, քարոզում էր նոր աստուածներ, վչացնում էր երիտա-
սարդութեան դաստիարակութիւնը: Նորա բարեկամներն իրաւամբ
կարողացան ասել թէ՝ ծանր է մեղադրել անաստուածութեան մէջ այն-
պիսի մի մարդու, որի ամբողջ կեանքն եղել էր յարդել Աստուծուն.
խոստովանել ոչ միայն նորա զգայութիւնը, այլ և նորա տիեզերք կա-
ռավարելն: ,,Միայն անմիտը,, ասում էր նա, կեանքի յաջողու-
թիւններն ընծայում է մարդկային իմաստութեան,,.իսկ մաստոզ սերն-
դի կանոնաւոր դաստիարակութեան անհրաժեշտութեան համար ա-
սում էր. ,,Միայն իմաստուններն ընդունակ են կառավարելու մարդ-
կանց,,: Սորանից մեք պիտի եզրակացնենք, որ մեղադրանքները բա-
ւական էին և չնծու. և թէ նոցա ներքոյ կային որ և իցէ իս-
կական առիթներ, որոնք տեղիք տալին Ազնացոց զործել այդպի-
սի ծանր ոճիր: Ձի՞նք կարող արդեօք նորա մանաւոր կեանքում
գտնել որ և իցէ բացատրութիւն այդ զատաստանքի: Յաւում ենք, որ
մեզ հասած հատուածները շատ սակաւ են: Դատական քննագատու-
թեան բացատրութիւնների վերայ հաղիւ թէ կարելի է որ և իցէ յոյս
անենալ, ըստ որում դատական քննագատութիւնը միևնոյն այժմ յայ-
նի էր նշանաւոր պարզմանութիւնովն ամեն բանի մէջ, մինչ որ վերա-
բերում է իսկական կեանքի յարաբերութիւններին: Նա Յոյներին և
Հռոմայեցիներին չէ համարում այնպիսի մարդիկ և կանոյք, մինչ-
պէս մեք ընդներս ենք, այլ զրականական երևակայութիւնով ներ-
կայացած մի տեսակ առանձին մարդիկ, որոց կեանքը բացատրութիւն
է բնութեան ընդհանուր օրինքից. և որոնք ներգործում են այնպի-
սի անվախճան պատահմանքների և անակնկալների անցքերի մէջ, ո-
րոնք մտիկ են տրանջելիքի:

Սոկրատի դրու-թիւն Ազնա-քում:

Նախ սկսենք իրերի վերայ մտիկ տալ պարզ, սովորական հայեացքով,
այն ժամանակ չէ կարելի ընդմտնելը որ մեր երևակայած Սոկրատը
շատ տարբեր է այն ժամանակուայ Ազնեցի Սոկրատից: Մեզ ե-
րեւում է նա վսեմ հանճար, որին նախնի մեծամեծ մարդիկ արտա-
յայտում են իրանց երկրին յարգանքը.մարգարէ, այնպիսի սկզբունք-
ների համար, որոց հաստատութեան միջից բարձրանալը կորցնում է

նոյն իսկ կեանքի բոլոր արժէքն. և որոց համար մեռնիլը, մարդու
ձեռք բերելու փառքերից վեհագոյնն է. իսկ իւր ժամանակի Ազնե-
ցոց համար Սոկրատ միայն հրապարակական տեղերում և փողոց-
ների դլխում թափառող մէկն էր· արտաքին տեսքն օտարոտի, և մին-
չև անգամ զզուելի. իւր տարօրինակ ձևերովը խիստ նման խարեբա-
յի (1): Երհամարհելով պատուաւոր զբաղմունքը—կարծեօք քա-
տաշ էր—վատնում էր ժամանակը զրուցատրութիւններում երի-տա-
սարդների հետ, որոց ժողովում էր նորա չորս կողմն իւր գէմքի ըզ-
գայուն գծագրութիւնն, և երգիծակերպ կերպարանքը. զրուցատրու-
թիւններում, որոնք երիտասարդներին հետաքրքում էին իրանց հայ-
րենիքի աստուածներից, ըստ որում նորա կեղծաւորութեան թափան-
ցիկ քօղը չէր ծածկում նորա թշնամութիւնը: Ոչայց և այնպէս
Սոկրատ և քաջարի զինուոր էր, ինչպէս վկայում են իւր ծառայա-
կիցները: Ինչպէս երևում էր նա փոքր հոգս էր անում այն բանի վե-
րայ, որ մարգկանց մեծ մասն միշտ երևում է յատկապէս կարեւոր,
և չէր դարձնում գլխէն ոչ մի ուշադրութիւն իւր կնոջ և որդոց
բաղդի վերայ:

Նորա կինը Քսանթիպպա

Ոարի կինը Քսանթիպպա, ինչպէս պարզ երևում է, անարդա-
բարոյ դառնում էր աշխարհից. Սոկրատ ամուսնացաւ նորա հետ,
նորա լաւսելու հաղուագլուխ ընդունակութեան պատճառով. և թէև
ինչպէս բոլորը վկայում են, նա ինքն էլ այդ մասում ունէր ան-ա-
ւելութիւն ձիրքեր, բայց սակաւ,—թէ և շատ ուշ—որ իւր կնոջ դէ-
բաղմից յատկութիւնների իրան յետ են թողում: Նորա անոյշ
պժուարութիւնների ծիծաղելի դէպքերից մէկն էլ այն էր օրինակ,
որ ճաշի էր հրաւիրում հիւրեր այնպիսի միջոց, երբ սանն ոչ մի
բան չէր դանում նորանց հիւրասիրելու. որով և շարժում էր Քս-
սանթիպպայի զայրոյթն, որի կոպիտ կատակներ այդ մասին ի հարկէ
բոլոր ազդերի տանտիկինները: Յան պատուի վերայ այսքան սա-
կաւ ուշադրութիւն դարձնող ամուսնոյն արարքը վշտացուցիչ են
հպարտ կնոջ համար, Նա էր ուզում բաւականութիւն տալ կնոջ
մշտաթախանձ ենդիրքին.—փոխ ընդունել նորանից, որոց վերայ ժա-
մանակ էր վատնում. փոխ՝ որ այնքան հարկաւոր էր տանը: Նորա
դատելուց յետոյ կինը տարաւ իւր հետ որդիներին նորա մօտ բան-
դին, և Սոկրատ յետ ուղարկեց նորան—ինչպես ասում էր ինքն իւր
բարեկամներին—կատակելով, որ նորան աւելի արտօնութիւն կլինի:
Մենք տեսնում ենք Քսանթիպպային, որ մինչև վերջն ընթանում
է այնպես, ինչպես վայել է կնոջ և տանուտի: Նրանի կայ որ և իցէ
վատ բան այդ մարդու կեանքում, որ նորա որդոց մօրը բողբոջում
է նորա վարքի դէմ և հասարակութիւնը պաշտպանում է նորա բո-

(1) Шарлатанъ:

ղբքները: Սոկրատի պատմութեան միջի այս բոլոր դէպքերն ի նկատի ունենալով, նորանցից ուրիշ եղբակացութիւն չենք կարող հանել, բայց թէ այն, որ Աթենացիք նշմարել էին նորան անարժան, և դուրս նաև վանդալաւոր անդամ հասարակութեան:

Խակապէս Սոկրատ զոհ եղաւ քաղաքական անհանդուրժողականութեան.

Ընկարծիք՝ նորա դատաստանն և վճիռը կապ ունէին քաղաքական պայմանների հետ. նա ինքն ասում է, որ շատ շուտով մահ պիտի դանէր Սպարտիների Լևոնի դործում, եթէ պետութիւնը գըլուաձ չլինէր: Սոկրատ հակամէտ էր աղնուապետութեան և ոչ ռամկապետութեան: Իւր կուսակցութեան հետ միասին մասնակցեց այնպիսի շարժումների, որոնք հարկաւ պիտի յարուցանէին իւր դէմ մահադիմ ատելութիւն. և չպէտք մոռանալ, որ նորա դէմ մեղադրանք կարդացող Անիտէն էր, որ նշանաւոր դեր էր խաղում իրերի հին կարգի վերանորոգութեան մէջ: Աթենացոց սխալմունքն այն էղաւ, որ գործ դրեցին այնպիսի պատիժ, որ իսկական յանցանքից շատ ծանր էր. և դորա հետ միացրին հալածանք Սոկրատի աշակերտների դէմ, վճռելով նոցա տարագրութիւն: Ոչ միայն դէպի իրանց ուսուցչի յիշատակն ունեցած մեծարանքն, այլ և իրանց թշդուառութիւնների մտաբերութիւնն այդ մարդկանց զարձրին վայելչութեան ջատագովներ:

Եթէ Աթենացիք և Սոկրատի վերայ այն աչքով մոկ տային, ինչպէս մեք, այն ժամանակ բոլոր մարդկային արարմունքին ներհակ կլինէր, եթէ վարուէին նորա հետ այդպիսի բարբարոս և անարդարանալի կերպով:

Սոկրատի Դևն.

Եթէ այն Դևն, որի թելադրութիւններին, ասում են, լսում էր Սոկրատ, ոչ այլ ինչ է եղել բայց թէ խիղճը, մեք պիտի եզրակացնենք, որ նա տանջուում էր այն մի և նոյն հոգևոյն հիւանդութիւնով, որին հակամէտ են մարդիկ, թշդուառութեան պատճառով կամ դիտմամբ ծայրայեղ ղբկանքների ենթարկուողներն, որոնք այս կերպով հարուած տալով ուղեղին, ընկնում են դառանցանքի մէջ: Երբեք այսպիսի դէպքերը նուազ չեն եղած. Մ՝ևնոյնը պատահեց և Մ՝ուհամմէդին:

Սոկրատի մեռնելուց յետոյ երևեցան մի քանի դպրոցներ, որոնք հրատարակում էին իրանց հիմնուած նորա սկզբունքների վերայ: Նոցա մէջ գտնուած զանազանութիւնը ցոյց է տալիս, թէ այդ սկզբունքները որքան սակաւ էին որոշուած:

Մեգարացի դպրոցը— իմաստասիրութիւնը պիտի սահմանափակուի միայն գործնական բոլոր չափաբաժնները.

Ընդ նմանողների մէջ գտնուում էր Մեգարացի Եվկլիդէս, որ ենթարկեց իրան անձնական յայտնի վտանգի, ունկնդիր լինելով մեծ վարժապետին. ըստ որում Մեգարայի քաղաքացու համար քրէական յանցանք էր Աթենքում լինելը: Ենթարկուելով հալածանքների,

Պղատոն և Սոկրատի միւս աշակերտները փախան Եվկլիդէսի մօտ, և գտան նորանից սիրալիր ընդունելութիւն: Նորա դրութիւնը խառնուրդ էր Էլէականի և Սոկրատեանի. և բարոյական ասորը նորա վերդապետութեան մէջ գլխաւոր մասն էր. Եվկլիդէս ապացուցանում էր միակ Գոյութեան լինելութիւնն, որ բարի է և ունի զանազան տեսակներ.—իմաստութիւն, Աստուած. բանականութիւն. և ցոյց էր տալի հակամիտութիւն դէպի այն ուղղութիւնն, որը յետոյ միանդամայն զարդացրեց Ալէքսիկեան դպրոցը, թէ իմաստութիւնը պիտի լինի անդրադայ դէպի նեղութիւնները:

Պիրենեան դպրոց—կեանքի նպատակը վայելքն է.

Մեգարեան դպրոցի հետ միասին կարդում են սոփորատար Պիրենեանն, որը հիմնեց Էրիտրիպտոս: Սոկրատի նման նա էլ արհամարանքով էր մտիկ տալի բնագիտական հայեացքների վերայ. և իւր ուշադրութիւնն ուղղում էր բարոյական վերդապետութեան վերայ: Նորա կարծիքով՝ երջանկութիւնը գտնւում է վայելքի մէջ. և յիրաւի՝ վայելքի և տրամութեան մէջ էր գտնում նա արտաքին իրերի կրիտերիումը: Էրիտրիպտոս ուրանում էր, թէ մեք կարող ենք դիտենալ սուտ գապէս որ և իցէ բան, որովհետև մեր զգայարանքները շատ ընդունակ են մեզ խաբելու. բայց եթէ չենք էլ կարող ըմբռնել իրերն իսկութիւնով, իսկական գոնէ մեռում է այն, որ ըմբռնում ենք նորանց: Պիրենեան դպրոցի վերդապետութեան համաձայն կեանքի վերջնպատակն և առարկան վայելքն է:

Կիրենեան դպրոց—աչքա—մարհանք դէպի արիստներն և անձնական վայելք

Անախթենէս.

Յիշուած դպրոցներին կարելի է միացնել Կիրենիկեանն, Անտիթենէսի հիմնածը: Նորա դրութիւնն անձնասիրական է և գաժան, այդ մի կուռ է հոգւոյ՝ մարմնի դէմ, և ձգտումն դէպի մտաւոր զուարճութիւն. ըստ որում մարմնական բաւականութիւնները միանդամայն անարժան են մարդու: Այս դրութեան էութիւնը դեղեցկապէս արտահայտում է նորա հիմնադրի բնաւորութեան մէջ, որ հրաժարուեց կեանքի բոլոր յարմարութիւններից և պայմաններից, որ կամովին տանում էր թշդուառութիւն, և ենթարկուում տարօրէն եղանակների խստութեանը: Նա զգենում էր ամենակոշտ հանդերձ, չէր դարձնում ոչ մի ուշադրութիւն իւր մօրուքի վերայ, և ընդում էր աղտոտ: Նորա ժուժկալութեան սահմանը քաղցածութեան էր հասնում: Այս պատատաղտեսա մարդատեացն անպատուում էր անցորդներին անարդական խօսքերով և վկրաւորում նորանց իւր անպատշաճ շարժմունքներովն: Լքուած վերջապէս բոլորից, բացի Սամոսացի Դիոգինէսից, մեռաւ յետին չքաւորութեան մէջ: Նորա սիրած վարդապետութիւնն էր թէ՝ հայրենասիրութիւն և բարեկամութիւն ոչ մեկին էլ արժէք չունին. և երբոր վերջին հոգեվարքի միջոցին Դիոգինէս հարցրեց նորանից, ,,արկաւոր է իրան բարեկամ։

Ընտիսթենես պատասխանեց այս հարցումով. ,,Հարեկամը կերկի՞ ինձ այս տանջանքից,,. Դիոգինես առեց նորան դաշյն, ասելով. ,,Սա կերկի,,. ,,Եթե կցանկամ ազատուել չարչարանքներից, այլ ոչ կեանքից,, պատասխանեց: Փիլիսոփայութիւնը Աիրենեան գպրոցի մէջ այն ատենն ընկաւ, որ մինչև անդամ կարելի է կասկածել, թէ իրաւացի՞ կլինի արդեօք մարդուն համարել Ընտիսթենէսի նման մի մարդ այնպիսիների թուի մէջ, որոնք ատանում են իրանց անունը դէպի ի մասութիւնն ունեցած սէրից. մի մարդ, որ առում էր կարդալ և գրել իմանալն, աւելորդ էր իմաստութիւնն, և առում թէ՝ փիլիսոփայութիւնից ուրիշ օգուտ չէ առել, բացի նորանից, որ ուսուցել է նորան ապրել իւր անձի հաստարակութեան մէջ:

Դիոգինես Ամասացին.

Ալինիկեան ողբալի վարդապետութիւնը հասցրած եղաւ իւր վերջին ատոհմանների Սամոսացի Դիոգինէսի ձեռքով: Սա իւր մատաղ օրերում ապրած էր փափկութեան և վայելքութեան. բայց երբոր նորա հայրը, հարուստ սեղանատերը դատուեց կեղծ դրամահատութեան մէջ, Դիոգինես՝ որ մի յայտնի ատոհմանով բաժանուել էր եղել անուանարկութեանն, այժմ ամենից աւելի պատրաստ գըտնուեց ընդունելու դէպի կենցաղական բարիքն և մարդկային կարծիքն արհամարանք քարոզող մի ուսումն: Նորան՝ իւր պահեցողութեան միջոցով բնական ապրելակերպներին յաղթելու ջանքի նկատմամբ կարելի է համարել աւելորդ ժամանակի ձգնազգիների նախատիպը: Համարելով մարմինը միայն սակ խոչընդոտն հոգւոյ համար, նա մեծ գնում էր նորան ամենակարելի միջոցներով. ուստի էր հում միս, և բնակում կարասի մէջ: Նա ուսուցանում էր թէ՝ որչափ մարդ աշխատի սպանել իւր անձն, այնչափ մօտ է նա բարեզործութեան: Նա չէր զգենում ուրիշ հանգերձ, բայց թէ մինչ վերարկու. և նորա բոլոր պէնեցածն էր մի պարկ, մի գաւազան և ջրի մի բաժակ. բայց բաժակը յետոյ ձգեց իբրև անպէտք իր, տեսնելով որ մի երեխայ բուռով ջուր է առնում խմելու: Նորա համար բաւականութիւն էր անարգել հասարակաց պարկեշտութեան որ և իցէ գաղափարն, և ինքը հրապարակով էր հոգում բոլոր կենսական պէտքերը, պնդելով թէ՝ ամենայն ինչ, որ ինքն ըստ ինքեան վատ չէ, պիտի դործուի յայտնապէս: Ասում են թէ՝ նորա մահն, որ հանդիպեց իւր կեանքի ինքնատնաձեայ հասակում, յառաջ եկաւ հում ոսոխուց:

Նորա անկ ուհանութիւնը.

Դիոգինես սոկրատեան համոզմունքը հասցրեց վերջին կէտին. և սորանով արժանացաւ իրան տուած ,,անմիտ Սոկրատ,, անուանը: Նորա արհամարհանքը դէպի ուրիշների կարծիքներն և նորա կրօնական անհաւատութիւնը բացայայտում են այն պատմածովը, թէ

նա միանդամ թուլութեան վայրկենում խոստում առեց մի քանի բարեկամներին զոհ մատուցանելու Դիանային. միւս օրն երեւեցաւ տաճարի մէջ, բռնեց իւր գլխից մի ոջիլ և ջարդեց Դիանայի սեղանի վերայ:

Բարոյական-նութեան անկումն.

Այս փաստերն որպիսի՛ արտասուելի պատկեր են ներկայացնում մարդկային մտքի այդօրինակ ուղղութեան: Որպիսի՛ արագ, թէև անխուսելի հետացումն սոկրատեան բարոյականութիւնից: Ընձեռակիութիւնը թագաւորում է, բարեկամութիւնն և հայրենասիրութիւնը համարուում են անմտութիւն. երջանիկ նա է, որ չի կարօտի բարեկամի. բայց աւելի երջանիկը նա, որ չունի ոչ մի բարեկամ: Ոչայ ոչ մի արարք ըստ էութեան վատթար. մինչև անգամ գողութիւնը, շնութիւնը, սրբապղծութիւնը յանցանք են միայն նորա համար, որ այդպէս են ընդունուած հասարակութեան մէջ: Համաստուածը չպիտի անձնատուր լինի ընորհակալութեան, քաղցրասրտութեան և ուրիշ այսօրինակ ցաւագար զգացման մեղկութիւններին. եթէ կարող է գտնել զուարճութիւն, թող զուարճանայ. եթէ տանապանք վերայ կհասնի, թող տանի, բայց մանաւանդ թող յիշի, որ մահն իսկապէս այնքան ցանկալի է, որքան կեանքը:

Եթէ Յունաց բնագիտական տեսութիւնները վախճան առան իմաստակութիւնով և անաստուածութիւնով, բարոյական հետազոտութիւններն էլ, երևի, չտուին լաւ պտուղ: Երկու դրութիւններն էլ, հասցրած լինելով վերջին եղրակացութիւնների, ոչ միայն երևեցան անօգուտ հասարակութեան համար, այլև բոլորովին վնասակար նորա լաւագոյն շահերին: Որչափ կարելին է նկատել այն ժամանակներում, որոց վերայ է մեր խօսքը, քաղաքակրթութեան ապագան երևում էր մթին և անյոյս. երևում էր նաև, թէ չկար հնարաւորութիւն հանելու փիլիսոփայութիւնից որ և իցէ մի բան, որ միանգամայն համաձայն լինէր մարդկային պահանջմունքներին: Նա սակայն՝ այդ յոյս բնկնող ստրջանքներում Սոկրատի աշակերտներից և բարեկամներից մէկը—կարելի է ասել նորա դլխաւոր աշակերտը, Պղատոն հասատատեց մի ուրիշ դրութեան հիմն, որ թէև պարունակում է իւր մէջ շատ սուտ, և աւելի շատ չնչին բաներ, բայց պարունակում է նոյնպէս և մի քանի բաներ, որոնք մինչև մեր ժամանակը հասնելու համար բաւական զօրեղ եղան:

Պղատոն ծնաւ Քրիստոսից 426 տարի յառաջ: Նութիւնը սիրում էր զարդարել իւր փառաւոր անունները առասպելաբանական փայլուն զարդերով: Ըստ անուանի փիլիսոփայի անմահ վաստակներն, երևի, տուին նորան իրաւունք մեծ պատիւ վաստակելու աւելի քան իբրև մահկանացու: Աստղութիւնն՝ որի ստուգութիւնը չպիտի են-

Պղատոնի ծնունդը.

թարկենք քննադատութեան, ասում է թէ՝ Պղատոնի Պերիկղէոնա մայրն անարատ կոյս զոլով յղացաւ անարատաբար Աստղնից։ Ապո-
ղոն ինքը յայտնեց մանկան ծագումն Երիստոնէային, որ պատրաս-
տուում էր ամուսնանալ Պերիկղէոնայի հետ։ Հռչակաւոր հեղինա-
կի հանճարը կարող է արդարացնել այսպիսի նշանաւոր ծագումն և
մեսամբ էլ ներել նորա մեծարող և անձնատուր աշակերտների թե-
թեւամտութեանն, որոնք պատրաստ էին լսելու հրաշալի և անհե-
թեթ պատմութիւն։

Նորա դաստիարակութիւնն և կրթութիւնը.

Պղատոն Սոկրատի հետ անցուցած ութ կամ տասը տարուայ մէջ ձեռք բերած հմտութիւնների վերայ աւելացրեց այն ամենն, ինչ որ կարողացաւ քաղել Եգիպտոսի, Պերսիայի, Պարսկաստանի և Տարենտի փիլիսոփաներից, և բոլոր արդասիքը հարստութեան և նշանաւոր ծագման, թէև միայն երկրաւոր յատկութեան, ըստ որում իւր նախնեաց շարքում համարւում էր նա Սողոնին։ Պղատոն ուսաւ իւր դարու գլխաւոր փիլիսոփաների մօտ, և դառնալով հայրենիքը, հիմնեց դպրոց Ակադեմի անուանուած։ Նա՝ իբրև ուսուցիչ ունեցած գործունէութեան ընթացքում երեք անգամ գնաց Սիկիլիա, և ամեն անգամ վիշտ էր ունում դէպի իւր ճնմարանի առանձնութիւնը։ Նա հասաւ 83 ամեայ պատուական հասակին։ Սակաւ մարդիկ կարողացել են ունենալ այնպիսի խորին ազդեցութիւն ապագայի կարծիքի վերայ. բայց միևնոյն ժամանակը Պղատոն, ասում են, իւր կենդանութեան միջոցին չունէր բարեկամներ։ Նա կազում էր իւր ընկերակիցների, Սոկրատի աշակերտների մեծ մասի հետ. և ինչպէս կարելի է դուշակել ապրած ակնածելի տարիքից և այն անաստղ հիմունքից, որոց վերայ հաստատուած է եղել նորա վարդապետութիւնը,—նորա կարծիքները շատ անգամ հակասական էին, և նորա փիլիսոփայութիւնը ներկայացնում էր շատ փոխակերպութիւններ։ Մենք պիտի գտանենք այժմ դէպի նորա վարդապետութիւնը։

Պղատոնի վարդապետութիւն երբ սկզբնապատճառական եղք.

Պղատոնի համեմատ՝ նիւթը մտնակից է Աստուծոյ յաւիտենականութեանն. և կան երեք սկզբնաւոր տարրեր.—Աստուած, նիւթ և գաղափարներ։ Այսպէս բոլոր շնաւոր և անշունչ առարկաները Աստուած ստեղծել է նիւթից, որ ընդունակ լինելով ստանալու բոլոր տպաւորութիւններն, իրաւամբ կարող է համարուիլ մարմինների մայրը։ Պղատոն կարծում է, որ բանականութիւնը կայ այդ մարմինների գոյանալուց շատ յառաջ, բայց ոչ և նիւթից յառաջ։ Նիւթն տալիս է անդրադարձուցիչ կամ հականերգործիչ յատկութիւն, սկզբնաւորն անկարողութիւնների և չմտութիւնների, որոնք յառաջ են գալի աշխարհում. նա համարում է նիւթը նաև աղբիւր չարութեան, որանով բացատրելով չարի իշխանութիւնն, որ պիտի

ունենայ բարոյ վերայ այն եղանակով, ինչպէս նիւթն իշխում է գաղափարների վերայ։ Սորա համար հնարն ունէին մեղադրելու Պղատոնին մոգութեան մէջ։ Նորա վարդապետութիւնն ունին արևելեան բնաւորութիւն։

Պղատոնի բարոյական տեսութիւն.

Աստուծոյ գոյութիւնն իբրև անկախի և աշխարհն անձամբ յարինողի, յատուկ է բերում բնական առարկաների ներկայացրած իմաստութեան և նպատակայարմարութեան ապացոյցներից։ „Ամենայն նաւար Աստուծոյ գոյութիւն. լինչ աշխարհում ստեղծուած է մնացածի համար. և առանձին մասունքներն այնպիսի կարգի մէջ են դրուած, որ ծառային ամրողջի պահպանութեան և կատարելութեան համար. ուստի ամենայն լինչ յատուկ եկած է աստուածայնին բանական պատճառի ներգործութիւնից,,։ Այս կարգի մէջ գտնուած միտութեան նշաններից նա ընդունում էր Աստուծոյ միութիւնն, որին համարում էր Վերջապէս, անմարմին, անանականութիւն, անսկիզբն, անվախճան և անփոփոխ։ Նորա Աստուածը ամենքերքի ստեղծողն և հայրն է, անանձնաւոր բնութեան հակադիրը։ Մեկ մտքով նա ուսուցանում էր, թէ հոգին անմահ է և անեղծ. իսկ միւսով՝ մերժում էր, որ իւրաքանչիւր անհատ հոգի ունեցել է կամ կարող է ունենալ յաւիտենական գոյութիւն։ Հանանալի է այստեղ ասածից, որ այդ հոգեբանական վարդապետութիւնն խակապէս հնդկական է։ Պղատոնի հայեցքը հոգւոյ առաջնին դրութեան և առաջնին յարաբերութիւնների վերայ նոքան կարևորութիւն տուեց յառաջ բերելու նշանաւոր վարդապետութիւնն Յիշողութեան մասին. խօսելու այն բանի վերայ, որն այլ անուանով կոչում են բնածին գաղափարներ։ Այդ՝ հոգւոյ երբևիցէ իրան շատ լաւ յայտնի եղած առարկաների վերայ ունեցած յիշողութիւններն են։

Հոգւոյ յատկութիւնները.

Աստուածային բանականութիւնը գնում է և ըմբռնում բոլոր բնական ձևերի կազապարները (1) կամ սկզբնական պատկերները, որպիսի եղ լինին նոքա. ըստ որում տեսանելի առարկաները միայն փութանցիկ ստուերներ են և արագ սահում են, իսկ գաղափարներն և կազապարները—յաւիտենական։ Պղատոն ուշնպէս զբաղութիւնով, և պէտք աւելցնել, այնպիսի մեծութիւնով է արտայայտում գաղափարների այս տեսութիւնն, որ ոմանք մինչև անգամ պնդում էին, թէ կայ անդր-աշխարհային տարածութիւն, ուր գտնուում են անմարմին գոյութիւններ—գաղափարներ, կամ բոլոր գործարանաւոր և անգործարանաւոր մարմինների նախակիզբն կազապարներ։ Այս միութիւնը կարելի է փոքր ինչ փարատել օրինակով։ Այսպէս՝ բոլոր մարդկի, ամենի տուած գանազանութեանն, որ նշմարում ենք նոցանում մեկը միսի հետ համեմատած ժամանակ, յայտնապէս ստեղծուած են

Գաղափարական տեսութիւնն.

(1) Образецъ. Exemple։

ըստ միևնոյն պատկերի, որին նոքա աւելի կամ նուազ կատարելութեամբ համապատասխանում են: Ոմանք միասեռ ծառերը, թէև կարող են զանազանուիլ իրարից, բայց միևնոյն եղանակով ստեղծուած են ըստ ընդհանուր պատկերի, որին պատասխանում են աւելի կամ նուազ կատարելութեամբ: Այդ պատկերներին, օրինակներին կամ տիպերին Պլատոն տալիս է Գաղափարներ անունը: Մենք հա սու ենք լինում նոցա ի հարկէ ոչ միջնորդութեամբ զգայարանների, այլ խորհրդածութեան: Ու Պլատոն պնդում էր թէ՝ այդ գաղափարները ոչ միայն մտքի ստեղծած հասկացողութիւններ են, այլ իրական էութիւն ունեցող գոյացութիւնների մասին իսկական ներկայացումներ. և բացի դորանից, նա միայն նոցա է տալիս իրական գոյութիւն: Այս եղանակով առարկաները ներկայանում են միայն գաղափարների նիւթական մարմնացումն. և գաղափարի այդ ձևացումն առարկաների մէջ լինում է անկատար. ըստ որում գաղափարի և առարկայի միջև համապատասխանատուութիւնը տարածուում է միայն մինչև այն աստիճանի, որ աստիճանի ներում են հանգամանքները: Այս պատճառով երբէք կարող չենք որոշել գաղափարի բոլոր յատկութիւնները կամ գործողութիւնները հետազօտելով նորա անկատար նիւթական ձևակերպութիւնն, ինչպէս և չենք կարող մարդու պատկերից դիտենալ նորա բնաւորութիւնն և յատկութիւնները, որքան էլ այդ պատկերն գերբնական լինի:

Պատկերներ կամ տիպեր:

Ըստ այսմ՝ Պլատոնի գաղափարական տեսութիւնն ուսումնասիրում է, թէ այս պատրաստական երևոյթների աշխարհից դուրս, այսինքն առարկաների աշխարհից դուրս կայ ուրիշ աշխարհ, անտեսանելի, յաւիտենական և իսկապէս իրական. թէ՝ թէև չենք կարող վստահանալ մեր զգայարանքների ցուցմունքների ստուգութեան վերայ, բայց կան ուրիշ տպաւորութիւններ, որոց օգնութեամբը կարող ենք դիմել երբ ձգտում ենք դէպի ճշմարտութիւնը. կան պատկերացումներ և յիշողութիւններ (1), որոնք հոգին պահպանում է իրանում այն առարկաների վերայ, որոնց նա երբեմն ճանաչում էր կամ պարզ գաղափարների ահմանում կամ իւր կեանքի այն վիճակներում, որոնցից յառաջագոյն անցել է: Պլատոն յատկապէս առում է, թէ կան հոգիք, որոնք շատ հազարաւոր տարիների ընթացքում շարունակարար տեղափոխուել են զանազան մարմինների մէջ:

Ճշմարտութեան մասին յիշողութեան մասին.

Ցեղափոխութեան ժամանակից ծնացած յիշողութիւնները.

Այդ հոգիքը պահպանում են, մինչև տուած առարկային, աւելի կամ նուազ կենդանի յիշողութիւններ այդ զանազան վիճակների վերայ: Գաղափարներն՝ իրրև ընդարձակ մարդկային մտքի, և յայտնապէս մեզ երբէք մեր արտաքին զգայարանքներով չհաղորդուածներ, յատկապէս այդ նախնի դրութիւններից են յառաջ գալիս: Եթէ այդ

(1) Воспоминание. Souvenir. Այլա Խոյճմանուած է յիշողութիւն. Ինչ память. mêmoire, յիշողութիւն:

յիշողութիւն անցած անցքերի և դրութիւնների վերայ լինէր բոլորովին ճիշդ և կատարեալ, մեք կունենայինք այն ժամանակ ճշմարտութեան հասու լինելու բնածին միջոցներ. այլ սրովհետև այդ յիշողութիւնները իրանց էութիւնովն անկատար են և անհաստատ, վասնորոյ երբէք չենք կարող հասու լինել բացարձակ ճշմարտութեան: Պլատոնի կարծիքով՝ Գնեղեցիկը ճշմարտի կատարեալ տիպարն է. Սերը հոգւոյ ձգտումն է դէպի գեղեցկութիւնը, նմանի հակումն դէպի նմանն, մեզանում գտնուող աստուածութեան ձգտումը դէպի մեզանից դուրս գտնուող աստուածութիւնն. և Խարին՝ որ պարունակում է գեղեցկութեան, ճշմարտութեան և արդարութեան մէջ, է Աստուած.—Աստուած՝ իւր վերացեալ դրութեան մէջ: Ու այսպէս՝ Պլատոնի դրութիւնից հետևում է թէ՝ դիտութիւնն անկարելի է մարդու համար, և կարելի միայն Աստուծոյ. բայց թէ՝ ջանալ միտ բերելով մեր ծագումն, էպիտի վճռանք, այլ ձգտենք դէպի աւելի վսեմ մտաւոր նպատակ. թէ՝ մեր դիտութիւնը չէ կարելի տալ մեր ներկայ զգայարանքներին,—որովհետև այդպիսի դէպքում բոլոր մարդիկ հաւասարապէս կլինէին իմաստուն, քանի որ հաւասարապէս սուր են նոցա զգացումները.—բայց թէ՝ մեր գիտութեան ամենընդարձակ և ամենատոյդ մասը յառաջ է գալիս մեր նախկին վիճակի վերայ ունեցած յիշողութիւնից. թէ՝ իւրաքանչիւր անհատ հոգի է գաղափար. թէ՝ ընդհանրապէս աստղագոյն գնդաձև մարմինները կապուած են գերագոյն գաղափարների, և վերջապէս ծայրագոյն գաղափարի հետ. թէ՝ Աստուած՝ գաղափարների համագումարն է. և սորա համար յաւիտենական է նա և անփոփոխ. թէ՝ դէպի նա չունին ոչ մի յարաբերութիւն ժամանակի և տարածութեան զգայական պայմաններն, որոնք յարմարելի չեն նորա յատկանիշներից ոչ մէկին. թէ՝ նա է ամեն բանի կեանքն և ոչ թէ մարդն, ինչպէս կարծում էր Պրոտագորաս, թէ՝ աշխարհը նորա տիպարն է. թէ՝ ինքը նիւթը—բացարձակ հերքումն է, և է միևնոյն, ինչ որ տարածութիւնն. թէ՝ մեր զգայարանքներին ներկայացած ձևերն աստիճաններ են, որոնք չունին իրական իսկութիւն. թէ՝ չկայ անհամար բազմութիւն, բայց միայն մի աշխարհ. որ իրրև Աստուծոյ հաստատած, չէ ենթարկուած ոչ հնութեան և ոչ անկմանն, և որ բաղկանում է հոգուց և մարմնից. ուրիշ տեսութեամբ կարելի է ասել թէ՝ բաղկանում է հոգուց և հողից, որոնք կապող են միասնութեամբ միայն օդի և ջրի միջնորդութեամբ, ուսոի և խիստ անհրաժեշտ է ջրոս տարրերի գոյութիւնը. թէ՝ երկրաչափական ձևերից բղջամէջը համապատասխան է հուրին, խորանարդը—հողին, ութանկիւնաւորը—օդին, որովհետև այս ձևերը ծագում են եռանկիւններից,

Աստուածը գաղափարների հասկացողն է.

Աստուածը աշխարհի բնութեան և տարածութեան

որոնք միացած են յայտնի թուաւոր չափակցութիւնների մէջ. թէ՝ կենսականութեան բոլոր դումարը բաժանել է Աստուած եօթ մասերի վերայ, համապատասխան երաժշտական ձայնի աստիճանների, կամ եօթ մոլորակների բաժանմունքներին. թէ՝ աշխարհը հոգի ունեցող կենդանի է. ըստ որում մարդը պարունակում է իւր մէջ ջերմութիւն, և աշխարհը նոյնպէս. մարդը բաղկանում է զանազան տարրերից, և աշխարհը նոյնպէս. և ինչպէս մարդու մարմինն ունի հոգի, այսպէս միևնոյն և աշխարհը պիտի ունենայ հոգի. թէ՝ գրանուում է մի ցեղ ստեղծուած, ծնուած և սեռանելի աստուածների, որոնց պէտք է որոշել յաւիտենական Աստուծուց. թէ՝ նոցա մարմինները բաղկանում են ըստ մեծի մասին հուրից, և ունին սկիզբնական ձև. թէ՝ երկիրն աստղային մարմիններից ամենահինն և առաջինն է. ըստ որում դանուում է ամէնքըի կեդրոնի կամ նորա առանցքի մէջ, պահպանուելով սիմետր իւր սեռական հաւասարակշռութիւնով. դուցէ նա շնչաւոր էակ է և ծնունդ առած աստուած. թէ՝ կան մահկանացուների երեք ցեղեր, համապատասխան հոգիին, օդին և ջրին. թէ՝ մահկանացուներից առաջին ստեղծուածը տղամարդն է, և նորանից են յառաջ եկել կինն և կենդանիները, թռչուններն և ձկները. թէ՝ մարդու գերազանցութիւնն այն է, որ նա կրօնական կենդանի է. թէ՝ իւրաքանչիւր մահկանացու բաղկանում է երկու մասերից—հոգուց և մարմնից. և նոցա բաժանումն պատճառ է մահ. թէ՝ հոգին բաղկանում է երկու նախնական բաղադրեալ մասերից,—մահկանացուից և անմահից, որոց միևնոյն արարած աստուածների ստեղծուածն է և միևն Վերազոյն Նպակի. թէ՝ այդ երկու մասերը մի ամբողջի միացնելու համար հարկաւոր է միջամտող տարր. և այս է դիւական մասը կամ ոգի. թէ՝ մեր բարոյականն պատերազմը յառաջ է գալիս այդ երկրականութիւնից, որք են. ցանկութիւն, ոգի և բանականութիւն. թէ՝ միայն բանականութիւնն է անմահ. իսկ մնացածները մեռնում են. թէ՝ աշխարհիս միջի հոգիների թիւն անփոփոխելի է կամ յարատև. թէ՝ առաջին գոյութեան զգացումն ապացուցանում է, որ հոգին յառաջ է քան մարմինն. թէ՝ որովհետև հոգին է պատճառ շարժման, ուրեմն չէ կարոլ լինել ոչ արտաքուստ և ոչ ներքանելի. սոյա թէ ոչ՝ կդադարէր վիճակի մասին դիտնարու է, որ նորա իրրև ստուերներ պատում են դերեզմանների վերայ, հիւծանելով իրանց անկենդան մարմինների մէջից . բայց անմահին կեանքն Աստուծոյ մէջ նախանշանակուած է բարեզործ փիլիսոփայի համար.

Հոգւոյ եռակի կազմուածք.

Հոգւոյ խուճապ—թիւն, հանգիստ և պատիժ.

թէ՝ արժանաւորութիւն միայն գիտութիւնն է. իսկ առաքինութիւնը—գիտութիւն բարոյ. թէ՝ հոգին բնակելով մարմնի մէջ, գրանուում է անդիտակցական գրութեան, կամ յափշտակուած (1) վիճակի մէջ. և թէ՝ աստուած աստղը, նորա արարածոյ մասը ստեղծողն ապրում է նորա կեանքի վերայ. ուստի և նորա ապագան կարելի է նախագուշակել աստղաբանական հաշիւների օգնութեամբ. թէ՝ կան հանդերձեալ վարձ և պատիժ, և արդարներին տեղ կտրուի իրանց ազգակից աստղի վերայ. իսկ նոցա՝ որոնց կեանքը չէ եղել այնքան մաքուր, վճռուած է ծնանել երկրորդ անգամ կնոջ կերպարանքով. և եթէ այդ անգամն էլ չեն ուղղուի, կինայ նոցա յաջորդաբար տեղափոխուիլ զանազան կենդանիների մէջ. թեթևամիտ մարդիկ փոխուելու են թռչունների.անմիաներն՝—ջրքաոանիների.տգէտները՝—ձկների. թէ՝ երկիրն ենթարկուած է շրջանաւոր փոփոխութիւնների, հուրի և ջրի գործակցութիւնով. և նորա կործանումն և կանգնումը կախուած է աստղերի համահանգիստելուց: Պղատոնի՝ մարդկային բնախօսութեան վերայ ունեցած հայեացքն ես չեմ կարող աւելի պարզ որոշել, քան թէ Ոիտաէրի խօսքերով ,,Աստեղային մարդկային մարմնի մէջ յօրինուած է բանականութեան համար, յայտնի օրոշեալ նպատակների համեմատ. ուստի ամենից յառաջ հարկ է պատրաստել հոգւոյ աստուածանման մասի տեղն, որ է գլուխը, որ բոլորակ է, և ամբողջի կատարեալ պատկերին նման որ.ունի գիտակցութեան գործարաններ թեթև կերպով ծածկուած մեզ, որը պահպանում է իւր մէջ զգացմունքները. գլխին նախանշանակուած է կառավարել ամբողջ մարմինը. սորա համար և գանուում է վերևում. և որովհետև մահկանացու արարածն ունի բոլոր վեց անկանոնաւոր շարժումներն, և որովհետև գլուխը չպիտի գլորուի դեսն՝ վերայ, ուստի մարդու մարմինը երկար է. ունի ոտներ՝ գնալու, և ձեռքեր՝ մարմինն ծառայելու համար և առաջին մասը կազմուած է յետին նից տարբեր: Վարձեալ՝ ինչպէս բանականութեան օթևանը գլուխն է, օյնպէս էլ ոգին կամ հոգին, որ ընդունակ է բարկութեան, գետեղուած է կուրծքի մէջ, գլխի տակ, որ միշտ պատրաստ լինի բանականութեան հրամաններին և պատուէրին. սակայն նա բաժանուած է գլխից պարանոցով, որ չխառնուի նորա հետ. ցանկութիւնն էլ նոյնպէս ունի առանձին բնակարան մարմնի ստորին մասի—որովայնի մէջ. բայց սրտի առաջաստով (2) բաժանուում է գիւրագրգիռ հոգւոյ տեղից, որովհետև նա նախակարգուած է, միաչով երկուսից էլ բաժան, կառավարելիլ և հոգոյն և բանականութիւնով մէկ տեղ: Սորա համար Աստուած տուել է նորան պահապան՝ թանձր, տափարակ և փայլուն լերդն, որ պարունակելով իւր մէջ և քաղցրութիւն և դառ-

(1) Экстазъ:
(2) Diaphragme. діафрагма. грудобрюшная преграда:

նութիւն, ընդունակ է ընդունելու և նահանջելու, ինչպես հայելու մէջ, մասամբ կերպերն: Երբ որ բանականութիւնը տհաճ է, այն ժամանակ արդելում է նա նորա անկախ միտումները դառնութիւնով. և ընդհակառակն՝—երբոր հաճանում է, այն ժամանակ նորա քաղցրութիւնը ծածկում է բոլորը խաղաղ անդորրութեան մէջ. բայց նորանից, քնի կամ հիւանդութեան կամ ոգևորութեան մէջ նա դառնում է զուշակիչ, այնպես որ՝ մարմնի ամենաստորին մասն էլ մի քանի անսխալական նշանակից է լինում ճշմարտութեան: Ուրիշ կողմերով մարմնի առարկայի մասը միակերպ յարմարեցրած է այն նպատակներին, որոց համար պիտի ծառայի: Փայծաղը պտնում է լերդի ձախակողմն, որպէս զի պատրաստի և արտաթորի անմաքրութիւններն, որոնք կուտակվում, կարող էին պատճառել մարմնին հիւանդութիւններ: Աղիքնային խողովակն ունի մի քանի գալարուածք, որպէս զի կերակուրը մարմնի միջից շուտով դուրս չգայ, և դորանով չպատճառի անչափաւոր ապահութիւն. ըստ որում այդպիսի միտակամ ախորժակը փիլիսոփայական ձգտումներն անկարելի կանէր, և կհարկադրէր մարդուն չհնազանդել իրանում գըտնուող աստուածութեան հրամաններին:

Նորա բարոյական հակացողութիւնները

Նախընթաց բացատրութիւնից ընթերցողը կարող է տեսնել Պղատոնի վարդապետութեան մէջ որչափ բան է պարունակուում խելացի և անսխալ, որչափ գիտութիւն և տգիտութիւն: Նա պիտի շարունակեմ յառաջ տանել նորա դրուածների այդ քննութիւնն, որպէս զի ցոյց տամ, թէ Պղատոն ինչ եղանակով յարմարեցնում էր իւր հայեացքները դործնականին. ըստ որում նա պնդում էր, թէ գերագոյն բարին անմատչելի է մեր բանականութեան համար, բայց մեք պիտի ջանանք նմանիլ Աստուծոյ, որչափ փոփոխելին կարող է նմանիլ անփոփոխականին. և պիտի յիշենք, թէ վայելքը չէ մարդու վախճանական նպատակն. և թէ՝ թէև հոգւոյ պղպական կողմն անձնաւորը է ուսելու, ըմպելու, հարստութեան և հաճոյքների, իսկ հոգևորն,—աշխարհի պատիւներին և նշանաւորութիւններին, բայց բանականութիւնը նուիրում է իրան գիտութեան ծառայութեան. ուստի վայելքը չէ կարող, իսկ գիտութիւնը կարող է վերաբերիլ աստուածներին. վայելքը չէ բարիք ինքն ըստ ինքեան, այլ միայն միջոց բարութեան հասնելու: Հոգւոյ երեք կողմերից ամեն մէկն ունի իրան համապատասխան առաքինութիւն. բանականութեան առաքինութիւնը խոհականութիւնն է. հոգւոյն՝—արիութիւնը. ցանկութեանը՝—չափաւորութիւնն. և առաւել կատարելութեան համար տուած է նաև արդարութիւն, որ պիտի փոխադարձաբար հաստատի նորանց:

Պղատոնի առաջարկած քաղաքական հաստատութիւնները.

Պղատոն իւր բարոյական հակացողութիւնները գործնականի մէջ մտցնելով, պնդում է թէ՝ պետութիւնն է ամենայն ինչ. և թէ՝ պիտի ջնջել այն, ինչ որ հակառակում է նորան: Այս ուրանում է սեպհականութեան իրաւունքը, քանդում է ընտանիքի բուն հիմունքն, և իւր վարդապետութիւնները հասցնում է այնպիսի ծայրահեղութեան, որ կանայք համարում է հասարակաց սեպհականութիւն, որից պէտք օգուտ քաղել տէրութեան նպատակների համար. նա ուսուցանում է թէ՝ կրթութիւնը պիտի լինի բարոյական պարտականութիւն. և թէ՝ կրօնը պիտի բոլորովին հպատակի քաղաքականութեանը. թէ՝ որդիքն ոչ թէ ծնողաց սեպհականութիւններն են, այլ տէրութեան. թէ՝ տէրութեան նպատակը պիտի լինի ոչ թէ մասնաւոր անձի, այլ ընդհանուրի բաղդաւորութիւնը. թէ՝ մարդիկ պիտի նկատուին ոչ իբրև մարդիկ, այլ իբրև տէրութեան տարրեր. և թէ՝ լաւագոյն հպատակը միայն նորանով պիտի դնահատուի ծառայից, որ նորա հշխանատուրը տէրութիւնն է: Այս պատուիրում է բաց ընկենուլ այլանդակ կամ հիւանդոտ երեխաները. պահանջում է, որ ամեն մի քաղաքացի նուիրուած լինի ստութեան և խաբէութեան ամեն տեսակներին: Որոշելով պարզ հասարակական կապերը բուն քաղաքականներից, և պնդելով, թէ տէրութեան և հօրեաւ մէջ, նոցա երրական կազմակերպութեան վերաբերութեամբ պիտի լինի համեմատութիւն, հաստատում է բաժանումն կառավարիչների, զինուորների և երկրագործների. տալով ըստ այսմ նախամեծարութիւն աղնուապետութեան՝ ժանտանդ տալանդի աղնուապետութեան վերայ հիմնուած միապետութեան: Թէև Պղատոն երաժշտութիւնը համարում է էական տարր կրթութեան, բայց այնքան ստոր է նորա ընթիր արհեստների վերայ եղած կարծիքն, որ նկարիչներին և երաժիշտներին թոդնում է իւր տէրութեան մէջ միայն շատ խիստ սահմանափակ առնելով, կամ մինչև անգամ բոլորովին չէ թողնում:

Պղատոնի հպատակապետութիւնը.

Այս ցնորական հպատակապետութիւնը Սիկիլիայում իրագործելու համար Պղատոն գնաց Դիոնիսիոսի մօտ. և կարելի է աւելցնել, թէ նոցա համար, որոնց կյուսար հպատակեցնել իւր փորձերին, շատ մեծ բաղդաւորութիւն եղաւ, որ նորան երբէք չիոյլատրեցին կատարելու իւր վայրենի մտացածին դիտաւորութիւնը:

Նորա հասարակապետութիւնն արտայայտում է զգսմանալի տգիտութիւն մարդու գործողութիւններին և պահանջմունքներին նորա հասարակական կեանքի մէջ:

Պղատոնի աւելի նշանաւոր վարդապետութիւններից մէկ քանին արժանի են տակաւին նկատողութիւնների. ուստի գնա պիտի հետ ընթերցողին մի քանի դիտողութիւններով:

Պղատոնի՝ ետոուծոյ մասին ունեցած համոզմանն վանմա—թիանց

Այդ փիլիսոփայութեան մէջ ընտիր է այն կարծիքը, թէ գաղափարները միաւորուում են մէկը միւսի հետ ուրիշ վերադրյն կարգի գաղափարների օժանդակութիւնով, և վերջինքս իրանց կարդով միաւորուում են այլ, աւելի վսեմագրյն գաղափարներով. թէ՝ որչափ բարձրանում է այս միաւորութիւնն, այնքան մեծանում է նոցա ընդհանրութիւնն և ղօրութիւնը, մինչև հասնում է վերջապէս վսեմագոյն կէտը—վերջին, գերագոյն, ամենակառավարիչ գաղափարն—Ետուուծ: Այսպիսի վերամբարձ ձանապարհով մտածելով համոզմանն Պղատոնական էակի մասին, ազատ ենք մնում այն մոլորութիւններից, որոց մէջ դիւրութիւնով կարելի է ընկնել խառնելով Ետուուծոյ ստորագրելիները հետ ժամանակի և տարածութեան վերայ հիմնած հասկացողութիւնները. ազատուում ենք նաև այն անտեղութիւններից, որոնք հարկաւ ուղեկից են անսահմանը և անվախճանը որոշելու ամեն մէկ փորձին:

Եւ հոգւոյ մասին:

Պղատոնի՝ հոգւոյ անմահութեան մասին ունեցած հասկացողութիւնները ներկայացնում են աչքի զարկող հակադրութիւն իւր ժամանակի ժողովրդական փիլիսոփայութեան և մտապաշտութեանց հասկացողութիւններին: Շատ բանում նոքա յիշեցնում են Հնդկաստանի վարդապետութիւնները: Յունաստանում այդ առարկայի վերայ ամենընդարձակ հասկացողութիւն ունեցող մարդիկ ընդունում էին, այսպէս ասենք, կիսամահութեան վարդապետութիւն. նոքա կարծում էին, թէ հոգւոյ առաջին կայ անվախճան ապագայ. բայց ամենափոքրիկ ուշադրութիւն էլ չէին դարձնում արդէն անցած յաւիտենականութեան վերայ: Պղատոն ընդհակառակն ասում էր, որ հոգին կար յաւիտենապար, և թէ՝ ներկայ կեանքը միայն մի վայրկեան է մեր գոյութեան մէջ. նա ապացուցանում էր անդրդուելի հաստատով այն փոփոխութիւններին, որոց պիտի ենթարկուենք մահից յետո: Ինչպէս կայծը յառաջանում է բոցից, այսպէս և նորա երևակայութիւնով մարդու հոգին անշուշտ յառաջանում է տիեզերական հոգուց:

Զղացումն նաև կին գոյութեան:

Առաջին գոյութեան ընդարձակ գաղափարներն և զգացումն ապացուցանում են մեր անցեալ կեանքը: Առաջին գոյութեան զգացումն ասելով հասկացուում է այն, որ երբեմն ոչ և իցէ աննշմարելի դէպքի կամ անսովոր անցքի միջոցին մեզ յանկարծ թուում է, թէ արդէն յառաջագոյն եղել ենք նմանօրինակ հանգամանքներում և շրջապատուած ենք եղել միևնոյն առարկաներով, որոնք շրջապատում են մեզ ներկայ րոպէի մէջ, մի այլ դէպքի միջոցին. բայց այդ յիշողութիւնը, թեպետև հիացնում է մեզ շատ, սակայն լքնում է մթին և պղտոր: Եսո՞նք արդեօք և մեք Պղատոնի հետ, թէ մեր կեանքը տեսած է այսպիսի վայրկեաններ մեր գոյութեան առաջին դրու-

թիւններուն մէկի մէջ. և թէ՝ շատ վաղ ծնցած անցքերն են, որ յանկարծ զարթնում են մեր յիշողութեան մէջ:

Լոյս պատուհանէ գալիք ուղեղն մարմնաբաշխական կազմուածքը.

Պղատոնին անծանօթ էր մարդկային ուղեղի երկկերպ կազմուածքն և երկկերպ դործողութիւնը. նա մոռանում էր, որ միտքը կարող է կորցնել ժամանակի բոլոր գիտակցութիւնն և միակերպ դիւրութեամբ մի վայրկենում միացնել այնքան բազմակուսակ քանակութիւն անցքերի, որոց կատարման համար կպահանջուէին շատ օրեր, և մինչև անգամ տարիներ. կամ ընդհակառակն, որ՝ նա կարող է ընտրել մէկ պարզ գաղափար, որ թուէր աւարտելի մի վայրկենում, և կանգ առնել նորա վերայ, ընդարձակելով և քրքրելով նորան երկար դիշերի ամբողջ ժամերի շարունակութեան մէջ: Այդ օտարոտի երևոյթների իսկութեան մասին հաւատարմանում ենք ոչ միայն այն մարդկանց վկայութիւնով, որոց մահ էր սպառնացում խեղդուելուց, և որոնք պատմում են, թէ յիշողութեանց աչքն այնպէս պատում էր իրանց ճգնաժամի վերջին վայրկենում, որ վաղաւուրց անցքերի ձիդ կարգը պատկերացուում էր նոցա մի ակնթարթում և հիանալի պարզութիւնով, իբրև այն դաշտավայրն (1), որ ամբողջապէս իւր գանակերպ մասերովը միասին տեսնում ենք դիշերը կայծակի փայլատակով լուսով.—այդ անսովոր երևոյթների մասին հաւատարմացնում է մեզ և մեր սեպհական փորձն երազի ժամանակ: Իմ „Նախօսութեան„ մէջ ցոյց տուած եմ, թէ օրսիսի եղանակով կարելի է բացատրել, այդ հիման վերայ, նախկին գոյութեան զգացման օրինակներն. ըստ օրում ուղեղի իւրաքանչիւր կիսագունդը մտածում է ինքնաբերաբար. իսկ միտքը՝ խարուած ժամանակի նկատմամբ, ընդունում է այդ հաւաժամանակ ներգործութիւնները հետևողականներ, և երկու ապատարութիւնների մէկը վերադրում է անորոշ և մութն անցեալին: Պղատոնի համար այսօրինակ փաստերն երևում են բազմութիւ ապացոյցներ հոգւոյ նախկին գոյութեան և տալիս էին հաստատուն հիմունք հաւատալ հոգւոյ ապագայ կենաց մասին:

Կրկնակի անմահութիւն—անցեալ և ապագայ.

Այս կերպով Պղատոնի վարդապետութիւնը հոգւոյ անմահութեան մասին հանդուրժում է անմահութիւն երկակի. նորա մէջ մտնում է յաւիտենականութիւն անցեալ և յաւիտենականութիւն ապագայ: Պղատոնի ժամանակի ժողովրդական մտապաշտութեան հետևձայն հոգեղէն տարրը, կարծուում էր, գոյանում է առանց տարրերի կամ գոյացուցչի, որ դիտմամբ մտնում է մարմնի մէջ, աճում է նորա աճման հետ, զարգանում է նորա հետ միասին, ձեռք բերելով կեանքի ամեն մի շրջանին համապատասխան նոր ձև կամ կերպարանք. և հանձայն իւր ընկերակցին—մարմնին յաջորդարար քնդունելով կերպարանք մանկան, պատանու, երիտասարդի և աշխարհ նա հասկ-

(1) Ландшафтъ:

մի: Սոխուքեան դաշտերի վերայ թափառող, կամ Սինոսի դատաստանի առաջ իւր վճռին սպասող ստուերն ունէր, ինչպէս կարծում էին, այն կերպարանքն, որ ունէր մարմինը մահուան ժամանակ: Այս կերպով Ոդիսէաս ճանաչեց Պատրոկղէսի, Աքիլլէսի և տասնամեայ պաշարման միւս դիւցազունների ստուերները. այս կերպով չինականը ճանաչում էր բարեկամի կամ թշնամու ստուերն: Այս հասկացողութիւնները կարող էին մնալ իրրև մնապաշտութիւն, բայց փիլիսոփայական մաքով միանգամայն անպիտանալիք էին ի հարկէ:

Ընդհանուր և ապագայ յաբարերութիւնը դէպի մարդը.

Մարդու դրութիւնը նորանով է զանազանւում անկենդան մարմնի կամ անասունի դրութիւնից, որ նորա գործը միայն ներկայ վայրկենի հետ չէ. որ՝ անցեալն անցնելով իրրև թէ չէ անհետանում միանգամայն և յաւիտեան. և որ՝ ապագան, մինչև իւր մօտենալը կարծես ոչ բոլորովին չկայ. մարդն իւր յիշողութեան միջնորդութիւնով անցեալը ներկայի մասն է անում. և նորա նախատեսութիւնն ապագան ներկայի մասն է անում: Եւ նորա վերայ և ապագան. այնպէս որ՝ ամբողջ երկրքն էլ խառնւում միացնում է ի մի:

Գաղափարական տեսութիւնների սովորական բացատրութիւններից մէկ քանին կարողն լինել հրահանգիչ ցուցմունք այն բանին, թէ ժամանակակից դիտութիւնն ինչ կերպով է բացատրում նորա ներկայացրած փաստերն: Օրինակի համար՝ Պղատոն ասում է, որ իւրաքանչիւր խոզակաղնու մէջ պարունակուում է կաղնու գաղափարական տիպն, բայ որոյ խոզակաղնուց — բարեյաջող հանգամանքների երևան եկածին պէս — ընդհանրապէս է անշուշտ կաղնի և ոչ ուրիշ ծառ: Հետևաբար՝ նմանօրինակ մի սերմի իւր վերջնական ձևով զարգանալու այդ գործողութեան մէջ ուշադրութեան արժանի են երկու առարկաներ. սերմի ներքին յատկութիւնն և նորա վերայ ներգործող արտաքին դրօսութիւնները: Պղատոնի վարդապետութիւնն առանձին նշանակութիւն է տալի այդ բաժանմանը. նորա դլխաւոր խնդիրն է ապացուցանել այդ բնածին նախատիպի բացարձակ դոյութիւնն և անկախութիւնն, և նորա անեղծութիւնը: Թէպէտև նա պատհանդիպում է և արտաքին հանգամանքների ներգործութիւնն իւր՝ նորա անթերի իրականացնելու համար, բայց նորա բուն էութիւնն բոլորովին անկախ է նորանցից: Այսպիսի դէպքում կարևոր են հետևաբար երկու տարրեր, արտաքին և ներքին: Այսօրինակ երկդասնութիւնն արտայայտւում է և ուրիշ շատ բնախօսական երևոյթների մէջ. օրինակ, հոգւոյ և նիւթի, մտքի և զգացման յարաբերութեանց մէջ: Պղատոնական փիլիսոփայութիւնը ձգտում է նշանաւոր կացուցանել մարդու նկատմամբ ներքին տարրի նշանակութիւնը, քան արտաքինի. և բուն այսմ հաստատում է բանականութեան բացարձակ

իշխողութիւնն. ըստ որում այդ բանականութիւնն է յատկապէս, որ մարդը զերազանցում է անասուններից և ստորին կազմածներից, որոց մէջ դլխաւոր իշխողն է արտաքին տարրը. ըստ որում զարգացումն ամենայն այսպիսի կազմածի, — միևնոյն է թէ բոյս է թէ կենդանի, — է միայն պղատոնականութեան Ըստուածայինն դաղափարի արտայայտութիւնը: Շատ օրինակներ բնական պատմութիւնից ներկայացնում են սրան ազդու բացատրութիւններ. օրինակ՝ երբոր այն, ինչ որ պիտի դառնար ճկուղ լինում է ծալկ, այն ժամանակ նորա մանրիկները ցոյց են տալի միատիմն երբքը կամ հինդը միասին ժողովուելը: Աշատաւելութիւնն, որով այս կրկնութիւնը լինում է միևնոյն տեսակի գործարանների մէջ, ապացուցանում է ըստ կարծեաց Պղատոնի, որ թէև անհատները կարող են ջնջուել էլ, բայց դաղափարն անմահ է: Ուրիշ ինչ եղանակով կարող էր նմանն արտադրուել անհնարից, և միակը՝ պատրաստուել և յայտնուել բազմակերպութեան մէջ: Ահա Պղատոնի հայեացքներից մէկ օրինակ. բայց բուն այդ օրինակը պարզագոյն ցոյց տալով մեզ նորանց, կարող է առաջնորդել մեզ դէպի ուրիշ, և գուցե աւելի կանոնաւոր վարդապետութիւն: Ի նկատի առնելով այսօրինակ դէպքերում ներկայացած երկուականութիւնը, ներքին և արտաքին տարրերը, ծածկուած անմահ սիպն և նորա վերայ ներգործող արտաքին դօրութիւնը, բնաւորութիւնն և հանգամանքները, — չունե՞նք արդեօք իրաւունք հարցնելու, թէ Պղատոն ո՞ր հեղինակութեան հիման վերայ նուաղեցնում է վերջինի ազդեցութիւնն, և շատացնում առաջինի նշանակութիւնն. ինչու ծանրաբեռնել փաստերն այսպիսի ենթադրութիւններով, երբ յայտնի է, որ բուսական կլինէր աւելի պարզ բացատրութիւնը: Աւելի լաւ է ընդունել համաձայն մեր բնախօսական ամենականգնաւոր հասկացքներին այդ առարկայի վերայ, որ իւրաքանչիւր ստորին կամ վերին, բուսական կամ կենդանական կամ որ և իցէ ուրիշ գործարանի վախճանական կէտը պարզ վանդակն է, որի ամման եղանակը բոլորովին կախումն ունի այն պայմաններից և ազդեցութիւններից, որոց ներքոյ գտնուում է. որ՝ որչափ պայմանները միևնոյնն են մնում, միևնոյնը կլինի և նորանցից յառաջացած մարմինն. իսկ երբ փոխուում են առաջինները, փոխուում է և վերջինը: Բուսաբուծիչը նմանում է արտադրելին ոչ թէ նորա համար, որ պարունակում է իւր մէջ անմահ տիպական ձևն, այլ նորա համար, որ իւր զարգացման միջոցին ենթարկուում է նոյն պայմաններին, որոնց ենթարկուած է արտադրողը. Ուրիշ մի տեղ ես աշխատել եմ ապացուցանել, որ այդ ֆիզիքական ազդեցութեանց գործարանական մարմինների վերայ ունեցած անպայման իշխողութիւնը մեք պիտի խոստովա-

ներք հիմնական տարր կազմակերպութեան մասին եղած բոլոր գիտութեանց մէջ. իմ բնախօսական երկասիրութեան գլխաւոր նպատակը այս վարդապետութիւնն ապացուցանելն է եղել յատկապէս: Այսպէսի մի վարդապետութիւն միանգամայն տարբեր է պղատոնականութեան գաղափարական ուսուցիչից, Այսօրինակ զարգացումների մէջտեղն իշխում է ոչ թէ գաղափարն, այլ նոքա երևում են միմեանց անյեղլի օրինաց արդասիք. և զանազանակերպութիւնն կարելի է գտնում միայն պայմանների փոփոխութիւնով. վասնորոյ, թուի թէ, մեք կարող ենք ազատուիլ այդ դերդգայական աշխարհից, որի մէջ իշխում են ընդհանրականութեան կաշապարական (1) ձևերն—ստեղծուած իրերի դասակարգերն. կարող ենք մերժել պղատոնեան այս բաղադրածոյ կազմուածն, և նորա տեղը կարգել օրինաց պարզ հասկացողութիւնն: Եւ եթէ այդ վախճանական կէտից մեք կուանենք մեր մտածողութիւնը հետևել և բարձրն, ինչպէս Պլատոն ստորագրեալ գաղափարներից դէպի Առաջինն Գաղափարն, այն ժամանակ մեք չպիտի հանդիպինք ոչ մի բանի, որ անտեղի լինէր ապրիլ եղրակացութեան, որին ժամանեց և նա. ոչ մի բանի, որ անհամաձայն լինէր Պատուական այդ մեծութեանն, որի գոյութիւնն և յատկութիւնները կարելի է որոշել աւելի ճիշդ և աւելի պարզ՝ անփոփոխելի օրինաց ներգործութեան վերայ ունեցած հասկացողութեան միջնորդութեամբ, քան գաղափարական ձևերի մատնածիւն երևակայութեամբ:

Ծագումն սկզբանութեան.

Մեք տեսանք, թէ ինչպէս յոսկրատեան փիլիսոփայութիւնը վախճանն առաւ խառնուածներով. իսկ այժմ պիտի տեսնենք, թէ ինչպէս յետագոկրատեան փիլիսոփայութիւնը վախճան է առնում սկեպտիկեաններով: Ա երբոյն յայտ է գալիս նոյն արդասիքն. այն է՝ որ գաղաղան դպրոցների վարդապետութիւնները, մինչև անգամ նոքա և, որոնք ըստ երևութին ունէին իրանց բացարձակ ապացուցութիւնները, ոչ միայն իսկապէս գանազանուեցան, այլ միանգամայն և մէկ մէկի հակադիր հանդիսացան: Ասոր և կրկին ծագեցաւ այն կարծիքը, թէ մարդկային բանականութիւնը չունի ճշմարտութեան կրիտերիում, ընդունակ չլինելով ոչ զգայարանքների հակասական տպաւորութիւնները հաշտեցնելու, ոչ փիլիսոփայական եղրակացութիւնների ճշդութեան վերայ դատաստան անելու, և ոչ մինչ անգամ արարմունքների նկատմամբ բարոյական արժէքն որոշելու: Իսկ եթէ ճշմարտութեան հասու լինելու համար չկայ կրիտերիում, ուրեմն չէ կարող լինել և հաստատուն գիտութեան համար. և մեզ մնում է մէկ կողմից: Այդ եղրակացութեան եկաւ Պիրրոն, սկեպտիկանց դպրոցի հիմնադիրն, որ տարի Ք. ծ. մօտ 300 տարի յառաջ: Ներ-

(1) Типический:

քա փիլիսոփայական ուսումն թէ՝ երբ որ դատելու կրիտերիում չունենք, հարկաւոր է դադարեցնել կամ չտալ մեր համաձայնութիւնը փիլիսոփայական վարդապետութիւններին, բնականաբար առաջնորդից դէպի մի այլ բարոյական վարդապետութիւն, թէ առաքինութիւնն և երջանկութիւնը կայանում են առաբերալ անդորրութեան կամ ամենակերպ մտաւոր վրդովմունքից ազատ մնալուն մէջ. Ասում են, որ այս վարդապետութիւնը նա ձեռք էր բերել Նոկատանի բրահմաններից, ուր եղել էր Աղէքսանդր Մակեդոնացու արշաւանքի ժամանակին: Նրա դառնալով քարոզից իր վարդապետութիւնն իր Էլեղում ունեցած դպրոցում: Այդ յոյն փիլիսոփայութիւնն և իր սեպհական զարգացմամբն էլ այս միևնոյն հետևանքին էր գալիս:

Այսպէս ահա, սկեպտիկեան դպրոցը հիմնուած էր այն ենթադրութեան վերայ, թէ մարդն երբէք չէ կարող գտնել ճշմարտութիւնն արտաքին երևոյթների մէջ. և հետևաբար՝ երբէք չէ կարող գիտել թէ առարկաները համաձայն են թէ անհամաձայն իրանց արտաքին ձևերին, քան որում միևնոյն առարկան տարբեր է երևում մեզ տարբեր գրութիւնների և տարբեր ժամանակի մէջ: Ընկարծիք նա տարբեր է երևում և տարբեր անհատներին. Ինչպէս կարող ենք այսչափ զանազանակերպ ներկայացումների մէջ ընտրել ճշմարտութիւնն. և եթէ ընտրենք էլ, ի՞նչը կարող է անպայմանաբար ապացուցանել մեզ մեր ընտրութեան իսկութիւնը: Միևնոյն ժամանակն այն յատկութիւններն, որոնք տալիս ենք մարմիններին, ինչպէս են՝ դոյն, հոտ, համ, կարծրութիւն և այլն, մեր զգայարաններից կախումն ունին: Այդ մեք շատ լաւ գիտենք, որ մեր զգայարանքները մշտապէս տալիս են մեզ հակասող յուցմունքներ. և ի զուր ենք ապաւում, որ բանականութիւնը մեզ հնարաւորութիւն կտայ ճշդ որոշումն առնելու կամ ճշմարտութեան կրիտերիում ձեռք բերելու: Այս կերպով սկեպտիկեան դպրոցը ձեռք առաւ այն ղէնքն, որով այնքան կործանարար էին գործում սոփհատներն, ուղղելով նորան սակայն գլխաւորապէս ընդդէմ բարոյական վարդապետութեան: Մի քայլ դարձեալ յառաջ փոխինք: Եթէ այս ենք գնում բանականութեան վերայ, ի՞նչ կերպով ուրեմն գիտենք, թէ կարելի է այդ գնել նորա վերայ. Պետք չէ՞ մեզ և դորա համար էլ կրիտերիում. և եթէ մինչ անգամ լինի այդպիսի կրիտերիում, չպիտի՞ և դա նոյնպէս ենթարկուի որ և իցէ գերագոյն կրիտերիումի: Այսպէս էր արդասաց-նում սկեպտիկոն իւր ենթադրութիւնն, որ մարդու համար չկայ ճշմարտութեան կրիտերիում:

Բարոյական փիլիսոփայութեան երկրորդ վերածութիւնք.

Այս սկզբունքներին համաձայն սկեպտիկեաններն ուրանում էին մեզ համար կարելի լինելն երևոյթների գիտութեան

Գիտութեան վերաբերութիւնք

գիտութիւնը ձեռք բերելը : Սոքա իրանց տալական սութիւնը հատցրին մինչև այն կէտին, որ իրանց խօսքով մեք չենք կարող գիտել երբէք այն բանի ճշմարտութիւնն, որ հաստատում ենք: մինչև անգամ նոյն իսկ այդ հաստատութեան ճշմարտութիւնը:,, Ա՛ռ ոչինչ չենք հաստատում, ասում էին նոքա. չենք հաստատում մինչև անգամ այս բանն էլ, թէ մեք ոչինչ չենք հաստատում,,:

Գիտութեան մէջ վերջ տուող դրութիւնը

Սոքա քարոզում էին, որ մակաբերական դրութիւնը լուսաղոյն դէպքումն է միայն դրութիւն հաւանականութեան. ըստ որում մակերութիւնը (1) կարող է այն ժամանակ միայն ստոյգ լինել, երբ որ իւրաքանչիւր առարկայ քննուի առանձին և բոլորը միասին. և երբոր ապացուցուի, որ նոքա համաձայնի՛ն ընդհանուրի հետ. եթէ բիւրաւոր օրինակների մէջ գտնուի դէթ մի բացառութիւն, այն ժամանակ մակաբերութիւնը կկործանուի: Այդ ի՞նչպէս կարող ենք հաւաստել որ և իցէ դէպքի միջոցում, թէ նկատեցինք բոլոր անհատներն. ուրեմն միշտ պիտի կասկածենք: Ինչոր վերաբերում է սահմանների եղանակին, պարզ բան է, որ անօգուտ է միանգամայն. ըստ որում եթէ չգիտենք առարկան, չենք կարող ուրիմն և սահմանել նոյն բան. իսկ եթէ գիտենք, սահմանը բան չէ աւելացնում մեր գիտութեան վերայ: Այս կերպով ջնջելով սահմանն և մակաբերութեան եղանակը, սկեպտիկոսները ջնջում էին փիլիսոփայական ամեն եղանակ: Իսկ եթէ անկարելի է հասնել գիտութեան, ուրեմն ինչո՞ւ դորա հասնիլ ենք ամենամեծ ուժգնութեամբ: Ա՛ռ ոչինչ չենք հաստատում, ասում էին նոքա. չենք հաստատում մինչև անգամ այս բանն էլ, թէ մեք ոչինչ չենք հաստատում,,:

Եպիկուրոսի վարդապետութիւնը.

Սոքա քարոզում էին, որ մակաբերական դրութիւնը լուսաղոյն դէպքումն է միայն դրութիւն հաւանականութեան. ըստ որում մակերութիւնը (1) կարող է այն ժամանակ միայն ստոյգ լինել, երբ որ իւրաքանչիւր առարկայ քննուի առանձին և բոլորը միասին. և երբոր ապացուցուի, որ նոքա համաձայնի՛ն ընդհանուրի հետ. եթէ բիւրաւոր օրինակների մէջ գտնուի դէթ մի բացառութիւն, այն ժամանակ մակաբերութիւնը կկործանուի: Այդ ի՞նչպէս կարող ենք հաւաստել որ և իցէ դէպքի միջոցում, թէ նկատեցինք բոլոր անհատներն. ուրեմն միշտ պիտի կասկածենք: Ինչոր վերաբերում է սահմանների եղանակին, պարզ բան է, որ անօգուտ է միանգամայն. ըստ որում եթէ չգիտենք առարկան, չենք կարող ուրիմն և սահմանել նոյն բան. իսկ եթէ գիտենք, սահմանը բան չէ աւելացնում մեր գիտութեան վերայ: Այս կերպով ջնջելով սահմանն և մակաբերութեան եղանակը, սկեպտիկոսները ջնջում էին փիլիսոփայական ամեն եղանակ: Իսկ եթէ անկարելի է հասնել գիտութեան, ուրեմն ինչո՞ւ դորա հասնիլ ենք ամենամեծ ուժգնութեամբ: Ա՛ռ ոչինչ չենք հաստատում, ասում էին նոքա. չենք հաստատում մինչև անգամ այս բանն էլ, թէ մեք ոչինչ չենք հաստատում,,:

(1) Индукція. induction.
(2) Этика. ethique.

քողութեան մասին, ըստ որում դոքա գտնուում են միայն երևակայութեան մէջ. չպիտի մտածի ապագայ դարութեան վերայ, միտ բերելով, որ հոգին ոչ այլ ինչ է, բայց թէ հիւլէների դումարումն. և որի բաղադրիչ մասունքները լուծուում են մահուան միջոցին: Ընդհակառակն այսպիսի ուսմունքը շատ յարմար էին այն ժամանակին, որի մէջ երևան եկան. ընկերական և քաղաքական խանգարումներն այնքան մեծ էին, սեպհականութիւնն այնքան անապահով էր, որ իրաւամբ ծագեց հարցումն. ,,Ամենից լաւն այն չէ՞, որ մարդը հետևի գուարճութեան, քանի որ ունի այդ մասին միջոցներ: Ա՛ն այսօրինակ կեանքի համար պակասում էին առիթներ, քանի որ անմիտ շռայլութեան հետևանք հրապարակական կանայքը, խոհարարները, ձեռնածուները, խեղկատակները, փայփայուն պառաւանքներն և ահագին հարստութիւնները դարձել էին կեանքի էական պայման: Դիմիտրիւս Պողեորկէտ, որ շատ լաւ հասկանում էր իրերի դրութիւնն, ասում էր. ,,Իմ ժամանակը Աթէնքում չկար ոչ մի նշանաւոր կամ աղնիւ միտք,,: Ո՛չ արմանք չէ, եթէ հասարակութեան այսպիսի դրութեան միջոցին Եպիկուրոս ունեցաւ բազմաթիւ հետևողներ. եթէ կային շատ մարդիկ, որոնք նորա հետ կարծում էին թէ՝ երջանկութիւնը կայանում է անվրդով սառնասրտութեան մէջ. այն համոզման մէջ, թէ իսկապէս չկայ և աշ մի բան, ոչ լաւ, ոչ վատ. թէ՝ լաւ ևս է ոչ մի ինչ չվճռել, այլ թողնել բոլորը դէպքին. թէ՝ ընդհանրապէս շատ սակաւ, կամ մինչ անգամ բոլորովին չկայ զանազանութիւն կեանքի և մահուան մէջ. թէ՝ խնամատարը պիտի համարի փիլիսոփայութիւնը դէպի երջանկութիւն առաջնորդող գաղափարների և ապացոյցների դործունէութիւն. թէ՝ փիլիսոփայութեան բնագիտական ճիւղն օգտակար է միայն նորա համար, որ ուղղենք նորանով նախապահատատ երևակայութիւնները մահուան վերայ, և ջնջենք օդևրևոյթների, հրաշքների և ուրիշ երևոյթների վերայ ունեցած երկիւղը, բացատրելով նոցա էութիւնը. թէ՝ կարելի է յայտնի չափով օգուտ քաղել Դեմոկրիտէսի և Ա՛րիստոտէլի հայեացքներից, որպէս զի բանականութիւն ձեռք բերած լինենք. և թէ՝ կենդանիներից, որոնք ձգտում են դէպի հեշտութիւն և փախչում են նեղութիւնից, կարող ենք սովորել, թէ ինչպէս ընթանալու ենք և մեր կեանքի մէջ: Ընդհանրապէս մեք կը-

Ա՛ճեից յառաջ.

գտնենք կապ զգաարձութեան և առաքինութեան մէջ. մանաւանդ՝ եթէ կընդարձակենք մեր հասկացողութիւններն և ձգտումները դէպի զգաարձութիւնը, բանականացնելով ոչ միայն լոպէական ցանկութիւնները, այլ ձգտելով դէպի ամբողջ կեանքի ընդհանուր զգաարձութիւնը: Հոգեկան բոլոր զգաարձութիւնները յառաջանում են մարմնի զգաարձութիւններից. և ոչ միայն ներկաներն, այլ և անցեալից

գոյնը մարդու համար անվերջ ժամանակ է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԻԿԱԼԱՔԵՐԸ։ Ասում էին Հայաստանը Հա-
յոց Տոհմ և Տոհմի տարի։ և մին էին ընդհանուր որ ինչ ընդ Ի-
րանս էր և ընդ Ասորիս, և ընդ Հոռոմս, առանձինն ինչ ազգ
էր Հայոց Տոհմ և տարեգիրք նոցա ունէին ինքեանց ազգա-
կան, և ոչ ուրեք այլուր։ Եւ ոչ ոք ունէր զնոսա ի կասկած
ինչ ազգի, քանզի ոչ ոք ոչ ինչ ասէր ընդ հակառակ նոցա։
Եւ ոչ ոք ունէր զնոսա ի կասկած ինչ ազգի, քանզի ոչ ոք ոչ ինչ ասէր ընդ հակառակ նոցա։

խօսութիւն՝ անցեալի խարդախութիւն՝ ներկայի և խարէութիւն ապագայի նկատմամբ: Այդ մարդիկն ուսուցանում են նորան, թէ մարդկային կեանքի ընթացքը պիտի որոշուի ինքնասիրութեան սկզբունքներով. թէ՝ բարեկամութիւնն և շնորհակալութիւնը կարելի է ցոյց տալ պահանջած տեղում ազդեցութեան համար, բայց թէ բնաւ պէտք չէ զգալ այդ բաները. թէ՝ մարդկանց չպիտի համարել մարդիկ, այլ մեր իսկական պիտանաւորութեան համար իրեր. թէ՝ դիտութիւն և անմեղութիւն, հայրենասիրութիւն և բարեզգածութիւն միայն տմարդների զառանցանք են. և թէ՝ հարստութիւնն է միակ առարկայ, իսկապէս արժանի մարդկային յարգանքին:

Աքքեսիղայոսի պջին ճեմարանն.

Ա՛ետ դեռ մնում է յիշել այս գլուխում վերջին ժամանակների պղատոնականութեան մասին: Պղատոնի հիմնած հին ճեմարանը չափաւորում էր իւր վաստակները նորա վարդապետութեան բացատրութիւնների և պաշտպանութիւնով: Մի քանի ճեմարանն, որ երևեցաւ Աքքեսիղայոսի հետ (ծնաւ 316 թուին Ք.յ.), պատերազմեց ստոյիկեանների հետ և զարգացրեց զգայարանական տպաւորութիւնների անստուգութեան և մարդկային դիտութեան չէնիչութեան մասին եղած վարդապետութիւնը:

Արքեսեսէոսի նոր ճեմարանը.

Նոր ճեմարանի հիմնադիրն եղաւ Արքեսեսէս (ծնաւ 213 Ք.Ք. յառ.), որ ընդունում էր նախընթաց դպրոցի հիմնական ենթադրութիւններից շատերը. Արքեսեսէս մէկ կողմից հակում էր սկեպտիքականութեան, միւս կողմից հաւանականութիւնն ընդունում էր առաջնորդող: Այս դպրոցն այնքան շուտով աղարտուեց, որ վերջապէս զբաղուեց միայն ճարտասանութիւնով: Այդ շրջանի մէջ բաւական նշմարելի է սկեպտիքականութեան և անտարբերութեան հետզհետէ զօրանալն. օրինակ՝ Աքքեսիղայոս ասում էր, որ ինքը չգիտէ ոչինչ, մինչև անգամ չգիտէ և իւր իսկական տգիտութիւնն. և ուրանում էր ինչպէս մտաւոր, նոյնպէս և զգայարանական դիտութիւնը: Արքեսեսէս՝ որ իւր հայեացքները քաղել էր հին փիլիսոփայութիւնից, գտնում էր նորանում կարևոր իւր նպատակների համար ապացոյցներ ընդդէմ անհրաժեշտութեան, Հոոմէոսի և կատարեալ իմաստութիւնների. նա չէր խոստովանում որ և իցէ վերացական արդարութեան գոյութիւնը, համարելով այդ հասկացողութիւնը լոկ պայմանական. և յիրաւի նորա ճանապարհորդութեան ժամանակ դէպի Հռոմ, նորա հռետորական դատողութիւնները, սկզբում ի գովեստ արդարութեան իսկ յետոյ նորա ընդդէմ, զրդեցին Պատուն նորան քաղաքից հալածելու: Թէև Պղատոն հաւատի դարու ներկայացուցիչն եղաւ, բայց նորա բոլոր գրուածների երկրորդանուագ վերլուծութիւնն, որ դուրս բերեց և նոյնա ընդդիմաբանութիւններն, աւարտ առաւ սկեպտիքականութիւնով:

Վր եկեղ ժամանակի ճեմարանների երկդիմութիւնը.

Եթէ կարելի է փորձ փորձել որոշելու բուն նպատակն այն փիլիսոփայութեան, որի ներկայացուցիչները բռնում էին այսպիսի հռետորական երկմիտ դրութիւն, ուրեմն մեք կարող ենք ասել, թէ այդ նպատակն էր ապացուցանել, որ այս աշխարհում չկայ ճշմարտութեան կրիտերիում: Այս կերպով համոզուած լինելով փիլիսոփայութեան անկարելութեան մասին, Արքեսեսէս առաջարկում էր իւր հաւատնական տեսութիւնն: Այն գաղափարն՝ որ ամենապատար կերպով հետազօտուած, քննուած և երևցած է, որ չէ անհաւանական,—առանձին հաւանական գաղափարն է: Փիլիսոփայութիւնը դարձաւ միանգամայն ամուլ և անպտուղ. և շատ անուանի մարդկանց վաստակները ապարտուեցան և հասան մինչև հռետորական վարժութիւններ: Ամենն պարզ երևեցաւ, որ Պղատոն ջնջից որ և իցէ հաւատքի զգայարանքների ցուցմունքներն, և նոցա տեղը կարգեց դատափաստական տեսութիւնը: Երիտասարդ քանդեց և այդ տեսութիւնն, և մարդկանց ուրիշ մի բան չմնաց, բայց սկեպտիքականութիւնից:

Զորրորդ և հինգերորդ ճեմարանները.

Զորրորդ ճեմարանի հիմնադիրն եղաւ Լարիսեցի Փիլոն. հինգերորդինը՝ Ենտիոքոս Ասկալոնացի: Այդ վերջին վարժապետն ստիպուած էր կցել ճեմարանին սրահակ, և խառնել Պղատոնի վարդապետութիւնը Ստոյիկեանց վարդապետութեան հետ: Այսպիսի այլասեռ խառնուրդը ցոյց է տալիս այն դրութիւնն, որին հասաւ տեսական փիլիսոփայութիւնն. և պարզ ասում է մեզ, որ աշակերտները Թողին ընկերին նորան, կորցնելով նորա վերայ ունեցած յոյսը:

Ծուռական հաւատի գաղութ վախճանը.

Այսպէս վախճան է առնում յունական հաւատի դարը: Ինչպատմութիւնն արշաւի պարզ յիշեցնում է անհատական կեանքի հասակաստանող շրջանը, հաւատացող հոգին և երիտասարդութեան տարբանքը: Անում ենք նորա մէջ տանելով մեզանում անթերի հաւատ դէպի իրերն և դէպի մարդիկ, չկասկածելով, որ մէկ քանին կարող են խափել միւսները՝ բանալ պատրանքը: Ներ առաջին փորձերի մասին յիշատակութիւնը հարկադրում է մեզ միայն ղպրմանալ, թէ ինչպէս կարացինք ծանրօրէն զբաղուել այնպիսի անմիտ բաներով, և առաջնորդուել մեր գործողութիւնների մէջ այնպիսի անյարմար պատճառներով: Ջենք մտածում, որ և այժմ, մեր ձգտումները թէև դուցէ փոփոխուած, գարձեալ ոչ սակաւ ունայն են և նպատակներն էլ ոչ պակաս պատրուղական:

Ծուռական փիլիսոփայութեան երկրորդ շրջանը վախճան առաւ իմաստակութիւնով. երրորդը՝ սկեպտիքականութիւով:

Տեսական փիլիսոփայութիւնը հասնում է վերջապէս այն սահմաններին, ուսոր չէ կարող անցնել: Այսպէս է նորա դրութիւնը մինչև անգամ մեր ժամանակումն էլ. սահմանափակող պատուարը յետ է

նահանջում նորա բոլոր տքնութիւնները. և չկայ բնաւ յոյս, որ նա կարող է այդ պատուարից այն կողմն անցնել:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ:

Բանականութեան Դարը Յունաստանում:

ԹԻՑՈՒՔԵՆ ԶԸՐԳԸՑՈՒՄՆ:

Ցրքանալուն Պարսկաստանի վերայ.

Ընդ Ալեքսանդր Մակեդոնացու Պարսկաստանն տիրելն ամենակարեւոր դէպքն է Եւրոպայի պատմութեան մէջ: Իւր հօր—Փիլիպպոսի դիտաւորութիւնն իրագործող այդ բազկանկիրը ձեռնամուխ եղաւ այդ գործին շատ անշան միջոցներով. ասում են՝ որ նա առաձեւ ունէր ոչ աւելի քան երեսուն հոգու հետեւակ, հոգու հազար այրուձի և ոսկեանասուն տալանդ դրամ: Նորա արշաւանքի արդասիքն եղաւ ինչպես Պարսիկ տէրութեան, նոյնպես և Յունաստանի կործանումն: Ոչանց հեման չէր, որ նորա հայրենիքը նզովում էր նորա յիշատակը. նորա արշաւանքները ծախեցին իւր երկրի լաւագոյն կենսական ոյժերն: Ասիայում կատարուած փառաւոր յաջողութիւնների պատճառով Յունաստանը դադարեց լինել թատր գործողութեանց ընդունակ մարդկանց համար. դիւնաւորական անեզափոխութիւնն այնքան մեծացաւ, որ յոյն դիւնաւորները ստրածախնակ եղան Պարսկաստանի ամբողջ տէրութեան մէջ. այնքան մեծ էր նոցա թիւն, որ պիտի պատճառէր անխուսափելի ջնջաս այն երկրին, ուստի եկած էին. բայց որ միևնոյն ժամանակ անբաւական էր հիւծեցնելու այն հին բնակիչների խիտ բազմութիւնն, որոց մէջ բնակեցրած էին:

Նորա հետևանք նորը կորստաբեր եղան Յունաստանի համար

Միայն բնակիչների նուազումն չեղաւ Յունաստանի համար այսպիսի կորստաբեր հետևանք մակեդոնական արշաւանքի. ճնաստակար եղան նոյնքան և փառաւոր աշխարհակալութիւնների քաղաքական արդասիքները: Ալեքսանդր Ասիան իսկապէս այնքան մեծ հարուած չէր կարող տալ եթէ վարուէր մինչ անդամ նորա հետ այնպէս, ինչպէս Քսերքսէս հետ, որուղ Ջրից քաղաքն երկրի երեսից, որուղ կառուցից մեծ հազար բնակիչ, և վաճառից երեսուն հազարը գերի: Ալեքսանդրեայի հիմնադրութիւնը վերջ դրեց Ասիան աոուտուրին, և տուեց վերջնին հարուած նորա հին հաստուածական դրութեանը (1): Լաւ էր, թէ որ Ալեքսանդր կարձէր իւր ապա-

(1) Колоніальная Система:

գայ մտադրութիւնները Տիւրոսի կործանումից յետոյ, որ տապալեց ոչ քինախնդրութիւնով, ինչպես շատ անգամ պնդում էին, այլ նորա համար, որ այդ քաղաքի մէջ տեսնում էր Պարսից պետական դրութեան էական օղը: Բայց նա երբէք ի նկատի չունեցաւ հաստատել Ասիայի բարօրութիւնը նորա փիւնիկեցի հակառակորդի աւերակների վերայ. նորա նպատակը միանգամայն կատարուեց Ալեքսանդրիոյ հիմնարկութիւնովն և ծաղկելովն:

Ալեքսանդրիոյ հիմնարկութիւնը

Թէև վերջին հարիւր տարիների պատմութիւնը նուաղեցնում է մեծ գինուորականի փառքը, ցոյց տալով, որ եւրոպացի զօրքերի առաջացոց հետ ունեցած ամեն մի բախմունքի միջոցին տեսչիները միշտ յաղթող էին հանդիսանում, նաև բուն ձախող հանգամանքներում, բայց դարձեալ չէ կարելի ուրանալ Ալեքսանդրի կորովարիր նախատեսութիւնն և պետական տաղանդն. այդ մասին նորան նմանող չէ եղել ուրիշ աշխարհակալների մէջ: Չհանի որ յաջողութիւնները և, դժբաղդաբար, գինու սէրը էջին ձգած նորան արիեցութեան վիճակի մէջ, նորա բնաւորութեան մէջ շատ ազնուութիւններ կային:

Մակեդոնեան աղաւանքների ուսումնական ձգտումները.

Ալեքսանդր մի քանի տարի աշակերտեց Արիստոտէլին. և զօրախաղաց ուղևորութեան մէջ վերցրուց իւր հետ այնքան ուսումնական կանոններ, որ այդ ուղևորութիւնը գրեթէ կարող էր արդարացնել այն դիտողութիւնը, թէ առաւել ուսումնական քան թէ պատերազմական էր նորա արշաւանքը: Նորա ուղեկցող գիտականների մէջ կար և Պալիսթենէս, Արիստոտէլի ազգականն և աշակերտն, որ կորաւայնպիսի դժբաղդ կերպով:

Ալեքսանդրի ստացած գումարը և մի քանի հաղար մարդիկ, որ նա կարողացաւ ձեռք բերել և դիտել իւր ,,Աշխարհացոյց պատմութեան,, համար հարկաւորուած օրինակներ (1), գուցէ և չափազանցութիւն լինի. բայց կարծիք չկայ, որ գործողութիւնների այս կերպը սկիզբն եղաւ այն քաղաքականութեան, որ շուտով պատճառ եղաւ ազեքսանդրեան Թանգարանի (մուզէում) հիմնարկութեան: Ալս անցքի կարևորութիւնը, որ մինչև այժմ նուազ հասկացուած է, չէ կարող չափազանցուած լինել նորա՝ Եւրոպիոյ մտաւոր զարգացման վերայ ունեցած ազդեցութեան նկատմամբ: Նորա շնորհիւ Արիստոտէլի գրուածները կարողացան ստանալ իրանց երկարատև փառքն, և ձեռք բերին նշանաւորութիւն ոչ միայն Յունաստանում, այլ Թարգմանութեան միջև անդամ նեստորականների ձեռքով ասորի լեզուով. Ն. դարում. և ասրերէնից արաբերէնի՝ չորս հարիւր տարուց յետոյ: Ալդ գրուածներն ունեցան կենդանարար ազդեցութիւն թէ քրիստոնեայ և թէ մահմետական ազգերի վերայ Սպանիայից սկսած մինչև Միջագետքը:

Ալեքսանդրի կամակցութեամբ Արիստոտէլի ուսեցած ազգեցութեան ակիզբն.

(1) Образецъ.

Ազդեցութիւն Ղէքսանդրի գիտական ճանաչքերը և ձեռնարկութիւնները.

Եթէ Պլուտարքոսի յառաջ բերած Ղէքսանդրի Արիստոտէլին ուղղած նամակի ստուգութիւնն ընդունենք, կիմանանք նորանից, թէ մինչև ո՛ր աստիճան ժողովուրդը թափանցել էր փիլիսոփայի վարդապետութեանը. մեզ բացայայտ կլինի նոյնպէս և այն, թէ որչափ դիւրին է սեալուել Արիստոտէլեան փիլիսոփայութեան բացատրութեան միջոցին: Գիժբաղդաբար ինչպէս յաճախակի լինում էր և յառաջ, նմանապէս այն ժամանակն էս կային երկու վարդապետութիւններ. մէկը մասնաւոր, և միայն ժողովրդեան համար: Ղէքսանդր իւր նամակում յանդիմանում էր փիլիսոփային հրապարակելու անհամեստութեան մասին. Արիստոտել արդարացնում է իրան պնդելով, թէ ցանկացած համեստութիւնը չէ խանգարուած: Արիւ՝ ոչ այնքան նշանաւոր, բայց շատ դէպքերը ցոյց են տալիս մեզ աշխարհակալի սէրը դէպի փիլիսոփայութիւնը: Ալեքսանդր և Արիստոտել, իւր մանկութեան ընկերները, նորա մի քանի ուսումնական ձեռնարկութիւնների մէջ նորա գործակատարներն էին: Արիստոտել ուղարկեց Ծովային ուղեղնացութեան մէջ գտնուելու, որ հաւանական է, թէ ունէր քաղաքական նպատակներ, բայց շատ շահաւէտ էր և գիտութեան համար: Եթէ Ղէքսանդր երկար ապրեր, Արիստոտել երկրորդ անգամ կըջջէր Ափրիկէի չորս կողմը: Ալեքսանդր իւր կատակելութեան ժամանակ Բաբիլոնում զբաղուում էր եւրոպական ծաղիկներն Ասիա և այնտեղինները Եւրոպա ուղարկելով. անկում էր Պարսկաստանի և Յունաստանի տունկերն, և ասում՝ են, մինչև այնտեղ հասաւ, որ եւրոպական հողի բոլոր արտադրութիւնները արմատակալեցին Միջագետքում, բացի պատատուկից: Դէպի Կասպից ծովը սրած ճանապարհորդութիւնն և ափրիկեան անապատների միջև ուղեղնացութիւնը վկայում են Ղէքսանդրի անձնական ճաշակի մասին դէպի բնագիտութիւնը. միևնոյնը հաստատ է և այն, որ ասում են թէ՝ Ղէքսանդր մի քանի օր մահուանից յառաջ, մահուան անկողնում իրան անդորրութիւն և դիւրութիւն էր գտնում Արիստոտի՝ իւր ճանապարհորդութեանց մասին պատմածների մէջ: Թէ օրչափ ճիշդ էին նորա զննուորական կշռադատութիւնները, պարզ ապացուցուում է նորա յայտնած մտադրութիւնից հազար նաև պատրաստելու մասին, որ Կարթագինէն նուաճէր և իւր առաջաւորութիւնը Միջերկրական ծովի վերայ ապահովէր:

Նորա անզգալի կրքեն և յանցանքները.

Այս ամենի հետ միասին՝ նորա բնաւորութեան շատ մասերն և նորա շատ գործերն աթժանի են անարդանքի. արբած դրութեան մէջ տուած հրամանով Պերսեպոլիս այրելն, ի պատիւ Եփեստիոնի գերիները կոտորելը, Կալիսթենէսին կախաղանով սպանելը նորա

անչափաւորութեան և ապերասան կրից հետևանքներն էին: Մինչև անգամ այնպիսի հաստատուն միտք, ինչպէս Ղէքսանդրինը, չկարաց անյողդողդ կանգնել և չգայթակղուիլ անհամար գանձից, որ լինքը գտել էր Սուզայի մէջ. և որ, ինչպէս ասում են, հասնում էր մինչև 80,000,000 ֆ. ստերլինգի. չգայթակղուիլ պարսիկ տերութեան կործանումովը, չպատրուել իւր ձեռք բերած միահեծան իշխանութիւնովը, և ասիական անսահման շռայլութիւնովը: Դա այնքան անմիտ չէր, որ համարէր իրան Ամմոնի տոհմից, բայց թոյլատրեց իրան այդ կեղծիքը՝ շրջապատուածների վերայ աւելի ազդեցութիւն ունենալու համար: Պէտք չէ մոռանալ, որ նա ապրում էր այն ժամանակում, երբ մարդիկ հակամէտ էին ակնկալելու աքանչելի ծնունդների և մարդկանց երկնքից իջնելուն: Սխալական այս գաղափարները թափանցել էին և Եւրոպիոյ մէջ: Իրանք Պթղնայիք շուտով հաշուեցրով աստուածային յարգանքը այնպիսի մարդկանց ընծայելու մտքի հետ, ինչպէս Ընտիգոնոս և Դմիտրիոս, սկսան երկրպագել նոցա իբրև փրկաւէտ աստուածների. կարգեցին քուրմեր և կանոնեցին նոցա համար զոհաբերութիւններ:

Յունաստանի համար դալիս է բանականութեան դարը.

Օրչափ նշանաւոր եղան մակեդոնեան արշաւանքների քաղաքական հետևանքներն, ոչ սակաւ նշանաւոր եղան նոքա և մեծաւոր զարգացման նկատմամբ: Այդ ժամանակը նշանաւոր է Յունաստանի համար նոր փիլիսոփայութեան երևան գալովը: Յունաստանը թողեց իւր երեք դարերը.—Դիւրահաւանութեան և աւտորիտէտի: Նորա համար յաջորդում էր այժմ բանականութեան դարն. և եթէ նորան տուէր գործողութեանց ազատութիւնը, նա կատար Եւրոպայի ապագայ քաղաքակրթութեանը վերջնական ուղղութիւն: Բայց ինչպէս պիտի տեսնենք ներքոյ կալդուածից, Յունաստանին վիճակուած չէր այս փառաւոր գործի կատարումն. նա իւր Ղէքսանդրեան դարում ունեցած արտակերպն դրութեան պատճառով չկարաց քաղաքակրթել Եւրոպան: Նորա ծերութեան միջոցին Եւրոպայի ոյժը կեդրոնանալով Հռոմում խեղդեց նորան: Շատ սակաւ են անցեալի պատմական այնպիսի դէպքերն, որոնք ընդունակ լինէին զարթուցանելու արդի ժամանակում այնչափ կենդանի համակրութիւն. և գիժբաղդաբար՝ չկան այնքան նուազ գնահատուած դէպքեր, ինչպէս Յունաց համար Ղէքսանդրեան դարը: Նորա պատմութիւնից տեսնում ենք, որ առաւել դէպքերն են կառավարում մարդկանց, քան մարդիկ դէպքերը: Մակեդոնացի աշխարհակալի ուսումնական ձեռնարկութիւններն անմիջապէս յառաջ բերողը յունական փիլիսոփայութեան ժամանակակից դրութիւնն էր, որ պատրաստել էր կարճել իւր հաւատի դարն. և այդ աղետութիւններն

Յունաստանը չէ կարողանում Եւրոպական քաղաքակրթութիւնը ի գլուխ տանել.

աճեցրին՝ այն ժամանակն Եգիպտոսին լշխող գլխաւոր մակեդոնացի զօրավարի հովանաւորութեան ներքոյ։ Ինչպէս էլ որ լինէր, Ղեկասանդրիայի դիտութիւնը թէև խոտորուած իւր ուղղակի և կանոնաւոր ուղղութիւնից բիւզանդեան դրութիւնովն, որ բռնանում էր նորա վերայ մի քանի դարերի ընթացքում, ազդեցութիւն ունեցաւ դարձեալ եւրոպական մտածման հետևող ընթացքի վերայ։ Եւրոպան մինչև անգամ այժմ էս չէ կարող անտարբերօրէն լսել այդ մասին, թէ որչափ մեծ էր այդ ազդեցութիւնը։

Ընիստոտէլի գրուածները կազմում են նորա ներածութիւնը

Քանականութեան դարն, որին առաջնորդում է մեզ Ընիստոտէլ, նորը հակադրութիւն է նախընթաց դարերին։ Ընթերցողի ուշադրութիւնից չէ կարող լոյս տալ այն փաստը, թէ ամենն, ինչ որ գրուծել են ազէքսանդրիացի դիտականները, շատ նման է նորան, ինչ որ այժմ մեզանում է յառաջ գալի. նոցա ժամանակը մերի նախապատմն եղաւ. բայց նոցա և մեր գարու մէջ ընկած է համարեա քսանդարեան երկար և մանրլուսաւոր շրջան։ Քաղաքականութեան վերաբերութեամբ, Ընիստոտէլ իւր դէպի Ղեկսանդր ունեցած մերձաւորութիւնովն և Պղատոնեանց միջոցին շարունակուող մակեդոնեան ազդեցութեան պատճառալ երևում է լծորդող օղ հաւատի անցած և բանականութեան ժամանող դարերի մէջ միևնոյնն էր նա նաև փիլիսոփայութեան վերաբերութեամբ, քան իւր ուսման էութեանն։ Պղատոնի տեսական դրութիւններից նա դիտութիւնով առաջնորդում է մեզ դէպի Ընդհանրէսի և Նէոպլատէսի դիտական եղանակները (1)։ Նորա վարդապետութիւնների արդասաւորութիւն և նոցանից շատերի մոռութիւնը կարող է վախցնել այն մարդուն, որ նոցա վերայ ուշ է գարձնում հարևանցի կերպով, եթէ միայն մշտապես միտք բերելու չլինի այն զարմանալի հեղինակութիւնն, որը վայելում էին նոքա այնքան դարերի ընթացքում, և այն փառաւոր արդասիքները մարդկային դիտութեան բոլոր դրական ճիւղերի մէջ. արդասիքներ, դէպի որոնց նոքա այնքան արագապես առաջնորդեցին։ Սորա համար Ընիստոտէլի կենագրութիւն և նորա փիլիսոփայութեան պատմութիւնը անհրաժեշտ ներածութիւն են դէպի ազէքսանդրիական դպրոցի նշանաւոր անմահ գրուածքները։

Ընիստոտէլի կենագրութիւնը

Ընիստոտէլ ծնաւ Թրակիայում, Ստագեր մի մէջ, 384 թ. Ք. Ծ. յառ. նորա հայրն այն ժամանակին հռչակաւոր հեղինակ էր բնական պատմութեան մէջ, իսկ արհեստով բժիշկ։ Նորա որդին դեռ շատ մատաղ հասակումն էր երբ ինքը մեռաւ. բայց թողից որդուն ժառանգութիւն լաւ կարգութիւն, և իւր սեպհական սէրը դէպի գիտութիւնը։ Ընիստոտէլ շուտով անցափսեանց Ընթենք և մնաւ Պղատոնի գպրոցն, որի հետը կացաւ, ասում են, քսան տա-

(1) Научный методъ.

րի։ Այդ տարիներում վանեց հայրենի ժառանգութեան մեծ մասն և ստիպուեց դեղավաճառութեան արհեստին հետևել։ Ի վերջոյ նորա և Պղատոնի մէջ ծագեցան անհամաձայնութիւններ. քան որում՝ ինչպէս պիտի շուտով տեսնենք, անուանի աշակերտը շատ հեռու էր անուանի ուսուցչին կուրօրէն հետևելուց։ Մի բարերազդ վայրկենում Փիլիպպոս Մակեդոնացին կարգեց նորան պատուիրակ իւր Ղեկսանդրը որդուն. և այս պէտքը մեծ ազդեցութիւն ունեցաւ Եւրոպիոյ մտաւոր ճակատագրի վերայ։ Ընիստոտէլ վերայիշեալ ձեռնտուութեան մասին պարտական է իւր՝ Ղեկքսանդրի հետ ունեցած բարեկամութեանն. և աշխարհական օգնութիւններն էին, որ ասիական արշաւանքների ժամանակն օժանդակեցին նորան յօրինելու ,,Բնական պատմութիւնը,,. Նորան է նա պարտական նաև այն հիանալի փառքի մասին, որը վայելում էր նորա անունը տասնեհինգ դարից առել։ Ընիստոտէլ ի վերջոյ հիմնեց Ղթէնքում Լիկէոնի մէջ դպրոց. և որովհետև նորա սովորութիւնն էր շրջելով աւանդել իւր դասերը, վանորոյ նորա աշակերտները կոչուեցան շրջուն (1) կամ ճեմող փիլիսոփայք։ Նորա ընթերցուածներն երկու տեսակ էին—առանձնական և հրապարակական. առաջինին մասնակցում էին միայն աւելի զարգացած ունկնդիրներն։ Ընիստոտէլ գրեց շատ գրքեր, որոց մեծ մասը հասած է մեզ։

Ընիստոտէլի փիլիսոփայական եղանակը ներհակ է Պղատոնի եղանակին. վերջինիս վախճանական կէտն ընդհանուր սկզբունքներն էին, որոց գոյութիւնն ընդունուում էր հաւատով, և որոնցից եզրակացնում էր մանաւորութիւնները կամ պարագաները. ընդհակառակն Ընիստոտէլ մանաւորութիւններից բարձրանում է դէպի ընդհանուր սկզբունքներն եզրակացութեան միջնորդութեամբ. նորա դրութիւնն—եզրակացուչական փիլիսոփայութեան դրութիւնն—եղաւ խիստ դիտութեան ճշմարիտ հիմն։

Ընդհանրէսի հիմնում է եզրակացական դպրոց։

Ընդհակառակ Պղատոնի, Ընիստոտէլ բանականութեան՝ նոցա հայեացքների հակադրութիւնն ամենից լաւ տեսնում է նոցա դէպի գաղափարների տեսութիւնն ունեցած յարաբերութիւնների մէջ. Պղատոն ընդհանուր գաղափարներին, պատկերների կամ նախատիպերի մէջ նշմարում է իսկապես գոյական բան. Ընիստոտէլ քարոզում է, որ այդ՝ մարդի սոսկ վերացական ներկայացուցումներն են։ Եբևակայած յիշողութիւնների փոխարէն, որոնք Պղատոնի ուսմամբ այլ կենաց մէջ ունեցած փորձառութեան աղտոտքներն են, Ընիստոտէլ կարգում է ներկայ կեանքի յիշողութիւններն, որոնք առնուած են իրական փորձից։ Փորձառութեան այս գաղափարները հաստատում է մեզ յիշողականութիւնն, որ տալիս է մեզ կարելիութիւն ոչ միայն յիշելու միակերպ փաստերն

Ընիստոտէլ և Պղատոնի ոճերի համեմատութիւնը.

(1) Перипатетики. Péripatéticien։

և անոյքերն, որոնց ականատես եղած ենք, այլ նաև համեմատել նոքանց մեկը միւսի հետ, և սորանով երևան հանել նոցա մէջ գտնուող նմանութիւնն և տարբերութիւնն: Նե որչափ առաւել ընդարձակ է մեր փորձառութիւնն, որչափ աւելի բազմաթիւ են մեր ժողոված փաստերն, այնքան ստուգագոյն կլինի մեր եզրակացութիւնն:

,,Մտութիւնն սկսուում է այն ժամանակ, երբոր բազմաթիւ փորձերից հանուում է մէկ ընդհանուր կշռադատութիւն, որ պարունակում է բոլոր համմանման դէպքերը,,: ,,Եթէ արժանաւոր կերպով դիտում ենք երևոյթներն, այն ժամանակ կարող ենք գտնել նոցա կառավարող օրէնքը,,: Պլատոնին համաձայն փիլիսոփայութիւնը ծնունդ է առնում դէպի անցեալն ունեցած հաւատից. ըստ տեսութեան Արիստոտէլի՝ միայն բանականութիւնը կարող է ծնանիլ նորան փաստերից: Պլատոն վերլուծող է (1), Արիստոտէլ՝ ամբողջանական (2): Պլատոնի փիլիսոփայութիւնը ծագում է նախասկիզբն գաղափարի՝ մասերի բաժանուելուց. Արիստոտէլինը—մանաւորութիւնների՝ ընդհանուր հասկացողութեան միանալուց: Ուրջինն իսկապէս գաղափարապաշտ է, վերջինը՝ նիւթապաշտ:

Պլատոնի և Արիստոտէլի տեսութիւնների հետևանքները.

Սորանից երևում է, որ Պլատոնի տեսութիւնն ընդունակ էր առաջնորդելու դէպի առաւել վսեմ սրգասէրներ, թէև անհրաժեշտապար լինէին նոքա ոչ այնքան իրականներ. նորա հակառակ՝ Արիստոտէլի տեսութիւնը թէև յամրաշարժ իւր գործողութիւնների մէջ. բայց անհամեմատօրէն աւելի հիմնաւոր էր: Նա առաջարկում է փաստերի, ախտաւոր փորձերի և դիտողութիւնների անվերջ հաւաքման և ապացոյցներ կարդելու անձանձիր աքնութիւն: Այս տեսութիւնն ըստ իւր բուն էութեան այնպիսի ինչ էր, որ նորա հետևնակը չէր կարող նորա օգնութեամբ վերջնական կերպով աւարտել դիտութեան շինուածը: Այն վայրկենում՝ երբ Արիստոտէլ առաջրում է գործին իւր իսկական սկզբունքներն, մեք տեսնում ենք նորան հարկադրուած հետևանալու նորանցից, փորձի պակասութեան և նոյն իսկ փաստերի ոչ այնքան որոշաւորութեան պատճառով: Պլատոնի փիլիսոփայութիւնը շքեղայարդար օժտուէն ամբոց է. Արիստոտէլինը՝ հաստատուն շինուած, վաստակաւորապար բայց շատ թերութիւններով կանգնեցրած անպղպուելի վիմի վերայ:

Ա խոտաւէլի տրամաբանութիւնը.

Տրամաբանութիւն անուանով Արիստոտէլ նսւում է ընդհանուր ենթադրութեանց հաստելու և նոցանից սկսելով դատելու կարողութիւնների վերայ: Նորա տրամաբանութիւնը ներկայացնում է միևնոյն ժամանակն և խորհրդածելու եղանակն և մտքի գործիքը: Դիտութեան չքութիւնը կախում ունի մեր փորձառութեան ընդարձակութիւնից և լրութիւնից: Նորա դատողութեան եղանակը ձևնարկու-

(1) Аналитикъ (2) Синтетикъ.

թիւն է. պատճառաբերութիւն, բաղկացած երեք նախադասութիւններից, որոնք դրուում են այնպէս, որ եզրակացութիւնն անհրաժեշտաբար յառաջ է գալի երկու նախադասութիւնների մէկից, և բոլոր ապացուցութիւնների տեսութիւնը սորան օրինակ է: Ընդունելով տրամաբանութիւնն իբրև գործիք մտածողութեան, Արիստոտէլ մտածանում է նորա մէջ իբրև հիմնական դրութիւն տասն ստորոգութիւններ: Այդ ստորոգութիւնները ներկայացնում են իրանցում կարգեր (1), որոնց կարող են ենթարկուել բոլոր իրերն. և նշանակում են ամենընդհանուր ստորոգելիները, որոնք միայն կարող են վերաբերիլ իրերին:

Նորա բնազանցութիւնը պարունակում է բնական դիտութեան բոլոր ճիւղերն, և նկրտում է հետազօտելու այն դրութիւնները, որոց վերայ հիմնուած է ամեն մէկը նոցանից, որոշելով նոցա իսկութիւնը կամ անհրաժեշտութիւնը: Ընդունելով՝ որ ամբողջ դիտութիւնը պիտի գանի իւր հիմն փաստերից հանած ընդարձակ մտածութեան մէջ, իւր դրութեան հիմն գնում է անհատի հետազօտութիւնը. զգայարանքների աշխարհի նկատմամբ՝ նա չորս անհրաժեշտ պատճառներ է համարում, փաստ վերաստեղծելու համար—պատճառ նիւթական, զոյացական (2), ներգործական և վախճանական:

Նորա բնազանցութիւնը.

Բայց եթէ գտանենք դէպի Արիստոտէլի բնագիտական տեսութիւնները, իսկ՝ կտեսնենք նոցա անհիմնաւորութիւնը: Ժամանակակից գիտութիւնները նորան չտուին բաւականին փաստեր, որոց վերայ կարող լինէր նա հիմնել իւր վարդապետութիւն. և առհասարկի զարձաւ դէպի վերացական մտածողութիւն: Որպէս զի համոզուենք, թէ որչափ մեծ է նորա դրութեանց անիսկութիւնը կամ չհիմնութիւնը, բաւական է մեզ ցոյց տալ նոցանից մէկ քանին այդ ճիւղի կամ նորա բնազանցութեան մէջ: Օրինակ՝ նա հաստատում է թէ՝ նիւթն ունի երրակի ձև.—հասարակ զոյացութեան, գերազոյն զոյացութեան, որ յատկութեան է, և բացարձակ գոյութեան կամ բուն Էստուծոյ. նա սրնդում է, թէ տիեզերքն անփոփոխ է և յաւիտենական. և թէև կապ ունի աշխարհի փոփոխութիւնների հետ, բայց գտնում է արտաքոյ նոցա ազդեցութիւնների. թէ՝ նախասկիզբն զորութիւնը—բոլոր տեսանելի շարժման և փոփոխութեանց աղբիւրը,—բնութիւն է, որ է նոյնպէս և աղբիւր հանդարտութեան. թէ՝ աշխարհը հոգի ունեցող կենդանի էակ է. թէ՝ ամենայն ինչ նորանում ունի իւր որոշեալ նպատակն և քան այսմ հոգին մեր մարմնի նպատակն է. թէ՝ շարժումն ամբողջ բնութեան պայմանն է. թէ՝ աշխարհն ունի որոշեալ սահմաններ և չափաւորուած մեծութիւն. թէ՝ անջրպետութիւնն անշարժ կայան է, որի մէջ շարժում է ամեն

Գիտական փոփոխութիւնը.

(1) genera. (2) Субстанціальный.

Ինչ, որ ընթանում էր, ապշեցրել էր նրան. էլ նա, էլեւ նոր մտքերը եւ նոր զգացումները, որ նրան էին տիրապետել, նրան թվում էին անսպասելի եւ ոչ նրան պատկանող մի բան, որ ինչ-որ ուրիշն էր ներշնչել նրան, եւ որ նա ինքն էր ստիպված ենթարկվել նրան։ Նա զգում էր, որ նրա մեջ կատարվում էր մի հոգեբանական գործընթաց, որ ինքն էլ չէր հասկանում, եւ որ նրան ստիպում էր ենթարկվել նրան։ Նա զգում էր, որ նրա մեջ ապրում էր մի ուրիշ էակ, որ ինքն էլ չէր ճանաչում, եւ որ ինքն էլ ստիպված

որում նա է սկիզբն շարժման. նա ծնանում է ամենից յառաջ և մեռնում ամենից յետոյ. թէ՝ ուղեղը սոսկ մի յաւելուած է սրտի մօտ, որովհետև կազմուում է սրտից յետոյ, և ընդ նմին՝ այդ ամենատուն և արենաղբիւր դործարանն է· թէ՝ հոգին մարմնի բոլոր դործողութիւնների միութիւնն է. այլ՝ ջերմութիւն կամ ներդործող էութիւն է. որովհետև հոգին մարմին կամ մեծութիւն չէ, չէ կարող ունենալ տարածութիւն, ըստ որում միտքը չունի տարածութեան մէջ ոչ մտաբեր ոչ շարժումն, այլ է իբրև անշարժ նաւաստի շարժուն նաւի վերայ. թէ՝ գործարանի կազմուելու միջոցին արական տարրը տալիս է հոգին, իսկ իգականը՝ մարմինը. թէ՝ որովհետև մարմինն եղծանելի է և ունի անցաւոր բնութիւն, վասնորոյ նորա բարօրութեան համար պէտք է որ մնայնդն և արտաթորութիւնը փոխադարձաբար հաւասարակշիռ լինին. թէ՝ զգացումը կարելի է հանդստանալ մահի վերայ մնացած կնիքի պատճէնի հետ. մանն ընդունում է միայն ձևն և ոչ թէ էութիւնը կամ նիւթը. թէ՝ երևակայութիւնը յառաջ է գալիս այս կերպով ստացած տպաւորութիւններից, բայց ինքը գործում է որոշեալ ժամանակի ընթացքում. դորանից և ծագումն է առնում յիշողականութիւնը. թէ՝ մարդն է միայն պահպանում յիշողութիւններն. իսկ յիշողականութիւն ունին և կենդանիներն. ըստ որում յիշողականութիւնն անդիտակցական է և ինքնակամ, իսկ յիշողութիւնն ենթադրել է տալի ընդ հակառակն անձնական կամքի գործողութիւնը կամ հետաքննութիւնը. թէ՝ յիշողութիւնը անհրաժեշտ է յայտնի նպատակով դործելու համար: Պատճառն է պնում այն, թէ Արիստոտել հաւատում էր հոգւոյ անմահութեան, որովհետև նորա յայտնի գրուածներից ոչ մէկի մէջ չկայ մի տեղ, որ որոշակի խօսէր այդ նիւթի մասին:

Արիստոտելի ժամանակի հանճարեղութեան պատճառները.

Արիստոտել ունենալով կանոնաւոր և գիտական եղանակ (մեթոդ) վճռել էր կանգնել ընդարձակ դրութիւն. սակայն չունեցաւ այդ բանի համար պիտանի նիւթը· թէև շատ ուսեալ մարդ էր ինքը, բայց և այնպէս չունեցաւ բաւականին դիտութիւններ, որոնք և չկային նորա ժամանակին: Նորա վերը յիշատակած ենթադրութիւններից շատերի համար չկային ոչ մի ապացոյցներ. միսներն, օրինակ ծանրութեան սահմանումն և երկրի ծագումն, ցոյց են տալի նորա տիեզերաբանական գաղափարների խիստ աղքատութիւնը: Նորա դրուածներն այն ժամանակը միայն հիմնաւոր են և շահաւէտ, երբոր սկսում են խօսել համեմատական անդամազննութեան կամ բնական պատմութեան նման առարկաների վերայ, որոց նա հմուտ էր անձամբ և փորձառութիւնով. նորա բնախօսական ենթադրութիւններից մէկ քանին զարմանալի յաջող են: Նորա հայեացքները դորձանութեան մարմինների ամենաստորին կարգերից մինչև ամենաբարձրները միացնող շղթայի վերայ, շատ ընդարձակ են: Նորա բնաբանական և բնազանցական դատողութիւններն,—որոնք իսկապէս չեն ներկայացնում մի բան բացի ենթադրութիւններից,—չունեն որևիցէ նշանակութիւն: Նորա յատկապիմութիւններն, և նոյն իսկ թերութիւնները սրտով վկայում են նորա դրութեան գերազանցութեան մասին: Նա յայտնագործեց գիտութեան ճշմարիտ սկզբունքներն, և հակառակ յօրինել նոցա յարագրութիւնը միայն նիւթերի պակասութեան պատճառով: Այդ նորա ինքնասիրութիւնը չէր դիմանում արդելքներին, և նա պատրաստ էր դարձեալ սկսել տիեզերքի կառուցումն առանց դրա համար պահանջած անհրաժեշտ միջոցների, քան թէ բոլորովին հրաժարուիլ նորանից: Ընդհատել խոտորելով իւր դրութիւնից, անյաջողութիւն կրեց. բայց նորա անյաջողութեան ընդարձակութիւնն ամենից լաւ ապացուցանում է, թէ որչափ ուղիղ էին նորա սկզբ ընդունելը. նա յաջողում է, երբ հետամուտ է լինում նոցա:

Զննի կենսագրութիւնը.

Ինչ որ պակասում էր նորա ճշմարտութիւնները պաշտպանելու և փառաւորելու համար, Ալէքսանդրիայի դպրոցի պանծալի վաստակները լցրին. դպրոցի, որ աշխատում էր բնագիտութեան համար այնպէս, ինչպէս Ընդհատել բնական պատմութեան համար: Այդ դպրոցը ձգեց դիտողութեան և փորձի հաստատուն հիմունք, և քաղեց նոցանից նոյնչափ ևս հաստատուն և մեծագի արդասիքներ:

Մեղ պէտք է թողած Արիստոտելին դառնալ դեպի Օվենոն. ըստ որում ճշմարտների և սոփիկեանների տեսութիւնները զուգահեռական են: Եպիկուրոսի ժամանակին Յունաստանում դանուած ընդհանրական կազմութիւնը կարող է մինչև յայտնի աստիճանի ներել նորա դգացումներին· բայց առաքինութիւնն և պատիւը վերջապէս դգալ են տալի իրանց: Սոփիկեան փիլիսոփայութիւնը շատով հակառակորդ երևեցաւ Եպիկուրոսական. և Եպիկուրոսին հակառակորդ հանդիսացաւ Վիթիւմեցի Օվենոն: Եպիկուրոսից դեպի Օվենոն անցքը կազմում է անցք դգայական հաճոյքից դեպի անձնաքննութիւն և անձնատեացութիւն:

Օվենոնի կենսագրութիւնը կարելի է պատմել մի քանի խօսքով: Նա ծնաւ մօտ 300 ա. Ք. ծ. յ· և հետևելով հօր օրինակին, մանաղ հասակը անցրեց առևտրական գործունէութեան մէջ. բայց բարեբաղդ նաւաբեկութիւնն և ոչ նուազ բարեբաստիկ կորուստը նորա կարողութեան, որ դեպի Աթէնք անցնելու ժամանակին պատահեց, հարկադրեցին Օվենոնին փիլիսոփայութեան համար դառնալ դեպի փիլիսոփայութիւնը: Թէև փոքր ի շատէ ծանօթ էր նա Սոկրատի վար-

դապետութիւնները, սկսաւ աշակերտիլ կիւնիկեաններին. յետոյ ուսաւ Մեդարեան դպրոցում, և ի վերջոյ ծանօթացաւ պղատոնական նութեան հետ: Երկուտասանամեայ պատրաստութիւնից յետոյ նա դպրոց բացեց Աթէնքում Սոյի մէջ, որից և առան անուն և նորա վարդապետութիւն և հետևողներն: Զենոն պահպանեց իւր դպրոցը 58 տարի. և իւր աշակերտների թուում հաշուում էր շատ հռչակաւոր մարդիկ: Երբ ապա արդէն հարիւրամեայ ծերունի Զենոնը դիպմամբ վայր ընկնելով ջարդեց իւր մատն, ընդունելով այդ իբր նշան, որ իւր դարն արդէն վախճան է առել, իսկոյն խեղդեց ինքն իրան: Աթենացիք կանգնեցին և պատիւ նորա պղնձի արձան: Նորա վարդապետութիւնն իւր հիմնադրից երկար ապրեց. և այդ ժամանակներում, երբոր մարդ իւր չորս կողմը չէր գտնում ուրիշ մխիթարութիւն, նա զօրացնում էր նորան փորձութեան ժամում, և նորա անյողդողդ ուղեկիցն էր կենսական յուզմունքների մէջ. այսպէս էր նա ոչ միայն շատ նշանաւոր Յունաց, այլ և Հռոմի ոմանց անուանի փիլիսփաների, ալքունական անձանց, զօրապետների և կայսրների համար:

Զենոնի նպատակն էր փոխարկել Պղատոնի երևակայական տեսութիւնները տեղը դէպի կեանքի հանապազօրեայ պահանջներն ուղղուած, ուստի և գլխաւորագոյն կերպով բարոյական սկզբունքները բացատրող դրութիւնը: Նորա նպատակն էր մարդկանց բարեգործ առնել. բայց բարեգործութիւնն անբակտելի կերպով միացած է գիտութեան հետ. քանի որում Զենոն համոզուած էր որ՝ եթէ միայն գիտնանք թէ ինչն է բարի, այն ժամանակ անշուշտ կսկսինք նոյնը գործել մեր կեանքում: վսեմագոյ և մեծագոյն էր Պղատոնի Դաղափարներն և Յիշողութեանց վերայ ունեցած երևակայական տեսութիւնները, հմայուելով Արիստոտէլի վարդապետութեանց առողջ մտքի վերայ, որի հետ համաձայն է ինքը շատ պարագաներում: Նորա վարդապետութիւնով՝ զգացումը ժողովում է գիտական փաստեր, իսկ բանականութիւնը շաղկապում է նորանց. և որովհետև հոգին որոշուելով արտաքին առարկաներով, ինքն էլ նորանց է որոշում, ուստի Զենոն կարծում էր, թէ միտքը սկզբում լինում է մաքուր սափորակի նման, որի վերայ զգացումն գրում է յայտնի նշաններ. և թէ՝ զգայարանական տպաւորութիւնների պարզութիւնը նոցա ճշմարտութեան կրիաերիումն է: Այս կերպով նոցա՝ հոգւոյ մէջ յառաջ բերած փոփոխութիւնները կազմում են գաղափարներ. բայց նա մարգարէական ազդմամբ ցաւում էր, որ մարդ երբէք չէ գիտենում իրերի ճշմարիտ բնութիւնը:

Զենոնի իւր բնաիւսութեան մէջ ընդունում էր Արատոնի վարդապետութիւնը, թէ երկիրը կենդանի էակ է. նա կարծում էր, թէ

Աստիքականութեան նպատակը.

Զենոնի բնապետութիւնը.

ինչ որ աննիւթական է, կարող չէ յառաջ բերել որևիցէ գործողութիւն. այս պատճառով և ենթադրում էր, թէ հոգին նիւթական է: Նիւթն և նորա յատկութիւնները խոստովանում է նա բացարձակապէս անթաժան, որովհետև յատկութիւնն էութեամբ յատկապէս մարմին է կամ նիւթ: Աշխարհում կան երկու բաներ—նիւթ և Աստուած, որ աշխարհի բանականութիւնն է: Սակայն Աստուած և նիւթ ըստ էութեան միևնոյն բանն է, որ առնում է նիւթի կերպարանք՝ կրաւորական հայեացքով. և Աստուծոյ,—ներգործական. բայի սորանից նա է առաջին շարժիչ զօրութիւն, Ճակատագիր, Անհրաժեշտութիւն, կենսատու Հոգի, որ զարդացնում է նիւթն այնպէս, ինչպէս կենսական զօրութիւնը զարդացնում է ընձիւղը սերմից: Այս օրինակով տեսանելի աշխարհը պիտի հասկացուի իբրև Աստուծոյ նիւթական արտայայտութիւն: Չորս կողմ տարածուած վաղանցիկ գոյացութիւնները, ժամանակի որոշ միջոցից յետոյ կրկին պիտի թաղուին և միանան նորա մէջ: Սոյիկեանք աշխատում էին նաև ապրել որոշակի կերպով ցոյց տալ աշխարհի ճարտարութիւնն և նորա ապագայ ճակատագիրն. ըստ որում նկատելով Վերագոյն Լոկն իբրև կենսական հոգի, համարում էին թէ այդ հոգի մի մասը կորցնելով զօրութիւնը փոխարկուեց նիւթի, որից սկիզբն առաւ աշխարհը. բայց յետոյ հոգին կրկին ստանալու է իւր զօրութիւնն և այն ժամանակ համաշխարհական հրդեհի մէջ հասնելու է աշխարհի վախճանը: Իրերի այժմու դրութեան մէջ ամենայն ինչ կայ անորոշ փոփոխութիւնների վիճակում: Եղծմանը հետևում է նորոգութիւն և նորոգութեանն եղծումն. և ինչպէս ջրվէժը յողնաթիւ տարրերի ընթացքում ունի դարձեալ միևնոյն անփոփոխ ձևը, չմարիկ տուած նորան կազմող ջրի անընդհատ փոփոխութեանն, այսպէս և մեզ շրջապատած առարկաներն ոչ այլ ինչ են, բայց թէ նիւթի շարունակ բղխումն և շարժումն, որոնք ներկայացնում են մի յարատև եղանակ: Այս օրինակով տեսանելի աշխարհը միայն մի վայրկեան է Աստուծոյ կեանքի մէջ, և երբոր նա անհետանայ, իբրև թղթի մի ալրուած ծրար, այն ժամանակ երևան կգայ գոյութեան նոր շրջան, կերևին նոր երկինք և նոր երկիր, միանգամայն նման առաջիններին: Որովհետև ոչ մի ինչ կարող չէ լինել առանց իւր ներհակին, անարարութիւն առանց արարութեան, երկչոտութիւն առանց արիութեան, սուտ թիւն առանց ճշմարտութեան, խաւար առանց լուսոյ, ուրեմն նոյն իսկ բարւոյ գոյութիւնն անհրաժեշտ է անում չարի գոյութիւնը: Սոյիկեանք կարծում էին, թէ աշխարհը գտնուում է ծայրագոյն, վերջին օրինքի—Ճակատագրի ազդեցութեան

նեղբդ, որն ու սուրհանդակ և ինչ Ղասաբ. և ես, բան սրտ նեղբդ, որ ես ու ես ես ես

դարձեալ ոչ թէ միայն չընկաւ, այլ ցոյց էր տալի բաւական նշանաւոր զօրութեան նշաններ։ Ըրդարև յայտնի է, որ Ադիպտացոյ դէպի Պարսիկներն ունեցածատելութիւնը դիւրացրեց Ալէքսանդրին տիրապետել այդ ազգին, որ ողջունեց Մակեդոնացիներին իբրև իւր ազատարարների։ Այդ շարժման մէջ տեսնում ենք ընդ նմին և հին քրմականութեան զօրեղ ազդեցութիւնը։ Դժուարին է լինում ցնցել դարաւոր կրօնական համոզմունքներն, որոնք յաջողել են խորին արմատ պարզել ժողովրդեան մէջ. իսկ Ադիպտոսում նոցա հաստատուելն երեք հազար տարուց աւելի էր։

Ադէքսանդրեայ Թանգարանը.

Յունական տիրապետութեանը մնում էր այժմ վճռել այն հարցը, թէ ինչպէս պէտք համաձայնեցնել եգիպտական հինաւրեայ համոզմունքը փիլիսոփայական սկեպտիքականութեան հետ, որ յունական մտածման հետևանքն եղաւ։ Նոքա հասկացան զարմանալի հանճարեղութիւնով, թէ դրան կարելի է հասնել արևելականութեան միջնորդութիւնով, այդ երկու ղրութեանց մերձաւորութեան ընդհանուր կէտով։ Հասկացան, որ նոքա ձևական իւրացուցումն և զարգացումն ոչ միայն կարելութիւն կտան թագաւոր փիլիսոփային, — որի համար բոլոր կառավարական աստուածները միակերպ քաղաքական և միակերպ օգտաւէտ էին, — ցոյց տալ յարդանք մինչ անգամ Եգիպտացի խուժանի անդը կառավարական սովորութիւններին, այլ որ աւելի կարևոր էր, սահմանել արտաքին համաձայնութիւն ազատ մտածող փոփոխական Յոյների և հին եգիպտական քրմերի դասակարգի մէջ, որ զօրեղ էր իւր ամենակորչին հնութիւնովն, իւր յիշողութիւնովն, ոչ շատ յառաջ կրած հալածանքներովը, փարաւոնների մատնութիւններովն, որոց վերայ ամբողջ ժողովուրդը մոլի էր տալ նախապաշարուած կամ բարեպաշտական սարսափով։ Այսպիսի փաստեր յաճախ պատահել են պատմութեան մէջ, պատահել են նաև մեր ժամանակն. աշխարհակալների սակաւաթիւ բայց եռանդուն խումբը պահում էր իշխանութեան ներքոյ հինէ և բնակաւոր երկիրը։

Ադրա փոքր են եգիպտական կառավարու — թիւն և յունական սկեպտիքականութիւնը։

Այս նախագծին գործնական այժ տալու նպատակով Ադէքսանդրեայում հիմնուեց թագաւորական մի շէնք, որ իրրև Թանգարան մեծ անուն գտաւ։ Դէպի նա վազում էին իրրև դէպի կեդրոն բոլոր երկրի փիլիսոփաները. և ասում էին թէ, մէկ ժամանակ նորա մէջ գիտութիւններ սովորող մարդկանց թիւը հաշուում էին մօտ 14,000. Ադէքսանդրիա ձգդտելով իւր հիմնադիր մեծ զօրականի մարդասիրական նախատեսութիւնը, շուտով դարձաւ լայնածաւալ մայրաքաղաք. կենդանացաւ ձոխ առևտրով և ձեռագործական գործունէութիւնով։ Ինչպէս որ պատահում է միշտ այսօրինակ քաղաքներն, Ադէքսանդրիայի վերին դասակարգերը շատ էին, իսկ ամբողջ

պահպանում էր միայն գինուորական զօրութիւնով։ Քաղաքի հրապարական զուարճութիւնները էին, ինչպէս և պէտք էր սպասել, Թատրոնական ներկայացումներ, երաժշտութիւն և ձիարշաւ հանդէսներ. Այդ ամբոխի առանձնութեան, կամ այդ բազմաբազմ կեանքի աղմուկի մէջ իւրաքանչիւր ոք կարող էր գտնել իրան ապաստանարան, և Ադէնքից հալածուած անաստուածն և Գանգէսի ափերից եկած մոլեռանդն և միաստուածեան Հրէայեցին և Փոքր Ասիացի աստուածուրացն։ Ասում են մինչև անգամ, թէ այդ պէսպիսի ամբոխի մէջ աստուածուրացութիւնը հազիւ թէ մեղք էր համարում. շատ շատ՝ նորանում նկատում էին միայն թշուառ, և դուցէ անմեղ մոլորութիւն։ Բայց ըստ որում անկիրթ խուժանը կարօտում է որ և իցէ ամուր նեցուկի, որի վերայ հիմնուել կարօղանայ նորա մտածմունքները, և ըստ որում պարզ վերացական ուսմունքները բաւականութիւն չեն տալի նորա պահանջմունքներին, ուստի և կարևոր երևեցաւ սահմանել որ և իցէ արտաքին արտայայտութիւն ընտրական (1) փիլիսոփայութեան համաստուածական նութեան համար. ուստի պաղեստինները հարկադրուած եղան նորագլուխ, կամ ինչպէս ասում են ուրիշները, մտցնելու Սերապիս աստուծոյ երկրպագութիւնը։

Սերապիս աստուծոյ երկրպագութեան հաստատութիւն.

Նոքա, որոնք հաստատում են, թէ այդ երկրպագութիւնն մտցուեց երկրի մէջ, հաւատացնում են, թէ այդ աստուածը բերուեց Սինոպից. սակայն արդի Եգիպտաբաններն ուրիշ են ասում սորա համար։

Համաստուածական վարդապետութեան նկատողական արտայայտութեան համար, այդ աստուծոյ դրոշուածը — երբ որ հասաւ համաշխարհական փառքի — շինուած էր ամենաանսակ քարերից և մետաղներից։ „Ամենայն ինչ Աստուած է,,։ Բայց ժողովրդն առաջնորդ ունենալով իրան այն բնածին ձգտումն, որ երևել է և ուրիշ ազգերում և ուրիշ դարերի մէջ, կամենում էր ունենալ կանացի աստուածութիւն. և այս էր, որ մեծամեծ սարկաց վերանորոգելու զեղայի արձանը։ Հետաքրքրական է տեսնել, թէ ինչպէս ստորին դասակարգերն երբեք չեն մոռանում իրանց նախնեաց աւանդութիւնները, հակումն ցոյց տալով աւելի դէպի մայրական, քան դէպի հայրական զգացմունքների կողմն։ Ըստ այսմ նոքա զուցէ և սպասում են աւելի բարեյաջող հետևանքներ կանացի աստուածութեան, քան աստուծուն արու թելալից։ Ըրդարև Իզիդայի երկրպագողների թիւը շուտով գերազանցեց Սերապիսի երկրպագուների թուից. թէև նորան կանդնած էր շքեղափառ տաճար Ռակոտիսում, այն թաղի մէջ, որ կցուած էր Թանգարանին, և նորա երկրպագութիւնը սահմա-

(1) Эклектическая Философія։

մանուած աւելի քան արքայական շքեղութիւնով։ Ա՛երջում Սեբաստիայի երկրպագութիւնը տարածուեց և հռոմէական կայսրութեան մէջ, թէև իշխանաւորներն —հիւպատոսները, սենատը կայսրները—շատ լաւ գիտենալով նորա ներկայացրած վարչատեսութիւնն, ամենայն ջերմեռանդութեամբ գործ էին դնում նորան բառնալու համար։

Ընդբանդ—բիւզանդական դարաններ.

Ընդհանրապէս Քանդարանը շուտով համալսարանի կերպարանք առաց։ Նորա մէջ ամիսներեցան այն նշանաւոր դասատուներն, որոնք փառք և պարծանք եղան հնութեան։

Փաղերէացի Վիմիտրիոսին յանձնուած էր ամբողջ աշխարհից գրքեր ժողովել։ Նորա և նորա յաջորդների՝ տէրութեան պաշտպանութեան ներքոյ առնուած ջանքերն այնքան յաջող եղան, որ շուտով ձեռնարկին Քանդարանն երկու ընդարձակ դրադարաններով, որոնք պարունակում էին իւրաքանչիւր 700,000 հատոր։ Այս դրականական-ուսումնական ապաստանարանի մէջ, որ պահպանուում էր ճոխաբար և մինչև անգամ շռայլաբար,—ըստ որում մինչև մեզ հասան այնտեղ տուած շռայլ ճաշերի վերայ եղած աւանդութիւնները.—փիլիսոփայքը ժամանակ էին անցուցանում իրանց գիտութիւնով կատարելագործելում, կամ ուսանում էին փոխադարձաբար, հակաճառութեան միջնորդութիւնով։ Ինքը Թագաւորն օժանդակում էր այս հիմնարկութեան ծաղկելուն։ Ա՛երջում հռոմէական կայսրները շահագրգռեցին հովանաւոր լինել նորան. և այս կերպով ոսկի կապանքի մէջ էին պահպանում այն միտքն, որ այլապէս կարող էր նոցա վտանգաւոր լինել։ Ընդհին ժամանակին, ի յարդանս հին կրօնի, նորա մէջ նախադահութիւնը տուած էր եգիպտական քրմին. բայց յետոյ այդ քաղաքականութիւնը բարձուեց։ Սակայն պէտք չէ կարծել, թէ Թանդարանի բոլոր այցելուների պարապմունքները սահմանափակուած էին միայն ընթերցանութիւնով և ճարտասանական վարժութիւններով։ Նոցա զբաղմունքներն ունէին աւելի գործնական յատկութիւն։ Թանդարանին կցուած անկաբանական պարտէզը, անկաբանութիւնով պարապողներին միջոց էր. իսկ գազանանոցը նոյնպիսի յարմարութիւններ էր ներկայացնում կենդանաբանութեամբ զբաղողներին։ Բայց և այս հազուագիւտ հաստատութիւններն անգամ ծառայում էին նոյն ժամանակի շռայլութեանը. կենդանաբանական այգիում պահպանուում էին փասիաններ արքայական սեղանի համար։ Բացի այս ճոխ և ընտիր շինուածքներից, կար և անախորժ ու զարշելցնող յատկութիւն ունեցող մկը. բայց այնպիսի մկին, որ մեր արդի հասկացողութիւններին նայելով՝ կարող է անմահ փառք պարգևել այդ մեծ Թագաւորներին և ամենապարտ առնել ապրի շատ

Ինկաբանական պարտէզները, գազանանոց—ներ, անգամ ճարտնական տներ, դիտարանները։

աղգերի ազատութիւնն և անապաշտութիւնն. այդ անպատմաբաշխական ուսումնարանն էր, որ ձեռք էր բերած բաւական միջոցներ անպատմաղնեական հատուածների համար. և որ բժիշկներ յառաջացնելու համար հիմն էր բժշկական դպրոցի։ Աստղաբաշխների համար Պտղոմէոս Ալվերգէտ դրել էր քառանկիւնի պատշգամբի վերայ գիշերահաւասար և արևադարձ շրջան, բաժանած աստիճանների և այլն։ Դիտարանի մէջ կային քարեայ կվադրանտներ (1), մեր պատի կվադրանտների նախընթացները. յատակի վերայով տարուած էր միջօրէական՝ գործիքները ուղիղ դնելու համար. կային նոյնպէս աստրոլաբներ (2) և դիոպտրներ (3)։

Ընդհակառակ կողք կողքի, գրեթէ բուն արքայական պալատի մէջ ժողովել էին բազմաթիւ պիտոյքները, ճիշդ գիտութիւններով և թէթև գրականութիւնով պարապելու համար։ Մեկ յարկը միացրել էր երկրաչափներին, աստղաբաշխներին, քիմիկոսներին, մեքենագէտներին և ճարտարապետներին։ Այն տեղ կային և բանաստեղծները՝ որոնք բաւականութիւն էին տալի ժամանակ անցնելու միջոցներ որոնող քաղաքի գրականական պահանջմունքներին. տաղաչափներ՝ որոնք գրում էին ոչ միայն կանոնաւոր ոտներով, այլ և շատ զարմանալի ձևերով. ի դէմս սրտի, ծառի ձուի։ Այստեղ պատահում էին գրականական նորասէրներն և ծանրաբարոյ աստուածաբանները. լինքն իսկ Թագաւորն երբեմն ներկայ էր գտնուում Թանդարանի հացկերոյթներին և բարեսրտութեամբ ղեւարձացնում էր նորանց արքայական կատակներով. օրինակ՝ պատմում են թէ Եղբայրասէրը մի անգամ պատուասիրեց աստղկոս Սփերին մոմից շինած, բայց այնպիսի հիանալի կերպով գունաներկուած պտուղների ափսեով, որ անկարելի էր որոշել նորան իսկականներից. և երբոր խաբուած փիլիսոփան շատ ուշ իմացաւ պատրանքն, Եղբայրասէրը հարցրեց, թէ ինչ կարծիք ունի նա իւր դպրոցի սկզբունքի մասին՝,, թէ իմաստունն երբէք չի խաբուի արտաքինովը,,։ Պատմում են, որ միևնոյն Թագաւորն ընդունեց շատ մեծ պատուով 70 անուանի Թարգմանիչներն և իւր սեղանի վերայ հիւրասիրեց նորանց։ Շրջապատող հանգամանքների ազդեցութեամբ մի կողմ թողնի նոքա իրանց կրօնական ծէսերը. բայց Թագաւորն ուրախերես լսեցրեց ծերունի քրմերից մէկին աղօթք կարդալու։ Պարզամիտ պատմութիւնն ասում է, որ ներկայ գտնուող Հրէաքսանդրիացիքն, որոնք երբաքննին գատաւորներ էին այնտեղ, ուր բանը ճարտասանական արուեստի վերայ էր, մեծաձայն ծափահարութիւններով ցոյց տուին այդ միջոցին իրանց գոհունակութիւնը։ Բայց միմիայն գրականութիւնն և պարզ դիտութիւնները չէին, որ այստեղ գտնում էին իրանց հովանաւորութիւն։

Գանքը Թագ. գրքանի մէջ.

(1) Квадрантъ. quart de cercle. (2) Астролябія. astrolabe. (3) Діоптры

Իբրև ապացոյց՝ թէ մարդկային միտքը դրաւոր ամէն առարկայ ար-
ժանի է հետազօտութեան, մշակուած էին Թանգարանի մէջ և ա-
ւելի կասկածաւոր արուեստներ, այսինքն գիւթութիւնն և աստղա-
հմայութիւնն: Եղբայրասէրն, որ վերջին օրերում սկսաւ տանջուիլ
և նեղուիլ մահուան անտանելի երկիւղով, ջերմեռանդ սրտով անձնա-
տուր եղաւ ալքիմիային և կենսական էլիքսիրի հետազօտութեանն:
Ո՛չ յառաջ երբէք գտնուել է,— ի նկատի ունենալով բոլոր հան-
գամանքները,—և ոչ յետոյ այսպիսի մի ընդարձակ գործունէութիւն,
նուիրուած մարդկային դիտութիւնների զարգացման: Լինել անգամ
այդ հիմնարկութեան, կնշանակէր ունենալ մուտք Պղէքսանդրիոյ վե-
րին շրջանի մէջ; և արժանանալ պալատի չնորհաց:

Եօթանասնից թարգմանութիւնը

Քրիստոնէական աշխարհն երբեմն Աստուածաշնչի եօթանասնից հին Թարգմանութիւնովը պարտական է Թանգարանին, կամ ինչպէս հաստատում են, Պտղոմէոս Եղբայրասիրին: Այս Թարգմանութեան մասին ընթանում էին շատ մեսոի առասպելներ. օրինակ՝ ասւում էին թէ՝ գործին ձեռք տուող եօթանասուն երկու Թարգմանիչները փակուեցան ամէն մէկն առանձին սենեկում. և երբ ամարտեղին լրանց վաստակեցին, եօթանասուն երկու ձեռագիրներն էլ բառ առ բառ միանման երևեցան. վասնորոյ և համարում էին, թէ Թարգմանութիւնն եղած է վերնական ներշնչութիւնով: Այս բանիս ապացոյց շուռուլ կարելի էր գտնել այն փաստն, որ իւրաքանչիւր անգամ, երբ Նոր Պատկարանի մէջ խօսքեր են բերուում Հնից, միշտ վկայութիւնները լինում են եօթանասնից խօսքերումն: Առանձին սենեակների վերայ եղած պատուիրանը զանազան կերպով կատարելագործեցին եկեղեցու հին հեղինակները, բայց ներկայ ժամանակում մերժուում է իբրև հնարած սուտ: Յիրաւի՝ ամենից հաւանականն այն է, որ Թարգմանութիւնը կատարուած է ոչ այսպիսի անհամեմատ հանգամանքների միջոցով, այլ պարզապար Պղէքսանդրիոյ Հրէայքը ձեռնարկել են նորան իրանց գործածութեան համար: Եօթանասնից Թարգմանութիւնն որչափ գնալով յարգ էր ստանում քրիստոնէից մէջ, այնքան նշանակութիւնը կորցնում էր Հրէից մէջ, որոնք մի քանի անգամ կամեցան նորա տեղը փոխանակել ուրիշ Թարգմանութիւններ, ինչպէս Ակիլէի, Թէոդոտիոնի, Սիմմաքոսի և այլն: Պտղոմէի Հրէայքը բուն սկզբից նորա վերայ մեծ էին տալի կասկածանքով. նորա Թարգմանութեան բուն ժամանակը համարում էին օր արտմութեան, և ծաղրածութիւնով մատնանիշ էին անում նորա սխալները. օրինակի համար պնդում էին, թէ նորան համաձայն Մաթուսաղան ապրել է իբր թէ չրհեղեղից յետոյ: Պտղոմէոս շատ յարգում էր նորանց, որոնք զրքերով ճոխացնում

էին մատենադարանն, արքայարար վարձատրելով Թարգմանիչներին և օրինակողներին:

Թանգարանի աստուածաբանական և աստուածական տեղագրութիւն

Նոյց նոր աշխարհը պարտական է եգիպտացի Թագաւորներին ոչ միայն նորա համար, որ մեք այստեղ ասացինք: Թանգարանն այնպիսի խոր արմատ և ազդու տպաւորութիւն գործեց Աղրոպիոյ մտաւոր ղարգացման ընթացքի վերայ, որի պտուղներն և այժմ իսկ քաղում ենք մեք: Այդ տպաւորութիւնը կրկին էր. աստուածաբանական և աստուածական: Պղէքսանդրիացիների տրամաբանական ոգին և դրականական բարդաւաճումն այդ ժողովրդին առաւել ընդունակ արին քրիստոնէութեան ընդունելութեանն: Ալէն երեսուն դար էր, որ Եգիպտացոց ծանօթ էր երրեակ-Լ-ի Աստուծոյ գաղափարը: Հաղիւ թէ նշանաւոր մի քաղաք կար, որ չունենար իւր Երբորդութիւնն: Այս ինչ տեղ կային Ամմոն, Մաուտ և Կոնսո. այն ինչ տեղ՝ Ոզերիս, Իսիդա և Հոր: Երբոր առաքելական քարոզիչներն երևեցան Պղէքսանդրիայում, ժողովուրդը պատրաստուած տեսան ընդունելու խորին խորհուրդները: Նոյց այս օգուտն ունեցաւ իւր հետ և ահագին վնաս: Յամառակից յետոյ աշխարհն արհնով լցնող վէճերն Երրորդութեան մասին ծագեցան Պղէքսանդրիայից: Նա եղաւ նոցա կեդրոնը: Այս տեղ երևեցաւ Արիոսի հերետիկոսութիւնն՝ այս տեղ ծնունդ առան այն հակառակաբանութիւնները, որոնք ստիպեցին Մեծն Աթանասիոսին դիմադրել Ալէքիոյ Ժողովը, մեր հաւատի էական վարդապետութիւնները մէկ հանգանակի մէջ հաստատելու համար:

Նոյց Պղէքսանդրիոյ՝ յետագայ դարերի վերայ ունեցած ազդեցութիւնն երևեցաւ ոչ միայն աստուածաբանութիւնովն, այլ նկատելի եղաւ նաև գիտութեան մէջ: Նորա աստղաբաշխական դիտարանները, քիմիական գործարանները, մատենադարանն և անդամաբաշխական շինուածքը ըստ չէին: Նորանից յառաջացաւ դիտութեան ոգին, որ իւր փայլը տուեց բոլոր յետագայ դարերին: Յունաստանն և Հռոմն իրանց ամենաճոխագոյն օրերում՝ չունեցան Պղէքսանդրիոյ Թանգարանին համմանման բան: Այդ Թանգարանն իւր տեսակի մէջ Պտղոմէոսեանց հարստութեան միակ և պանծալի յիշատակարանն եղաւ. Պտղոմէոսեանց՝ որոնք նորա պատճառն անն իրաւունք ամբողջ ապագայի երախտագիտութեան վերայ. և որի համար նոքա կարող են համարուիլ արքայական ամենանշանաւոր ցեղերի կարգում: Թանգարանը՝ մարդկային գիտութիւնը կազմակերպելու փորձն եղաւ, նորան զարգացնելու և տարածելու նպատակով, որը մտածեց և կատարեց Պղէքսանդրին արժանի գործնական հանճարն: Եւ թէպէտ՝ երկնչելով և խարխափելի յետոյքներով լի գ-

շերի մէջ—գիշերի՝ որ յետոյ երկար տևեց Եվրոպայում—մարդիկ չկարացին գնահատել այն ոգին, որով հիմնուած էր նշանաւոր շինութիւնը. չկարացին գնահատել նորա կատարած գործն, և նորա փառքը նահատակ մառախլապատ և անարժան առարկաներով,—բայց այժմ մօտենում է ժամանակն, երբոր նորա ազդեցութիւնը մարդկային անցքերի և եւրոպական քաղաքակրթութեան ընթացքի վրայ բացորոշակի և լաւագոյն պիտի հասկանալի և խոստովանելի լինի:

Թաղարանը մակեդոնական արշաւանքների պատուղն էր.

Եւ յոպէս ահա, երրորդ դարու սկզբում Ք. Ծ. յառ. Յոյներին ասիական քաղաքակրթութեանը հասնելու տեղիք տուող մակեդոնական արշաւանքների հետևանք՝ Եգիպտոսի մէջ երևեցաւ զրգռուած մտաւոր գործունէութիւն: Եգիպտացոց Պտղոմիոս զիւղի տեղում, որ յառաջ նորանց օտարերկրեայ յարձակմունքներից պաշտպանուելու տեղն էր, Մակեդոնացիք կանգնեցին քաղաք, որին նախանշանակուած էր լինել արևելեան և արևմտեան վաճառների կեդրոնն, և աւանդել փառաւոր անուն յետագոյն սերունդներին: Նորա երկարաժամանակեայ առևտրական ծաղկումն և իշխող դրութիւնն, որ ուներ աշխարհի նիւթական շահերի նկատմամբ, ապացուցանում է կատարելապէս նորա հիմնարկողի պետական հանճարն. և այն մտաւոր փառքն, որ հռչակաւոր կացոյց այդ քաղաքը, ծածկեց նորա անունն անանց շքով:

Ըկայ ամենևին կարծիք, թէ Ալէքսանդրիոյ այս փիլիսոփայական գործունէութիւնն ուղղակի արդասիք էր այն քաղաքական և զինուորական անցքի, որին և տալիս ենք մեք: Ալէքսանդրի հանճարն և ձգտումներն երևում են նորա՝ դէպի Արիստոտել ունեցած յարաբերութիւնների մէջ, որին օգնում էր նա ուսանելու բնական գիտութիւնները, նորա հաստատած գաղանանոցի միջոցով. իսկ աստղաբաշխութիւն ուսանելու համար, Կալիսթենէսի ձեռքով ուղարկելով նորան այն տեղեկութիւնները, որոնք պարունակում էին իրանց 1903 տարուայ ընթացքում ունեցած դիտողութիւնները: Նորա կենսագրութիւնը ցոյց է տալի նորա մէջ, ինչպէս տեսանք, մի մարդու, որ ինքնին հետաքրքիր է լինում դէպի այսօրինակ գիտութիւնները: Այս մասին նորան նմանել են և ուրիշ մեծամեծ զօրապետներ. և գուցե թէ՝ մտածողութեան գործնական բնաւորութիւն, և տեսութեան մշտական յարաղրութիւններն իրական կեանքին, որոնք պահանջում է մի զինուորականից նորա պաշտօնը, հարկադրում են նորանց բնականաբար թողնել մտաւոր մշնամպատ հայեացքներն և բաւականանալ միայն իրական և ճշդիւտ գիտութիւններով:

Ալէքսանդրի գրութիւնով ներշնչուած՝ և ժամանակի ոգին հասկացող նշանաւոր մարդկանց խորհրդով առաջնորդուած եգիպտացի

Ալշան տոր մարդկանց երեւումն.

թագաւորներն այս կերպով ստեղծեցին թանգարան իրանց անմիջական հովանաւորութեան ներքոյ: Պետական քաղաքականութիւնն, որ ներգործում էր այս եղանակով, որն ես նկարագրեցի, թևլատրեց նոցա նաև աստուածաբանական առիթներ այդ շինութեան հիմնարկութեան համար: Մակեդոնեան պատերազմը անհրաժեշտօրէն պէտք է յառաջ բերէր ինժիներական և մաթեմատիքական ձիրքեր. ըստ որում առանց նոցա անկարելի էր թէ զօրք յառաջ մղել թէ մեծամեծ յաղթութիւններ կատարել և թէ անուանի պատերազմներ տալ: Նորոր անցաւ եռանդուն գործունէութեան շրջանն, և զինուորական գործողութիւնները փոխուեցան համեմատական անդորրութեան և բոլոր հանգստութեան, այս ծնունդ առած ձիրքերը գտան իրանց ամենայարմար ելք մաթեմատիկայի և բնագիտութեան գիտնական զբաղմունքների մէջ: Ալէքսանդրիայում, որ ինքն ըստ ինքեան ներկայացնում էր ինժիներական և ճարտարապետական հմտութեան յիշատակարան, շուտով երևեցան մարդիկ, որոց անունները փառաւոր մնացին ապագայում. օրինակ՝ Ապոլլոնիոս, Երատոսթենէս, Մանեթոնէս: Մեք պիտի դարձնենք մեր ուշադրութիւնն այդ մարդկանց կարդից մէկի վերայ. նորա օրինակից պիտի տեսնենք, որ այն ժամանակում, երբ մտաւորական տեսութեան նուիրուած փիլիսոփայքը զբաղած էին ճշմարտութեան կրիտերիումի վերայ եղած դատմունքներովթ, և ընդհանրապէս եզրակացնում էին, թէ չկայ այդպիսի բան. թէ՝ եթէ մինչ անգամ մարդիկ հասու եղած էլ լինէին ճշմարտութեանը, դարձեալ չունին միջոց այդ բանում համոզուելու,—այդ ժամանակն Եվկլիդէս Ալէքսանդրիացին գրում էր մի գիրք, որ պիտի պատերազմի հրաւիրէր ամբողջ մարդկութեան ընդդիմաբանութիւնների և յայտներ իրան ներկայացուցիչ բացարձակ և անհերքելի ճշմարտութեան. ճշմարտութեան, որը չէ կարող հերքել ոչ մի ազդ, ոչ մի ժամանակ: Մինչև այսօր մեր դպրոցների մէջ գործ է ածուում Եվկլիդէսի երկրաչափութիւնը:

Եվկլիդէսի աշխատութիւնները.

Ըսում են՝ որ Եվկլիդէս բաց արեց Ալէքսանդրիայում երկրաչափական գպրոց, Ք. 300 տ. յառաջ: Նա նուիրուած էր ոչ միայն մաթեմատիքական, այլ և բնագիտական հետազօտութիւններին: Բացի նորան տուած զանազան մաթեմատիքական գրուածներից, ինչպիսին՝ սխալականութեան, (Տանէմալինէսի մէջ) կոնուսի հատուածների և թուերի բաժանման տեսութիւնից և այլն, նորան տալիս են նաև ներդաշնակութեան, տեսադիտութեան և հայելագիտութեան մասին գրուածներ, որոնցում երկու վերջին առարկաներն որոշում էր իւր ժամանակի կարծեաց տեսակէտով, թէ ճառագայթն աչքից գծեալ գալով ընկնում է առարկայի վերայ, փոխանակ առարկայից

աչքն անցնելու, ինչպէս մեք ենք այժմ ընդունում: Բայց Եվկլիդէսի երկարատև համբաւը հիմնուած է նորա ,,Երկրաչափութեան Հիմունքի,, վեմ արժանաւորութիւնների վերայ. և թէև արդի մաթեմաթիկոնների խիստ քննադատութիւնը գոյի հիմնաւորապէս պահանջում է նորա առաջներից (1) առաւել ճշդութիւն, դանելով որ՝ նոքա երբեմն առանց ապացուցութիւնների ընդունում են այն, որը կարելի էր ապացուցանել. որ՝ նոցա մէկ քանին չափազանց բազմաբառ են, իսկ դրութիւնն երբեմն անկատար, այսու ամենայնիւ նոքա կարող են լինել վեմադրյն կանոնաւորութեան և պարզութեան ու ապացոյցների իսկութեան օրինակ: Նոքա Յունաստանում գործ էին ածուում ամենայն ուրեք. իսկ յետոյ Արաբները թարգմանեցին և պահեցին:

Արքիմեդէսի վաստակները և աշխատութիւն. Նեյն.

Որչափ և մեծ է Եվկլիդէսի փառքը, բայց նսեմանում է Արքիմեդէսի Սիրակուսեցի Արքիմեդէսի փառքի մօտ (Տնաւ Վ. 287 ս. յառ.): Թէ Արքիմեդէս Ծանօթ էր եգիպտական գիտութեանն, հաստատուում է ոչ միայն աւանդութիւններովն, այլ և այնպիսի փաստերով, ինչպէս են նորա բաբելոնական յարաբերութիւնները Պտոն Ընդհանրացու հետ, և նորա՝ Նեղոսի ջուրը բարձրացնելու նպատակով պտուտակի հնարումն, որ մինչև այսօր կրում է նորա անունը: Նորա մաթեմաթիկական վաստակների մէջ ամենանշանաւորը,— գուցե մինչև անգամ նորա կարծիքովն, որքան կարելի է դատել այն բանով, որ նա հրամայեց գծագրել իւր շիրմի մարմարեայ գլանի վերայ գծագրութիւնն.—ապացոյցն է այն մասին, թէ գնդի տարածութիւնը հաւասար է նորա չորս կողմով գծագրուած գլանի երկու երրորդին: Այս գծագրութիւնով Ցիկերոն, Սիկիլիայի այն ժամանակի գանձապահը գտաւ Արքիմեդէսի միանգամայն խոտոր ծածկուած գերեզմանը: Սակայն այս աէօրեման մէկն էր ուրիշ այսօրինակ շատերից, որոց վերայ գտողութիւն է տալի նա՝ իւր գնդի և գլանի վերայ եղած երկու գրքերի մէջ, որոնք բացատրուած են միևնոյն փորձհմուտ ճարտարութիւնով և միևնոյն յաջողութեամբ: Նորա նշանակութիւնն իրրև երկրաչափի լաւ ևս կարող է հասկացուած լինել, երբ արդի մաթեմաթիկոնները հաստատում են, թէ նա այնքան մօտ էր դիֆերենցիալական հաշուողութեան դիւտին, որչափ այդ կարելի է առանց անէրբական ձևերի. Նորա լուծման առած մասնաւոր աէօրեմաների միջից կարելի է յիշել նաև շրջանի հաւասար քառակուսի յօրինելու և շրջապատի յարաբերութեան որոշման մասին, որը նորա հաշուով պիտի գտնուի 3,1428 ի և 3,1408 ի մէջ տեղ.— իսկական թիւն, ինչպէս այժմ լմնցուած է, կազմում է մօտ 3,1416: Արքիմեդէս ունի գրած նաև գնդաձև և կո-

(1) Аксіома. axciome:

նաձև մարմինների և այն դալարածոյ գծի մասին, որ մինչև այսօր յայտնի է դիտութեան մէջ նորա անունով, և որի վերայ եղած հատկացուցութիւնը թելադրել է նորան Պտոն: Նորա ,, «Psammites» ,, վերնագրով աշխատութեան մէջ կան ակնարկութիւններ այն ատոմաբաշխական դրութեան մասին, որը յետոյ Հատատեց Լապերնիկոս, և կոչուում է նորա անունով: Նա խօսում է նաև երկրի մեծութիւնը չափելու ձեռնարկած փորձերի վերայ. սակայն նորա աշխատութեան գլխաւոր նպատակն էր ապացուցանել, թէ ոչ միայն կարելի է թուել ծովերի ափերի աւազն, այլ նաև հաշուել, թէ որքան աւազ կհարկաւորէր բոլոր տարածութիւնը լցնելու համար մինչև անշարժ աստղերի սահմանն: Այդ հաշուի հետևանքն ըստ մեր հաշուարարական դրութեան կկազմէր այնպիսի մի թիւ, որ փոքր կլիներ քանդ արտայայտուածն միաւորով, որից յետոյ կարգաւած լինէին 63 թուանշաններ: Այդ դրքի յօրինումն, այսպէս ասենք, դուարձութիւն էր հակայերկրաչափին, որ անհոգոտբար խաղում էր իւր ուժի հետ: Նորա մաթեմաթիքական հետազօտութիւնների մէջ չէ կարելի չհիշել նաև կոնագծի քառակուսիութեան մասին: Նա սակայն նորա փառքը հաստատած է ոչ այնքան մաթեմաթիքական յաղթանակների վերայ, որչափ նորա բնագիտական և մեքենաբանական երևելի գիւտերի: Ամենքն էլ յայտնի է Հիերոնի թագի պատմութիւնից, թէ նա ինչպէս հիմք ձգեց հիդրոստատիկայի: Երհեստարը խառնուրդ ձգեց այն ոսկու մէջ, որը տուել էր Հիերոն թագաւորը թագ շինելու համար. և Արքիմեդէս գտաւ, որ այդ խառնուրդը կարող է յայտնի կացուցանել—երբոր պատահմամբ նստած էր նա մեծ աւազանի մէջ, և այդ միջոցին գտաւ եղանակ որոշելու տեսակարար կշռի ծանրութիւնը: Այս հետազօտութիւնները բնականաբար առաջնորդեցին իրան քննելու լողացող մարմինների հատատարակշռութիւնը: Բայց նորա մեքենագիտական գիւտերի պսակն եղաւ լծակն. և նորա այդ մասին ցոյց տուած ծառայութիւնների կարևորութիւնը նորանից է երևում, որ նորա և Ալեքսանդրիայի մէջ ժամանակամիջոց կազմող 18 դարերի ընթացքում տեսական մեքենագիտութիւնը մի քայլ անգամ յառաջ չգնաց: Բայի սորանից նորան տալիս են ոչ պակաս քանդ քառատուն գիտեր, ոչ այնքան նշանաւորներ. նոցա միջից կարժէ յիշատակել անվախճան պտուտակը, Ջրհանի պտուտակը, Ջրաբաշխական երդիհանն և կիզիչ ապակիները: Նորա հանճարն ընծիր կերպով արտահայտւում է նորան ընծայած յայտնի խօսքերի մէջ. ,,Տուէք ինձ յենման կէտ, և ես շարժեմ երկիրը,,. ինչպէս և նորա՝ Սիրակուսի պաշարման ժամանակը ընդդէմ Մարկելլոսի գործածների պատմութեան մէջ.—

այսպէս էին օրինակ՝ բաղնիսի և ուրիշ նմանագ գործիների հնարքները, գեղարուեստը և քարեր ձգելու համար. նշանաւոր կարթերն, որոնք ձգում էր նա քաղաքի պատերից միւս կողմը—ճանկելով նաւերը բարձրացնում էր օդի մէջ և յետոյ արագօրէն իջեցնում ջրի մէջ.—և այլող ապակիներն, որոց օգնութեամբ հռոմէական նաւատորմիղն այրեց շատ հեռու տեղից: Ասում են, որ Մարկելղոս յարգելով նորա վեհ հանճարը, խիստ պատուէր տուած էր, որ քաղաքն առած ժամանակը նորան ոչ մի վնաս չհասցնեն· բայց դժբաղդաբար՝ ըստ որում Երատոսթենէս երկու հազար տարուայ ընթացքում չկարացաւ ծնանիլ նորան հանգուցնատիպ հանճար:

Երատոսթենէսի պրոյեկտն և աշխատութիւնները.

Ալէքսանդրէսին ժամանակակից էր Երատոսթենէս, որ ծնաւ Ք. 267 տ. յառ. Կիրենի մէջ: Պտղոմէոս Էվէրգէտ, երևի, նորան յանձնեց դրատարանի հոգատարութիւնը. բայց նորա ուշադրութիւնն ուղղուած էր գլխաւորապէս դէպի մաթեմաթիքական, աստղաբաշխական, աշխարհագրական և պատմական հետազօտութիւնները: Կասկածաբար նորան տուած ,,Պատաստերիզմ,, անուն գրուածը հաշուում է 475 գլխաւորագոյն աստղեր. բայց հաւանական է, որ այդ պիտի եղած լինի մի հասարակ ձեռնարկ: Նորան տալիս ենն նաև մի բանաստեղծութիւն երկրի գօտիների վերայ: Նորա աշխարհագրական ամենանշանաւոր վաստակների մէջ կարելի է յիշատակել արևադարձների միջև հեռաւորութեան որոշումն. նա գտաւ, որ այդ հեռաւորութիւնը հաւասար է $11/83$ շրջապատի. Նա փորձեց նաև չափել երկրի մեծութիւնն, որոշելով Ալէքսանդրիայի և Սիենայի միջև հեռաւորութիւն, որոց միջև լայնութեան զանազանութիւնը կարդել է $1/50$ երկրային շրջապատի: Նորա հոգան եղաւ մաքրել երկրագիտութիւնն այն աւանդութիւններից, որովք ծածկել և զարդարել էր զարաւոր մնապաշտութիւնն. նա այս գործունէութիւնովը կատարելապէս արժանացաւ Հիմբոլդի նորան տուած գովեստներին, որ արդի ժամանակակից գիտնականներից ամենից լաւ կարողացաւ գին դնել նորա վաստակներին: Երատոսթենէս զննեց ցամաքների տարածութիւնն և գծագրութիւնը, լեռների շղթաների դրութիւնն, ամպերի ներգործութիւնը, գետնի երկրաբանական ընկղմումները, ծովային հին յատակի բարձրանալը, Դարդանելեան նեղուցն և Հելլեսպոնտն, Եւքսինեան ծովի դրութիւնը. նա հետազօտեց ովկիանոսի մակերևոյթի, և Ասիայի լեռնային շղթայի Դէքէապոլի յատակագծի վերայ դանուելու կարևորութեան վերայ եղած հարցը: Որքա՞ն յառաջադիմութիւններ են ցոյց տալի այս ամենը, թողած խորհրդածութիւնների հետ համեմատելով: Այս ամենի մէջ տես-

նում ենք մակեդոնեան պատերազմների գործնական արդիւնքները: Երատոսթենէս իւր աստղաբաշխական դիտողութիւնների մէջ գործ էր ածում արդէն զանազան աստղաբաշխական գործիքներ: Կա գուցէ, որ երկրի ծանրութեան ուղղութիւնը տևական չէ· բայց թէ ուղղահայեաց գծերը բաժանուում են: Երեք դրքի մէջ յօրինեց նա երկրի անթերի կարգաւոր աստղագրութիւնը—բնական, մաթեմաթիքական և պատմական. որին ասելցրեց այն ժամանակում յայտնի եղած ամբողջ երկրի աշխարհագրական տախտակը: Նորա տաղանդն երկրաչափութեան մէջ բաւական լաւ ցոյց է տալի նորա՝ երկու միջին համեմատականների մասին եղած հարցի մինչև այսօր մնացող լուծումն. և միայն վերջին ժամանակս պէտք եղած կերպով գնահատուեցան նորա՝ թիբեան թագաւորների ժամանակագրութիւնից մնացած հատուածները: Երատոսթենէս յոյս ունէր մաքրելու նաև պատմութիւնն, ինչպէս և աշխարհագրութիւնն, աղաւաղող առասպելներից.—վաստակ՝ որի իրագործութեանը միշտ պիտի արգելք դնեն մարդկանց պաշարուած մտքերն և եսականութիւնը: Մեզ հասան մի քանի հետաքրքրական դրոյցներ նորա այդ մասին ունեցած կարծեաց վերայ: Կա կամենում էր կասկածանքի ենթարկել Հոմերոսեան աւանդութիւնների պատմական ճշդութիւնը. ,,Նա պիտի հաւատայի դորան, ասում էր, երբոր լինի ցոյց տալին այն խազախորդին, որ յօրինել է այն օդային պարկն, որը Թափառող Ոդիսևս սացել է Էօլոսից,,: Ասում են, որ նա 80 տարեկան լինելով սկսաւ ձանձրանալ կեանքից, և ինքնակամ անօգտագործութիւնից մեռաւ:

Երատոսթենէսի ժամանակագրութիւնը.

Այս տեղ պիտի կանդնենք փոքր ինչ և մանաւանդ նկատողութիւններ անենք Երատոսթենէսի ժամանակագրական և աստղաբաշխական աշխատութիւնների նկատմամբ: Մեր սովորական տարեգրութիւնը հիմնուած է աստուածաբանական թիւր եզրակացութիւնների վերայ. այս պատճառով ոչ միայն զանազան հին ազգերի ճակատագիրն, այլ և մարդու գոյութիւնը երկրագնդի վերայ ահմանափակուած են պատմական խիստ սուղ ժամանակամիջոցներով: Պատմական ժամանակները կարճելու այս անհրաժեշտութիւնը յառաջացաւ երբոյական պատմութեան մի քանի փաստերն իրանց մարդկային գործերի մէջ ունեցած երկրորդական նշանակութիւնից բարձրացնելու և այդ ազգի ամբողջ պատմութեան ուշի կարևորութիւն տալու ցանկութիւնից. և այս լինում էր երկկերպ միջոցով.—մեծացնելով երբոյական պատմութեան նշանակութիւնն և փոքրացնելով կամ ազատելով միւս ազգերի պատմական նշանակութիւնը: Այդպիսի դրականական եղծմունքներ գործող հեղինակների թուի մէջ պիտի յիշուի Եւսեբիոս Կեսարացու, Կոստանդիանոսին ժամանակակից և-

պէսկոպոսի յայտնի անունն. ըստ որում իւր ժամանակագրութեան և ժամանակիւց անցքերի պատմութեան աղիւսակների մէջ նա,, դիտմամբ եղծեց ժամանակագրութիւնն, անցքերի ժամանակակցութիւններին հասնելու նպատակով,, (Նուռնդէն)։ Նիւթուր արդարացի էր ասում նորա համար,,թէ նա անբարեխիղճ հեղինակ է,,։ Նորա աղճատութիւնովն եգիպտական տարեգիրների ենթարկուեցան նշանաւոր աղաւաղմանքների։ Այլ սակայն այդ միջոցին մոռացուած էր, որ ժամանակաքօսութիւնն ամենից քիչ կարող է առարկայ լինել ներշնչութեան. և թէ՝ թէպէտ մարդիկ կարող են լինել բոլորովին սառնասիրտ դէպի բուն ճշմարտութիւնը, վատ բան չհամարելով առանց քաշուելու խաղաթիւրել նորան նորա համար, որ հետամտում են բարի նպատակ, այսօր աւելի նկատելի կլայ ժամանակն, երբ ճշմարտութիւնը կսառնի կը կանգնի միւսանգամ և կյաջողի պաշտպանել իւր անձը։ Չէ կարելի բոլորովին խեղել մի ազգի պատմութիւնն, եթէ նա թողել է բաւմաթիւ և յաւերժական յիշատակներ։ Եգիպտոս մեզ ներկայացնում է այնպիսի վկայութիւններ, որոնք հինգ հազար տարուց աւելի են անցնում։ Եւ ինչպէս ազգարացի նկատում է Նուռնդէն, նորա այն շրջանի վերայ, որ մեզ յայտնի է, կարող ենք որոշել և պատմութեան ամբողջ շէնք գիծը։ Եգիպտացիք որչափ և հին լինեն, վերաբերում են մարդկութեան միջին շրջանին. ըստ որում կայ շրջան, որ նախընթացիկ է յիշատակաւոր պատմութեան, կամ ընդհանրապէս որևիցէ պատմութեան. շրջան՝ որի մէջ ձևանում են լեզուն և դիւցաբանութիւնն. ըստ որում սոքա յառաջ են երևում քանդ բոլոր քաղաքական հիմնարկութիւնները, բոլոր պիտութիւններն և արհեստները։ Նոյն իսկ մեր՝ Եգիպտոսի գրութեանը ծանօթանալու առաջին վայրկեանում տեսնում ենք նորան մոռացը զարդացման վերին աստիճանի վերայ. որ և ապացուցուում է նորանով, որ նշանագրերի գրութիւնը հնարուած է եղել մինչև չորրորդ հարստութիւնն։ Նա մնում է անփոխելի մինչև Պտամմետիքոսի ժամանակները։ Լեզուի և գրի հազարեան տարիների ընթացքում ունեցած անվախճան գրութիւնը անհրաժեշտաբար ստիպում է կարծելու, թէ նորան նախընթաց է եղել կատարելագործութեան և զարդացման երկարաձիգ շրջան։ Ընդ. շուշտ այսպիսի ենթադրութիւնն էր, և ոչ փաստի վերայ հիմնուած գրական գիտութիւնն, որ հարկադրեց Յոյներին մտածելու, թէ երկրաչափութեան մուտքն Եգիպտոսի մէջ պիտի վերաբերի Մինէսի ժամանակներից յառաջ եղած թագաւորներին։

Բայց՝ միայն ճարտարարուեստ յիշատակները չեն այս երկրի խորին հնութիւնը քարոզողները. նա ինքն էլ ապացոյց է դորան. ըստ որում թէև Սեզոս հազար տարուայ մէջ չորս ոտնաչափ միայն է բարձրա-

ցնում իւր տաշտը, բայց Եգիպտոսի բոլոր պողպատու հողը ձեւացած է գետի բերած սիկից։ Այսպէս ահա բնութեան վկայութիւնները հաստատում են գրուած ժամանակագրութիւնները և երկուքն ի միասին կազմում են այնպիսի ակներև ապացոյց, որը հերքել անհնարին է։ Այսպէս՝ յիշատակարանների հիմքերի մօտի սիկային բերուածի խորութիւնն անկասկածաւոր ապացոյց է նոցա հնութեանն։ Նւսերիոս իւր մեծ կոչումով կարող էր աղաւաղել ընդունուած գրաւոր տարեգրութիւնը, բայց կարող չէր սուիլել արևադարձական խաղաղ ովկիանոսի վերայ շնչող յաւիտենական կանոնաւոր հողմը, շնչել ցեղերին առաւել կամ նուազ. կարող չէր փոխել ջրի զօրութիւնն, որին նա հարկադրում է հոսել Ափրիկեան լեռներից. կարող չէր դադարեցնել գետաբեր սիկի տարեկան քանակութիւնը։ Համակարգելով այսչափ ղանազանակերպ վկայութիւնները,—բնութեան և յիշատակարանների, (վերջինքս տարէց տարի առաւել ոյժ են ստանում նշանագրերի ընդարձակուող ուսումնասիրութեան շնորհիւ), գտնում ենք վերջապէս իսկական եգիպտական տարեգրութեան հետքն, և սկսում ենք հաստատել Հերոդոտենէսի և Մանեթոնի մինչև այժմ մեզ հասած գրուածների հաստատներին։

Ներածութիւն տարեգրաչափութեան.

Ըստ ժամանակումն, որի վերայ խօսում ենք,— Հերոդոտենէսի ժամանակումն—արդէն կազմուած էին ընդհանրապէս գնդի, նորա բևեռների, առանցքի, հասարակածի, արևային և հակարևային շրջանների, գիշերահաւասար կէտերի, արեգակնակայից, ծրից, հորիզոնի և այլոց վերայ հասկացողութիւններ։ Մտածելու ընդունակ մարդկանցից այլևս ոչ ոք չէր կասկածում երկրի գնդաձևութեան վերայ. և այդ ենթադրութեան հաստատութեան համար յառաջ բերուած ապացոյցներն այն էին, որոնք սովորաբար և մինչև այսօր գործածական են.—հորիզոնի զանազան տեղերում ունեցած զանազան դրութիւնը, բևեռի զանազան բարձրութիւնը, խաւարմունքների երևոյթներն և մեզնից հեռացող նաւերի հետզհետէ անհետացանելն։ Այն ինչ խաւարմունքների վերայ յառաջ մտիկ էին տալի անուղղակի երկիւղով, այժմ ոչ միայն յայտնի էին եղել նոցա իսկական աւիթներն, այլ և նոցա ժամանակամիջոցն. այնպէս որ՝ կարելի էր նախատեսել նոցա երևումն։ Հաբելացիք վաղուց դիտէին, թէ լուսնի խաւարմունքները կրկնուում են լուսնային 222 ամից յետոյ։ Այդ արբանեակի կերպարանափոխութեանց յօրնուածը պարզ հասկանալի էր եղել։

Երիատարքոս առաջաւոր է գտնելութեան երկրի և արեգակի մէջ տարածի հեռաւորութիւն կայ։

Եւ յիրաւի՝ Երիատարքոս Սամոսացին չանայ լուսնը՝ նորա նուազելութեան ժամանակը դիտելով որոշել արեգակի երկրից ունեցած բացակայութիւնը.—բաւական նշանաւոր եղանակ այն ժամանակի

հմտութիւնների համար, թէև գործնականապէս ոչ ճիշդ: Այս եղանակով գուսւ նա, թէ արեգակի հեռաւորութիւնը 18 անգամ աւելի է լուսնի հեռաւորութիւնից.—մինչդեռ իսկապէս՝ առաջինն հեռաւորութիւնն աւելի է երկրիցից 400 անգամ: Այս կերպով ձեռք բերուած էին ընդհանրապէս բաւական ճիշդ հասկացողութիւններ չերմութեան կլիմայական բաժանմանց մասին երկրի վերայ, չափազանցրած միայն այն նկատմամբ, որ չերմ գօտին խիստ սաստիկ չերմի, և ցուրտը խիստ ցրտի պատճառով համարուած էին մարդու բնակութեան համար անկարելի: Այդ ժամանակում լինում էին ոչ միայն նկատողութիւններ, (և հարկ այնքան ճիշդ, որքան կարելի էր հասարակ գործիքների միջնորդութիւնով) որոնք ընդհանրապէս ցոյց էին տալի մոլորակների զանազան շարժումներն, այլ մինչ անգամ փորձեր եղան բացատրելու կամ աւելի ուղիղ՝ ձևակերպելու նոցանց յետադիմութեան (1) միջնորդութիւնով:

Պտղոմէոսեանց կենսագրութիւնը.

Այս կերպով նոր աստղաբաշխութիւնը ծագեցաւ Աղեքսանդրիայի մէջ Պտղոմէոսեանց միջոցին: Այդ հարստութեան հիմնադիր Պտղոմէոս Սոտեր ոչ միայն խնամակալ էր գիտութեանն, այլ և հեղինակ, որ և յօրինեց Աղեքսանդրի արշաւանքների պատմութիւնը: Նորա ժամանակին մատենադարանն սկսաւ կազմուիլ հաւանականապար շուտով Ընդիգոնոսի Յոպէի մօտ կրած հարուածից յետոյ. (301 ա. Ք. ծ. յառ.): Թանգարանը պարտական է իւր սկզբնաւորութիւնով նորա որդուն, Պտղոմէոս Էղբայրասիրին, որ ոչ միայն հովանաւոր գանուեց գիտութեանն իւր երկրում, այլ և աշխատեց ընդարձակել մարդկային գիտութեան սահմաններն և օտար աշխարհներում ուսուի և իւր ծովապետ Տիմոսթենէսի հրամանատարութեան ներքոյ ձանապարհորդութիւն կատարել տուեց մինչև Մատագասկար: Երկու յետագայ Պտղոմէոսներն,—Էվերգետ և Փիլոպատոր ընդունակ մարդիկ էին. թէև երկրորդը վատ մարդ էր.—նա սպանեց իւր հայրն և շատ արհաւիրներ պատճառեց Աղեքսանդրիայում: Էպիփան, որ հինգ տարի հօր իշխանութիւնը ժառանգեց, իւր հոգարարձուների կամքով յանձնուեց Հռոմի խնամատարութեան, որ և փառասէր հաստատապետութեանը տեղի տուեց խառնուելու Եգիպտոսի գործերի մէջ: Մինչդեն քաղաքականութիւնը շարունակուեց նորա որդու, Փիլոմետորի ժամանակին, որ ընդհանրապէս մտացի և բարի թագաւոր էր: Մինչև անգամ Ք. ծ. 146 տարի յառաջ աթոռը բաղմող Փիլոկոն, որին նկարագրում են զգայական և անգութ գեր մկը, (անգութ, քան զի կերել էր իւր օրիորդ զրկիը, ձեռներն և ոտներն, և ուզարկեց իւր Աղեքսանդրա կնոջ) չկարաց դէմ դնել իւր նախորդին երի հակահռոմեական քաղաքականութեան յառաջ բերած թեղափո-

(1) Эпицикль.

թիւններին, և եղաւ գործունեայ հովանաւոր գրականութեան և արհեստի. և ինքն ևս յօրինեց պատմական մի գրուած: Մինչդոյն ձեռնտումը ցոյց տուին նորա յաջորդները, Լաթերոս և Ալեքս. և վերջինիս անունը յայտնում է նորա հմտութիւն երաժշտութեան մէջ: Այդ բոլոր Պտղոմէոսեանց մականուններն հեգնական, ծաղրածական կոչումներ էին, որոնք տուեց նոցա իրանց Աղեքսանդրիացի հպատակների երգիծաբան միտքը: Աղեքսանդրիայի քաղաքական վիճակը բնաւորեցնում են իրրև բռնաւորութիւն, որ զսպուում էր կատակով,—որ զուրկ չէ իւր նշանակութիւնից: Նոցա ցեղական յաջորդութիւնը վանման առաւ Աղեոպատրայի անձնվէր, որ Ակտիոնի մօտ եղած պատերազմից յետոյ, ինչպէս պատմում է յայտնի աւանդութիւնն, ինքն իրան պատրաստեց մահ, խածնել տալով իրան օձի: Նա թուենաւորութեց, որպէս կի Օգոստոսի ձեռքը գերի չընկնի, և նորա յաղթանակի միջով չանցնի Հռոմի փողոցներով: Եթէ ունենայինք այդ յոյն թագաւորների անթերի և անկողմնապահ պատմութիւնն, անշուշտ նոցա անուններն պիտի հին ինքնակալների անուանց աներեսափառապէսներ համարուէին: Մինչև անգամ և նորանից յետոյ, երբ նոցա քաղաքական իշխանութիւնն անցաւ Հռոմայեցոց,—մի ժողովուրդ՝ որ ուշադրութիւն չէր դարձնում ճշմարտութեան և իրաւունքների վերայ,—իսկ փիլիսոփայութիւնն իւր ծերութեան շրջանում վերջին կեսարների ժամանակին ճնշուած և մթնացած էր անկանոն ուժի օդնութեան յարած հաւատով,—մինչև անգամ և այն ժամանակը Պտղոմէոսեանց ոոգած մտաւոր սերմերն այնքան կենդանութիւն ունեցան, որ ամբողջ դարերով մեռած պարկելու սոփուած լինելով դարձեալ առաջին բարեյաջող հանգամանքների միջոցին արձակեցին զարգացած նոր ընձիւղներ:

Նոցա խնամքով են առնում գրականութեան և

Եգիպտոսի իշխանական տոհմը տարածեց իւր հովանաւորութիւնն ոչ միայն գիտութեան վերայ, այլ և գրականութեան. օրինակ՝ Եղբայրասէրն իւր արժանաւորութիւնից ստոր չհամարեց Ալեքսանդրեա բանաստեղծի հետ ունեցած իւր անձնական բարեկամութիւնն, որ գրեց գիտողութիւն Թուչունների վերայ, և տարեց պատուազատաշաձօրէն (1), ունենալով գպրոց Աղեքսանդրիայում: Նորա սորանից, այդ թագաւորի պալատը զարդարուած էր եօթ բանաստեղծների համանուագութիւնովն, որոց ծաղրածու Աղեքսանդրացիք տուին բազմաստեղ մականուն. սոքա էին—Լիկոփրոնէս, Թէոկրիտէս, Ալեքսանդրոս, Երատոէս, Ապողոնիոս Հռոդոսացին, Նիկանդրէս և Մակրոնէսի որդի Հռոմերոս: Նոցա մէջ անուանի էր մանաւանդ Լիկոփրոնէս, որի ,,Կասսանդրա,, գրուածը պահպանուած է մինչև այսօր. և Թէոկրիտէս, որի երգերը ցոյց են տալի, թէ որպիսի ընտիր բանաստեղծ էր նա:

(1) Честно. honnêtement:

Պտողոմէոսի գրուածքը.

Պտոյտ գէպի դիտական շարժումն: Էրէրդէսի ժամանակն Աւղեդէսի գալոցի արժանաւոր ներկայացուցիչն էր Պերդեցի Ապողոնիոս, Էրքիմեդէսից քառասուն տարի յետոյ ապրողը: Նա աստղագիտութեան եղաւ ինչպէս մաթեմատիկայի, նոյնպէս և բնագիտութեան մէջ: Նորա ամենագլխաւոր վաստակն եղաւ կոնուսի հատուածների մասին գրուածքը: Նորա գրուածները կոչին անթէների արաբական լեզուով գեռ ևս ժամանակներս: Երկի երկրաչափները խօսում են նորա մասին, որ թէև նա այնքան կատարեալ հատուածներ չէր իւր առաջին, ինչպէս իւր անուանի նախորդն, Էրքիմեդէս, բայց գործ ածել ցոյց է տալի չափազանց ճշդութիւն և վեհմտութիւն իւր եղանակների մէջ: Նորա հիմնադրած գիրքը Maxima և Minima իւր վերայ կազմում է յունական երկրաչափութեան ամենանշանաւոր գրուածներից մէկը: Իրրև օրինակ նորա բնագիտական խոհարկութիւնների, կարելի է ցոյց տալ ժամացոյցի գիւտը:

Հիպարքոսի գրուածքը

Յետոյ տարի Ապողոնիոսից յետոյ, 160—125 տ. Ք.Ծ. յառաջանում ենք նշանաւոր աստղաբաշխ Հիպարքոսին: Երևի թէ նա ինքն Աղէքսանդրիայում դիտողութիւններ չէ արել, այլ օգուտ է քաղել Արիստարքէսի և Տիմոքարոսի այնտեղ յառաջ բերածներից: Նա յիշատի նորա դիտողահաւատարմների կանոնութեան մեծ գիւտը: Նորա էր գլխաւորապէս Տիմոքարոսի Աղէքսանդրիայում Spica Virginis ի մասին արած դիտողութեանց վերայ: Պարզ մաթեմատիկայի մէջ նորան վերաբերում է բոլոր եռանկիւնաւորների, ինչպէս տափարակների, նոյպէս և կոնիմարմինների լուծման եղանակն. ունի նաև կազմած աղիղնալարերի աղիւսակ:

Եռանկիւնաչափութեան գիւտը

Եռանկիւնաչափութեան մէջ, բացի հինից նոր յիշատակած գիտելիքներից, որոշից նաև լուսնի առաջին անհաւասարութիւնը, կէտրոնի հաւասարումն, և Պտոլոմէոսից յառաջ գտաւ արեգակի լուսնին պատճառած շարժման անկանոնութեան գիւտը: Նորան պէտք է տալ նաև յեռաշրջանների և արտակէդրան գծերի տեսութեան հաստատութիւնն և երկրաչափական եղանակներն երկնային մարմինների տեսանելի շարժումն վճռելու համար, շրջանաւոր շարժման հիման վերայ: Էպիցակի և լուսնի օրինակով հիպարքոս ձեռնհաս եղաւ գործադրել իւր տեսութիւնն. և ցոյց տուեց կարելութիւնը նորա յարմարացնելու և մոլորակներին: Թէև այդ տեսութիւնը նպատակ չունէր ցոյց տալու երկնային մարմինների իսկական շարժումը, բայց տեսեց մինչև Պտոլեմէոսի ժամանակն, երբ արեգակնակէդրոն վարդապետութիւնն և ձուաձև շարժման վերայ եղած վարդապետութիւնը հիմնուեցան անհերքելի: Մինչև անդամ ինքը Նիւտոն, Principia, երրորդ գրքի

35 նախադասութեան մէջ գիմում է նորա օգնութեան: Հիպարքոս ձեռնարկեց նաև յօրինել աստղերի յուցակ, գծակցութեան եղանակով այսինքն նշանակելով նոցանից այնպիսիներն, որոնք ընկնում են մէկ տեսանելի ուղիղ գծի վերայ: Նորա՝ յուցակի առաջ աստղերի թիւը հասնում էր 1080ի: Էյս կերպով պատկերացնելով իւր ժամանակի համար երկնքի կերպարանքը, Հիպարքոս աշխատեց միևնոյնն անել նաև երկրի մակերևոյթի վերաբերմամբ, նշանակելով քաղաքների և ուրիշ տեղերի գրութիւնը լայնութեան և երկայնութեան գծերով:

Պտոլոմէոսի գրուածքը.

Գաղենոս. Ռուֆիկ Գաղենոսի մասին յետոյ պիտի խօսիմ։ Ակատել բաւական է ասել թէ՝ գիտութեան միակ ազբիւր սա փորձն էր ընդունում. թէ՝ նա առաւել նշանակութիւն էր տալի մանթեմատիկայի և տրամաբանութեան մշակութեանն, ասելով՝ որ ինքը պիտի լինելը պիրրոնական, եթէ չլինէր երկրաչափութիւն։ Գաղենոս կարծում է, թէ ճշմարիտ աստուածաբանութեան հիմունքը պիտի պարունակուին բնախօսութեան վախճանապիտական (1) վարդապետութեան մէջ։ Նոյն ժամանակի բժիշկներն ոչ սակաւ նպաստում էին այսօրինակ կարծիքների տարածմանն. այդ բժիշկներն քան մեծի մասին հետևողներ էին համաստուածականութեան։ Նոցա միջից կարելի է յիշել փորձապաշտն (1) Սեքստոսին, որի մինչև առ մեզ հասած գրուածները ցոյց են տալի, որ այդ դպրոցը ձգտում էր դէպի նիւթակրօնութիւնն։

Փիլիսոփայական անաստուածութեան հետ միացաւ ամբոխի անտարբերական անաստուածութիւնը։ Այդ որով հետև մարդն սիմպիսի բնութիւն ունի, որ չէ կարող երկար ապրիլ առանց երկրպագութեան որ և իցէ ձևի, վաստերոյ յայտնապէս երևիւղ էր սպառնում, որ միաստուածական հասկացողութիւնն երևէր որ և իցէ բիրտ ձևում, երբ որ նկած լինէր նորա ընդունելու ժամանակը։ Ե՞ատ եաչն այս ժամանակից, որի մասին խօսում ենք, կայսրներից մէկը յայտնից կարծիք, թէ անհրաժեշտ էր տալ վերին դասակարգերին առաջնատ փիլիսոփայութեան հետևելու կատարեալ ազատութիւն, և ստորին կարգերի համար հաստատել շքեղ հանդէսներ։ Նա նշմարում էր, թէ որչափ դժուար է միմիայն պետական քաղաքականութեան օգնութեամբ հաշտեցնել մէկ մէկի հետ երկու՝ իրանց էութիւնով այնքան հակառակ պահանջմունքներն։ Թէպետև բազմաստուածութիւնը սպառել էր իւր բոլոր մտաւոր ոյժը, սակայն անհնար էր սպառել, որ նորանից մօտ ժամանակում բաժանուած ժողովուրդներ ձեռք քաշէին որևիցէ ձգտումից դէպի կրօնի նմանեցուցանելն և աստուածութեան մարմնաւոր պատկերացուցանելն։ Մի կերպով կայսրը յաղթուած և անհետացած թագաւորների աւելի հեռաւոր և աւելի վեհ պատկերն էր միայն. բայց մարդ էր ինչպէս և նորա։ Պատանդ էր սպառնում, որ աստուածաբանական դրութիւնն, այս կերպով այլայլուելով քաղաքականի հետ միասին, միայն նիւթ կտայ մարդակերպական հասկացողութիւնների զարգացմանն։

Կռապաշտները զրութիւն ընդունելու համար պիտի համաձայնուէին պատ. նուազ ձգտումներին հետ։

Պատմութիւնը միշտ ցոյց է տալի, որ ազգերը կերպարանափոխում են հաստատապէս միայն այն տարրերով կամ գործոցներով, որոնք համեմատ են լինում նոցա ունեցած ձգտումների հետ։ Ազգերին պատճառած բռնութիւնը մի քանի սերունդից յետոյ կարող է այլևէն անհետանալ, առանց չնչին հետք անցեալ թողնելու։ Նոյն իսկ յաղթութիւնը յաղթուում է ժամանակից։ Ներքին փոփոխութիւններ կարելի են միայն այն ժամանակ, երբ ներգործող ոյժը համաձայն է ընթանում դարու բնաւորութեանն։ Երբին մէկի դէմ թշնամութիւնով դրգռուած այնքան ազգերի միջազգային խաղաղութիւնը—խաղաղութիւն՝ մեծ, ամենի վերայ ապրող իշխանութեան հովանաւորութեան ներքոյ, մտածման միութիւն և զգացման համակրութիւն, որոնք շատով իրանց ձանապարհ հորդե-

(1) Телеологія.—վախճանապէս տես թէ։

(1) Эмпирикъ. Empirique։

ֆ. Ն Ա՛ջնկրկական ծովի ափերի վերայ, ընդարձակածաւալ առուտուրի շահերն, որոնք պահպանւում էին այնքան փոքրիկ տէրութիւնների մէկ մեծ հասարակապետութեան մէջ ընկղմելովն— այս ամենը լուսթեամբ բերում հաստատում էր այնպիսի դրութեան, որի միջոցին փոխադարձ յարգանքի և շահի վերայ հիմնուած որ և իցէ կրօնական վարդապետութիւն ոչինչ սաստիկ քաղաքական ոյժ: Նա այժմ նշանաւոր զօրագլուխների մէջ ոչինչ երևէր վիրջապէս մի մարդ, որի փորձառու միտքը հասու եղած լինէր, թէ որպիսի անձնական օգուտ կարելի է քաղել ամենաբերք իշխող գաղափարի համակցութիւնից: Աւրիշ որպիսի՛ եղանակով կարող էր նա դանել շուտով մտերիմներ կեսարութեան կեդրոնից բռնած մինչև հեռաւոր սահմանները: Նա մինչև անգամ, եթէ նա սեպհական մտաւոր զարգացումից անընդունակ լինէր անթերի ըմբռնելու այն առանձին ձևերն, որի ներքոյ մարմին զգեցած է այդ գաղափարը, և եթէ միայն նա խոստանալ էր այդ գաղափարն և հաւատարիմ էր եղել նորան իբրև քաղաքագէտ,—թէև նոյնը մինչ անգամ մերժած իբրև մարդ,— այդ գաղափարը կտար անշուշտ նորան փոխարէնն ահագին իշխանութիւն. այնպիսի իշխանութիւն, որ մայրաքաղաքի կողմից որ և իցէ հակառակութեան դէպքում նորան միջոցներ կտար աւելի յարմարաւոր տեղում գանել դիմամրցողներ այդ մայրաքաղաքին, և թողնել վերջինը—այնպիսի նշանաւոր փառքի և այնքան յանցանքների կմախքը—նոյն իսկ իւր բողոքին:

Ընդհանուր մտքի ազդեցութեան ոյժն ամփոփել հռոմէական ազգերու. քեանաշնութիւնը

Ընդհանուր մտաւոր մակարդակը, որ ընդունակ էր ամփոփելու հռոմէական ազգերի վերայ ազդելու ոյժ, ոչ միայն ներգործական էր, այլ և պասիւ. նա ոչ միայն ստիպում էր ամենքին, որ ենթարկուին նորա ազդեցութեան, այլ և ինքն ընդունակ էր ամենքի հետ միանալու: Ամենքը, որ ենթարկուեցան նորա ազդեցութեան, ընդունեցան նորա ոգին, և ամենքը, որ միացան նորա հետ, ընդունեցան նորա ոգին: Ամենքը, որ ենթարկուեցան նորա ազդեցութեան, ընդունեցան նորա ոգին, և ամենքը, որ միացան նորա հետ, ընդունեցան նորա ոգին:

Ընդհանուր մտքի ազդեցութեան ոյժն ամփոփել հռոմէական ազգերու. քեանաշնութիւնը ստիպուած էր

թում աւելի չկարացին կանգնել լուսաւորիչներին խորհրդանիշ թափանցամութեան առաջին. երբ հին սքանչելիքները սկսան համարուիլ սնոտի կռնչիք, իսկ ժամանակիցները՝ շինծու հնադարմոտ թիւններ: Այսպէս էր բանն, երբ մինչ անգամ և տէրութեան մարդիկն ընդունում էին իբրև կանոն, թէ ,,երբ որ ժողովուրդը հասաւ մտաւոր զարգացման յայտնի աստիճանին, այն ժամանակ հոգևոր դասակարգն, եթէ կամենում է պահպանել իւր իշխանութիւնը նորա վերայ, պիտի կամ խաբի կամ հարստահարի նորան,,:

Հռոմում Օգոստոսի թագաւորութեան ժամանակին, լուսաւորուած դասակարգերը—փիլիսոփաները և պետական մարդիկ բոլորովին թողել էին մտածողութիւնների հին եղանակը: Ազգային աստուածութիւնները, ժողովրդից այնքան ջերմեռանդութիւնով պահպանուածները, նոցա համար դարձան լոկ մտացածին կռնչիք: Հեթանոսական Հռոմի սքանչելի յաջողութիւնն Արեւմտեան աստուածոց—որով նոցա նախնիքը պարծանքով երկնչին ծագումն էին տալիս իրանց քաղաքի հիմնադրին, դարձաւ առասպել Ավրոպիտէի,—կանացի սեռի զեղծկութեան այդ խորհրդաւոր աստուածներուն՝ աստուածների հօր առաջին իւր տարփածուների համար միջնորդութեան՝ իբրև հաւատի և յուսոյ աղբիւր լինելը մերժուեց: Ավրելիոսի երկնքից բերած գրքերն, որոց մէջ բան հին կարծեաց պարունակուում էր հասարակապետութեան ծաղկելուն համար անհրաժեշտ եղած ամենայն ինչ, կասկածանքների ենթարկուեցան իբրև աւելի երկմիտ ծագումն ունեցողներ. և պակաս չէին ազդարարութիւններ ևս, թէ այդ գրեանքը ժամանակ առ ժամանակ յաւելուածներ են ընդունել վայրկենի շահերին յարմարուելու համար. կամ մինչ անգամ թէ՝ խմբագրեալ են գրքերը կրած են, և նոցա փոխանակել են շինծուները: Յոյն դիցաբանութիւնն ինչպէս մեզ, նոյնպէս և նոցա համար յարգանքի առարկայ էր. բայց ոչ նորա համար, որ իբր թէ նորա մէջ ծածկուած կար ճշմարտութիւն, այլ այն հինաւուրց պատկերների համար, որոնք նա հաստնում էր բանաստեղծութեանը, նկարչութեանն և մարմարիոնին: Ըստ անուանի մարդկանց դոյութիւնը,—որոնց բարեպաշտոն նախնիքը կամ դիւցազանց կարգն էին դրել կամ մինչ անգամ աստուածացրել, նոցա օգտակար կեանքի և գերազանց օրինակների համար,—կամ բոլորովին մերժուում էր, կամ թէ՝ եթէ ընդունում էլ էր, նոցա աստուածային յատկութիւնները համարուում էին բիրտ և բարբարոս ժամանակների ջափազանցութիւններ: Ըստ այսմիկ պատուիրում ընդունելին Նումա Պոմպիլիոսը, Տատոն և Տերենտիոս. թէև երկրպագութեան զանազանակերպ ձևերի վերաբերութեամբ աւելու է, որ այն բազմութիւն աղանդներն, որոց վերայ բաժանուած էին հեթանոս ազգերը, ներկայացնում էին տեսարան անմիաբանութեան և անձնասէր պաշտամունքների, որոնք միայն այն դէպքում արժանի էին ուշադրութեան, երբ կարելի էր նորանցից օգուտ քաղել տէրութեան շահերի համար:

Այսպէս էր իրերի դրութիւնը լուսաւորեալ մարդկանց մէջ, զորոնք մէկ կողմից ազատութիւն էին ձեռք բերում, միւս կողմից հալածանքներ կրում: Նոցա երկիւղն այն նեղութիւնների մասին, որոնք կարող էին տալ նոցա գահերին ժամանակակիցները, կարող է զարմացնել մեզ: Նոքա գործում էին այնպէս, իբրև թէ ժողովրդին վայրենի գաղան են ճանաչում, որ կվտածատի, եթէ միանգամից յանկարծ զարթեցնեն նորան քնից. բայց նոցա փոքրոգութիւնը կարողացաւ ամենաշատը միայն մի ժամանակ հետացնել անձողպարելի օրը. ռամիկ դասակարգերն, որոնցից այնքան երկնչում էին, իրանք զարթեցան իւր ժամանակին և բացերևակի նշմարեցին գործերի դրութիւնը:

Ռամկական կայսրների թագում կային մեծահանճար մարդիկ. և թէև նոցա համար—ինչպէս և այդ գործի վերայ ուշադրութիւն բռնում է անդրադարձողների բոլորի համար—պետի բացայայտ լինելը հասարակութեան բռնած ուղղութիւնը. սակայն նոքա թողին իրերն իրանց բուն ընթացքին, և ոչ մէկը մատ չշարժեց, շարժումն ուղղելու համար: Նթէ և արդարացի է, թէ հռոմէական հանճարն առաւել բնագիտական քան մտաւոր սերտագործութիւններով իրան յայտնի արեց, բայց այսու ամենայնիւ չէ կարելի ասել, թէ նոյն հանճարն իւր ամենալաւ ժամանակի մէջ նշանաւոր անցքերը յանձնում էր ապատուածների, ներքինիների և ծառաների կամքին: Այժմ այդպիսի մարդիկ քաղաքականօրէն մերժուելին հին աստուածները, մինչդեռ կառավարութիւնը, խոհեմութեան համար դեռ ցոյց էր տալի նոցա կեղծամիտ հպատակութիւն. ուստի բնաւ զարմանալի չէ, որ քրիստոնէութեան մուտ գտնելուց յետոյ, շուտով նորա մաքուր վարդապետութիւնների սլսլալուցան, անհետացող կրօնի ծէսերի հետ խառնուելով: Չէր կարելի սպասել, որ ժողովրդական միտքն ինքն ըստ ինքեան կարողանար ազատուել այն կեղծ չէջանից, որի մէջ փակուած էր: Մի՛այն փիլիսոփայութիւնը կարող է ազատել նորան, բայց փիլիսոփայութիւնն այլ ճշնաման վայրկենում պիտի ցից իւր պարտքերին:

Յարմանքով տեսնում ենք, որ Օգոստոսի հին կառավարական տօնակատարութիւնը (Feriae Augusti) շարունակուեց և յետոյ իբրև եկեղեցական տնօրինութիւն, St. Petri ad Vincula անունով. և որ կառավարական ծէսերից շատերը մինչև այսօր պահպանուում են Հռոմում: Նթէ հեթանոսութեան հետքերը պահպանուած էին հեթանոս ազգերը, ներկայացնում էին տեսարան անմիաբանութեան և անձնասէր պաշտամունքների, որոնք միայն այն դէպքում արժանի էին ուշադրութեան, երբ կարելի էր նորանցից օգուտ քաղել տէրութեան շահերի համար:

Այսպէս էր իրերի դրութիւնը լուսաւորեալ մարդկանց մէջ, զորոնք մէկ կողմից ազատութիւն էին ձեռք բերում, միւս կողմից հալածանքներ կրում: Նոցա երկիւղն այն նեղութիւնների մասին, որոնք կարող էին տալ նոցա գահերին ժամանակակիցները, կարող է զարմացնել մեզ: Նոքա գործում էին այնպէս, իբրև թէ ժողովրդին վայրենի գաղան են ճանաչում, որ կվտածատի, եթէ միանգամից յանկարծ զարթեցնեն նորան քնից. բայց նոցա փոքրոգութիւնը կարողացաւ ամենաշատը միայն մի ժամանակ հետացնել անձողպարելի օրը. ռամիկ դասակարգերն, որոնցից այնքան երկնչում էին, իրանք զարթեցան իւր ժամանակին և բացերևակի նշմարեցին գործերի դրութիւնը:

Ռամկական կայսրների թագում կային մեծահանճար մարդիկ. և թէև նոցա համար—ինչպէս և այդ գործի վերայ ուշադրութիւն բռնում է անդրադարձողների բոլորի համար—պետի բացայայտ լինելը հասարակութեան բռնած ուղղութիւնը. սակայն նոքա թողին իրերն իրանց բուն ընթացքին, և ոչ մէկը մատ չշարժեց, շարժումն ուղղելու համար: Նթէ և արդարացի է, թէ հռոմէական հանճարն առաւել բնագիտական քան մտաւոր սերտագործութիւններով իրան յայտնի արեց, բայց այսու ամենայնիւ չէ կարելի ասել, թէ նոյն հանճարն իւր ամենալաւ ժամանակի մէջ նշանաւոր անցքերը յանձնում էր ապատուածների, ներքինիների և ծառաների կամքին: Այժմ այդպիսի մարդիկ քաղաքականօրէն մերժուելին հին աստուածները, մինչդեռ կառավարութիւնը, խոհեմութեան համար դեռ ցոյց էր տալի նոցա կեղծամիտ հպատակութիւն. ուստի բնաւ զարմանալի չէ, որ քրիստոնէութեան մուտ գտնելուց յետոյ, շուտով նորա մաքուր վարդապետութիւնների սլսլալուցան, անհետացող կրօնի ծէսերի հետ խառնուելով: Չէր կարելի սպասել, որ ժողովրդական միտքն ինքն ըստ ինքեան կարողանար ազատուել այն կեղծ չէջանից, որի մէջ փակուած էր: Մի՛այն փիլիսոփայութիւնը կարող է ազատել նորան, բայց փիլիսոփայութիւնն այլ ճշնաման վայրկենում պիտի ցից իւր պարտքերին:

Յարմանքով տեսնում ենք, որ Օգոստոսի հին կառավարական տօնակատարութիւնը (Feriae Augusti) շարունակուեց և յետոյ իբրև եկեղեցական տնօրինութիւն, St. Petri ad Vincula անունով. և որ կառավարական ծէսերից շատերը մինչև այսօր պահպանուում են Հռոմում: Նթէ հեթանոսութեան հետքերը պահպանուած էին

ռոմէական կրթուած դասերի դրութիւնը կրնական յարաբերութեանց մէջ

Ազգային անվտանգութիւնը:

Հռոմէական տօնակատարութիւնը կրօնի ձեռքը.

Եւ նորանից յաջորդաբար ազգային քրիստոնէութեան հետքի մէջ

ւէին միւն անշան մասերում, այն ժամանակ այդ դեռ այնքան նշանաւոր չէր լինի. բայց Հարիքն առաւել մեծ և նորին եղաւ, ինչպէս շատ լաւ գիտեն բոլորքեան, որոնք ուսումնասիրել են այդ կնդիրը...

Եթէ Տրայիանոս տասը տար վերայ անցնելուց դինի տեսներ Հռոմը, հետաքրքրութեամբ պիտի ճանաչէր հին խաղը, թէև դերասանները և բեմը բոլորն էլ փոխուած. նա պիտի մտածէր, թէ որպիսի մեծ սխալ է գործել օրինադիր իշխանութիւնն իւր վարչութեան մէջ. և թէ երբոր բարձրանում է կրօնի խոհական հիմն, այն ժամանակ ամենալաւ բանն, որ կարող է անել մի իմաստուն կառավարութիւն, է—հաշտուել բռնութեամբ պահպանել այն, որ չէ կարող պահպանուել. այլ իշխել նոր շարժմանն և առաջնորդել նորան: Փիլիսոփայութիւնն ոչ ինչ չէ կարող անել, երբոր նորանով աշխատում են պահպանել առողջ մտքի մերժած իրերը. նոցա հետ նա էլս կմերժուի: Եթէ մարդկութեանը ծառայութիւն ցոյց տալու պէտքը միանգամ կորչում է, այն ժամանակ ամբողջ դարեր կանցնին, մինչև որ վերստին նոյնը հանդիպի: Տգիտութիւնն և անարդ շահերը վայրկենից օգուտ են քաղում, և մարդու վերայ այնպիսի բեռն են դնում, որ հազարամեայ ջանքերը կարող չեն լինում վայր ձգել: Ուսումնական կառավարութեան բոլոր պատուաւորութիւններից ամենակարևորը փիլիսոփայութեան հետ համակցելն է այն ճշմարտի վայրկենում, երբոր հասարակութիւնը հասնում է համոզմունքների այնպիսի ծանրակշիռ չափոխութեան, ինչպէս է կրօնի հին ձևը մերժելն, և նորն ընդունելը— այս պատասխանութիւնն ամենակարևորն է, որովհետև կապ ունի այն իրերի հետ, որոնք բոլոր ժամանակաւոր շահերից երկար են տևում:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ:

ՆԻՈՊՇԱՆ ԴԸՐ ՀԵՏԱՔՕՏՈՒԹԵՆԸ

Կարծիքների յաջորդական փոփոխութիւն, որի վախճանն է լինում ժողովների հասատատութիւնն, և հիմանութեան քահանայապետի մէջ ամփոփուիլը:—Կրիտոնիզմութեան մուտ գործելն, առաջին փոփոխութիւններն և վերջնական հատատութիւնն:

Թողած բազմատառածութեան կործանումն և փիլիսոփայութեան անկումն, թողած հռոմէական կայսրութեան բար յական և ընկերական քակտումը, պիտի դառնամ այժմ դէպի անցքերի միջն ամենից նշանաւորը— քրիստոնէութեան ծագումն: Այս պիտի ցոյց տամ, թէ իրենցպէս յառաջ եկաւ կարծիքների փոփոխութիւնն, և իրենցպէս հաստատ նա իւր տարեր կէ ոչն իրենցպէս լուսոյ հիմնարար-

թեան կրիտերիումի հաստատութիւնով ի դէմս հոգևոր ժողովների և ամեց ու հաստատ այն գրութեան, որ մօտ հազար տարի բաւականութիւն էր տալի Եւրոպայի բոլոր հոգևոր պահանջներին:

Ընթերցողն, որին ես ներկայացնեցի Հռոմի վիճակը, պիտի ուշադրութիւն դարձնի այժմ նորա հետևանքների վերայ: Մենք պիտի հետազօտենք քրիստոնէութեան աճումը, քննենք նորա հիմնական սկզբունքների յարմարութիւնը կայսրութեան պահանջներին, և այն փոփոխութիւններն, որոնց ենթարկուեց նա.—մի խնդիր, միանգամայն դժուարագոյնը. քան որում երբեմն նոյն իսկ անկեղծութիւնն էլ և ճշմարտութիւնն ոմանց անախորժելի են լինում: Այլ ես ստիպուր եմ խօսել այդ վասն Եթէ վերայ յարգանքով, այլ միևնոյն ժամանակն և կատարեալ անաչառութիւնով. քան որում աշխարհի վերայ առաջին բարիք ես մտքի և խօսքի ազատութիւնն եմ համարում:

Այլ որպէս դի եմ խօսքերս վատ կողմի վերայ չմեկնուին, այս տեղ իսկ բուն սկզբից սիտի կարգեմ քրիստոնէութեան և նկեղեցական հաստատութիւնների միջև տարբերութիւնն: Առաջինն Ասուածոյ պարզև է.վերջիններս—մարդկային պահանջմունքների ծրնունդ, մարդկանց գործեր, և հետևաբար միանգամայն քննութեան և հարկի պահանջելոց նաև դատապարտութեան ենթարկելիներ:

Հռոմէական կայսրութեան գրութիւնն ինքը ցոյց է տալի, թէ որպիսի սկզբունքներ պիտի առաջներ ունենայ որևէ նոր գրութիւն, որ կամենալիս լինէր բարւոքել նորան: Օգոստոսի թագաւորութեան ժամանակում հարատահատութիւնն արդէն գադարել էր, քան որում աւարտել էր իւր գործը: Հաւատը մեռած էր. բարոյականութիւնն անհետացած էր: Միջերկրականի ափերի վերայ մէկ մէկի հանդիպելին յաղթուած ապգեր,—միանման թշուառութեան կցորդներ, միանման ճակատագրի ընկերներ: Ուր որ նոցանից չգտաս մի Աստուած, որ օգնէր նորան կարօտութեան օրում: Եւրոպան, Ասիան և Աֆրիկէն անպորը էին, բայց այդ անպորութիւնը յուսահատութեան լռութիւն էր:

Հռոմն երբէք չէր մոլի տալի մարդու վերայ իրրև անձի, այլ միայն իրրև մի իրի վերայ: Նա ձգտում էր քաղաքական մեծութեան, առանց ամենափոքր ուշադրութիւն դարձնելու մարդկային նեղութիւնների վերայ: Եթէ նուաճուածները ձեռք էլ բերում էին օրպիսի և իցէ օգուտներ նորա իշխանութեան ներքոյ, այդ միայն սակ պիտուած էր լինում և ոչ բնաւ մտադրուած նպատակ Հռոմի կողմից: Հռոմը գիտակցարար և խորհելով քաղաքակրթութիւն տարածող չէր: Իշխարհակալութիւնն և յափշտակութիւնները—նորա գործողութ ւնների սովորական նպատակն, երբէք հնարաւորութիւն չէին

Ա՛ն գիրք էթէ

Սկզբնական պատրաստութեան բերած ազդեցութեան.

Ընթերցողին բարոյական գրութեան մէջ չէր մտած

Հռոմի անգութ բռնակալութեան.

ասելը, մինչև որ ինքն իր մասին պատմելիքն ասած լինի։ Հետո, ինչպես ես կարծում եմ, Տասիկն էլ որոշեց ասել ինչ-որ բան, որ ինձ ավելի հետաքրքրի։ Նրա ձայնը դողդողում էր, երբ նա սկսեց խոսել։ ,, Ոչ ոքի չեմ պատմել այդ մասին, բայց ես ուզում եմ, որ դու իմանաս։ Ես ամուսնացել եմ, երբ ինձ ընդամենը տասնչորս տարեկան էր։ Ես ամուսնացել եմ մի մարդու հետ, որին ես չեմ սիրում, որին երբեք չեմ սիրել, որին ես ատում եմ։ Ես ամուսնացել եմ նրա հետ, որովհետև նա ինձ ստիպել է դրան։ Նա ինձ ծեծել է, ինձ սովամահ է արել, ինձ ստիպել է ամուսնանալ իր հետ

մաչի մէջ, ուր կենսական պիտոյքներն այնքան մեծ չեն, համեմատաբար փոքրիկ գումարը կարող է շատ բան գործել։ Ասոր հարատեւութեան դիզուելուն հետ բայի այդ աղ ստանալի համար շարժառիթներից երևան եկան և հրապոյրներ վաստակելիների համար.— մեծաքանակ վարձատրութիւն և ձրի ապրուստ, ըստ որում եկեղեցական պաշտօնները զերազանցելին յետոյ իրանց շքեղութիւնով պետական պաշտօններից անգամ։

Չնպհկնեկ մուտ գտած ա նոնրից կարող ենք հետևեցնել, թէ այն ձևերն, որոնցում ժամանակ առ ժամանակ մարմնանում էին քրիստոնէական սկզբունքները, ունէին երկրորդական նշանակութիւն։ Առաջին դարերի ազանդները այնպէս սպառապուռ անհետացան, որ դժուարութիւնով կարող ենք միայն բերել նոցա անուններն նշանակութիւնը, կամ որոշել նոցա էական վարդապետութիւնները։ Ա՛նք կարող ենք նկատել, թէ ինչպէս՝ սկսած պահքից, ողորմութիւնից և ապաշխարութիւնից,— այնպիսի բաներից, որոց մասին կարելի էր դատել նկատողականապէս,— ուղղափառութիւնը հասնում է վերջապէս բնապաշտական ամենախորին գաղափարները։ Նա պէտք չէ կարծել, թէ այն ժամանակում յառաջացած նոր ծէսերն և վարդապետութիւնները պատահաբար մարդկանց անյարիր գիւտերն էին։ Նրանք մարդկային կարծիքների միօրինակ զարգացման բերքերն էին։

Զարծիքների առաջին զանազանութիւններ. Առաջին ժամանակների ազանդների պատմութիւններով զբաղած հետևակաները ցոյց են տալի ուսումնասէր ընթերցողին, թէ ինչպէս տակաւին չանհետացած մանրմունիքը դէպի հրեական ծէսերը վերադառնում էր այդ հին ակեղեցին. և թէ՝ որպիսի դժուարութիւնով վերջապէս ապաստուց ակեղեցին հրեականութիւնից, որ իշխում էր նորանում առաջին տասը տարուայ ընթացքում. թէ՝ ինչպէս յետոյ մի քանի դարերի ընթացքում ընկղմուեց նա Քրիստոսի քնութեան վերայ եղած վէճերի մէջ, ուսում և յառաջ եկան հերետիկոսութիւններ մէկ մէկի ետևից. Նրիոնականների կարծիքով Քրիստոս սոսկ մարդ էր. Դոկետականների՝ —առաջօք երևոյթ. իսկ երրայեցի Ակրինթոս գնոստիկի համար՝—երկու բնութիւն ունող թէ՝ ինչպէս յետագայ դարերում, քրիստոնէութեան՝ ամբողջ կայսրութեան մէջ տարածուելուց յետոյ նորա վերայ նորը ազատութեան արևելքի և արևմուտքի մտաւոր առանձնականութիւնները։ Արևելքը լցուեց տեսական վարդապետութիւններով, որոնցից ամենանշանաւորներն ազէքսանդրիացի պատմականների պատկերն էին, ըստ որում փիլիսոփայական աղանդներից բոլորից առիլ պատմականները քրիստոնէութեան հետևողներ տուին։ Արևմուտքը հետզհետէ իւր շահեկա

Ուրիշ ան ազանդներ— Թիւնը չգոյամ է գէպի ազա. ւանդ. նին. արևմտեանքը՝ դէպի մարգկային.

պէսին, որ յարգում է բոլոր գործնականներն և արհամարհում բոլոր վերացականները, բարեյաջող հանգամանքների առանձին ձեռնտուութիւնով սկսաւ տարածել նիւթական իշխանութիւն և սահմանատարած մեծութիւն։ Բոլոր քրիստոնէական ազանդական կարծիքների վերնական կէտն եղաւ արևելքի մէջ՝—Աստուած, արևմուտքի՝—մարդը։ Որտեղում է պարունակուում նոցա էական տարբերութիւնը։ Մէկը հարուստ էր Աստուծոյ էութեան վերայ եղած վարդապետութիւններով. միւսը՝ կանոններով մարդկութիւնը բարեքաղաք և ուղղելու համար։ Կարծիքների զանազանութեան նկատմամբ երկար ժամանակ ոչինչ էր համերաշտապութիւն. նոցա տասած էր մեծ ազատութիւն։ Մինչև Նիկիական ժողովն ոչ ոքի չէին համարում հերետիկոս, եթէ միայն խոստովանում էր նա առաքելական հանգանակը։

Քրիստոնէութեան օտարատեսակ կերպարանութիւն. Մի շատ սրամիտ ակեղեցական պատմաբան խօսելով քրիստոնէութեան վաղագոյն ազատումն վերայ, յետագայ նկատողութիւնն է անում. ,,Մաքուր և անաղարտ ազգիւրը ծածուկ խորհուրդների ծծելով երկնային ցօղը, դառնալով ահագին գետ և կատարելով բազմատոհմ ընթացք, ներկուում է այն զանազան հողերի գոյներով, որոց միջով անցնում է,,։ Այս կերպով նախասկիզբն քրիստոնէութիւնը շրջապատող հանգամանքների ազդեցութեան ներքոյ տուեց երեք ձիւղեր—հրէացնող քրիստոնէութիւն, գնոստիկեան քրիստոնէութիւն, ափրիկեան քրիստոնէութիւն։

Հրեական քրիստոնէութիւն.

Այս ճիւղերից առաջինում մնացին հրէական խառնուրդներն, որոնցից ձշմարիտ քրիստոնէութիւնն ազատուեց միայն ամենամեծ դժուարութիւնով, ակեղեցու դէմ եղած երկար և ծագած վէճերի դնով։ Սկսելով առաջին աշակերտների դատ երրայական տեսակէտից, որոնք դժուարութիւնով ձեռք քաշեցին այն յոյսից, թէ Փրկիչը վաղուց ի վեր ակնկալած երկրաւոր Մեսիան էր, —րից իսկական Թագաւորը,—մի անուն, որի ներքոյ նա հարյուրաւոր, —հաւատով սակաւ առ սակաւ տարածուեց և հետևն, դրաւելով հետզհետէ դրացի կռապաշտներին և վերջապէս ամբողջ աշխարհն, առանց զանազանութեան ազգերի, կլիմայի և դոյնի։ Քրիստոնէութեան այս՝ իսկապէս աղբիւրաղբ տարածումն հանդէս հանեց նորա էական, հիմնական վարդապետութիւնները։ Այդ հրէացնող քրիստոնէութիւնը, յատկապէս խօսելով, շուտով արդէն ջնջուեց։ Նա կարող չեղաւ հակառակելու եկեղեցու ծոցում գտնուած առաքելական ղօրեղ ազդեցութեան և չհաւատացող հրէից սաստիկ ձնշմանն, որոնք տածում էին դէպի նա անհաշտ թշնամութիւն։ Ասցի դարանից նոր վարդապետութեան արագ տարածումը փոքր Ասիայում և Յունաստանում ներկայացնում էր ոգևորութեան համար

հրապուրիչ դարձ։ Երբոյե՞ղիք եղան առաջին քարոզիչներ հռոմեական կայսրութեան մէջ. առաջին ժամանակաւ նոքա պահանջած էին թլպատութիւն և Մովսէսեան օրինաց հնազանդութիւն. բայց արդէն առաջին ժողովի Երուսաղէմի մէջ, որ դումարուեց հաւանականաբար մօտ 49 թուին՝ փր. վճռեց այդ խնդիրը մերժողաբար։ Նկուղեցու շինուածն, որ սկզբում սինագոգից էր օրինակուած, փոխուեց։ Սկզբում հաւատի պայմանն և ծէսերը շատ պարզ էին. հարկաւոր էր միայն հաւատալ Տէր Յիսուս Քրիստոսին և մկրտութիւնը նշանակ էր նորադարձի ընդունուելուն հաւատացեալների հասարակութեան մէջ։ Նկուղեցու ղեկն էր Յակոբոս, անուանեալն եղբայր Տեառն մերոյ, ինչպէս և պէտք էր սպասել նորա ազգակցութեան առաքինութենից։ Նւսեբիոս հետևեալ կարգով յառաջ է բերում Յակոբոս Տեառն եղբօրը յաջորդող Երուսաղէմի եպիսկոպոսաց անունները.—Սիմէօն, Յուստոս, Զաքէոս, Տոբիոս, Բենիամին, Յովհաննէս, Մատթէոս, Փիլիպպոս, Սիմէօն, Յուստոս, Ղևի, Եփրեմ, Յովսէփ և Յուդա։ Այս անուններն արդէն բաւականին վկայում են անձերի ազգայնութեան մասին։ Նկուղեցին պահպանում էր, որ նորա մէջ մինչև վերջին հրեայ եպիսկոպոսը հերետիկոսութիւն չէ եղած. բայց դորան կատարելապէս չէ կարելի հաւատալ. քան զրում Երուսաղէմում շատ շուտ գոնում ենք երկու տարբեր կուսակցութիւնների հետք. մէկն այն՝ որ ընդունում էր գերբնական յղութիւնն, և միւսն՝ որ մերժում էր նոյնը։ Երկնեանները, ցանկալով ցոյց տալ մեր Փրկչի ծագումն Դաւթից, օրինակ էին առնում Ս. Մատթէոսի աւետարանի մէջ պարունակուած ազգաբանութիւնն, ուստի և չէին խոստովանում գերբնական յղութիւնը. այնպէսով՝ թէ նորա մասին եղած վկայութիւնն անվաւերական է և հակառակում է այն ծննդաբանութեանն, ուր մեր Փրկչի ազգահամարը սկսում է Յովսէփից.—քան զրում այդ դէպքում Յովսէփ նորա հայրը չէր լինում։ Այդ հերետիկոսներին կարելի է համարել եբրայական ազգային կամ հայրենապաշտական կուսակցութիւն։

Քէից յիրեսնեայ գառնալոյն պատճառները.

Քրիստոսի յաջորդակ դարձին խոշընդոտան եղան, երևի, երկու պատճառներ. Մեսիայի երկրաւոր իշխանութեան նկատմամբ եղած կարծիքների և գերև եկանելն. երկրորդ՝ այն մեծ ընդունելութիւնն, որը ձեռք բերից Երրորդութեան վերայ եղած վարդապետութիւնը։ Նոցա նախանձախնդրութիւնը դէպի այն ամենն, որ որշակի և ներկայ կարող էր խափանել Աստուծոյ միութեան վերայ եղած վարդապետութիւնը, գալձել էր դրեթէ մոլեռանդութիւն։ Քրիստոսի քրիստոնեութիւնը, կարելի է ասել, դադարեց բոլորովին,

Երուսաղէմը կործանած միջոցին. թեպէտ և նորա վերջին հետքերն երևեցան դեռ զառակի վերայ եղած հակառակութեան մէջ. որին վախճան տուից Եփիկիական ժողովը։ Քրէից դարձը կարճուեց մինչև Կոստանդիանոսի Թագաւորելն։

Քրիստոնեութեան տարածումը Հռոմայեցոց մէջ։

Երկրորդ ճիւղը,—դնոստիկեան քրիստոնեութիւնը հաստատ իւր կատարեալ զարգացմանը հարիւր տարուայ ընթացքում Քրիստոսից յետոյ։ Նա ունէցաւ ներդործող ազդեցութիւն առաջին չորս դարերում, և ծնաւ այդ ժամանակի մէջ զանազան երկտրոպակարդ շատ աղանդներ։ Այս հակառակութեամբ կամենում էր քրիստոնեութեան կնիքը դնել մոգականութեան վերայ։ Նորա կարծիքով Փրկիչը գերբնական բանականութեան բոլոնում էր, որ ծագում էր յատկանական, ինքնագոյ հոգուց. այդ բանականութիւնն—և ոչ թէ մարդն Յիսուս—էր Քրիստոս, որ դարով ըստ այսմ միայն առ աչօք երևոյթ, անմարմին և անշօշափելի, չէր ներկայանում իրանում գնոստիկականց համար որև էիցէ գաղափար վերկարար պատատրաստ և հաշտութեան մասին։ Գնոստիկականութիւնը գտաւ իւր մոգականութեան (1) նոր երևոյթը Պարսից կայսրութեան մէջ։ Ըստ այնմ Մաբեզանն ժամանակին. այդ աղանդը սովորաբար կարճ ածից շատ աւելի խորն ազդեցութիւն ունեցաւ քրիստոնեութեան վերայ, որի անջնջելի հետքերը տակաւին նշմարելի են և մինչև այսօր։

Արրորդ ճիւղն,—արիմիկեան կամ պղատոնեան քրիստոնեութիւնը—ծագեցաւ Ալեքսանդրիայում։ Ալրիանոսի կառավարութեան ժամանակին քրիստոնեութիւնը տարածուեց համօրէն Նդիպտոսում և դուռ իրան շատ հետևողներ մայրաքաղաքի պղատոնեան փիլիսոփաների միջից։ Սրքա կերպարանափոխեցին գնոստիկեան գաղափարն, որպէս զի յարմարացնեն այն իրանց բուն գաղափարներին. պնդելով՝ թէ այն սրտաճառն, որից գոյացել է աշխարհը, գերազոյն բանականութենից սկիզբն առած ինչ էր, որ և կարող է վերստին գառնալ դէպի նա, ինչպէս նոցա կարծիքով, ճառագայթն է և արեգակն։ Այդ ճառագայթը, պնդում էին նոքա, մշտապէս գոնում է մեր Փրկչի վերայ, և սորա համար նորան կարելի է համարել Աստուած։ Այս կերպով նորա անձն երիք մասերից է բաղկանում, որոնք են. մարմին, հոգի, և բան, (Logos). ուստի և Աստուած էր նա եամարդ։

Այս ամենի մէջ բացայայտ է գերբնութեական (2) ներկայութիւնն. և պղատոնեան քրիստոնեայք, յոյն փիլիսոփաների սովորութեան հետևելով, համարում էին քրիստոնէութիւնը ծածկաւոր յուզ վարդապետութիւն. նոքա անուանում էին նորան ,,կերակուր կատարեալ մարդկանց համար,,, իսկ ժողովրդական սովորական քա-

(1) Պատի քից ց ազգէն, որ գրագէտ ակն և քրիստոնէական գաղափարների խառն որդ էր հին։

(2) Трансцендентализмъ.

բողոքիւնը — ,,կաթն ծծկեր տղայոց համար,,։ Յուստինոս մարտիրոս (132 Թ. Քրիս.), որ պղատոնեան դպրոցի փիլիսոփայ էր, համոզուած էր, թէ աստուածայինն ճառագայթը անդամ մի լքած լինելով Աբրիատոսի վերայ, ոչ նորանից էր զատուում երբէք և ոչ իւր աղբիւրից բաժանուում։ Նա բացատրում է իւր միտքը երկու օրինակներով։ Ինչպէս բանը (Logos) մի մարդուց դուրս գալով անցնում է միւսին, տալով նորան միտք, որ միևնոյն ժամանակը մնում է գործակ և լուսոյն մէջ, այսպէս և Հոգի Աստուծոյ Բանը մնում է ամբողջ և անթերի, թէև հաղորդուում է Աբրիատոսին. կամ թէ՝ ինչպէս մէկ ջրաղից կարելի է վառել մի ուրիշն, առանց ամենաչնչին կորուստ պատճառելու ըստոյն, այսպէս էլ Հոգի աստուածութիւնն անցնում է Որդուոյն։ Այս վերջին բացատրութիւնը յոյժ շատ տարածուեց, և ընդունուեց Նիկիական հաւատոյ հանգանակի մէջ, ,,Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ,,։ Կենթրև է, որ այս բացատրութիւնն աշխատում էր բուն մաքրութեան մէջ պահպանել Աստուծոյ մի լինելու վերայ եղած համոզմունքը. քան որում քրիստոնեայ հաստատութիւնն այդ ժամանակին մեծ մասամբ տոգորուած միապետական ոգով՝ գործ էր դնում այդ բառն իւր աստուածաբանական նշանակութեան մէջ։

Ընդբանդրութեան պատճառները— Նոյն ատեն՝ քրիստոնէութեան հրեական և դնոստիկեան ձևերը երկուքն էլ անհետացան, իսկ ապրիկականին, պղատոնականին կամ աղեքսանդրիականին սահմանուած էր երկար մնալ։ Այս իրողութեան բացատրութիւնը կարող ենք գտնել միայն այն ժամանակի քաղաքական պատմութեան մէջ։ Նա համառօտապէս պիտի յիշատակեմ այն դէպքերին, որոնք կարևոր են իմ նպատակի համար։

Քրիստոնէութեան ծագումը— Քրիստոնէութիւնն իւր ծննդեան տեղից—Բրիատանից դարձաւ դէպի հռոմէական աշխարհն տիրապետութիւն։ Իւր սկզբնական ձևի մէջ առատաձեռնաբար այժ, հաստատացնելով թէ աշխարհի կառավարիչը միրձ է, և թէ՝ երկիրը շուտով հրով կործանուելու է։ Պատմական պատերազմից յետոյ, որ յառաջ բերեց Բրիատանում, նա պատրաստուեց յառաջ մղելու յարձակմանց և աշխարհակալութեանց պատերազմ, և մէկ միւսի ետևէց դրաւեց Աիպերա, Փռիգիա, Գաղատիա, բոլոր Փոքր Ասիան, Յունաստան և Սպանիա։ Հռոմի հրդեհի հետ համապիսակ Ներոնի հալածանքները մի վայրկեան անգամ չդադարեցրին նորան. նորա թաղուրութեան միջոցը քրիստոնէութիւնը տարածուում էր տրտղութիւնով, և ամեն ուրեք կառուցուում էին Պետրոսի և Պօղոսի եկեղեցիներ, հրեական և յունական ձաշակի համեմատ։ Նրջիններս տասան առաւելութիւն և առաջիններն անհետացան։

Նկեղեցիների շինուածը փոխոխուեց, հաստատութիւնները տակաւ տակաւ կորցրին իրանց իշխանութիւնն, որ կեդրոնացաւ եպիսկոպոսի մէջ։ Առաջին դարու վերջում եպիսկոպոսական վարչութիւնը տիրապետող եղաւ, և հոգևորական կազմակերպութիւնն այնպիսի նշանաւոր կերպարանք ստացաւ, որ դրաւեց կայսրների ուշադրութիւնն, որոնք վերջապէս հասկացան, թէ որպիսի սիալատեաց մէջ են ընկել շփոթելով նոր կրօնը հրէականութեան հետ։ Այդ հակակրութիւնը դէպի նա, որ շուտով արտայայտուեց պատժական միջոցներով, հետևանք եղաւ այն առանձին դրութեան, որ ընդունեց նոր կրօնը։ Երբև քաղաքական ընկերութիւն, քրիստոնեայք ոչ միայն հրաժարուում էին այն ժամանակի բոլոր ուրախութիւններից, ինչպես թատրոններից և հասարակաց զուարճութիւններից, այլ և բոլոր յարաբերութիւններով կազմում էին առերութիւն տէրութեան մէջ։

Եկեղեցական կազմակերպութիւնը և վճռաբանութիւնը— Երկրի այսօրինակ դրութիւնը միանգամայն անհաշտելի էր իշխող կառավարութեան հետ. և նորա յայտնի անյարմարութիւնների և վնասը շուտով դրալ տուին նորան։ Պետրոսեանների ղօրանալուն յատկապէս նպաստաւոր եղաւ աշխատասիրութիւնը Միջերկրական ծովով, որ գտնուում էր այն ժամանակում մէկ գերագոյն իշխանութեան ձեռքին. հրեայ և յոյն վաճառականները նորա միջնորդներն էին. նոցա առևտրական քարաքները նորա կեդրոնանալու տեղերն էին։ Այլ պէտք չէ կարծել, թէ քրիստոնէութիւնը տարածուում էր առանց դիմադրութեան. դեռ դեռ մինչև զար և կէս ժամանակ մանր կռապաշտերն և երկրագործները տածում էին դէպի նա ատելութիւն, համարելով նորան առևտրական մի առանձին ընկերութիւն, որպիսիներ նոքա միշտ եղում էին. և համոզուած էին, թէ նա է պատճառն երկրաշարժութիւնների, հեղեղների և համաձարակ հիւանդութիւնների։ Այդ համոզմունքների վերայ աւելացաւ և ցանկութիւն տիրելու հաստատութիւնների սեպհականութեան, որը խլուում էր օրինքով։ Առաջին քրիստոնեայք միշտ և գառնապէս բողոքում էին դէպ դէմ։ Այլ տանջանքը, հուրն և վայրենի գազանները,—բոլորն ի զուր էին։ Այդ իսկ հալածանքները տուին իրանց օգուտը։ Ընարդարութիւնն և անգթութիւնը սկզբ միաւորեցին մէկ մէկի հետ բարեպաշտ, բայց անզօր հասարակութիւններն, և հարկադրեցին գազարեցնել ներքին տարաձայնութիւնները։

Նոր եկեղեցին և գրական կերպարանքը— Սակայն պէտք է խոստովանել, որ քանի մի դէպքերում հալածանքներն տեղիք տուողը լինում էր և այն գրգռող կրօնական պարագան, որ ընդունում էին նոր հաստատի հետևողները նայելով իրանց հետ

հեռէ ստացած ուժին: Այս բանը հասկանալու համար մեզ կարժէ միայն կարդալ այնպիսի վկայագիրներ, ինչպես Տերտուղիանոսի անոնորոշամտութիւնով լի մէկ թուղթը, որ մեղադրում է ապրային կրօնն իբրև պատճառ հասարակայ բոլոր թշուառութիւնների, հեղհեղների, հրդեհի, խաւարմունքների, և կոչում է Աստուծոյ բարկութիւնն ապրային կառավարութեան դէմ:

Այն ժամանակի քրիստոնէից ընդհանուր կարծիքին համաձայն, նա խոստովանում է հեթանոսական աստուածների իսկական գոյութիւնը, բայց համարում է նորանց չար ոգիներ, և յայտնում է վճռականութիւն նորանց հալածելու: Այդ թուղթը զգուշացնում է իւր հավատակորդներին, որ նոքա կարող են կուռքանոց, արձանները լվայարների ներ նել, կամ ուրիշ ահաւոր պատիժ տեսնել: Այսպիսի յայտարարութիւններ, երբ բաւականին զօրացան և լրացել եղան ընդհանրական կեանքում, հարկաւ պիտի յարուցանէին հալածանքներ: Դեկոսի հալածանքը (Քրկ. 250 թ. ուղղուած էր գլխաւորապէս հոգևորականութեան դէմ, այնպէս որ նորանից չկարացին ազատուել մինչ անդամ Երուսաղէմի, Անտիոքի և Հռոմի եպիսկոպոսներն: Ութ տարուց յետոյ սկսաւ նոր հալածանք, որից մահ ստացան Սեքստոս՝ Հռոմի եպիսկոպոսն, և Կիպրիանոս՝ Կարթագինէի եպիսկոպոսն:

Գործերի դրութիւնը Դիոկղետիանոսի ժամանակին.

Դիոկղետիանոսի ժամանակին բացայայտ եղաւ, որ քրիստոնեայ հասարակութիւնների ամենուրեք յառաջացած ինքնավարութիւնն անհամաձայն է կայսերական դրութեանն: Եթէ սեւելի և ներորոգմութեան տալին, անշուշտ նոքա կատարելին այնպիսի ոյժ, որ կլինէին միանդամայն երկիւղալի քաղաքական նկատմամբ. չկար մի քաղաք, հազիւ կտեսուէր մի գիւղ կայսրութեան մէջ,—և որ առաջ վտանգաւոր էր— չկար մի լեգէոն զօրք, որոց մէջ չգտնուէր այդ կազմակերպութիւնն: Ոչ մի պայմանի անասցող և անդիջանալի ոգին, քրիստոնեայ ընկերութիւններին ոգևորողն, անհրաժեշտաբար առաջնորդում էր դէպի երերոդական դաշնակցութիւն.—պետական մարդկանց, փ՛լոսոփաների և բարոյաստուածեանների: Այս՝ երեք կուսակցութիւնները, կարճելով կամ մի ժամանակ թողնելով իրանց հակառակութիւնները, համակամ միացել էին մէջ տեղից բառնալու հասարակաց թշնամին, քանի գիտ և շատ ուշ էր: Պատահեց այնպէս, որ շարժումն յառաջ եկաւ ամենից յառաջ զօրքի մէջ: Մի քանի լեգէոնների միջև քրիստոնեայ զինուորները հրաժարուեցան մասնակցելուց ժամանակի նուիրական գործած ծոռնախմբութեանն աստուածների դիմութիւնը խնդրելու համար. Այս՝ 302—303 փ. թուականի ձմրանն էր: Այնքը այնքան վտանգաւոր էր, որ Դիոկղետիանոս և Գալերիոս խորհուրդ կազմեցին, ինչ անելն որոշելու համար: Պարսից

երևակայել դրութեան բոլոր դժուարութիւնն, եթէ յիշենք, որ մինչև անդամ Դիոկղետիանոսի կինն և աղջիկն էս նոր կրօնի հետևողներ էին. Դիոկղետիանոս ինքը մեծ-մեծ ընդունակութիւնների տէր և քաղաքական շատ ազատ հայեացքներ ունեցող մարդ էր. և առաջնակարգ ատենձանաւորների ու զօրապետների երկրորդ խորհրդի ժամանակ, միայն անխուսելի պատերազմի բացայայտութիւնը կարողացաւ իրան համաձայնելու պատճառական միջոցների դիմելուն, որի դէպի այդպիսի մի վճռուն ունեցած խիստ տհաճութիւնն ապացուցում է իւր կարգած պայմանները, որ ոչ ոք չզրկուի կեանքից:

Պաղեստինեան հեռատեսութիւն.

Պաղես թէ հարկաւոր է պատմել, թէ սորա հետևանքն ինչ եղաւ. Գիկոմիդիոյ եկեղեցին գետնի հետ հաւասարուեց. զօրքի քրիստոնեայ սպաները սուիպուեցան հեռանալ. և ինչպէս ասում է ականատես Եւսեբիոսը, բազմաթիւ նահատակութիւններ եղան շուտով Հայաստանի, Սորիքի, Մաւրիտանիայի, Եգիպտոսի մէջ և ամեն տեղ: Ընդքերը տեղի էին ունենում այնպիսի անկասելի ձանապարհով, որ ինքը կայսրը չկարաց դադարեցնել հալածանքները. քրիստոնեաներին տանջում էին, ձգում էին կրակը, կամ ի կուր վայրենի գազաններին, և կտրատում նոցա գլխները. նոցանից շատերը մահուան րոպէում միայն գոհանում էին Աստուծուց, որ արժանի արել իրանց մարտիրոսական վկայութեան: Ընդհարձ բոլոր ափշում էր նոցա արիասրտութեան վերայ: Այսպիսի պանծալի արութեան նշանաւորութիւնը չէր կարող ունենալ ուրիշ հետևանքներ: Մահու ջափ կռիւ երկու հակառակորդ կողմերի մէջ երևեցաւ անխուսելի: Այդ ընդհարձ նոյն ժամանակի մէջն և արիւնահեղ քաղաքականութեան, լինդերը լուծուեց անակնկալելի կերպով. Գոստանդիանոս՝ որ փախած էր զաւակնական բանդարկութիւնից, որին նենգաբարկել էր հօրան Գալերիոս, միտքը դրեց քնակնաբար, որ եթէ անցնի քրիստոնէից կողմը, ոչ սակաւ օգուտներ կտեսնի: Սորա նով կարող կլինէր կայսրութեան ամեն մէկ անկիւնի մէջն էլ գտնել հաւր և սուր անարգող արք և կանայք. սորանով պիտի գտնէր այնպիսի հետևողներ, որոնք ոչ միայն հաւատարիմ պիտի լինէին հայրերի աւանդութիւններին, այլ՝—ըստ որում մարդկային բնութիւնն երևում է նաև կրօնական բաներում ևս,—նաև պիտի պահանջէին վարձատրութիւններ իրանց պատճառած անզթութիւնների և անարդարութիւնների. և գլխաւորը՝ զորանով պիտի գտնէր անասանելի կատակիցներ զօրքի իւրաքանչիւր լեգէոնի մէջ, Գոստանդիանոս այս բանը վճռեց: Պատերազմը յաղթութեան պսակը նորան տուեց:

Լուսաբազմական հետևանք մեծ հետևանքների.

Այդ մեծ և արագ աճող կուսակցութեան հետ դաշնակից լինե-

ը ջանքը նոր չէր։ Ա՛ք թիմիանոս աշխատեց արդէն նոյնը անել, բայց նորան չհաւատացին։ Լիկիանոս նախատեսելով Կոստանդիանոսի քաղաքականութեան հաւանական օգուտը, ջանաց ակարա-ցնել նորան հալածանքների թոյլ վերանորոգութիւնով, Փ. 311 թ. յուսալով օրանով իւր կողմը ձգել կաթոլիկներին։ Այս ժամանակամ սիրութեան ոյժերն այնքան մանուածոյած էին զահակիցների մէջ, որ մինչև անգամ, եթէ քրիստոնեայ կայսրութիւնը շատ էլ ակար լինէր, քան որչափ էր իսկապէս, դարձեալ կարող էր գերազանցութիւնը ձգել իւր ընտրած իշխանացուի կողմը. նորանից կարելի էր ապասել էլ աւելի յաջողութիւն, եթէ ի նկատի առնենք նորա բազմաթիւ և ոստոստուած լինելն և նեղքին անձուկ կացը։

Նոստանդիանոսի թագաւորութեան ապա-ցոյցքան է

Ա՛ծին Կոստանդիանոսի թագաւորութիւնովը վախճան է առնում բուն Հռոմէական կայսրութիւնն, և սկսում է Յունականը։ Մէկից միւսին անցնելուն պարզ և նուրբ նշանակ էին նոր մայրաքաղաքը, նոր կրօնը, նոր օրէնքն և յատկապէս նոր քաղաքականութիւնը։ Կայսերական իշխանութեան հաստած մարդը պատկերացրեց իւր մէջ արագ աճող կուսակցութեան շահերը։ Դորա անհրաժեշտ հետևանքներ եղան եկեղեցու միաւորութիւնը տէրութեան հետ և ժողովրդեան վանդակաւոր դասակարդերի քաղաքական ձանապարհից դէպի հոգևորը յետ գարձնելը։ Կոստանդիանոսից է յատկապէս սկսում բուն Քրիստոնեան կայսրութիւնն և ոչ Լևոն Իսաւրացու թագաւորութիւնից, ինչպէս այնչում են ոմանք։ Այս տեղից է նմանապէս և սկիզբն եւրոպական հաւասի գարուն. թէև ըստ իս՝ հետապօտութեան գարն անցնում է այդ շրջանից և վախճան է առնում Հռոմի պատերազմական անկումից։

Եկեղեցական հոդևնականների կարծիքը շատ մեծ նշանակութիւն է առել Կոստանդիանոսի գարձին և քրիստոնէութեանն ազգային կրօն խոստովանուելուն։ Այդ հայեացքի կէտը փոփոխում է իրերի դրութիւնն, և երկրորդականը սա կարևոր անում է գլխաւորը։ Ընդքերը հետզհետէ այնպիսի գարձուած էին առնում, որ Հռոմի քաղաքական անկումն անխուսափելի եղաւ։ Հռոմէացիք իրրև ազգ անհետացան, ընկղմուելով ուրիշ ազգերի մէջ. իշխանութեան կեդրոն գօրքն էր կազմում։ Եկեղեցիները մէկ մէկի ետևից մէջ տեղ էին հանում ծիւանու ժառանգորդները.—բազդասէրները, որոց յաջողութիւնն կրնէք չկարաց հետացնել այն վատթար սովորութիւններն, որոնք ատորին ծագումի և գիտուորական կեանքի բրտութեան պատասխան էին. բազդասէրները, որոնք մասը չունէին այդ ժամանակում Հռոմի մէջ սպառուած վերջին հին գերդաստանների նորո-

թիւնից և ազնուութիւնից։ Նորա արհամարհում էին հնաորեայ քաղաքի գիտուորական զառամութիւնն, ատում էին նորա անցեալը։ Հասկացայտ է, որ այսպիսի մարդկանց համար պարզ էր նոր մայրաքաղաք հիմնարկելու օգուտը, կամ թէ, եթէ չէին կամենում իրանց վերայ առնել մի այսպիսի գժուար ինդիր, նոյա գիւրին էր փոխադրել կայսերական բնակութիւնն ուրիշ որ և իցէ մի մեծ քաղաք։ Այս կերպով յատկապէս Նիկոմիդիայում քնակուելը կարճ ժամանակում ազեցութիւն հետևանքներ ունեցաւ Հռոմի մէջ։

Ա՛ն այսպէս՝ գործերի քաղաքական գրութիւնն ոչ միայն թեկադրում էր միաք, այլ և հնարաւոր էր անում կառավարութեան բնակութեան տեղափոխութիւնը։ Գործ կայսրը խղճի յանգիմանութիւններից ապահովուած էր գանում գրաղեցնելով միաքն այսպիսի ձեռնարկութիւնով. այսաեամենայնիւ սխալ է կարծել, թէ այդ ժամանակում և հետևեալ շատ տարիներում նա արգէն քրիստոնեայ էր։ Նորա ընթացքն իսկզբանէ չէ ցոյց տալի հակառակ մի անձնանուէր նորադարձի. նա աշակերտ չէր, այլ խնամակալ. առանց առաջնորդ բունելու իրան կրօնական սկզբունքները, նա կամ ցոյց էր տալի բուն իսկական պաշտպանութիւն իւր նոր դաշնակիցներին կամ ընդունում էր կրօնի երկու ձևերն էլ քաղաքագէտի անտարբերութիւնով։ Իւր քահանայապետ (Pontifex maximus) կոչման համաձայն նա վերականգնեց հնեմոնական ձևհանները և սրբազան գործութիւնները, և նոր մայրաքաղաքի հիմնարկութեան պատճառով ձեծարից բազդի արձանը։ Կառավարական շարունակուող զհաբերութիւններն և բաց տաճարներն, երևի, ապացուցանում էին, թէ նա կամենում էր միայն հաւիտեանել նոր կրօնը հնի հետ։ Նորա Եղեքսանդրիոյ եպիսկոպոսին և Եւրոպին տուած խորհուրդն, որ օրինակ առնեն վիճաբանիչներին, որոնք երբեք խորին խնդիրներ չէին գառում ազէտ ուսնդիրների ներկայութեանն, և որոնք կարող էին ատրակարծիք լինել առանց մեկը մեկ տուրբ, ապացուցանում է նորա այն ժամանակի անտարբերութիւնն. և սակայն նա պարզապար խոստովանում էր, թէ որչափ պարտական է իրան հաստատութիւն տուող կուսակցութեանն։

Կոստանդիանոսի նոյն իսկ գործողութիւններն այդ ժամանակի մէջ հաստատում են այս եղրակացութիւնն։ Նորա վերայ լաւ ևս կարելի է ուսումնասիրել, քան այն ժամանակի կրօնական վիճաբանութիւնների վկայութիւնների վերայ։ Ա՛ռաջ կորուեց, որի վերայ Քրիստոսի փակագրի հետ միասին փորագրուած էր նորա անուանն ,,Ըստուծոյ,,։ Ուրիշ մեկը պատկերացնում էր, թէ ինչպես երկնքից մի ձեռք իջնում էր նորան արքիական կառքով։

Կոստանդնուպոլսոյ հիմնադրի կրօնական ոգւոյն ցոյց էր յատկապէս պորփիւրագոյն սիւնը, կոճող 120 ոտը բարձրութիւնով, որի գագաթի արձանը միացնում էր իրանում արեդակը, փրկչին և կոյսերը. նորա շինուածը կազմում էր Կպտղընի սկսյածև նմանութիւնը, որի դէմքի դծագրութիւններին փոխանակել էին Կոստանդիանոսի գծագրութիւնները. իսկ գլխի շուրջ կողմն իբրև ճառագայթ գտնուած էին փրկչի խաչի բևեռները, որոնք նորանից յառաջ գտնուած էին Երուսաղէմում: Կոստանդիանոսի ընդունած պաշտպանեց դերը երևում է նորա քաղաքագիտութեան շատ շարժմունքների մէջ: Մրկանան օրինքը տալիս էր ազատութիւն և հեթանոսներին և քրիստոնեից. բայց ոտքհետև անհրաժեշտ էր ցոյց տալ որչափ և իցէ իւր նախանձախնդրութիւնը վերջիններին, նա սակիզբից հրամայեց հանել, որով ազատում էր հոգևորականութիւնը քաղաքական պարտաւորութիւններից: Նոյս իսկ պատճառները շարժեցին նորան ձգել իւր կողքն հեթանոսականներին, մեծամեծ գումարներ նուիրելով եկեղեցիների վերականգնման և ուրիշ նպատակների համար, և քանալ բառնալ այն, ինչ որ իրան շրջապատողները համարում էին հերետիկոսութիւն: Ասպատին հրամայեր թեղադրեցին նորան վերադարձնել քրիստոնէից այն կալուածները, որոնցից զրկուած էին հալածանքների ժամանակին, յետ տալ նահատակների յափշտակուած դրքը օրինաւոր ժառանգներին, իսկ ժառանգներ չեղած ժամանակը տալ եկեղեցուն, ազատել բոլորի աշխատութեան պատապարտուածներին և վերադարձնել աքսորուածներին:

Նոր մայրաքաղաքի հիմնարկութիւն

Մայրաքաղաքի փոխադրութիւնն երկու մասով նշանաւոր եղաւ քրիստոնէից համար. մէկ՝ որ Հռոմի եպիսկոպոսները հետզհետէ կայսերական նկատողութիւնից և վերահսկողութիւնից, կարողացան իրանց ձեռքում ամփոփել իշխանութիւնն. և նոցա՝ սկզբում անհատատ դրութիւնն այսպիսի յատկապէս բարիացող հանգամանքների միջոցով հասաւ վերջապէս պապական աստիճանին. միւս՝ որ քրիստոնէութիւնը Կոստանդնուպոլսում պայքար չտեսնեցաւ կռապաշտական յիշատակութիւնների և շահերի հետ:

Կոստանդիանոս շատ լաւ գիտեր, թէ ինչն էր այնքան տարբներ քի ընթացքում Հռոմի ոյժը կազմողը: Նոյն իսկ նորա պատմութիւնը հօր մահուան ժամանակից և Յուլեցի լեգեոնների նորան կայսր հրատարակելուց սկսած համողեց նորան, որ իւր աշխի և դրութեան հաստատութեան համար պէտք է որպէս և իցէ եղանակ ձեռք առնել այդ ահաւոր բազմութեանց նկատմամբ: Նոյս համոզմունքն իրան առաջնորդ բռնելով, և կամելով բառնալ յետադէմ զօրավարների հնարաւորութիւնն անելու այն, ինչ որ արեցին ինքն և

Կոստանդիանոսի քաղաքական կանխահայեցութիւն.

իւր այնքան նախորդները, լեգեոնների կազմածը 6000 էց չկեցրից մինչև 1500 կամ 1000 մարդու. Մրևնոյն նպատակներով բացի զօրանից նա վտառասիրութեան կամքին թողից հոգևոր հարստութեան և պատուի ոչ այնքան վտանգաւոր ասպարէզը, իրատացի կարծելով թէ ըստ որում հոգևորականներն ընտրուում էին հասարակութեան բոլոր դասակարգերից, ուստի ժողովուրդն ամբողջ պիտի հոգ տանի նկեղեցու բարօրութեան մասին: Ըզատ կացուցանելով հոգևորականութիւնը քաղաքական բեռնաւորիչ պարտաւորութիւններից, ինչպէս օրինակ տանտուգանների կոչումից, նա այս կերպով վարձատրութիւն յատկացրեց կռապաշտութիւնը թոյնելու համար: Նորա անձամբ մտնակցելն Ներորդութեան վերայ եղած վիճաբանութեանը նպաստեց աստուածաբանական վիճմունքների փիլիսոփաներից և ասսմնական մարդիկներից ժողովրդեան ամբոխի մէջ տարածուելուն: Նոր միաստուածականութեան անխուսափելի հետևանքն եղաւ հերետիկոսութիւն,—մի բառ, որ և յառաջ բերեց և արդարացրեց ամբողջ շարք քաղաքական յանցանքների: Մարդիկ զբաղուած լինելով այսպիսի կրոնական խնդիրներով, սակաւ ուշադրութիւն էին դարձնում քաղաքական առաւել կարևոր յեղափոխութիւնների վերայ, որոնք ընթանում էին իրանց ճանապարհով: Ընդհանրապետները, թատրոնները և կառավարութեան առատաձեռնութիւնը դիւրութեամբ էին ծածկում ամբոխի աչքից կառավարութեան պիտառութիւնները: Սակայն նոր ճանապարհների վերայ գարձրած այդ փառասիրութիւնը սկսում էր արդէն ապառնալ աէրութեան համար ապագայ ժամանակի մէջ վտանգ: Դանատեսներն, որոնց Կոստանդիանոս փորձից հաշտեցնել Հռոմի, Ընդի և Մրևանի մէջ եղած ժողովրդով, քարոզում էին աւելի քան կրօնական ապստամբութիւն, և արտայայտում էին այն բոլոր վիշտն, որով դգածուած են սովորաբար այս կոդմի փառասիրները: Նոյս եռանդայդը (1) հերետիկոսներն իրանց էլ սեպհականացնում ,,ընտրեալք Կստուծոյ,, ասելով, և այնպէս՝ թէ միայն նոցա եպիսկոպոսները կարող են համբուել ճշմարիտ փրկութեան աւազքից. և թէ՝ ամենայն ոք, որ ուրանում է Դանատեսի Կարծութիւնէն եպիսկոպոսը լինելու իրաւունքը, ենթակայ է յաւիտենական դատապարտութեան. Ընդքա առաջարկում էին մի հարցումն, որի ճշմարտութիւնն ոյժ էր տալի իրան.— ,,ի՞նչ գործ ունի՝ կայսրն եկեղեցու, քրիստոնեաներին թագաւորնեքի և եպիսկոպոսները պալատի հետ,,: Կաթուղիկոսք մնան, արդէն պատրաստուած լինելով իւր սկսուղ գաղանութիւնների համար, հարցնում էր չարագուշակ կերպով. ,,մի թէ Կստուածային վեհժնդրութիւնը պիտի խարուելով դրկուի իւր ղեհերից,,: Երդէն Կոս-

(1) Ենդուսիաստ:

տանդիանոս տուած լինելով եկեղեցուն կտակներով ստացուածք ձեռք բերելու իրաւունքը, հիմք ձգից այն իշխանութեան, որ կը թնելով կալուածի տիրապետութեան հետ միացած ազդեցութեան վերայ, դառնում է վերջապէս ամենակարող; երբ երեւում է այնպիսի ուխտի ձեռքին, որ կարող է շարունակաբար ձեռք բերել և ոչ երբէք օտարացնել, որ միշտ նորոգուում է և երբէք մեռնել չէ կարող: Միմիայն այդ կազմակերպութիւնը բաւական էր, որ եկեղեցին կարողանար հասնել իշխանութեան. անհրաժեշտ՝ որ պիտի մեռնի, և վերջապէս՝ որ պիտի անհետանայ, անշօք են այն պատակարգի համեմատ, որի նպատակները միշտ անփոփոխելի են, և որի կեանքն անկարճելի: Բայց միայն տէրութիւնը չկրնաւոր եկեղեցու հետ ունեցած այդ պաշտակցութիւնից. վերջինս նմանապէս մեծ վճարեց իւր ստացած ժամանակաւոր օգուտների համար, հրաւիրելով քաղաքական իշխանութեան միջամտութիւնն իւր գործերի մէջ:

Կոստանդիանոս իւր վերջին օրերում ձգեց կայսերական ծիրանին, և գրեթէ սովորական սպիտակ հանդերձ, պատրաստուելց ընդունելու մկրտութիւնն, որ լուանայ իւր բազմամեայ և բազմամեղ կեանքի մեղքերը: Նա որոշեաւ այս կերպով կարևի է կատարել մկրտութիւն առանալ միայն մէկ անգամ, ուստի նա աշխատեց յետաձգել այդ ծէսը մինչև վերջին վայրկեանը.Նա մեռաւ Փրկ.337 թուին:

Մենք վերջացն պիտի ուշադրութիւն դարձնենք այս դարը նշանաւոր կայացանող դաւանաբանական կարծիքների վերայ: Յառաջ բերել բերդն անկարելի կլիներ, ուստի պիտի լռեմ միայն առաւել նշանաւորների վերայ:

Ընդհանուր դաւանութիւնները: Այդն իսկ հալածուելն տեղիք էր տալի բաժանումներ: Իրանց հաւատի համար տանջուած նահատակները, հաւատն անվեհեր քարոզող վկաները ստացան արժանաւոր յարգ և ազդեցութիւն, դառնալով զօր միութեան իրանց առաւել թոյլ եղբայրակիցների համար, որոնք յետ էին կացել եկեղեցուց երկիւղի ժամանակները: Սորանից յառաջ եկան անպատշաճութիւններ: Նա որովհետև ցանկալի էր, որ բոլոր եկեղեցիների մէջ մացուի մի կանոնագրութիւն, միայն որ մէկից գաւառացը գաւառած լինի բոլորից, ուստի անհրաժեշտ եղաւ ուղիլ այդ անպատշաճութիւններն: Այդ մասն ծագած հակառակութիւնների մէջ Աթանասիանոս հիմնում էր իւր ազանն այն կանոնի վերայ, թէ ազաշաւոր ուրացողներին պէտք չէ երբէք ընդունել: Բացի այս պարզ կանոնական ընդհանրի մասն եղած վճռաբանութիւնից, հակառակութեան առաջին էին ներկայացնում զաւակի ծնանելութեան ժամանակը, Քրիստոսի բնութիւնը, հաղար ամն երկրի վերայ և երկրորդ մկրտութիւն: Աստիճի մէջ միանձնապետական Աթոռոս արդէն կանխատեսանել առաց ապագայ անցքերն, արդէն երևեցան եպիսկոպոսարքերն (1), արդէն դոյութիւն առաւ Սարէլեանց հերետիկոսութիւնը:

Ընդհ. — Նորա վարդապետութիւն.

Նոյց փոթորիկը բարձրացաւ Կ.Պոլսում: Այս քաղաքում կար մի քահանայ Արիոս անունով, որ կոնստանդիոս կարդուելու. բայց այլ ամն Կ.Պոլսոյ արդիք եղաւ նորան: Արիոս ևս յոյս էին դրած բազմաթիւ հետևողների վերայ: Արիոս անյաջողութեան հանդիպելով մեզապրից իւր բարեկարգ հակառակորդին սարբելեան հերետիկոսութեան մէջ, բայց ինքն ենթարկուեց անաթեմատի: Հ.Պոլսոյ չէ, որ Կ.Պոլսոյ մէջ լինելը շուտով փիլիսոփայական կերպարանք առաւ: Գլխաւոր դժուարութիւնն, որ ուղղոյ՝ս. Երրորդութեան մէջ ունեցած յարաբերութիւնն որոշելն եղաւ: Արիոս սկզբում էր թէ՝ կար ժամանակ, երբ չկար Որդին ըստ բուն յատկութեան որդիական նշանակութեան. և եթե ժամանակ՝ երբոր երևեցաւ Նա: Նոյց ակնարկ՝ այսպիսի քարոզութիւն կարող էր արտայայտել ս. Երրորդութեան երեք անձանց ստորադրելութիւն կամ անհաւասարութիւն: Կ.Պոլսոյ եպիսկոպոսն և նորա կողմնակիցներն ընդդէմ գալս ևկան փրկչի այսպիսի աստուածանարգ նուաստացման: Ժողովն երկերը յուզուեց շարժուեց: Նդիպատասխ քրիստոնէից մէջ չկար մի մարդ, չկար մի կին, որ չաշխատեր լուծել Աստուծոյ միութեան էութեան վերայ եղած խնդիրը: Յուզմունքը մինչև այն աստիճանն հասաւ, որ կայսերական միջամտութիւնն անհրաժեշտ դարձաւ: Բրիտիր զևարդ և իջեւ շինուցանելու համար Կոստանդիանոս ուղարկեց Կ.Պոլսոյ Սոզոմենի Ասիոս եպիսկոպոսն, բայց անմնելով որ միանգամայն անօգուտ է այս միջոցը, հարկ համարեց վերջապէս դիմել նշանաւոր միջոցին և գումարել աստեղ Նիկիոյ ժողովը 325 թ: Սկզբում ինքը ջանաց միջնորդի դեր խաղալ, բայց շուտով իւր Կոստանդնուպոլսեցի խորհրդականների ազդեցութեամբ յայտնեց իրան ընդդէմ Արիոսի:

Կոստանդիանոս աշխատում է վերջ տալ վէճաբանութեան

եւ գումարուած է Նիկիական ժողովը.

Արիոս վազ սրդէն կարողացաւ նախատանքել ինչ որ պիտի լինէր Նիկիայում: Ժողովը պիտի հաւատի այնպիսի հանգամանք կազմէր, որի ստորագրելուց արիոսականք հարկադրուած լինէին հրաժարուել, և այսպիսով իրանց կորուստ պատճառէին: Այսորը քաղաքական իշխանութեամբ վաւերացրից ժողովի վճռոը, տարածեց հրովարտակներ, որոնք մերժում էին Արիոսին եկեղեցուց, և սկզբը գրեց այն տարեկան պատուհասական միջոցներն, որոնք գժբաղդաբար այնքան յաճախ կրկնուեցան յետագայ դարերում: Նա հրամայեց, թէ ամենայն ոք, որ կգտնի Արիոսի գիրքն և չի այրի այն, մահուան պատժին:

Ընդհ. ձերժամանակ է եկեղեցուց երթի հերձ ուիկոս.

(1) Патриассіанъ:

Ա. Փափազյան

Ա. Փափազյան

Ա. Փափազյան

կամ գանուում էր կայսրների առաւել մծծաւոր հսկողութեան ներքոյ, բայց սակաւ առ սակաւ տեղի առնէր նա այն ազդեցութիւններին, որոց ներքոյ գանուում էր։ Երեվելքն այնքան խոր տակն ու վրայ անող լինդիրներն, օրինակ՝ Ասուծոյ բնութեան, Երրորդութեան և չարի պատճառի վերայ եղածները, արևմտեան Եւրոպայի վերայ փոքր ազատութիւններ էին գործում. քան որում ժողովրդական մտքի պաշարը համապատասխան էր սոյնօրինակ գործունէութեան։ Սոսանձնուպօլսոյ հիւանդութիւնը հետացնելով քաղաքական ճնշողութիւնը, ազդային առանձնականութիւններին միջոց տուեց արտայայտուելու. և լսասիրական քրիստոնէութիւնը հանդիստացաւ յունականին։ Բայց այստ ամենայնիւ, չէ կարելի ասել, որ արևմտեան Եւրոպան իւր քրիստոնէութեան ձևերը փոխ առաւ Հռոմից։ Նա այդ մասին պարտական է Ավրիկէին։ Մեք վեռ ևս ապրում ենք ափրիկեան ազդեցութեանց ներքոյ։

Ափրիկեան ազդեցութեան։

Նա սկսաւ պատմել համառօտապէս այդ հետաքրքիր իրողութեան զարգացումը,— թէ ինչպէս ափրիկեան հայեացքները հաստատուեցան Հռոմում, և երբ յունական քրիստոնէութիւնը սպառեց իւր տարածման ոյժն և կորցնոց յառաջացող շարժումն, ինչպէս ափրիկեան քրիստոնէութիւնը բռնեց նորա տեղը, տարածուելով հիւսիս և արևմուտք, օրինակելով իւր կազմուածը հռոմէական կայսրութեան կազմուածից, ստանալով իւր հոգևոր սրբատորները, իւր փոխ-հիւպատոսներն և իւր կեսարը, զարգացնելով իւր սեպհական իրաւագիտութիւնը, հիմնելով իւր սեպհական օրինադրութիւնը, հիմնելով իւր դատարանը, փոխանակելով իւր՝ մինչև այն ժամանակը գործ դրած յունարէն լեզուն լատիներէնին, որ շուտով գառնալով թագաւորական լեզու, տուեց նորան առանձին օգուտներ։

Հռոմէական եկեղեցին։

այնչափ լսարն հետաքրքրական յիշատակութիւններ են ժողովուած, զրեթէ նոյնչափ յիշատակութիւններ ևս կապուած են Երևմուտքի ,,յաւիտենական քաղաքի,,—Հռոմի հետ։

Ներա իսկ կան յատկութի նը խառնուրդ է ք խառնէտ— Թեան հետ անո. ական տարրերի հետ.

Երևելեան Ռիւզանդեան դրութիւնն, որ ծագումն առաւ իշխանութիւն և տէրութիւն ձեռք բերելու համար պատերազմող պատուանդիր ղենուարի քաղաքականութիւնից, ևս և ոչ մէկ մրցման համբերող կղերականների մտադրութիւններից—այդ դրութիւնը տարածուեց Համօրէն արևելքում և հռոմէական կայսրութեան հարաւային մասում, և վերջում իր դէպի մարդկային գիտութիւնն ունեցած բոլոր թշնամութեան և իր հակազդեցութիւնների ու սովորութիւնների հետ միասին ընդունելութիւն գտաւ մինչև անգամ Իտալիայում. ընդունելութիւն ոչ Հռոմայեցիներից, որոց գոյութիւնն արդէն բարձուած էր, այլ Գոթացիներից և ցեղակորոյս նախնի բնակիչներից բաղադրուած այն խառնուրդից, որ բռնած ունէր Իտալիա։ Մեծն Գրիգոր այդ ցեղափոխուած ժողովրդի դաղափարների մարմնաւորութիւնն է։ Այս վատթար դրութիւնն, որ այնչափ խնամքով անուցուած էր արևելքում, խորտակուեց իր ծննդեան տեղում Վանդալների, Գարպից և Երաթացոց սրով. բայց նորա Հռոմում տնկուած շառաւիղն ամենից ինքնագոյաբար անակնունելի փարթամութիւնով և շատ գարեր պարզեց իր մեծին տուներն Եւրոպայի վերայ։ Ով որ գիտէ, թէ առաքելական ժամանակներն ինչ էր հաւատան, անսահման զարմանքով է մտիկ տալու, թէ ինչ էր գարձած նոյն հաւատան այժմ, և ինչեր էին անում նորա անուամբ։

Ափրիկէ կո— րուան ինչ ազ գեցութիւն ու նեցաւ անց ք. ի վերայ Իտա- լիայում.

Վանդալների թագաւորը Գենսերիկոս Ափրիկէից Հռոմէական սենատի ապրեցութեան ներքոյ երկրին Կարթագինէի վերայ գործ դրած անզթութիւնների վրէժն այժմ առնուեց. Վանդալները տասն և չորս օր կողոպտեցին քաղաքն, անդուր չարիքներ գործելով։ Նոցա նաւերը մտան Տիբերիսի մէջ, որով կարելութիւն ունեցան նորա լցուցանելու իրանց նպատակն—աւարառութիւն, առաւել լաւագոյն, քան որչափ կարելին էր ցամաքուղի արշաւանքով։ Հռոմի գանձերը բազմաթիւ նշանաւոր գերիների հետ միասին տարուեցան Կարթագինէ։ Սրանից քսան մէկ տարի յետը, 479. թ. Երևմտեան կայսրութիւնը կարճեց իր գոյութիւնն։

Այս կերպով ապրիկեցի Երիսականների գաւազրութիւնն ոչ միայն Վանդալներին Ափրիկէ բերեց, որ Իտալիոյ համար բոլոր աշխարհներից ամենանշանաւորն էր, այլ և այդ գաւաճանութիւնը գործիք հասոյրեց Հռոմի աւերման համար։

Գայց հաղիւ Յուստինոս կայսրը վերստին յետ էր գարձել Ափրիկէն, կամեցաւ նուաճել Գոթացիներին, որոնք տիրում էին այժմ Իտալիային։ Ներա գօրավար Բելիսարիոս առաւ Հռոմը 10 դեկտ. 536 թ.։ Վ՝իտիգէսի միջոցին յաւուշ եկած պատերազմական գործողութիւնների պատճառով Իտալիան ամբայաւ. սուրը, սովն և ժանտախտը ջնջեցին բնակիչներին։ Բոլոր մասերում կործանուեցան հնութեան փառաւոր մնայորդները։ Բելիսարիոսի Հռոմէացիների մօտ Վ՝իտիգէսն յաղթելը վախճան առան պատերազմական գործողութիւնները։ Գայց հաղիւ թէ գադարել էր պատերազմական ձնչողութիւնը, բորբոքուեց ազատասիրութիւն։ Գոթացիք վերստին առին Հռոմը, կործանեցին նորա պարիսպները, բնակիչները թողին քաղաքը քառասուն օր. և այս վտարանդութիւնն ազատուցանում է նորա աւերումն։ Բելիսարիոս միւսանգամ ուղարկուելով կայսրից, կրկին առաւ քաղաքը, բայց նորան ձեռքում պահելու համար շատ Թոյլ դտնուեց։ Ձորս տարուայ ընթացքում փոռանկներն և Գոթացիք ամայացրին Իտալիան։ Վ՝երջապէս Յուստինիանոս ուղարկից քաջամարտ զօրքով ներքոյնի Ներսէսին։ Օստրոգոթական թագաւորութիւնը կործանուեց և կայսրը կառավարում էր Իտալիան Հռաւենայի մէջ կարգած իր կուսակալների ձեռքով։

Հռոմի անկումն ևս պատմ.

Գայց ի՞նչ արժէց այս ամենը։ Մեք կարող ենք մերժել վերևում բերած Թիւը, Թէ Իտալիան կորցրեց տասն և հինգ միլիոն բնակիչ,—քանի որում այդպիսի ճիշդ հաշիւներ անկարելի էին նոյն ժամանակին.—բայց այդ Թուանշանից կարող ենք եզրակացնել, որ Իտալիան պիտի սարսափելի աղետի ենթարկուած լինի։ Ուրիշ ուղղութիւնների մէջ քաղաքակրթութեան ճնացորդները շուտով անհետացան։ Գոնտոյի հովիտը կրկին ընկաւ բարբարոս վիճակի մէջ. ափրիկեան փարերն այլ ևս պատղ չեն տալիս.

Հռոմի դադրելը հանդիսա- նալուց մինչև գագա- րելը ք. ի ծնելը գործո— ղութիւ ը.

ափրիկէն յաղթելով Վանդալներին, անդուր չարիքներ գործելով։ Նոցա նաւերը մտան Տիբերիսի մէջ, որով կարելութիւն ունեցան նորա լցուցանելու իրանց նպատակն—աւարառութիւն, առաւել լաւագոյն, քան որչափ կարելին էր ցամաքուղի արշաւանքով։ Հռոմի գանձերը բազմաթիւ նշանաւոր գերիների հետ միասին տարուեցան Կարթագինէ։ Սրանից քսան մէկ տարի յետը, 479. թ. Երևմտեան կայսրութիւնը կարճեց իր գոյութիւնն։

Այս կերպով ապրիկեցի Երիսականների գաւազրութիւնն ոչ միայն Վանդալներին Ափրիկէ բերեց, որ Իտալիոյ համար բոլոր աշխարհներից ամենանշանաւորն էր, այլ և այդ գաւաճանութիւնը գործիք հասոյրեց Հռոմի աւերման համար։

Գայց հաղիւ Յուստինոս կայսրը վերստին յետ էր գարձել Ափրիկէն, կամեցաւ նուաճել Գոթացիներին, որոնք տիրում էին այժմ Իտալիային։ Ներա գօրավար Բելիսարիոս առաւ Հռոմը 10 դեկտ. 536 թ.։ Վ՝իտիգէսի միջոցին յաւուշ եկած պատերազմական գործողութիւնների պատճառով Իտալիան ամբայաւ. սուրը, սովն և ժանտախտը ջնջեցին բնակիչներին։ Բոլոր մասերում կործանուեցան հնութեան փառաւոր մնայորդները։ Բելիսարիոսի Հռոմէացիների մօտ Վ՝իտիգէսն յաղթելը վախճան առան պատերազմական գործողութիւնները։ Գայց հաղիւ թէ գադարել էր պատերազմական ձնչողութիւնը, բորբոքուեց ազատասիրութիւն։ Գոթացիք վերստին առին Հռոմը, կործանեցին նորա պարիսպները, բնակիչները թողին քաղաքը քառասուն օր. և այս վտարանդութիւնն ազատուցանում է նորա աւերումն։ Բելիսարիոս միւսանգամ ուղարկուելով կայսրից, կրկին առաւ քաղաքը, բայց նորան ձեռքում պահելու համար շատ Թոյլ դտնուեց։ Ձորս տարուայ ընթացքում փոռանկներն և Գոթացիք ամայացրին Իտալիան։ Վ՝երջապէս Յուստինիանոս ուղարկից քաջամարտ զօրքով ներքոյնի Ներսէսին։ Օստրոգոթական թագաւորութիւնը կործանուեց և կայսրը կառավարում էր Իտալիան Հռաւենայի մէջ կարգած իր կուսակալների ձեռքով։

Գայց ի՞նչ արժէց այս ամենը։ Մեք կարող ենք մերժել վերևում բերած Թիւը, Թէ Իտալիան կորցրեց տասն և հինգ միլիոն բնակիչ,—քանի որում այդպիսի ճիշդ հաշիւներ անկարելի էին նոյն ժամանակին.—բայց այդ Թուանշանից կարող ենք եզրակացնել, որ Իտալիան պիտի սարսափելի աղետի ենթարկուած լինի։ Ուրիշ ուղղութիւնների մէջ քաղաքակրթութեան ճնացորդները շուտով անհետացան։ Գոնտոյի հովիտը կրկին ընկաւ բարբարոս վիճակի մէջ. ափրիկեան փարերն այլ ևս պատղ չեն տալիս. ամբը դարձաւ անպատ. Իտալիան սարսափելի կերպով ամայացաւ. բնիկ Իտալացոց պատերազմով ջնջուելու և արկածախնդիր բարբա-

թոնների նոցա աեղը փոխանակելու անհրաժեշտ հետեւանքն այն եղաւ, որ Իտալիոյ սակաւաւոր բնակիչներն ընկան հոգեկան բիւրատ պլուխեան մէջ, և պատրաստ դանուեցան կրօնի այն նիւթականաբար հսկայողութեան համար, որ շուտով նորանից յետոյ երեւան եկաւ: Այժմ ժամանող հաւատի գարուս վերայ կնքուեց անջնջելի դրոշմ: Արեւելքն և Արեւմուտքը միակերպ ունեցան այն անկումն, որը բերեց իւր հետ կղերական կառավարութիւն: Նոյն այն տեղ և այս տեղ ընկան նուիրական քաղաքներ. Ներուսաղէմն ընկաւ Պարսից և Երաբացոց ձեռքը, Հռոմն աւերուեց Վանդալների և Գոթացիների ձեռքով:

Բայց իրերի ընթացքի վերայ առաւել լաւ ևս խօսելու համար պիտի փոքր մի յետ վերադառնամ: Հռոմի եպիսկոպոսներն, երեւում էր, սակաւ էին մասնակից լինում այն քաղաքական աւելի նշանաւոր անցքերին, որոնք պատահեցան Մեծին Լևոնի մահուան և Իտալիոյ Թագաւորութեան՝ բարբարոս Ոդոագրի ձեռքով 476,—490 թ. կազմուելու միջոցին: Ընդհակառակն՝ նոքա մեկ կողմից հասկանում էին այլ անցքերի անտեսական յատկութիւնն, իսկ միւս կողմից պարզ տեսնում էին իրանց առաջին ճանապարհ դէպի հոգեւոր հաստատուն իշխանութիւնն: Երդէն վաղուց քրիստոնեայք աւելի ուրիշ ցոյց էին տալի կատարեալ անհոգութիւն հին Հռոմի ճակատագրի մասին. և պապերը նորա աւերակների մէջ անդադար աքնում էին իրանց իշխանութեան համար խորագոյն հիմք ձգել: Թէև նոքա յատկապէս սակաւ ուշադրութիւն էին դարձնում, թէ ով էր Իտալիոյ ժամանակաւոր իշխողը, բայց իրանց յարաբերութեանց մէջ դէպի իրանց մեծ ախոյեանները,—Կոստանդնուպօլսոյ և Ալեքսանդրիոյ եպիսկոպոսները—նոքա նրբատես և վճռական էին: Այժմ բացայայտ էր եղել, որ քրիստոնէութիւնը պիտի ունենայ մի դլուխ, և այդ դլխաւորութիւնը մի անդամ որոշաբար ահմանել կուղէր. այնուհետև նա խոստանում էր մօտ ժամանակի դերիշխանութիւն աշխարհական ժամանակաւոր իշխանութեան վերայ: Արդկ յին փառասիրութեան նպատակներից և ձգտումներից բոլորից աւելի այս դլխաւորութիւնը պէտք էր ընդդիմադրել այն ժամանակին:

Հռոմի հաստատապէս օգուտ քաղելով դիրքի ներկայացրած ամենայն շահաւէտութիւններից, Հռոմն անդադրաբար պահանջում էր, որ իւր վճիռները կատարուին նոյն իսկ Կոստանդնուպօլսում: Այսպէս եղաւ մանաւանդ այդ քաղաքի Ակակիոս եպիսկոպոսի դործի մէջ: Ակակիոս սկզբում ստացաւ Հռոմի Փելիքս եպիսկոպոսից յանդիմանութիւն իւր արարմունքների համար, իսկ յետոյ մերժուեց եկեղեցուց: Սորա համար կար սակայն մի դժուարութիւն,—ինչպէս պէտքէր կատարել այս մերժման վճիռը. բայց մի համարձակ կրօնաւոր փակցրեց այն Ակակիոսի հանդիսարանին, երբ վերջինս մանում էր եկեղեցին: Ակա-

Հռոմի հաստատուած ձգտումը դէպի դլխաւորութիւնն.

կիոս չվերադարձաւ. շարունակեց իւր ժամերգութիւնն, և կորովահոգի մատաճուի յետոյ հրամայեց Հռոմի Փելիքս եպիսկոպոսի անունը ջնջել Երեւելի հետ հաղորդակցութեան մէջ դանուող եպիսկոպոսների ցանկից: Այս կերպով Կոստանդնուպօլիս և Հռոմ փոխադարձաբար մէկ ումէկ մերժելին եկեղեցու հաղորդակցութիւնից: Պետրոս պապն այս բանից համար գրաս էր կայսերն. ,,Երկու իշխանութիւններ կան, որոնք կառավարում են աշխարհը—կայսերականն և քահանայապետականը. դուք իշխան էք մարդկային ազդի, բայց խոնարհեցնում էք ձեր կամքն աստուածային գործերը կառավարողների առաջին: Երկու իշխանութիւններից բարձրագոյնը քահանայապետութիւնն է. նա պիտի վերջին օրը համար ասյ թագաւորների գործերի համար,,: Սա մի անհնչան հոգևորականի խօսք չէ, այլ իւր զբութիւնը խոստովանող մի քահանայապետի:

Գոթական տիրապետութիւնը պապին տալիս է այ խոսական թագաւոր.

Օստ-գոթ Թէոդորիկոսի Իտալիային տիրապետելը 493 թուակ. Հռոմէական եպիսկոպոսներն արիոսական թագաւոր տուեց և ներկայացրեց աշխարհին անկանոնութիւն.—մի հերետիկոսի, որ նշանակում է Արիանոսին փոխանորդ երկրի վերայ: Ընդոթիւնը հակառակութեան նիւթ դարձաւ երկու ասոնների մէջ, որոց երկու կուսակցութիւններն աչքի ընկան օրինակներով քաղաքը լցրին սպանութիւններով: Գոթացի թագաւորը հրամայեց, որ նոցանից նա ընդունուած լինի, որ ունի դէպ ինքը ձայների առաւելութիւն, և որ վաղադոյն ստացել է ձեռնադրութիւն. և այս կերպով պապ Սիմմաքոս Սիմմաքոսին յաջորդող Լորիդը վերստին փորձ փորձեց ստիպելու Ընատասս արևելեան կայսրին, որ ընդունի Ակակիոսի և նորա կուսակցութեան մերժումն և հարկադրելու ամբողջ հոգևորականութիւնն, որ այդ մասին տայ իւր համաձայնութիւնը. բայց ի զուր: Վերջապես Յուստինոսի կայսերական գահն ամրանալու միջոցը Հռոմը հասաւ իւր նպատակին. նորա բոլոր պայմաններն ընդունուեցան. հերձուածը վախճան առաւ Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսի նուաստացումով, որ, ինչպէս ասում էին, այն պատճառով էր, որ կայսրն աշղդավառ էր. բայց շատ շուտով սկսան յայտնուել անտարակուսելի ցուցմունքներ, թէ այդ կրօնական յաղթութեան համար տուած է եղել հաւասար նշանակութիւն ունեցող աշխարհական վարձատրութիւն: Հռոմում յայտնուեց դաւադրութիւն Գոթացի Թէոդորիկոս թագաւորի դէմ և լուր էր տարածուել, թէ Կոստանդնուպօլսոյ պետքը պիտի աղատի Իտալիան արիոսեանների հերետիկոսական լուծից:

Կայսրն և պապն ընդդէմ նոքան կազմում են դաշնակցութիւն.

Կարծիք չկայ, որ Թէոդորիկոս հասկացաւ դաւաճանութիւնն, որ նորա անաչառ արդարութեան վատթար վարձատրութիւնն էր, և յանկարծ զինաթափ արեց Հռոմի բնակիչները: Նա, որ յառաջ մի հզաղհմրոյր թագաւոր էր, այժմ ցոյց տուեց սոսկալի վրէժխնդրու-

Գոթացի թագաւորը խնամում է այդ բանը.

թիւն: Այդ անցքերի մէջ Ռոյհոլոս փիլիսոփան և սինաթի անդամ Սիմոնաքոս զոհ գնացին նորա բարկութեանն. ինքն իսկ Յովհաննէս պապը ձգուեց բանդ և այնտեղ ողորմագին կերպով մեռաւ: Այս առնաւանի բարբարոս թագաւորն իւր՝ Յուստինոսի հետ ունեցած բանակցութիւնների մէջ արտայայտում է իւր ժամանակի հասկացողութիւններից շատ զերազանցող հասկացողութիւններ, որոնք էին ընդհանրապէս մինչև այն ժամանակը նորա գործերին առաջնորդողները: ,,Խղճի վերայ իշխելու ձգտումն ունենալ նշանակում է իւր անձին սեպհականեցնել աստուածային ծայրագոյն իրաւունքը: Իրերի բնութեան հաւեմատ թագաւորների իշխանութիւնը սահմանափակուում է քաղաքական վարչութիւնով: Նոքա ունին իրաւունք պատժելու, այլ միայն այնպիսիներին, որոնք խանգարում են հասարակաց անդորրութիւնը: Ամենավատնգաւոր հերձուածն այն է, երբ թագաւորը բաժանում է իրանից իւր հպատակների մի մասը նորա համար, որ նորա մտածում են ոչ այնպէս, ինչպէս ինքը,,:

Ընդհանուր մի քանի տարիներ Թէոդորիկոսի մահուանից եղաք,—մէկ ուղղափառ անապատական աեսաւ, թէ ինչպէս դէպերը տարան նորա հոդին հրաբուղխ Լիբարի բերանը, որ համարուում էր գժոխքի մուտքը—և Յուստինոսի Իտալիոյ վերայ յարձակումը ցոյց տուեց, թէ Թէոդորիկոսի կասկածները օրչափ հիմնաւոր էին: Սակայն Հռոմը չսասցաւ այն օգուտներին, որոնց սպասում էր. Կոստանդնուպօլսոյ կեանքն չափազանց ազդեցութիւնը բերուեց Իտալիա: Սիմպլիս պապն, որ Որմիզդ պապի որդին էր, դրկուեց աթոռից կայսեր Թէոդորիա կնոջ ձեռքով: Այս կինն, որ երբեմն մի հասարակ պոռնիկ էր, վաճառեց պապութիւնը Ա. Լիլիոսին երկու հարիւր Ֆունտ ոսկու: Պայմանաւորութիւնը վիճակակից Ընտանիներ, Ռեվեսարիոսի թեթեւամիտ կինը հրամայեց հանել Սիլվերիոսի զգեստն և հագցնել նորան անաւատականի հանդերձ: Նա յետոյ տարագրուեց եղ աքսորանքի հին տեղը—Պանդատարիա կղզին և այնտեղ մեռաւ: Ա. Լիլիոս պապն ընդունեց Նեսթորեան աղանդն, և ինչպէս ասում են, մեռցրեց իւր աստենապետերից մէկին և հրամայեց սպանել իւր քուրը որդուն: Նորան վիճակուեց տեսնել, թէ ինչ է նշանակում եպիսկոպոսի համար լինել կայսեր ձեռքում: Նորան վիճակուեց փորձել այն բաժակն, որ այնքան յաճախ տալում էր Կոստանդնուպօլսոյ պատրիարքներին.—և նա կարողացաւ հասկանալ, թէ իշխանը միչև որ աստիճան գնահատում էր Հռոմի երկրաւոր փոխանորդին: Հարկադրուած լինելով գնալու արևելեան մայրաքաղաքը Յուստինոսի աստուածաբանական հայեցքներն ընդունելու համար, նա երեք անգամ ընդունեց և երեք անգամ մերժեց նորանից: Նա մերժեց եկեղեցուց Կոստանդնուպօլսոյ պատրիարքին, և վերջինն էլ իրան մերժեց: Նորան, դէմ առ դէմ

Նոցա դաւադրութիւնը հաստատում է:

Պապի սուրգ և ելութիւնը կայսրից:

հակաաակութիւնների միջոցին կայսերական աստիճանաւորների հետ, որքերից բռնած քաշելին եկեղեցուց դուրս ամենակատաղի կերպով, բանդ դրին, և պահում էին այնտեղ սոսկ հաց ու ջրով: Նա հալածական մեռաւ Սիկիլիայում: Իտալիային տիրապետելու անմիջական ազդեցութիւնն այն եղաւ, որ պապերն ընկան այն հպատակ և անարգ դրութեան մէջ, որի մէջ էր Կոստանդնուպօլսոյ պատրիարքն: Այս եղան նոցա՝ գոթացի թագաւորի դէմ լարած դաւաճանութեան պատիժները: Յուստինոսի յարձակումն իւր յաջողութիւնները պարտական էր հոգևորականութեանն. իսկ վերջինս առաւ իւր վարձն այն կործանման մէջ, որ ինքը պատճառեց իւր աշխարհին, և այն անագորոյն բռնութեան, որն իրանք իրանց պատրաստեցին:

Մոծակ խառնուրդը հեթանոսական յիշատակները թէ նորերի հետ.

Այս աւերման և խառնութեան միջոցին Իտալիայում սկսան հետզհետէ երևան գալ հաւատի դարու յատկական նշանները: Արծնի հեթանոսական յիշատակութիւնների հետ խառնուէին, որին Աբևելքը լիանալի էր տանում քաղաքագիտական նպատակով, Աւետարանի մէջ պարձաւ անհրաժեշտութեան գործ: Այնպիսի մարդու համար, ինչպիսի էր Մեծն Գրիգոր, որ ծնել էր այնպիսի վիճակի մէջ, որ նորան հնարաւորութիւն էր տալ իրերը դատելու շատ ընդարձակ տեսութեամբ—այնպիսի մարդու համար բացայայտ էր, որ հասարակական սուրբն ամբողի հոգեկան դրութիւնը պահանջում է այնպիսի պնդումներ, որոնք համաձայն լինէին նորա հասկացողութիւնների հետ: Աշխատասէր մարդու հաւատը պիտի յարմարուէր ամբողի սնապաշտութեան հետ: Եւ այդ արդարև այդպէս էլ եղաւ: Այդ անցքերը պարզ հասկանալու համար պիտի խօսեմ ևս առաջին՝ Մեծն Գրիգոր պապի գործերի վերայ, որոնք կազմակերպեցին այդ դարու հասկացողութիւնները. և զգեցան ժամանակի պահանջներին համապատասխան հանդերձ. երկրորդ՝ այն յարաբերութիւնների, որոնք շուտով ունեցաւ պապութիւնը դէպի Գաղղիայի թագաւորները. յարաբերութիւնների՝ որոնք հաստատեցին Գրիգորի գործառնութիւնը, պաշտպանեցին նորան և տարածեցին ամբողջ Եւրոպայում: Այս բաները բաւական հետաքրքրականութիւն են ստանում այն հանգամանքից, որ այս եղանակով ստեղծուած ազդեցութիւնները իրանց սկզբնապատճառից երկար ապրեցին, և աւելի քանդ հազար տարի անցնելուց յետոյ, թէև միանգամայն երեսից ընկած և փտած, բայց զարձեալ մնում են տակաւին ազդերի յառաջադիմութեան համար վէմ գայթակղութեան:

Մեծն Գրիգոր.

Մեծն Գրիգոր Փիլիքս պապի թոռն էր. նորա պատրիկական ծագումն և նշանաւոր ձիրքերը վաղ դարձրին դէպի նա Յուստինոս կայսեր ուշադրութիւնն, որ կարգեց նորան Հռոմի քաղաքապետ: Նորելով իւր անձն եկեղեցականութեան և թողնելով աշխարհական

կեանքի փառքը, երբ գեռ սարկաւագ էր նուիրակ ուղարկուեց Կոստանդնուպոլիս: Գերբնական ձարտարութիւնով և աշխըժութիւնով կատարելով իւր վերայ դրած յանձնարարութիւնները, վերադարձին շարունակեց իւր կրօնական կեանքն, և նորա համբաւն օր ըստ օրէ բարձրացաւ: Երբ 590 թ. Գրիգորը, սենաթն և Հռոմի ժողովուրդն ընտրեց նորան պապ, Գրիգորը յաջողակ կեղծաւորութիւնով ընդդիմացաւ այդ ընտրութեան, ազաչեց կայսրին ազատ թողնել իրան, և ստանալով բացասութիւն, մի կողմից մեծ գաղտնի փախաւ քաղաքից: Պատմում են, թէ ապաստանարանն, ուր ծածկուել էր նա, յայտնուեց երկնային լուսով, որ շողշողում էր այդ տեղն վերայ և ցոյց էր տալիս հաւատացեալներին նոցա հրաժարող պապին: Եւ այս՝ ժանտախտի և սովի ժամանակին էր: Բայց այդ խստապահ կրօնաւորը ծայրագոյն քահանայապետ եղաւ թէ ոչ, մեկ վայրկենում ընդունեց այն բնաւորութիւնն, որ արտայայտել էր Կոստանդնուպոլսում. և ցոյց տուեց պետական մեծ մարդու յատկութիւններ: Նա հաստատեց հռոմէական եկեղեցու պատարագը, ծէսերը, թափօրական կարգն և հոգևորական հանդերձի տարազը, և ինքը մատուցանում էր պատարագներ. նա հնարեց շքեղահանդէս և փառաւոր ծիսակատարութիւններ, յօրինեց իւր անունով յայտնի երգը, հիմնեց երաժշտական վարժարան, և կանոնաւորապէս ու արդարութեամբ կառավարում էր եկեղեցու արգիւնքներն, և անձամբ օրինակներ տալիս ողորմածութեան և մարդասիրութեան, ըստ որում այդ ժամանակում այնպիսի աղքատութիւն էր, որ մինչև անգամ հռոմէական տիկիններն էլ կարօտում էին վայելելու եկեղեցու օժանդակութիւնները: Նա թոյլ տուեց գործ դնել եկեղեցական սեպհականութիւնը գերեթափ փրկութեան համար ինչպէս հոգևորականներին, նոյնպէս և աշխարհականներին: Իշխանապետութեան ոչ մի նշան տեղեակ հոգևորականութեան և թոյլ թողած ժողովուրդը շուտով փոխեն տալին տեսութեան տանձը պահպանող բակին: Գրիգոր ուշադրութիւնով հոգում էր տեղին հոգևորականութեան մասին, պահպանում էր նորա իրաւունքն, և խափ պատժում էր նորանց, որոնք խանգարում էին իրանց պարտաւորութիւնները: Նա հարկադրեց խուսափացի եպիսկոպոսներին ձանաչել իրան իրանց մետրապոլիտ. տարածեց իւր աղդեցութիւնը Յունաստանի վերայ, արգելեց սիմոնականութիւնն, այս ինքն հոգևոր կոչումների վաճառը Գաղղիայում, ընդունեց եկեղեցու ծոցը Սպանիան, որ այժմ հրաժարուեց արիոսականութիւնից, ուղղակից քարոզչներ Բրիտանիա և այդ երկրի հեթանոսներին դարձրեց քրիստոնէութեան, արմատախիլ արեց կռապաշտութիւնը Սարդինիայի միջից, ներհակեց Կոստանդնուպոլսոյ Յովհաննէս պատրիարքին, որ կամենում էր բացարձակապէս իրան սեպհականացնել գերիշ-

խանութիւնը, կայսեր յայտնեց հոգևորականութեան հպատակութիւնից, փառասիրութիւնից և ագահականութիւնից ծագող վնասն, ընդ պիմացաւ նորան՝ զննութեականներին կրօնաւորութիւն ընդունելուն արդիլը դնող օրինքի վերայ: Այսպիսի մարդու բնութեան մէջ չկար իրանից բաց մերժել քաղաքական գործերը. սա կարդեց արիբոնները, և կառավարում էր դիւանական գործերը:

Ոչ ոք կարող է իրանից հեռացնել այն գրութիւնն (սխեմա), որ տուել է նորան իշխանութիւն. ոչ ոք կարող է ազատուիլ այն ժամանակի գոյնից, որին ինքը ներկայացուցիչ է հանդիսանում: Թէև Գրիգոր շատ մասերով բաւական գերազանցում էր իւր ժամանակից, բայց նա անկեղծ չէր, և միևնոյն ժամանակը խորին անապաշտ էր: Նա բիւզանդացիներից առաւել առում էր մարդկային գիտութիւնը: Նա շատ անգամ յայտնում էր իւր հաւատացած լինելը, թէ մերձ է արդէն աշխարհի վախճանը, բայց նորա գործերը այս հաւատին միշտ ներհակ էին գնում, հաստատութեամբ ուղղուած լինելով դէպի ազգային պատական կայսրութեան հիմնադրութիւն: Նորա միջոցին գտաւ իւր նուիրականութիւնն այն արևմտեան դիւցազնական քրիստոնէութիւնն, որին նախանշանակուած էր այնքան յետագայ դարերում լինել Եւրոպայի կրօն, և որ զարդացրեց Տ՛րամոր երկրպագութիւնն, որ և շատով նկարներով և պատկերներով զարդարեց հայկապ եկեղեցիները, որոնք շինուեցան ի պատիւ փառաւորութեան նորա: Գրիգորի ժամանակին հաստատութիւն գտաւ այն չափազանց հակամիտութիւնը դէպի անհաւատալի հրաշքներն, որ յետոյ ղղուացաւ հասաւ ընդարձակ սահմանների,—դէպի հրեշտակաների և չար ոգիների անդադար միջամտութիւնն երկրաւոր գործերի, դէպի սքանչելահրաշ աւանդութիւններն, որոնք իրանց վիպական կեղծիքներով գերազանցում են յունական դիւցազնութեան պատմածներից, դէպի երկնքի անզգուշականութիւնն (1), որ հեռի է իբր թէ երկրից մի քանի մղոն. և դժոխքի՝ որ գտնուում է իբր թէ երկրի ներքին մասում, և նորա մուտքը հրաբուղխ Լիպարի բերանն է: Ինքը Գրիգոր անկեղծօրէն հաւատում էր այս ամէն գերբնական անհաւատալիքներին, և նա ինքն էր, որ այս սանձարձակ երևակայութիւնները դարձրեց Եւրոպայի իրական, սովրական, գործնական կրօն: Ժամանակ լինելով կղերական աստիճանը դէպի մարդկային գիտութիւնն, և հիմնուելով այն կանոնի վերայ, թէ ,, ոգին տութիւնը բարեպաշտութեան մէ կրն է,,, հալածից Ժամից բոլոր մանիմանիքական ուսմունքներն և այլոց Օգոստոս Կեսարի հիմնած Պալատինեան գրատունն, որ անուանի էր իւր ունեցած բազմաթիւ հազուագիւտ ձեռագրներով: Նա արգելից պարապել բնական գիտութիւնով, խեղից արձանները, կործանեց մեհենագրների վաստակներով, խեղից արձանները, կործանեց մե-

(1) Локализація:

ներա տա— պաշտութիւնը.

դրանին տալիսէ նիւթական բնա րութիւն.

ներա աս— լութիւնը դէպի գիտութիւնս:

եւ հալածանքն ընդդէմ բնական սահմանագրների

հեանները. նա աոում էր դասական հանճարի իսկական մնացորդները և վսէմ ինդրութեան մղեռանդութիւնով հալածում էր Տիտոս—Լիվիոսի գրքերն, որի ընդդէմ մանաւանդ զննուած էր։ Իրաւացի է ասած նորա համար, թէ ,,գիտութեան երբ և իցէ յայտնուած թշնամիներից ամենից անհաշտը նա եղաւ,,. և թէ՝ ,,ոչ մի լուսաւոր ձառագայթ չթափանցեց նորա մտաղաշտ հոգւոյ մէջ,,։ Նա պարծենում էր, որ իւր սեպհական հեղինակութիւնները գրուած էին առանց բնաւին ուշ դնելու քերականական կանոնների. և մեղաւորի հանարեց մի քահանայի, որ սովորում էր այդ արուեստը։ Նա աշխատում էր փոխանակել հեթանոսական գրուածների տեղ այնպիսի բներն, որոնք աչ այնչափ վտանգաւոր էր համարում ուղղափառութեանն. և այնպիսի յաջողութիւնով անհետացրեց Իտալիայից նորա հեթանոս հռչակաւոր մատենագիրները, որ երբ նորա յաջորդներից մէկը, Պօղոս Ե. ուզարկեց Դաղղիացոց Պեպին թագաւորին ,,գրքեր, որոնք կարօտացել էր նա գտնել,,—այդ գրքերն էին եկեղեցական երգարան, քերականութիւն և Դիոնեսիոս Երիսապագոյս գրուածը։ Եւյդ՝ բիւզանդեան տգիտութեան սկզբունքի իսկական մարմնաւորութիւնն էր։

Երբ՝ին հոգհետ պարապուում է եղծանն.

Եթէ այս կերպով Իտալիոյ վերայ տեղացած թշուառութիւնները տալին նորան բիւրս բնակիչներ, որոց պահանջմանքներին կարող նում էր բաւականութիւն տալ միայն հեթանոսական յատկութիւն ստացած կրօնն, ապա և ամրողջ կայսրութեան մէջ գտնուած առաւել բարեբաղդ վերի դասակարգերն և՛ վաղուց արդէն նոյն ուղղութեամբ էին ընթանում։ Ով որ հետաքննում է այդ հասարակութեան զարգացման ընթացքն ամենահին ժամանակից, պարզ տեսնելու է, որ այդ ժողովուրդն ուրիշ հեւանքի չէր էլ կարող դալ, բայի վեմ գիտութեանը կործանումն բերելուց և արհեստին մոռացութիւն ցոյց տալուց։ Մեզ կարժէ միայն համեմատել առաջին աշակերտների աղքատութիւնն և պարզութիւնն այն ծայրայեղութիւնների հետ, որոնց հասաւ դրութիւնը մի քանի սերունդներից յետոյ։ Ալիպրանոս արդէն բողոքում է քրիստոնէից և նոյն իսկ հոգևորականութեան ագահութեան, հպարտութեան, պճնասիրութեան և աշխարհայն միտումների դէմ։ Լինում էին և ոմանք, որոնք չէին դժուարանում մինչև անդամ ամուսնանալ հեթանոսուհիների հետ։ Ալեմէս Ալեքսանդրացին գանգատ զննում է ,, քրիստոնեայ փարթամ և շռայլ հասարակութեան թերութիւնների դէմ.—վաղվիւն զգեստների, ոսկեղէն և արծաթեղէն սպասների, շռայլ ճաշկերների, ոսկեզօծուն պատգարակների և կառքերի և տանձն բանկերի։ Նշանաւոր կանայք պահում են հնդկական թռչուններ, միգիական աքրամարդներ, կապկներ և մալտեան շներ, փոխանակ պէրճներն և որբերը խնամելու. տղամարդիկ ունեն բազմաթիւ տուրկներ,,։ Ալդ ժամանակում ներմուծած զանազան սովորութիւններն արդէն հարկադրում էին նախագուշակելու այն բազմաթիւ հեթանոսական ծէսերն, որոնք յետոյ ընդունելութիւն գտան։ Կանի դնում էր, ոչ միայն բարեգործութիւն չէր լինում դրութեան մէջ, այլ առաւել վատթարութիւն էր սիրում։ Ոչ միայն թեթևամիտ դասի մարդկանց, այլ միևնոյն անգամ պատմական անձանց մէջ ևս երևում էր մի առանձին սէր դէպի անհետացող հին կրօնի հանդէսները, մի յատկացած ձգտումն դէպի հին ծէսերն և, դուցէ, կրօնական առնասրութիւն դէպի նորերը։ Ալս գիւտղութիւնները խիստ յարմարում են Յուստինիանոսի գարուն։ Ռոյեսիոս կատարեալ հեթանոս փիլիսոփայ էր. մեծ օրէնսգէտ Տրիբոնիան, Յուստինիանոսեան օրինագրքի հեղինակը, կասկածելի էր եղել իրրև անաստուած։

Նկարան գիրքաղ հեթանոսական գրութեան և պաշտպանութիւնը

Երևելքում բարձրաստիճան կրերական լիշանաւորների շքեղ նիստուկացը զարմացնում էր մինչև անգամ այնպիսիներին, որոնք ծանօթ էին կայսերական պալատի հետ։ Հռչակաւոր են մանաւանդ նոցա պալատներում եղած շքեղայարդար խնջոյքներն և ծառանների բարեկազմ խմբերը։ Կուսական կեանքի առանձին նշանակութեան մասին չափազանցող հասկացողութիւնները վաղուց արդէն սիրում էին աւելի բարեպաշտ մարդկանց մէջ, որոնք մինչև անգամ օրինաւոր ամուսնութեան համար ևս արտաքոյ յօժարութեան էին դիջանում։ ,,Ես գալում եմ ամուսնական վիճակը, բայց գլխաւորապես նորա համար, որ տալիս է կուսութիւն պահպանող մարդիկ,,.—ասում էր Հերոնիմոսի այս գովեստը չէ ընդունում ոչ մի կասկած։ Այդ և այնպէս՝ թէև հոգևորականութիւնն այս հայեցքի զօրութեան ներքոյ սկսաւ հրաժարուել ամուսնութիւնից, սակայն նորա համար սովորական գործ գարձաւ իրօք պահպանել այն և ունեցաւ sub—introductas կոչուածներ, որոնք համարուում էին քահանաների քոյրեր. և այդ քահանաների ձաշակն ապացուցում էր շատ անգամ իրանց մեղքի կցորդակիցների նշանաւոր գեղեցկութիւնով։ Անորևոսի օրինքը վերջ դրեց այդ չարաղործութեան։ Ալսպիսի յարակցութիւնից ծնունդ առած երեխաներն, երևի, չէին պատճառում որ և իցէ առանձին գայթակղութիւն։ Հարսանեաց մէջ պահանջ էր դեռ և պահիլ Ամաղկի երգեր երգելու սովորութիւնն։ Երաժշտութիւնով պարապելն արդէն շատ վաղ ժամանակից գրաւած էր շատ նշանաւոր եկեղեցական անձանց ուշադրութիւնն. ինչպէս Պօղոս Սամոսատցու, Ալրիոսի և Յովհան Ոսկերբերանի։ Նախկին կրթութեան մէջ հատանական է թէ բոլոր աղօթողները ձայնակցում էին երգերին և սաղմոսներին։ Բայց հետզհետէ ընդունելութիւն գտան առաւել յաջողակ երգիչներ և յատնական ոգեերգանակ պալատներ եղծանն.

Նաև պղինձներն և որբերը խնամելու. տղամարդիկ ունեն բազմաթիւ տուրկներ,,։ Ալդ ժամանակում ներմուծած զանազան սովորութիւններն արդէն հարկադրում էին նախագուշակելու այն բազմաթիւ հեթանոսական ծէսերն, որոնք յետոյ ընդունելութիւն գտան։ Կանի դնում էր, ոչ միայն բարեգործութիւն չէր լինում դրութեան մէջ, այլ առաւել վատթարութիւն էր սիրում։ Ոչ միայն թեթևամիտ դասի մարդկանց, այլ միևնոյն անգամ պատմական անձանց մէջ ևս երևում էր մի առանձին սէր դէպի անհետացող հին կրօնի հանդէսները, մի յատկացած ձգտումն դէպի հին ծէսերն և, դուցէ, կրօնական առնասրութիւն դէպի նորերը։ Ալս գիւտղութիւնները խիստ յարմարում են Յուստինիանոսի գարուն։ Ռոյեսիոս կատարեալ հեթանոս փիլիսոփայ էր. մեծ օրէնսգէտ Տրիբոնիան, Յուստինիանոսեան օրինագրքի հեղինակը, կասկածելի էր եղել իրրև անաստուած։

Երևելքում բարձրաստիճան կրերական լիշանաւորների շքեղ նիստուկացը զարմացնում էր մինչև անգամ այնպիսիներին, որոնք ծանօթ էին կայսերական պալատի հետ։ Հռչակաւոր են մանաւանդ նոցա պալատներում եղած շքեղայարդար խնջոյքներն և ծառանների բարեկազմ խմբերը։ Կուսական կեանքի առանձին նշանակութեան մասին չափազանցող հասկացողութիւնները վաղուց արդէն սիրում էին աւելի բարեպաշտ մարդկանց մէջ, որոնք մինչև անգամ օրինաւոր ամուսնութեան համար ևս արտաքոյ յօժարութեան էին դիջանում։ ,,Ես գալում եմ ամուսնական վիճակը, բայց գլխաւորապես նորա համար, որ տալիս է կուսութիւն պահպանող մարդիկ,,.—ասում էր Հերոնիմոսի այս գովեստը չէ ընդունում ոչ մի կասկած։ Բայց և այնպէս՝ թէև հոգևորականութիւնն այս հայեցքի զօրութեան ներքոյ սկսաւ հրաժարուել ամուսնութիւնից, սակայն նորա համար սովորական գործ գարձաւ իրօք պահպանել այն և ունեցաւ sub—introductas կոչուածներ, որոնք համարուում էին քահանաների քոյրեր. և այդ քահանաների ձաշակն ապացուցում էր շատ անգամ իրանց մեղքի կցորդակիցների նշանաւոր գեղեցկութիւնով։ Անորևոսի օրինքը վերջ դրեց այդ չարաղործութեան։ Ալսպիսի յարակցութիւնից ծնունդ առած երեխաներն, երևի, չէին պատճառում որ և իցէ առանձին գայթակղութիւն։ Հարսանեաց մէջ պահանջ էր դեռ և պահիլ Ամաղկի երգեր երգելու սովորութիւնն։ Երաժշտութիւնով պարապելն արդէն շատ վաղ ժամանակից գրաւած էր շատ նշանաւոր եկեղեցական անձանց ուշադրութիւնն. ինչպէս Պօղոս Սամոսատցու, Ալրիոսի և Յովհան Ոսկերբերանի։ Նախկին կրթութեան մէջ հատանական է թէ բոլոր աղօթողները ձայնակցում էին երգերին և սաղմոսներին։ Բայց հետզհետէ ընդունելութիւն գտան առաւել յաջողակ երգիչներ և յատնական ոգեերգանակ

հեթանոսական ընթացք

Վրիտաոնէաս. թինը յարգում է արշեաք։

կան խումբը յարմար երևեցաւ դաս առ դաս (1) երգելու ձևով։ Ամբրոսիանան երգի տեղը փոխանակեց Սնգլն Գրիգորի հռոմէական ընտիր ելքն, որն իրաւամբ հիմն են անուանել այն ամենի, որ նշանաւոր և բարձր է արդի երաժշտութեան մէջ։

Նա մարժում է դիտութիւնը.

Լատինայի կրած աւերմունքների հետ և լատին լեզուն սկսաւ անհետանալ։ Բայց հռոմէական դրականութիւնը չդարձաւ երբէք դէպի քրիստոնէութիւնն։ Նկեղեցու լաւագոյն լատին հօրց թուում չկար ոչ մի հռոմայեցի, բոլորն էլ գաւառացիներ էին։ Դրականական հիմունք էին հին Կտակարանի երբայական դրքերն, և նոր Կտակարանը. բանաստեղծական նկարագիրներն քան մեծի մասին առնուում էին մարգարէական դրքերից։ Պատմական գրուածներում թագաւորում էր մեղ համար դրեթէ անհաւատալի սահմանութիւն. այսպէս օրինակ՝ Նւսեբիոս պարզմանութիւնով խոստովանում է, թէ իւր պատմութեան մէջ պիտի բաց թողնի այն ամենն, որ կարող է անարդութիւն բերել նկեղեցուն, և պիտի գովաբանի այն ամենն, որ ի փառս նորա է։ Մրևնոյն սկզբունքն էր գործում անթիւ աստղութիւնների մէջ, որոնցում շատ նպատակագէտ կեղծիքներ մուտ գտան, քան որում նոյն ժամանակների անհաւատալի դիւրահաւանութիւնը տալիս էր նոցա իւր անթերի վստահութիւնն, որչափ և ներհակ էլ լինէին նորա առօրեայ մտքին։ Բայց ուրիշ ինչ կարելի էր սպասել այն սերունդից, որ հաւատացած էր, թէ փարաւոնների կառքի հնարը դեռ ևս անջնջ մնում էր Կարմիր ծովի ափերն աւազի վերայ, որը չէին կարողացել ջնջել ոչ հողմերն, ոչ ծովի ալիքը։ Ով որ վստահանար հակառակել հասարակական ձգտման դէպի այսպիսի անտի առասպելները, ձգում էր իւր վերայ հասարակութեան բարկութիւնն, և նորան իրրև անհաւատ էին ճանաչում։ Ս. դրց մեկնութիւնների և երևելի մատենագրների բացատրութիւնների մէջ միտապես արտայայտուում էր հակամիտութիւն դէպի մտացածին պատրուակութիւն (2) և յայտնագործումն խորհրդաւոր իմաստի, որի գտնելում շատ անգամ արտայայտում էին ծիծաղաշարժ պարզմտութիւն և ճարպիկութիւն. բայց այդ մեկնական գրուածներն, ինչպէս նաև վիճաբանականները չափազանց տաղտկալի են, և վերջիններում չէ օգնում դորան մինչև անգամ նոցա ակնյայտնի նախանձաւորութեան եռանդը։

Նկարչութիւն և քանդակագործութիւն.

Մյդ ժամանակի մէջ սահմանուեց նոյնպէս եկեղեցու յարաբերութիւնը դէպի երկու ազդակից արհեստները—նկարչութիւնն և քանդակագործութիւն, որոնք վերսին ընդունեցան։ Սակայն քանդակագործութիւնն երբէք չմոռացաւ այն նախամեծար յարգն, որ ընծայուեց իւր քրոջը։ Մինչև այսօր նա մնում է հնթանոսական, հնաւանելով այս տեղ գիտութիւններից բոլորից վեհի,—աստղաբաշխու-

(1) Антифонъ. (2) Мистификація.

թեան օրինակին, որ մինչև այսօր յիշում է իւր՝ եկեղեցուց կրած հայածանքները։ և այն նոր աշխարհներն, որոնք նա գտնում է, այժմ էլ ընծայում է Ուրանոսին, Նեպտունին, կամ Ողիմպեան միւս աստուածներին։ Նկեղեցականների մէջ եղան մարդիկ, երբեմն նշանաւոր մարդիկ, որոնք ընդդէմ գտնուեցան կրօնական երկրպագութիւնն արհեստի հետ միաւորելուն. այսպէս՝ Տերտուղիանոս երբեմն արտայայտեց իւր ժխտողութիւնը Հերմոգինէի դէմ երկու մահացու մեղքերի առթիւ, որոց մէջ ընկաւ նա.—նկարչութիւնով պարապելն և ամուսնութեան. բայց գնոստիկեան քրիստոնէութիւնն, ինչպէս վերջերում հռոմէականը, հաւանութիւն տուեց այդ միաւորութեանն։ Մեր նուիրական պատկերների ամենահին օրինակների մասին պատմական ենք գնոստիկեաններին. նոցա գոհարների և կնքքների մի քանիսի վերայ փորագրած Պիթագորասի, Պղատոնի և Մրիստոտելի պատկերների կարգում երևում է և Փրկչի պատկերը։

Նեղ ընդունեցին Փրկչի տիպական պատկերը.

Նախկին հեղինակների մէջ կային այնպիսիներն—ինչպէս Յուստինոս մարտիրոսն և Տերտուղիանոս—որ երևակայում էին, թէ Փրկչի արտաքին կերպարանքը տգեղ էր. թէ՝ նա փոքրահասակ էր և այլն. բայց այդ անտեղի ներկայացուցմունքն ընդհանրապէս ուղղութեան չորրորդ դարում, երբ ընդունուեց, թէ աստուածայինն անձն չէր կարող ունենալ այդպիսի արտաքին կերպարանք։ Վերջապէս ընդունուեց Փրկչի արտաքին կերպարանքի նշանաւոր տիպական պատկերացուցումն, դուրէ այն, որ յայտնուում է կեղակարծ հարիւրապետ Վենդուլոսի անվաւեր նամակում, որ Հռոմի ծերակուտին է ուղղած. ,,Նա բարձրահասակ և վայելչակազմ մարդ էր. նորա տեսքը վսեմ և ազդու. այնպէս որ իրան տեսնող մարդկանց ազդում էր և սէր և երկիւղ։ Նորա մազերը սաթի գոյն ունէին, գեղեցիկ լջած էին մինչև ականջներն, և յետոյ փռուում էին ուսերի վերայ. իսկ առաջի կողմից բաժանուած էին Նազովրեցոց սովորութեան համեմատ. նորա յօնքերը բարձր էին և բաց. երեսի գոյնը սպիտակ, մի փոքր կարմրի տուող. նորա դէմքը պայծառ էր և քաղցր. քիթն ու բերանը վայելչակազմ. մօրուքը թաւ, երկմասնեայ, գարձեալ գլխի մազերի գոյնով. աչքերը կապուտակ և անհամեմատ պայծառ,,։ Լատէը սկզբում չունէր որ և իցէ զարդարանք. մի ժամանակից յետոյ նորա պատուանդանի վերայ նկարեցին գառն. և վերջապէս գործածական եղաւ խաչելութեան ձևը, նուիրականը մեռնող Փրկչի պատկերով։ Տիրամօր պատկերները վերջում ներկայացրին կանացի զգացման այնքան իգէալական էքնարէ տիպերն. ամենահին ձևի մէջ նկարում էին նորա դէմքը աբօղաճ։ Սուրբն Օգոստինոս ասում է. թէ Տիրամօր կերպարանքն այն ժամանակն յայտ-

և աստուածամօր.

նչ չէր. երեւում է սակայն, որ քրիստոնէական ամենահին աւանդութեան համաձայն նորա երեսի գոյնը թուխ էր։ Երկրում նկարիչները սակաւ առ սակաւ հեռացրին քօղը, սկսան նկարել ամբողջ դէմքն, և վերջապէս ամբողջ խումբ (1) սրևելեան մոգերի և սուրբ Արքից առած ուրիշ մանրամասների հետ։

Պապական իշխանութեան արևելքի մէջ հաստատուելը։

Երբոր այս կերպով պապութիւնը պատրաստուում էր մեծութիւն կապել արհեստի հետ, նա մոռացել չէր օգուտ քաղել այն մեծ շահեկանութիւններից, որոնք յատուկ էին գալի նորան ընտանեկան կեանքին միջամտութիւնից.—միջամտութիւն՝ որ ընդհանրապէս անբարոյականութիւնն ընդունում էր այն ժամանակում աւելի քան երբ և իցէ։ Իշխանութիւնը զօրացնելու համար պէտք էր մեծանշանաւոր քայլ մի եղաւ, որ պապութիւնն իւր ձեռքն առաւ ամուսնութեան գործն և նորա հետ կապ ունեցող անհամար խնդիրների լուծումն։ Մի քանի անգամ փորձն առած լինելով, թէ այդ ձանձրալարհով զբաղմունքի պէտք է ձեռք բերուում, այլ ևս նորան բաց չթողնելը։ Յատկապէս պատմութեան ամենանշանաւոր դէպքերից մէկ քանին որոշուեցան նորա՝ այս առարկայով գործ տանելուը։ Պատրաստ էին այժմ ստացած պապութիւնն ընդունել իւր տնօրինութեան ներքոյ կամակներն և նորա հետ կապ ունեցող խնդիրները տնտեսութիւնը տնօրինելու մասին։ Թէև այն ժամանակին, որի մասին խօսում ենք, պապութիւնը բաժանուում էր բարոյականութիւնից իւր առանձին մարմնաւոր (2) կանոններով, և արդէն պատրաստուած էր դաշնակցելու քաղաքական զգեցութիւնների և դիւնագիտական զօրութեան հետ, թէև նորա ժողովութիւնն և յանդիմանութիւնները ուղղուած էին ոչ այնքան անձնական ապականաբարոյութեան դէմ, որչափ հերետիկոսական կարծիքների,—որոնց նկատմամբ նա անողոքելի էր և անդորրոյն,—այդ միջոցները լաւ ներգործութիւն ունեցան ընտանեկան կեանքի վերայ, մանաւանդ կնոջը նշանակութիւն գտնելու նկատմամբ։ Այս կերպով ձեռք ձգած իշխանութիւնը զօրանում էր եկեղեցական ուղղիչ պատիժների գործադրութեան մշտապէս ազդող խաղութիւնով։ Որչափ մասաւոր հիմն, որի վերայ հաստատուած էր այս իշխանութիւնը, գնալով աւելի և աւելի կասկածելի եղաւ, ուստի և գնալով հեռացաւ բաց էր լինում յարձակմունքների համար, պապութիւնն և այնքան աւելի զարձաւ գիւրագրգիռ և պահանջայարոյց։ Բռնակալութիւնը աերութեան մէջ և բռնակալութիւն եկեղեցում պահպանուում էին մարքերի վերայ գործ դրած բռնակալութիւնով։ Պապութեան գաղափարի և իշխանութեան վերաբերմամբ։

Թողած պապ Մեծին Գրիգորի գործերն և նորա՝ իւր ժամանակի գաղափարները կազմակերպելը, կրօնի՝ Իտալիայում հեթանոսական տարրերի հետ խառնուելն և արհեստի հետ դաշնակցելը,

(1) Группа· groupe։ (2) Аскетическій. ascétique։

պիտի անդնեմ այժմ այս գլխի միւս նիւթին,—պապութեան և Գաղղիոյ թագաւորների մէջ եղած յարաբերութիւններին, որոնք հաստատեցին Գրիգորի ձեռնարկութիւնն և տարածեցին այն ամբողջ Եւրոպա։

Արտաքոյ արշաւքների պատերազմական հետեւանքներ։

Սարակինոսների զօրքերը կորզելոյն քրիստոնէութեան ձեռքից Արևմտեան կողմի արևմտեան, արևելեան և հարաւային երկրները. նոցա նաւատորմիղը տիրեց այդ ծովի վերայ։ Միջերկրական քաղաքականութեան մէջ յառաջ եկաւ յեղափոխութիւն։ Կարթագինէ, Ալեքսանդրիա, Երուսաղէմ և Անտիոք անյայտացան քրիստոնէական գրութեան միջից. նոցա եպիսկոպոսները կորցրին իրանց զօրութիւնն և նշանակութիւնը։ Հռչակաւոր եպիսկոպոսական աթոռներից ճնացին միայն Կոստանդնուպոլիս և Հռոմ։ Արդկոյն բոլոր տեսանելիութեանց համաձայն նոցա անկումը միայն ժամանակի խնդիր էր։

Պապի անկախութիւնը։

Այս կերպով Հռոմի եպիսկոպոսը իւր ափսկնցի և ասլացի հարաւակորդների հետ ունեցած վէճերն ընդհատուեցան. նոցա հետ այլ ևս գործ չունէր. Կոստանդնուպոլսոյ կայսեր հետ յարաբերութիւնները լինում էին մահմեդական նաւերի միջնորդութեամբ. կայսերական իշխանութիւնը թուլացել էր. պապը հանգամանքներից օգտուած էր միայն ճնալ և նա գարձրեց այդ միայնութիւնը անկախութիւն։ Այժմ իրեղէն պէտք էր պահպանել այդ անկախութիւնը։ Հռոմ Իտալիայում Լոմբարդներն, երևում էր, թէ հնձնաւորապէս հաստատուած էին. սակայն նոքա հերետիկոսներ էին,—արիոսականներ. նոցա ներկայութիւնն և իշխանութիւնն անյարմար էին իւր իշխանութեանը։ Քաղաքական մտքով նա արդէն ստորադրուած էր նոցա։ Նորա համար բաց էր միայն մէկ շարժումն, և—սուտ գտնէ թէ անատոդ էր հասկացել նա իւր դրութիւնը,—անցքերի զօրութիւնը հարկադրեց նորան դէպի այդ շարժումն։ Եւ այդ էր դաշնակցել Փռանկների հետ, որոնք յաջողութեամբ դեմ էին դրել մահմեդական իշխանութեանն և լրանք ուղղափառ էին։

Նորա փռանկների հետ կապած դաշնակցութեան պատճառները.

Գահակալելիր գաղղիացի մի իշխան վճռել էր թագից զրկել իւր թագաւորին, եթէ պապը կամենար օրհնել այդ գործը։ Նորա կարծեցին հնամաձայնութիւն։ Մէկը գործեց գահակալութիւն, միւսն օրհնեց այդ գործը։ Այն ժամանակը բռնութեամբ աթոռը տանողները։ ցող տան համար բնականապար շահաւէտ էր մեծացնել իւր հոգևոր գաշնակցին։ Գաղղիական նոր թագաւորութեան ամրապնդութիւնը հռոմէական սկզբունքների տարածման մէջն էր կայանում։ Այժմ ցանկալի գարձաւ տգիտել գերմանական անկիրթ ցեղերին, թէ պապը պիտի ճանաչուի Աստուծոյ անգլագահ երկրի վերայ.—թէև մինչ անդամ այդ նպատակի համար երեսուն տարուայ ընթացքում պէտք էր սուր գործ ածել։

վայրենու սիրտը, ինչպես լուսեր արուեստի վեհանձնութիւնը։ Պե- Խոթպա
րիների մէջ, որոնք բռնուած էին հարուստ պատերազմի ժամա- կանց ոգե-
նակը, լինում էին շատ անգամ աղնուատոհմ, վայելչազեղ և առա- ցութիւնը.
քինի կանայք, իսկ երբեմն նաև եպիսկոպոսներ, որոնք ինալով հա-
ւատարիմ իրանց կրօնական սկզբունքներին, չէին կարող ցոյց չտալ Եւրոպէի
բարեացակամ և փրկարար ազդեցութիւն այն ցեղերի վերայ, որոնց գաբէջ.
մօտ բաղդը ձգել էր իրանց։ Օ՛անազան ազգեր գարձան մէկ միւ-
սի ետևէց. Վ՛անդալներն և Գեպիտներըՙ չորրորդ դարում. Գո-
թացիները՝ փոքր ինչ վաղագոյն. Փռանկները՝ հինգերորդ դարու
վերջում. Ընդամենն և Լ՛ոմբարդացիները՝ վեցերորդի սկզբում.
Հաւարացիները, Հ՛եսսենցիները և Տ՛ուրինգեցիները՝ եօթներորդ
և ութներորդ դարերում։ Սոքա բոլորն ընդունեցին քրիստոնէու-
նէն արիւսեան ձևով, բացի Փռանկներից, որոնք գարձան քրիստո-
նեայ կաթոլիկ հոգևորականների ձեռքով։ Սակայն՝ իսկապէս այդ
ազգերը քրիստոնէացած էին միայն հարկանոցօրէն, և նոցա գարձն
երևում էր գրեթէ միայն այն բանով, որ գիտէին խաչակնքել։ Այս
բոլոր շարժմունքների մէջ անհամեմատ ազդեցութիւն ցոյց տուին
կանայք. օրինակ՝ Փռանկների Կլովիսէ թագաւէն գարձրեց քրիս-
տոնէութեան իր Կլոտիլդա սուրհանդակի. Ներտա, կնտեան թագուհին
և Յերմենեգիլդեան թագուհին իրանց երկրներում նոր հաւա-
տըն ճանապարհ հոտիկեցին։ Միևնոյն եղանակով էլ գնաւ նոր կրօ-
նը Լ՛եհաստան և Ռուսաստան։ Այս կերպով՝ Եւրոպան շատ պար-
տական է կանանց, թէև սկզբում նոր կրօնի ընդունուած պայման-
ները սահմանափակուում էին միայն հաւատի հանդանակովն և Տէ-
րունական աղօթքովն։ Ըստ պատի դիտուած է, թէ գարձերի հա-
մար հարկաւոր էին երեք պայմաններ.—բարեպաշտ կեան՝ արքունի՛քի
մէջ, որևէ իշէ ազգային թշուառութիւն՝ և կրօնաւոր։ Ինչ որ վե-
րաբերում է ժողովրդականը, պետքէ ասել, որ նա երևի թէ կայր
հնազանդութիւնով հետևում էր իւր իշխանաւորների օրինակին, ա-
ռանց բնաւ հոգ տանելու, թէ ինչ բան էր իրանից պահանջուած
նոր կրօնը։ Իշխանների գարձը պատճառները պարզմտութեամբ
ընդունեցին ամբողջ ազգի գարձի տեղ։ Ինչպես և կարելի էր սպաս-
ել, այսպիսի դիւրութիւնով, իշխանաւորի հանդոյքով կամ կամքով
ընդունուած կրօնը շատ անգամ նոյնպիսի դիւրութիւնով էլ մեր-
ժուում էր, ինչպես Շ՛վեհներն և Վ՛ենդները միւսանգամ ընկան
կուապաշտութեան մէջ։

Ըստպէսի յետ կացոյցների մէջ հետաքրքրական է յիշատակել Խրի- Ազգերի
տանիայի բնակչաց յետապարձն, որոնց մօտ քրիստոնէութիւնը առա- գարձ.
բան առաջին անգամը հռոմէական լեգէոնների, և որոնք կատարեալ
էին պարծենալ, թէ Սուրբ Պատանդիանոսի և նորա մայր Հե-

Պապն ընդդէմ կանգնեց իւր բիւզանդիան թագաւորին պատկեր-
ներն երկրպագելու խնդրի պատճառով. բայց այդ գործի կեղծիքա-
կան վախճանն էր. նա չընդդիմացաւ և իւր նոր դաշնակցին, որ
ընկաւ միևնոյն հերետիկոսութեան մէջ։ Կայ կարծիք յարաբերութիւ-
նը գաժան և թոյլ իշխանաւորից և միացաւ հաւատար իրաւունք-
ներով դաշնակցի հետ։ Բայց պապի ապագայ իշխանութեան զօրա-
նալու նկատմամբ կարծիք չկար։ Ներկայացուցիչը մի դրութեան, որ
անմահ է, պիտի վերջ ամենայնի նախապատիւ հանդիսանար այն
անձինքներից և ընտանիքներից, որոնք հարկաւ մահկանացու են։

Եւրոպայի գարձը.

Թէև չենք կարող իրաւունք չտալ այն կրօնաւորների վաստակ-
ներին, որոնք անուանաբար սրտէն գարձրել էին քրիստոնէութեան
Եւրոպայի նշանաւոր մասը, բայց քաղաքական առումով ընդարձակ
մտքով՝ երկրի կեդրոնի անցնելը դէպի իւր հաւատի գարը բուն ար-
գասիք էր գաղղիական կայսրութեան հաստատութեան։ Սինծին Ա-
բոլոսի վճիռը մի դրոշմ թողեց այդ կեդրոնի վերայ, որ կրում է
նա մինչև այսօր։ Անկեղծական կեղծաւորութիւնը նա գարձրեց քա-
ղաքական իրողութիւն։

Պետրոսի գործ.

Ընդ կարևոր դէպքը հասկանալու համար անհրաժեշտ է նկարա-
գրել 1) Միջին Եւրոպայի հոգեկան դրութիւնը. 2) քահանայապե-
տի դիրքն և նորա գաշնագրութիւնը Փռանկների հետ. ապա ան-
հրաժեշտ է նոյնպէս որոշել իսկական կրօնական նշանակութիւնն այն
դրութեան, որ նա ներկայացնում է. և այդ կարելի է անել ամենա-
լաւ կերպով՝ 3) պապերի կենսագրութեան միջնորդութեամբ։

Պետրոսի գործ.

Ա՛ռաջին։ Ինչպես պատահեց Ներսէսից, նոյնպէս ընթացաւ բա-
նըն և Եւրոպայի բարբարոս ազգերի համար։ Նոքա թեթևամտու-
թեան գարից անցնում են դէպի հաւատի գարն, երկար կանդ չառ-
նելով իրանց հետազօտութեան գարում։ Հետազօտութեան գարն
առաջարկում է քննել ինքն իրան և մերժում է հեղինակութիւն
առնեցող ուսուցչին։ Նոյն Ներսէսին առնէին ուսուցիչներ,—Նես-
տորականներին և Յրեաններին. իսկ Գերմանացոց համար կրօնաւոր-
ների դասերը խիստ եռանդուն կերպով հակացուեցան Սինծին Պետ-
րոսի համոզիչ փաստով—սրովը։

Հարբարոսների պատերազմական յարձակմունքները հարաւի վե-
րայ գասն իրանց արիւռւրը քարոզչական խաղաղմունքների մէջ հիւ-
սիսում։ Ընդ կինների նպատակն աշխուժհակալութիւնն էր. նոցա հա-
կառակորդներըՙ—գարձնել չէին կարող են հակառակորդ անուանո-
ւիլ նոքա, որոնք աշխատում էին գարձնել նորանց իրանց չար ձա-
նապարհներից։ Կրօնաւորները մուտ գործեցին նոցա անտառների
մէջ անցան և անպաշտպան և միայնակ. նոքա գասն ճանապարհը
դէպի նոցա ամրոցները։ Ոչ մի բան այնպէս խոչն չէ շարժում

Քրոնաւորների ազդեցութեան և յաղթութիւնները

ղինէի ձեռքով — եթէ նոքա յիրաւի ծագումով այդ երկրից էին — ոչ սակաւ ազդեցութիւն են ունեցել երկրի կրօնական ձակատագրի վրայ։ Պղտգիտոի կենսագրութիւնը ցոյց է տալի, թէ աստուածաբանական վարդապետութիւններն որպիսի նրբութեամբ քննուում էին այդ հեռաւոր աշխարհներում. բայց Հռոմի անկումից յետոյ, իրերի այդչափ շատ բան խոստացող դրութիւնը ջնջուեց և հոգևորականութիւնը հեթանոս աշխարհականներից ճնշուեց ու քշուեց Գալլիայի, Հոլանդիայի և Իռլանդիայի անմատչելի մասերը։ Տեսարանն անդրնացի մի քանի երեխաների, որոնք հանուած էին վաճառ Հռոմի գերեվաճառանոցում, Գրիգոր Մեծի միտքը ձգեց այդ կողմն վերստին դարձնելու։ Նրբ լինքը պապ ընտրուեց, յանձնեց այդ բանը Օգոստինոս կրօնաւորին. և կանացի ազդեցութեան սակաւ բական ներգործութիւնից յետոյ Էդելբերդոս թագաւորի արքունիքում Բերթա փառանց իշխանուհու ձեռքով, և սովորական տատանմունքներից յետոյ, նոր հաւատը սակաւ առ սակաւ թափանցեց երկրի բոլոր մասերը։ Յառաջ եկաւ մի փոքրիկ ընդդիմադրութիւն հին հոգևորականութեան կողմից, որ իւր ապաստանարանների մէջ պահպանում էր վաղեմի ժամանակների աւանդութիւնները. օրինակ՝ Օաակի մասին. բայց այդ հակառակութիւնը վերջապէս բարձուեց. սկան յարաբերութիւնները Հռոմի հետ. և այդ քաղաքին այցելութիւն անելը դարձաւ սովորական և հոգևորականների և նշանաւոր հարուստ մարդկանց համար։

Անգլոսաքսէ և հիւսիսային քարոզիչները։

Բրիտանական քրիստոնէութիւնն երեսն հանելով այն աղնիւ յատկութիւններն, որով նշանաւոր է հանդիսանում նա և մեր ժամանակին, դանդ չարից արտայայտել աշակերտելու ոգին. ինչպէս վերջերում դարու վերջում Սղոմեան իռլանդացի կրօնաւորն երբեմն քարոզիչ անցաւ. Գալլիա, Շվեցարիա և հին Հռոմէական կայսրութեան սահմաններից դուրս, նոյնպէս և մեկ դար անցնելուց յետ Ներդիացի Վոնիֆակիա Գինոշլրեցի ուղևորուեց Գերմանիա Պաղեստինի Սարթելի և պապի յանձնարարութիւններով և ապնեց Հեսսենների և Սաքսոնացիների մէջ, կարելով նոցա նուիրական կաղնիները, կործանելով սեղանները, կանգնելով եկեղեցիներ, հիմնելով եպիսկոպոսութիւններ, և վերջապէս վայրենիների ձեռքից ընդունելով մարտիրոսական պսակը։ Այս արևմտեան քարոզիչները մեծ օգուտ էին տանում իրանց լեզուի ազդեցութիւնով այն երկրների լեզուի հետ, ուր իրանք դիմում էին։ Անգլոսաքսերէն, Էթելվլֆ (1) եկեղեցից եկող ապդի գարձի փառքը վայելում է Փոլմա պապին. — նոցան՝ որի մարմինն ենթարկուեց յետ-մահուան դատաստանի։ Այն փաստը, թէ այդ դէպքը գլուխ եկաւ Ընհեղ Դատաստանը նկարագրող մի պատկերով, ցոյց է տալի, թէ այդ յաջողութիւնների ե-

(1) Անգլոս։

բեմն որչափ ընդհանրական վերայ էին հիմնուում։ Սլաւոնական ազգերը դարձան յոյն քարոզիչների ձեռքով։ Միւսերը կրօնաւորը հնարից Սլաւոնացոց համար տառեր, ինչպէս Ուլֆիլա՝ Գոթացոց համար։ Ընարաճել նորմաններն, որոնք իրանց ասպատակութիւնների մէջ կողոպտում էին եկեղեցիներ, Նորմանդիայում բնակելով ընդունեցին քրիստոնէութիւն, ինչպէս Գոթացիներն արիանութիւն տեղ այսօրինակ հանդամանքներում։ Սկանդինաւները դարձան ս. Ենսկարիոսի ձեռքով։ Այս կերպով՝ մասամբ քարոզիչների վարդապետութիւնով, մասամբ կրօնաւորների օրինակներով, մասամբ կանանց ազդեցութիւնով, մասամբ փառանց թագաւորների սրովն և մասամբ Հռոմի հռչակաւոր անունովն Եվրոպան վերջապէս անուանապար դարձաւ։ Մեծին կարոլոս կրօնական ասուած պատերազմներն, որոնք տևեցին երեսուն տարուց աւելի,—և ինչպէս լինում են սովորաբար այսպիսի ձեռնարկութիւններն—ընթացակից ունեցան անդրմութիւններ, անշուշտ ունէին—նոյն իսկ նորա համար—այնքան քաղաքական, որքան կրօնական նշանակութիւն։ Նոքա իրագործեցին այն համաձայնութիւնն, որ Պեպին սկսեց Հռոմի հետ։ Մեծն Կարոլոս պարզ հասկանում էր եկեղեցու դրութիւնն և գործունէութիւնը. նա երբէք թոյլ չէր տալի նորան չափից դուրս միջամուխ լինել տէրութեան գործերին։ Ի նկատի առնելով, որ եկեղեցին հանդիսանում է զօր միութեան ոչ միայն իւր կայսրութեան տարբեր ազգերի և ցեղերի, այլ մինչև անգամ ընտանիքների և մասնաւոր անձանց, նա միշտ ցոյց էր տալի նորան խոհական և առատաձեռն հովանաւորութիւն։ Նորա մտաւոր դրութիւնը թոյլ չէր տալի նորան եկեղեցու ազատութիւնը հիմն կարդելիւր սեպհական կեանքի, որ շատ անգամ արատաւորուում էր անգթութիւններով և անբարոյականութիւնով։ Իւր տեսակէտով նա, երևի, դալիս էր այն եզրակացութեան, թէ կրօնի կանոնները կարգուած են իբրև աւելի շահ այնպիսի մարդու, որ ստորին կարգին է. և թէ՝ թագաւորի համար անհրաժեշտ է միայն պահպանել դէպի եկեղեցին պէտք եղած քաղաքական յարաբերութիւններ։ Նորա համար միութիւնն ոչ թէ փրկութեան նշան էր, այլ ժողովրդական հպատակութեան. իսկ եկեղեցիների և վանորէից շինութիւն, եպիսկոպոսութիւնների հաստատութիւն և հոգևորականների բազմացումն երևում էին առաւել յուսալի միջոց կառավարելու քան զինուորական միջոցները։ Հռհանան անհրաժեշտաբար պիտի նորա պաշտպանութիւնը սրտնի. իսկ զորապետը կարող է ապստամբել։

Մեծին գործունէութիւն։ Թէոդոր պապ։ Քեռի պապ։

Եթէ Եվրոպան իւր գարձի միջոցով Հռոմից ստացաւ մեծ շնորհ, նորա փոխարէն ինքն ևս վճարեց, լատինական քրիստոնէութեան մէջ ներմուծելով այն, որ նորան շատ կարևոր էր,—տառի

Դարձ եկած Եվրոպայի անդրադարձ գործունէութիւնը։

ֆեոմ բարոյական քնաւորութիւն։ Անառաքարոյութիւնը վայրենի կեանքի սեպհականութիւնն է։ Ընչ անհամաձայնութիւնը բարոյականութեան և հաւատի մէջ, որի վորձն առան հարաւային ազգերը, կարելիութիւն չգտաւ այս նորադարձների մէջ։ Եթէ լատինական կրօնքն հաղորդելով իրանց բարբարոսական և հեթանոս հասկացողութիւններից շատերը, տալն նորան հակամիտութիւն զարգանալու այդ հեթանոսական արուեստքին նիւթական ձևի մէջ, բայց և այնպէս նոցա ազգեցութիւնն անուղղաբար վատթար չեղաւ. քանորում մեկ կողմից ցածացնելով Ժողովրդեան հաւատի կշիռը, միւս կողմից մեծացրին մանաւոր կեանքի հորիզոնը։ Արդարև նոցա ներմուծած ապականութիւնը շատ անգամ խիստ չափազանցում էր. Հեթանոսութեան ներմուծումն կրօնի մէջ աւելի շատ յատուկ եկաւ դասական երկրների ժողովուրդներից։ Իտալիայի և Յունաստանի բնակիչներն իսկապէս երբէք չթողին հին ժամանակների կուռապաշտութիւնը։ Կարելյարմար դէպքում նոքա քրիստոնեայ եղան միայն արուեստաւոր։ Նոքա իրանց դիւցազներական ծէսերից շատերն էլ ստանձնեցին և հոգևորականութեանը։ Բայց մեծն Կարոլոս, որ այդ մասում կարող է համարուիլ փառակ և գերմանական հայեացքների ճշմարիտ ներկայացուցիչը, ամենևին չէր հաւանում այդ կուռապաշտութիւնը։

Պապութեան գաղափարութիւնը Գառնկների հետ։

Արևմուտք։ Ամբողջ Իտալիայում յառաջացած հոգևոր իշխանութեան այս դիրքերից պիտի դառնամ ամենից յառաջ դէպի պապական գրութեան և նորա՝ Գառնկների հետ կապած դաշնակցութեան հետազոտութեանն։

Գառնկների և Արաբիանների դրութիւնը։

